

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ



ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Բ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԼՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ԱՇԺԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

233



ASHJIAN ARCH. MESROB
BOOK SERIES

233

Տրոյան



ԵՐԵՎԱՆ 2022

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

FOREIGN-LANGUAGE SOURCES ON
ARMENIAN COMMUNITIES

ISSUE I B

PAPERS OF THE INTERNATIONAL CONFERENCE, DEDICATED
TO THE 200TH ANNIVERSARY OF THE FOUNDING OF THE
CALCUTTA ARMENIAN COLLEGE AND PHILANTHROPIC
ACADEMY

YEREVAN -2022

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ
АРМЯНСКИХ ОБЩИНАХ

ВЫПУСК 2

СБОРНИК МАТЕРИАЛОВ МЕЖДУНАРОДНОЙ
КОНФЕРЕНЦИИ, ПОСВЯЩЕННОЙ
200-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ АРМЯНСКОЙ
ФИЛАНТРОПИЧЕСКОЙ СЕМИНАРИИ КАЛЬКУТТЫ

ЕРЕВАН-2022

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ

ԽՄԲԱԳԻՐ՝

Պ.Գ.Դ., ՊՐՈՖ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

Բ.Գ.Թ. ԱՐԾՎԻ ԲԱՍՉԻՆՅԱՆ

Պ.Գ.Թ. ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃՅԱՆ

Պ.Գ.Թ. ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(52)Գ43

Օ-780

Ժողովածուում ընդգրկված են «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» խորագրով (Երևան, 2021 թ. նոյեմբերի 2) միջազգային գիտաժողովի նյութերը:

Օտար աղբյուրները հսկայական ծավալի նյութ են պարունակում հայկական գաղթօջախների բնակչության թվաքանակի, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և ներհամայնքային կյանքի բազմաթիվ իրողությունների վերաբերյալ:

Գիտաժողովի խորագրի համեմատությամբ բացառություն է կազմում Ջավախքի հայությանը վերաբերող մեկ զեկուցում:

Նախատեսված է հայոց պատմության, հայկական գաղթօջախների պատմության հարցերով հետաքրքրվող և ընթերցող լայն հասարակայնության համար:

ISBN 978-9939-892-24-5

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2022



**Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարան
(1821-2021)**

ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ,
Հնդկահայոց հոգևոր հովիվ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ուրախությամբ տեղեկացանք, որ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Միյուտքի պատմության» բաժինը, որը 2021 թ. նոյեմբերի 2-ին կազմակերպել էր միջազգային գիտաժողով՝ նվիրված Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին, հանձն է առել հրատարակելու վերոհիշյալ գիտաժողովի նյութերը՝ արանձին ժողովածուով:

1821 թ. ապրիլի 2-ին Կալկաթայում բացված հայկական մարդասիրական ճեմարանն աշխարհում, ներկա պահին գործող հայկական դպրոցների մեջ համարվում է հնագույնը: Մեզանից 201 տարի առաջ հիմնադրված Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի գերնպատակը եղել է Հնդկաստանում և հարևան երկրներում բնակվող հայության մեջ վառ պահել հայ ազգի ստեղծագործ մտքի լուսավորության ջահը:

Կալկաթայում ազգային դպրոց մտահղանալու պատիվը պատկանում է մի հայրենապաշտ, կրթասեր ու վաճառական հայի՝ Աստվածատուր Մուրադխանյան անունով: Վերջինս իր մահից առաջ, 1797 թ. հուլիսի 30-ի թվակիր կտակով, ի նպաստ Կալկաթայում հայկական ազգային դպրոցի կառուցման, 8000 հնդկական ռուփի է նվիրաբերում «Կալկաթու Հայոց ազգի դպրատանն վասն ազգի մանկանց»: Սակայն, իր կտակից երկու

տարի անց՝ 1799 թ. սեպտեմբերի 29-ին, բարերար Մուրադխան-
յանը, դժբախտաբար, վախճանվում է, և Կալկաթայում հայկա-
կան կրթօջախ հիմնելու գաղափարը կարծես թե անորոշության և
մոռացության է մատնվում: Ճեմարանի առաջին հիմնադիր Աստ-
վածատուր Մուրադխանյանի աճյունն ամփոփվում է Կալկաթա-
յի Մուրբ Նազարեթ հայոց եկեղեցու բակում:

Մուրադխանյանի մահից 20 տարի անց՝ 1819 թ. մեկ այլ
ազգասեր հայորդի՝ Մնացական Վարդանյան անունով, հիմք ըն-
դունելով Աստվածատուր Մուրադխանյանի ավանդած կտակը,
Կալկաթայի հայ երևելիներից բաղկացած դպրոցաշինական
հանձնախումբ է ստեղծում: Ի նպաստ ազգային ճեմարանի հիմ-
նադրման՝ հանձնախումբն անմիջապես ձեռնամուխ է լինում
հանգանակության: Ճեմարանի դրամական կողմն ապահովելուց
հետո՝ 1821 թ. ապրիլի 2-ին, Կալկաթայի Հին Չայնաբազար փո-
ղոցի թիվ 353 հասցեում, որը բավականին մոտ էր 1708 թ. կա-
ռուցված Մուրբ Նազարեթ հայոց եկեղեցուն, 1734 թ. հայազգի
վաճառական Մանվել Հազար Մայանի կողմից բացված հայկա-
կան լաստանավահանգստին (Armenian Ghat), Մնացական Վար-
դանյանի և յուր հայրենակիցների նախանձախնդիր ջանքերի
շնորհիվ ծնունդ է առնում Կալկաթայի հայկական մարդասիրա-
կան ճեմարանը: Սկզբնական շրջանում Հնդկաստանի՝ որպես
հյուրընկալ երկրի հանդեպ տածած հարգանքի արտահայտութ-
յուն, ճեմարանում ուսանելու արտոնություն տրվում է նաև ազ-
գությամբ հնդիկ երեխաների: Հետագայում, երբ հայ աշակեր-
տության թիվը զգալիորեն աճում է, նախապատվությունն
անհրաժեշտաբար տրվում է հայ երեխաներին, և կրթօջախը
դառնում է զուտ հայկական:

Այսպիսով, Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմա-
րանն ունենում է երկու հիմնադիր. մեկը՝ Աստվածատուր Մու-
րադխանյանը, հեռավոր Հնդկաստանում հայկական անդրանիկ

կրթօջախ հիմնելու իր նախաձեռնության և ի նպաստ դրա ժառանգած առաջին նվիրատվության, իսկ մյուսը՝ Մնացական Վարդանյանը, Մուրադխանյանի տեսլականը համատ և անխոնջ ջանքերի շնորհիվ կյանքի կոչելու և իրագործելու համար:

1846 թ. ճեմարանի տեսչությունը՝ երկու հիմնադրի անուններն աշակերտների և այցելուների աչքին մշտապես տեսանելի դարձնելու, հիմնադիրների հիշատակը վառ պահելու և հավերժացնելու նպատակով, ճեմարանի ուսումնական շքամուտքի աջ և ձախ կողմերում փակցնել է տալիս երկու մարմարե տախտակ՝ հայերեն և անգլերեն արձանագրություններով:

Առաջինի վրա կարդում ենք.

«ՆՈՒԻՐԵԱԼ Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻ ՄՈՒՐԱԴԽԱՆԵԱՆ ԱՍՊԵՏԻ

ԱՅՍ ԱՐՁԱՆ

ԿԱՌՈՒՑԱՆԻ ՅԱՆԴԱՄՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ի

ԿԱԼԿԱԹԱ

՚Ի ՄՇՏՆՁԵՆԱԻՈՐԵԼ ԶԱՆՈՒՆ ԵՒ ԶԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ
ՎԵՐՈՅԳՐԵԱԼ ՄԱՐԴԱՍԻՐԻՆ, ՈՐ ՚Ի ՄԱՀՈՒՆ ԿՏԱԿԱԻ
ԹՈՒԵԼՈՎ 30 ՅՈՒԼԻՍ 1797 ԱՄԻ ԱԻԱՆԴԵԱՅ ԶՊԱՐԳԵԻ
ՈՒԹՆ ՀԱԶԱՐ ՌՈՒՓԵԱՅ ՚Ի ՆՊԱՍՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԱՅՍՊԻՍԻ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ, ԵՒ ՀԱՆԳԵԱԻ ՚Ի ԿԱԼԿԱԹԱ
ՆԱԴԱՐ 30, 1799»:

Երկրորդ հուշատախտակի վրա գրված է.

«՚Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄՆԱՅԱԿԱՆԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԱՍՊԵՏԻ

ՃՇՄԱՐԻՏ ԱԶԳԱՍԻՐԻ.

ԿԱՌՈՒՑԱԻ ԱՐՁԱՆՍ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԱՆԴԱՄՈՑ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՚Ի ԿԱԼԿԱԹԱ.

՚Ի ՆՇԱՆ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՐԳԱՆԱՅ

ՅՈՐ ՌԻՆԷՐ ԶՆԱ ԱԶԳ ԻԻՐ

ՎԱՍՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ ՅԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՍ.

ԵՒ ԵՌԱՆԴԱԳԻՆ ՆԱԽԱՆՁՈՒՆ ԱՌ ՌԻՍՈՒՄՆ

ԵՒ ՅԱՌԱԶԱՐԴԻՍՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԶԳԵԱՅ ԻՒՐՈՑ
ՅՈՐՄ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՏԱԻ ԱՆՁԱՄԲ
ԵՒ ԱՐԴԵԱՄԲ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՍ
ԳՈՅԻՒՔ ԻՒՐՈՎՔ
ԵՒ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՅԼՈՑ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՅԿԱԶԱՆՑ
ՅԱՊՐԻԼԻ 2 1821:

ՇՆԵԱԼ Ի ՋՈՒՂԱ 'Ի 6 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 1772.
ՀԱՆԳԵԱԻ Ի ՄԷՅՏԱՊԱՏ, ՈՐ Ի ՄԱԽՍՈՒԴԱՊԱՏ
'Ի 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1827»:

Սակայն հիմնադրվելուց 62 տարի անց՝ 1883 թ., ճեմարանը Հին Չայնաբազար փողոցից, տեղափոխվում է Կալկաթայի ամենահայտնի և բարվոք թաղամասերից մեկի՝ Ֆրի Սքուլ փողոցի նորակառույց շենքը: Հետագայում Ֆրի Սքուլ փողոցը քաղաքային իշխանությունների կողմից անվանափոխվում և կոչվում է Միրզա Ղալիբ: Այսպիսով, նախկինում գոյություն ունեցող Ֆրի Սքուլ փողոցի թիվ 39-ից ճեմարանի հասցեն դառնում է Միրզա Ղալիբ 56բ, որտեղ էլ առ այսօր գտնվում ու գործում է Հայոց մարդասիրական ճեմարանը:

Աշխարհում ամենահին հայկական կրթական հաստատությունն ամեն տարի ապրիլի 2-ին, Կալկաթայում՝ 1896 թ. հնդկահայ տիկնանց նախաձեռնությամբ և սեփական հանգանակած գումարով կառուցված ճեմարանի հանդիսությանց դահլիճում, մեծ շուքով տոնախմբում է իր հիմնադրման տարեդարձը՝ դա անվանելով «Հիմնադիրների օր»: Այն իր յուրահատկությամբ ամբողջովին տարբերվում է ճեմարանի մյուս միջոցառումներից, քանի որ տվյալ օրը՝ ապրիլի 2-ին, ճեմարանի անցյալն ու ներկան միախառնվում և ողջագուրվում են մեկմեկու և երանությամբ ու պատասխանատվության մեծ զգացումով առատորեն

լցնում բոլորի, հատկապես հին ու նոր աշակերտների միտքն ու հոգին:

«Առաջին ուսուցիչ մարդասիրական ճեմարանի ի հիմնադրութենէ», ինչպես ինքն է իրեն բնութագրում, եղել է Հովհաննես Հարություն Իսահակ Աղանուրյանցը, որը 1824 թ. ճեմարանի աշակերտների համար պատրաստում և հրատարակում է «Այբբենարան» կամ «Աղանուրեան կարգ ուսմանց» դասագիրքը: Ճեմարանում դասավանդել են ժամանակի հայտնի ուսուցիչներ ու կրթության անխոնջ նվիրյալներ, որպիսիք էին՝ Մարտիրոս Մկրտչյան-Դավթյանցը, Հարություն Գալուցյանը, որը 1825 թ.-ից մինչև իր մահը՝ 1833 թ., վարել է ճեմարանի տեսչի պաշտոնը, Մեսրոպ Թաղիադյանցը, Հովհաննես Ավդալյանցը, որը 1825-1833 թթ. ճեմարանում որպես ուսուցիչ դասավանդելուց հետո փոխարինում է Գալուցյանին և տեսչի պաշտոնը վարում մինչև 1863 թ.: Ճեմարանի բազմերախտ տեսուչ Հովհաննես Ավդալյանցը մահկանացուն կնքում է 1870 թ.: Նրա մարմինն ամփոփվում է Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու բակում: Վերոհիշյալ ուսուցիչներից և տեսուչներից Հարություն Գալուցյանը, Մեսրոպ Թաղիադյանցը և Հովհաննես Ավդալյանցը, բացի իրենց նվիրաբերած ժամանակից և հայ երեխաներին ուսում և կրթություն ջամբելու նվիրական ծառայությունից, ճեմարանին օգնել և օժանդակել են նաև իրենց նյութական մեծ ու փոքր նվիրատվություններով:

Հայտնի ուսուցիչների և տեսուչների հետ հարկ և տեղին է հիշել նրանց արժանի հետևորդ սաներին՝ գրաբարագետ և անվանի հայագետ Մկրտիչ Էմինին, մեծ առևտրական ու բանասեր Թադեոս Ավետուսյանին, պատմաբան Հարություն Օվանյանին, գրաբարագետ և թարգմանիչ Խաչիկ Թոմասյանին, հմուտ հայագետ ու «հոգատար կալկաթահայութեան» Թոմաս Մելքումյանին, Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու կանոնադրության հեղինակ,

գրաբարագետ Հարություն Աբգարյանին, կալկաթահայության ամենահայտնի և կարկառուն դեմքերից ու մեծահոգի բարեգործներից Հովհաննես Գալստյան ասպետին, հայազգի բարերար Պետրոս Կրետին, որը 1931 թ. ճեմարանն օժտում է գեղեցիկ ու հարմարավետ լողավազանով և այն գործում է առ այսօր, բոլորին քաջածանոթ, ազնիվ, նախանձախնդիր ու կրթասեր հայորդուն՝ Դավիթ Դավթյանին, որի նյութական միջոցներով 1922 թ. Կալկաթայում բացվում է Դավթյան օրիորդաց դպրոցը և այն այսօր կոչվում է Դավթյան օրիորդաց վարժարան՝ որպես քույր դպրոց հանդես գալով Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի տեսչության հսկողության և խնամակալության ներքո, գրաբարագետ ու պատմաբան Մեսրոպ Մեթյանին, Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Կյուրեղ Արքեպիսկոպոս Իսրայելյանին և այլոց:

Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հարուստ պատմության նոր փուլի սկիզբը դրվում է 1999 թ. երբ այն հանձնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսին է վերապահվում ճեմարանի գործունեությունն ամբողջությամբ տնօրինելու իրավունքը: Ճեմարանի կառավարիչը և օգնական հոգևորականները նշանակվում են Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Ներկայում Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը գործում է որպես երկսեռ, անգլիական թեքումով հայկական գիշերօթիկ դպրոց: Այն մաս է կազմում Դելիի՝ հնդկական տասնամյա դպրոցական կրթության որակավորման խորհրդի, ինչպես նաև աշակերտներին լավագույնս պատրաստում է 10-րդ դասարանի ավարտական քննություններին: Հետագա՝ 11-րդ և 12-րդ դասարանների կրթությունը ճեմարանականները շարունակում են Կալկաթայի Լա Մարտինիեր դպրոցում, որն ավարտելուց հետո դյուրությամբ ընդունվում են Կալկաթայի հայտնի

համալսարաններ՝ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով:

2022-2023 ուսումնական տարում Ճեմարանում դասավանդում են 15 հնդիկ և 7 հայ ուսուցիչներ: Դասավանդվող առարկաների թիվը երկու տասնյակից ավելի է: Ուսուցման լեզուն հիմնականում անգլերենն է, բացի՝ «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հայ Եկեղեցու պատմություն» և «Երաժշտություն» առարկաներից, որոնք ուսուցանվում են հայերեն: Ճեմարանում անգլերեն դասավանդվող առարկաներն են՝ հնդկերենը, անգլերենը, անգլիական գրականությունը, մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, աշխարհագրությունը, համաշխարհային պատմությունը, արվեստը, համակարգչային ծրագրավորումը, տնտեսագիտությունը, առևտրային ուսումնասիրությունները և այլն:

Անձամբ մեզ համար մեծ պատիվ է լինել կառավարիչը հայկական հնագույն կրթական հաստատության, որի արմատներն Աստծո կամքով և հայ ազգի սերուցքի տեսլականի, նախանձախնդրության և տքնաջան աշխատանքի շնորհիվ շատ խորն ու հաստատուն են՝ մշտապես ամուր և անսասան պահելու նրա կրթական բարձր մակարդակն ու բարի ավանդույթները:

Թող Աստված մեր ազգային կյանքում բազմապատկի գերորակյալ հայկական դպրոցների թիվը, որտեղ հայ մանուկը կարողանա գիտությամբ և հավատքով, իմաստությամբ և Աստծո շնորհներով առլեցուն աճել ու զարգանալ: Հայկական կրթօջախներում հայ մանուկը միշտ պիտի բարձրանա և երբեք չպիտի նվաղի ու նվազի, իսկ եթե պիտի խոնարհվի, ապա միայն ցորենի հասկի պես ու նրա օրինակով՝ իր միջի ասոքը յուր ազգին ու եկեղեցուն ծառայեցնելու և օգտակար լինելու պայմանով:

Հուսկ, մեր օրհնությունն ենք բերում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության

բաժնի վարիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Մտեփանյանին, որի գրությանն ընդառաջ՝ թղթին հանձնեցինք մեր համառոտ, բայց և աղոթախառն խոսքը՝ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված գիտական նյութերը մեկ ժողովածուով հրատարակելու կապակցությամբ: Հույս ունենք, որ վերոնշյալ ժողովածուն մեծ խանդավառություն կմտցնի և բավական լույս կսփռի հայ գիտական կամ պարզապես ընթերցասեր շրջանակների վրա, որոնք հետաքրքրված են կամ քայլեր են ձեռնարկում խորությամբ և հանգամանալից ուսումնասիրել հայկական գաղթօջախներում գործող ազգային դպրոցների, ի մասնավորի Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի պատմությունը:

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՑԱՆ

Վ.Գ.Պ.

Հայաստան

ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍՑԱՆ

Հայաստան

ՊԱՐՄԿԵՐԵՆ ԵՒ ՕՍՄԱՆԵՐԵՆ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՂ ԺԷ-ԺՂ
ԴԱՐԵՐՈՒՄ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՀԱՅ
ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՄԱՍԻՆ¹

Հիմնաբառեր. վաճառական, առևտուր, խնդիր, Սեֆյան պետություն, Օսմանյան կայսրություն, Նոր Ջուղա, Նաղիր շահի իշխանություն, հարկ:

Հայ վաճառականները կարևոր դեր էին խաղում Եվրոպայի և Արևելքի երկրների միջև առևտրական փոխհարաբերություններում XVI-XVIII դարերում: Նրանց առևտրական գործունեության հաջողությունները պայմանավորված էին մի շարք գործոններով, որոնցից էին առևտրի հմտություններին տիրապետելը, կրոնա-աշխարհայացքային ճկունությունը և լեզվական կարողությունները: Բնարկե, հայ վաճառականների գործունեության արդյունավետությունը կախված էր նաև Արևելքի երկրներում իշխանությունների կողմից առևտրի զարգացման ու վաճառականության նկատմամբ հանդես բերած վերաբերմունքից, ճանապարհների անվտանգությունից և քաղաքական իրավիճակից:

¹Հոդվածը հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի 21T-6A163 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

Բնականաբար, իշխանությունների հոգածությունը առևտրական ճանապարհների անվտանգության, մաքսային հարկերի կանոնակարգման, իջևանատների քանակի ավելացման ուղղությամբ նպաստում էր ընդհանրապես առևտրի ու տնտեսության զարգացմանը: 17-րդ դարի առաջին կեսին Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության տարածքով իրականացվող առևտուրը մեծապես զարգանալով, երկրորդ կեսին որոշակիորեն նվազում է՝ կապված Եվրոպական երկրների հետ ծովային առևտրի ակտիվացման և ցամաքային ճանապարհների վտանգավորության աճի, սովի ու համաճարակների հետ: Զաքարիա Ագուլեցին մասնավորապես 1667 թ. իրադարձությունների նկարագրության մեջ մատնանշում է օսմանյան տարածքում 8-9, իսկ սեֆյան տարածքում՝ 2-3 քարավանների կողոպտման դեպքերի մասին¹:

17-րդ դարի երկրորդ կեսից Սեֆյան Սուլեյման (1666-1694 թթ.) և Սուլթան Հուսեյն (1694 – 1722 թթ.) շահերի իշխանության տարիներին Սեֆյան պետության հետզհետե քաղաքական ու տնտեսական թուլացմանը զուգընթաց ուժեղանում էր մահմեդական հոգևորականության դերն ու ազդեցությունը երկրի կյանքում: Սեֆյան իշխանությունների վրա գերակշիռ ազդեցություն ունեցող շեյխ ուլ-իսլամ Սոհամմադ Բադեր Մաջլիսիի (1627-1699 թթ.) նախաձեռնությամբ է, որ, ըստ որոշ ուսումնասիրողների հաճախանում են անհանդուրժողականության երևույթներն ու բռնաճնշումներն այլադավանների նկատմամբ²:

¹ Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 72:

² 250, 1372, سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1372،
Brunner R., Majlesi, Moḥammad-Bāqer, Encyclopedia Iranica, 2011, available online: <http://www.iranicaonline.org/articles/majlesi-mohammad-baqer> (accessed on 17 February 2019), Roemer H., “The Safavid Period”, edited by P. Jackson, The Cambridge history of Iran, vol. 6, Cambridge, 2006, p. 313.

Թե՛ հայկական և թե՛ օտար աղբյուրներում, այդ թվում՝ պարսկերեն վավերագրերում, պահպանվել են տեղեկություններ 17-րդ դարի II կեսից սկսված հայ վաճառականների գործունեությանը խոչընդոտող և վնասող շատուշատ իրողությունների, երևույթների, ինչպես նաև մահմեդական իշխանությունների անարդար և կողոպտիչ վերաբերմունքի մասին, որը հիմնականում միայն մեկ նպատակ ուներ՝ առավելագույնս կորզել նրանց եկամուտներից և տիրանալ նրանց ապրանքներին ու հարստությանը:

Մեֆյան պետության ներսում 17-րդ դարի II կեսին նկատվող մահմեդական իշխանությունների անհանդուրժողականության աճին համահունչ այլադավանների և հատկապես Իրանի տարածքում շրջող հայ վաճառականների նկատմամբ կիրառվող բռնությունների դեմ են ուղղված շահ Մուլեյմանի 1668 և 1669 թթ. հրովարտակները, որոնցով արգելվում է նրանց բռնի մահմեդականացումը այդ երկրի որևէ շրջանում¹: Անշուշտ, նման հրովարտակների առկայությունը Մատենադարանի կաթողիկոսական դիվանում խոսում է այդպիսի խնդրի գոյության մասին, որին հակազդելու նպատակով են դրանք ձեռք բերվել Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության շրջանում:

18-րդ դարի սկզբից Մեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև ցամաքային առևտուրը թեև շարունակվում էր, սակայն այն էլ՝ ավելի նվազում է, հատկապես աֆղանական տիրապետության, Նադիր շահի ռազմաբռնատիրական իշխանության պայմաններում տիրող ոչ բարենպաստ տնտեսական իրավիճակի և ներքին քաղաքական անհանգստությունների հետևանքով:

¹ Կոստիկյան Զ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երևան, 2005, վավ. 21, 35:

Նադիր շահի իշխանության (1736-1747) շրջանում կրոնական բռնաճնշումներին փոխարինելու են գալիս նոր կարգի դժվարություններ, որոնք էլ՝ ավելի դժվարացնում են հայ վաճառականների առևտրական գործունեությունը Իրանի տարածքում: Դեռևս այն ժամանակ, երբ Նադիրը, որպես շահ Թահմասպ Բ-ի զորավար, պայքարում էր Իրանում իրենց տիրապետությունը հաստատած աֆղանների դեմ, դրսևորվում են վաճառականության հանդեպ նրա վերաբերմունքի հիմնական հատկանիշները: Աբրահամ Երևանցու հաղորդմամբ, 1730 թ. Նադիրի հրամանով բռնագրավվում է Համադանում կողոպտված հայ վաճառականների ողջ ապրանքը¹:

Նադիր շահը շարունակաբար կողոպտչական պատերազմներ էր մղում հարևան երկրների նկատմամբ, որը նրա պետական գանձարանի եկամտի հիմնական աղբյուրն էր: 1741-1743 թթ. դեպի Դադստան կատարված անհաջող արշավանքները ոչ միայն հաղթանակ և հարուստ ավար չեն բերում պետությանը, այլև մեծ ծախսերի տեղիք են տալիս²: Դրա հետևանքով Նադիրի պետությունը ֆինանսական դժվարությունների առաջ է կանգնում: Դատարկված գանձարանը 1742-1743 թթ. պաշտոնյաները փորձում էին լցնել հավելյալ հարկերի, նախկինում չգանձված հարկերի կրկնակի գանձումներով, դրամաշորթությամբ ու դաժան մեթոդներով կորզված ծանր տուգանքների միջոցով³: Այս պատճառով նրա պետության տարածքում առևտրով զբաղվող հայ և, մասնավորապես, Նոր Ջուղայի ունևոր վաճառականները

¹ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատեագմաց, Երևան, 1938, էջ 53:

² Avery P., "Nādir Shāh and the Afsharid Legacy", *The Cambridge History of Iran*, vol. 7, Cambridge, 2008, pp. 44-45.

³ Арунова М. Р. и Ашрафян, К. З., Государство Надир шаха Афшара, Москва, изд. Восточной Литературы, 1958, с. 99, 100.

դառնում են իշխանությունների հատուկ ուշադրության առարկա:

Հաճախակի երևույթ են դառնում պաշտոնյաների դրամաշորթությունն ու հավելագանձումները, որոնք վավերագրերում նշված են դասթանդազ և շիլթադաթ եզրույթներով: Դրանք իրականում կեղծ ու հնարովի զանազան պատրվակներով (հաշվառված չլինելու, ինչ-որ հարկ վճարված չլինելու, սխալմունքի, զրպարտության և այլն) տարբեր հարկերի կրկնակի և ավելի անգամներ կատարվող հարկազանձումները և հարկային նորամուծություններն էին, որոնց մասին հիշատակություններ կան ինչպես Մատենադարանի կաթողիկոսական դիվանի¹, այնպես էլ Նոր Ջուղայի Ս Ամենափրկիչ վանքում պահվող պարսկերեն վավերագրերում:


Շիլթադաթը, Վ. Մինորսկու բացատրությամբ, ունեցել է «պատճառ» նշանակությունը: Նա նշում է, որ հետագայում շիլթադաթը ձեռք է բերել կեղեքում, հալածանք իմաստները²: Հ. Փափազյանի պարզաբանմամբ՝ այդ եզրույթով անվանում էին այն անօրինական հարկերը, որոնք գանձվում էին ռայաթներից պետական պաշտոնյաների կողմից զանազան կեղծ ու հնարովի պատճառներով³:

Գրեթե նույն իմաստով XVIII դարի I կեսի վավերագրերում կիրառվում էր նաև դասթանդազ (دست انداز)- եզրույթը՝ կազմված «դասթ – دست» (ձեռք) գոյականից և «անդախթան- انداختن» (նետել)

¹ Կոստիկյան Զ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, IV, Երևան, 2008, վավ. 15, 16, 21, 25, էջ 249, 254, 271, 285:

² Minorsky V. "A 'Soyūrghāl' of Qāsim b. Jahāngīr Aq-Qoyunlu (903/1498)." Bulletin of the School of Oriental Studies, University of London, vol. 9, no. 4, Cambridge University Press, 1939, p. 947.

³ Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1956, էջ 117:



բայից, որը բառացի նշանակում է «ձեռք նետող», «ձեռք ձգող»: Խոսքը վերաբերում է պետական պաշտոնյաների կողմից զանազան պատրվակներով ռայաթներից զանձվող տուրքերին, երբ նրանք, այսպես ասած, «ձեռք էին երկարում» ռայաթների ունեցվածքին և փորձում դրամ կամ այլ արժեքավոր իրեր շորթել նրանցից¹:

Այն, որ այս տիպի հավելագանձումները թույլատրված էին և լայնորեն կիրառվում էին Նադիրի պաշտոնյաների կողմից, փաստում են նաև Ագուլիսի հայ վաճառականներին տրված ստացականները, որոնք պահվում են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում: Դրանցում նշված է, որ տրված են նախորդ և ներկա տարիների որոշ (մալոջահաթ, վջուհաթ և մադադե խարջ)² հարկերի ստացման կապակցությամբ, որոնք վճարվել են որպես դասթանդազ³:

¹ Ն. Փափագյան, նշվ. աշխ., էջ 107:

² Մալոջահաթը հիմնական հարկն էր, որ վճարվում էր հողային և այլ սեփականությունից Իրանում և նրա տիրապետության տակ գտնվող Այսրկովկասի տարածքում ինչպես Սեֆյան, այնպես էլ հետագա ժամանակաշրջանում: Վջուհաթ անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք զանձվում էին կանխիկ դրամով: Մադադե խարջ Վ. Մինորսկին բացատրում է որպես Սեֆյան շրջանում որոշ պաշտոնյաների տրամադրված արտոնյալ տուրք (Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, p. 109, 183). Վ. Ֆլորը այն բնութագրում է որպես լրացուցիչ նպաստ, որ տրամադրվում էր ծախսեր հոգալու համար (Floor, W., *A Fiscal History of Iran in the Safavid and Qajar Periods*, New York, 1998, p. 519). A number of documents referring to the petitioners of this decree show that madad-i kharj had been frequently paid by them in the period (M.A.C., f. 1g, d. 1185, 1200, 1219, 1243, 1253).

³ ՄՍ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 1174, 1185, 1200, 1219, 1243, 1253:

Ինչպես մատնանշում են Նադիր շահից ձեռք բերված 1740-1741 թթ. երեք հրովարտականեր, հարկային հավելագանձումների համար առիթ կարող էր լինել հարակից շրջաններից Նոր Ջուղա ներգաղթած լինելու հանգամանքը, անկախ այն քանից, որ ներգաղթածները 30, 40 և 50 տարի էր, ինչ իրենց բնակության նոր վայրում կանոնավոր կերպով վճարում էին իրենց հարկերը¹: Թեև այդ հարկագանձումները հրովարտակներով պաշտոնապես արգելվում էին, այնուամենայնիվ, դրանց հաճախակի հիշատակումը խոսում է այն մասին, որ այդ հավելագանձումները կատարվում էին իշխանությունների թողտվությամբ, եթե ոչ նրանց դրդմամբ:

Հավելյալ հարկերի խնդիրը թերևս ամենամտահոգիչն էր Նոր Ջուղայի հայության և հատկապես այնտեղի վաճառականության համար, որովհետև 174-3 թթ. հարկային հավելագանձումների կապակցությամբ մի քանի հրովարտականեր են ձեռք բերվել նրանց կողմից: Հրովարտակներից մեկով արգելվում են դասթանդազն ու հավելագանձումները, որոնք կցված խնդրագրում նշվում են որպես ջուղահայերից գանձված ավարիզաթ, էսթեսվաբիաթ, սոյուրսաթ և ջահաթ հարկեր²:

Նադիր շահի օրոք շիլթադ, դասթանդազ կոչված հարկային հավելագանձումներից պաշտպանված չէին նաև պետության բարձրաստիճան պաշտոնյաները, որոնցից էր Նոր Ջուղայի հայ համայնքի ղեկավարը: Այնտեղի քալանթար Հակոբի խնդրագրում բողոք է հայտնվում ոչ միայն մասնավոր պահանջներով նրան պատճառած անհանգստությունների դեմ, այլև ներկայացվում է այնտեղի հայ վաճառականության ընդհանուր դժգոհության և հուսահատության պատճառները. այն, որ նրանց աշխա-

¹ Կոստիկյան Ք., Նոր Ջուղան Նադիր շահի իշխանության շրջանում, Հանդես ամսօրեա, 2016, թ.1-12, էջ 288-289:

² Կոստիկյան Ք., Նոր Ջուղան, էջ 300-301:

տանքը և ծառայությունները պետությանը, որի շնորհիվ պետական գանձարանը մեծ օգուտներ էր ստանում, հաշվի չեն առնվում, որը նրանց հուսահատեցնում է և վատ հետևանքներ կարող է ունենալ նույն գանձարանի եկամուտների վրա¹:

Նադիր շահի՝ Նոր Ջուղայի հայ վաճառականության խնդրագրով հրապարակված 1743 թ. հրովարտակն էլ բացահայտում է մեկ այլ անօրինականություն, որ կիրառվում էր հայ վաճառականների նկատմամբ. դա նրանց մոտ բացակայող ապրանքների պահանջն էր: Ինչպես նշվում է խնդրագրի մասում՝ «իրենք չունենալով այդ ապրանքը ստիպված էին լինում այլ վաճառականներից այն գնել շատ բարձր գնով», որը մեծապես վնասում էր նրանց առևտրին: Նմանատիպ պահանջներ պետական պաշտոնյաները ներկայացնում էին Իրանի նաև այլ վայրերի վաճառականներին, որի մասին փաստում է Ագուլիսի վաճառական Խոջա Հովհաննեսի կողմից 1743 թ. ձեռք բերված հրովարտակի բովանդակությունը²:

Շատ ավելի բարդ իրավիճակում էին հայտնվում հայ վաճառականի՝ օտար երկրում մահվան դեպքում նրա ժառանգները և նրա հետ համագործակցող մյուս վաճառականները, որոնք գումար կամ ապրանք էին տրամադրել մահացածին, քանի որ մահմեդական իշխանության բեյթ ուլ-մալ կոչված գանձարանը³ հաճախ շատ արագ որոշում էր կայացնում սեփականացնելու նրա ունեցվածքը: Այս առթիվ շատ պատկերավոր է արտահայտվում Զաքարիա Ագուլեցին Զմյուռնիայում մահացած ջուղայեցի Գրիգոր Դավաջիի մասին. «Մեռաւ, դժխոց բաժին էլաւ, մնաց այս

¹ Նույն տեղում, էջ 303-304:

² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 1288:

³ Այս եզրույթի տակ հասկացվում էին հարքունիս գրավվող և պետական սեփականություն դարձվող ամեն ինչ (Փափազյան Հ., նշվ. աշխ., էջ 107):

սատակածիս վերայ բազրկանի ապրանք 300.000 մառչիլ: Ունս փող ին շախով տվել, ունս ապրիշում կամ այլ ապրանք: Ամէն երկրի մարդի կեր... Այս սատակելուս որ սատակեցաւ, փող շատ ունէր Հնդստան, թէ Ֆոնգստան, ամէն ուրիշ մարդ կերաւ: Մորայ դավին (դատական վեճը) մինչի 3 տարի արարին, ախրն փուշ էլաւ, փող չի բիաւ եկաւ: Շատ շատ մարդ ավարայ էլաւ»¹:

Ինչպէս փաստում են Օսմանյան կայսրության որոշ քաղաքների դատական մատյանների գրանցումները, առանձին դեպքերում, հայ վաճառականների համերաշխ ջանքերով հնարավոր է եղել վերադարձնել մահացած վաճառականի ունեցվածքը: Այդպիսին է Մանիսայում մահացած ագուլիսցի Աղավելի ունեցվածքի տնօրինման շուրջ 1648 թ. հունիսի 6-ին հարուցված գործի ավարտը: Ըստ թուրք հետազոտող Չաքմաք Օմերի՝ ագուլիսցի վաճառականի ունեցվածքը նախ բռնագրավվում է Օսմանյան կայսրության բէյթ ուլ-մալի օգտին, ապա նորից արծարծվում Բուրսայում գտնվող նրա եղբայրներ Ջանիի և Մարգարի պահանջով²: Մի քանի այլ վաճառականների վկայությունների և համատեղ ջանքերի շնորհիվ միայն հաջողվում է վերադարձնել մահացածի ունեցվածքը ժառանգներին³:

Նմանատիպ իրավիճակում են հայտնվում էրզրումցի վաճառական Ալեքսանի ժառանգները, երբ նա մահանում է Հնդկաստանի Շահչահանաբաղ քաղաքում (Հին Դելի)՝ իր ունեցվածքի մի մասը թողնելով ջուղայեցի Խոջա Մաֆարի մոտ: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող պարսկերեն վավե-

¹ Չաքարիա Ագուլեցու օրագրությունը, էջ 72:

² Çakmak, Ömer; "On Yedinci Yüzyılda Osmanlı Topraklarında Bir Tüccar Grubu: Agulisli Ermeni Tüccarlar." *Ermeni Araştırmaları*, Sayı 67, 2020, s. 167.

³ Լույն տեղում, էջ 168:

րագրերից երկուսը, գրված հիշրայի 1163 թ. զի հեջջե ամսի 14-ին (1750 թ. նոյեմբերի 14), վերաբերում են այս խնդրին:

Դրանցից մեկը շարիաթական տեղեկանք է, ըստ որի էրզրումցի Խոջա Ալեքսանը Հնդկաստան ուղևորվելով և այնտեղ անսպասելի մահանալով՝ նրա ապրանքների և կանխիկ գումարի մի մասը մնում է նոր ջուղայեցի Խոջա Սաֆարի մոտ: Խոջա Ալեքսանի ժառանգները լիազորել էին Ղազար Ջահկեցի կաթողիկոսին, որպեսզի իր մարդուն ուղարկի Խոջա Սաֆարի մոտ վերոհիշյալ ունեցվածքը, որը գնահատվում էր 250 թուման (համարժեք էր հնդկական 5000 ռուփիեի) պահանջելու: Կաթողիկոսը երկու մարդ էր վարձել և ուղարկել Սպահան, այնտեղից էլ՝ Շահ-ջահանաբադ, որպեսզի այնտեղից ստանար այդ գումարը: Խոջա Սաֆարը համաձայնվել էր ուղարկել 10 քսակ (քիսա) օտար փող, որ համարժեք էր 250 թումանի՝ այսինքն, մեկ քսակը համարժեք էր 25 թումանի: Այնուամենայնիվ, այդ գումարը դեռ կաթողիկոսին չէր հասել: Ըստ փաստաթղթի, կաթողիկոսը տեղի տալով ժառանգների խնդրանքներին՝ համաձայնվում է այդ գումարի մեծ մասը նրանց վերադարձնել, բացի Ալեքսանի կողմից վանքին վակֆ արված 1 քսակ ոսկուց և այդ խնդրի կապակցությամբ իր լիազորած անձանց ճանապարհածախսը կազմող 2 քսակ ոսկուց. ընդամենը՝ 75 թուման: Ըստ նույն փաստաթղթի՝ դատարանում կաթողիկոսը նրանց է հանձնում 3 քսակ ոսկի (75 թուման) և 4 քսակի փոխարեն տալիս պարտամուրհակ, որի համաձայն ութ ամսվա մեջ կաթողիկոսը պետք է մարեր դրանցով պարտավորված պարտքը (100 թուման), և հիշյալ ժառանգներն այլևս չպետք է որևէ գումար պահանջեին կաթողիկոսից¹:

Այնուամենայնիվ, ինչպես պարզվում է հաջորդ փաստաթղթի բովանդակությունից, Խոջա Ալեքսանի ունեցվածքից մնացած

¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1319:

ամբողջ 250 թուման կամ 5000 ռուբլիէ գումարը մնում են կաթողիկոսին: Երկրորդ փաստաթուղթն իրենից ներկայացնում է շարիաթական համաձայնագիր (մուսալեհե)¹, որով ժառանգներն իրենց համաձայնությունն են տալիս այդ ամբողջ գումարը նվիրատվություն (նազր) ձևակերպել «հանուն Աստծո», այսինքն՝ հանձնել Հայոց Եկեղեցուն²:

Այսպիսով, Հնդկաստանում մահացած էրզրումցի հայ վաճառականի ունեցվածքից ստացված ամբողջ գումարը տվյալ դեպքում ի վերջո մնում է Հայոց Եկեղեցուն, իսկ ժառանգները ոչինչ չեն ստանում:

Իհարկէ, հայ վաճառականների խնդիրները և դժվարությունները թե՛ Արևելքի և թե՛ Արևմուտքի երկրներում բազմաթիվ ու տարատեսակ էին: Մենք անդրադարձանք միայն Արևելքի երկրներում նրանց հարկային և ժառանգության հետ կապված որոշ խնդիրներին, որոնք արտացոլվել են մեր ձեռքի տակ եղած վավերագրական նյութերում: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող խնդիրները հիմնականում վաճառականները հաղթահարում էին իրենց միջև համերաշխ գործողությունների ու հնարամտության շնորհիվ: Հայոց Եկեղեցու միջամտությունն էլ նման դեպքերում թելադրվում էր նրա շահերից և հնարավոր էր դարձնում դրա յուրացումը իր օգտին:

¹ Այս տիպի փաստաթղթերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Գոստիկյան Զ., Մ. Խեչո, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, III, Շարիաթական-նոտարական փաստաթղթեր, Երևան, 2018, էջ 17-18:**

² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1318:

KRISTINE KOSTIKYAN
Doctor of History, Armenia
ANA HIT TOVMASYAN
Armenia

PERSIAN AND OTTOMAN TURKISH DOCUMENTS ON SOME
PROBLEMS OF THE ARMENIAN MERCHANTS IN THE EASTERN
COUNTRIES OF EAST IN 17TH -18TH CENTURIES

SUMMARY

Keywords: merchant, trade, Sefevid state, Ottoman empire, problem, New Julfa, Nadir Shah's rule, tax.

The Persian and Turkish documentary sources have kept evidence about some problems that Armenian merchants faced in the countries of Ottoman Empire, Iran and India in the 17th-18th centuries. The problems considered in the article are connected with: the increase of religious intolerance in Safavid Iran in the second half of the 17th century and the facts of forced conversion of Armenian merchants to Islam, reflected in royal decrees; the tax excesses and extortion peculiar for the period of Nadir shah's rule, other unlawful actions performed as regards Armenian merchants by his officials causing their despair and migration from Persia. The research on Persian documents of Matenadaran reveals some details referring to the ways and methods of tax levy in Nadir shah's state leading to the destruction of trade. The authors examine also the problems connected with inheritance of the Armenian merchants who had unexpectedly died in Ottoman Empire and Moghul India. The data of the Ottoman and Persian documents show that the successful settlement of the problems in such cases could be achieved only through a closer cooperation between Armenian merchants. Two Persian shari'ya

documents of the Matenadaran archive show also that in cases of the interference of the Armenian high clergymen, the problem could be settled in a way favouring the interests of the Armenian Church.

КРИСТИНЕ КОСТИКЯН

д.и.н., Армения

АНАИТ ТОВМАСЯН

Армения

ПЕРСИДСКИЕ И ОСМАНСКИЕ ДОКУМЕНТЫ О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ АРМЯНСКИХ КУПЦОВ В СТРАНАХ ВОСТОКА В XVII-XVIII ВЕКАХ

РЕЗЮМЕ

Ключевые слова: купец, торговля, Сефевидское государство, Османская империя, Новая Джульфа, власть НаDIR шаха, налог.

Персидские и турецкие документальные источники сохранили свидетельства о некоторых проблемах армянских купцов в странах Османской империи, Ирана и Индии в XVII-XVIII вв. В данной статье рассмотрены проблемы, связанные с ростом религиозной нетерпимости в Сефевидском Иране во второй половине XVII века и фактами насильственного обращения армянских купцов в мусульманство, отраженными в шахских указах; с налоговыми вымогательствами и чиновничьим произволом, характерным для периода власти НаDIR шаха, приводивших купцов отчаянию и эмиграции. Изучение персидских документов Матенадарана выявляет некоторые подробности относящиеся способов и методов налогообложения, препятствующих торговле. Авторы исследуют также проблемы, связанные с наследством купцов, неожиданно скончавшихся в

Османской империи и Могольской Индии. Данные османских и персидских документов показывают, что успешного решения в таких случаях можно было достичь только путем тесного взаимодействия армянских купцов. Два персидских шариатских документов архива Матенадарана показывают, что в случае вмешательства армянских высокопоставленных духовных лиц, проблема могла быть решена в пользу интересов армянской церкви.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հիմնադրամեր. Սուրաթ, Հայդարապատ, Գոլկոնդա, Մադրաս, Շամիր Սուլթանում, Նազար Նոջամալեան, Գորգին Նան, մաքսատուն, յանձնարարական գիր:

ԺԸ. դարի երկրորդ կեսի հայ աղամանդավաճառ եւ մատենագիր Յովհաննէս Թովմաճանեանի¹ Ս. Ղազարի մատենադարանում պահուող ձեռագիր «Պատմութեան» (ձեռ. 1688) ԺԸ. («Յաղագս գնալոյ Թովմաճանին ի Ճիտտէն ի Հնդկիս ի Սուրէթ եւ անտի մինչեւ ի Մատրասս հասանիլն...»), ԺԸ. («Յաղագս Թովմաճանին ի Մատրասէն ի Նեկէրաթան գնալոյն...») եւ ԺԹ. («Յաղագս չուելոյ Թովմաճանին ի Մատրասէ ի Մուրիս կղզին եւ յելանելն ի նաւէն Ինկիլիզին...») գլուխները վերաբերում են հեղինակի դէպի Հնդկաստան կատարած ուղեւորութեանն ու գործունեութեանը:

Ճանապարհացոյց եւ Ժամանակագրութիւն

Յովհաննէս Թովմաճանեանը Հնդկաստան ուղեւորուեց Եթովպիայից իր 15-ամեայ եթովպացի ծառայի հետ Սուրաթ մեկնող «չելէբի Կենճէվարի» նաւով՝ վճարելով երկուսի համար 50 ռեալ: Նա հասաւ Ջիդդէ (Jeddah - այստեղ եւ ստորեւ բնակավայ-

¹ Յովհաննէս Թովմաճանեանի եւ իր ձեռագիր մատենանի մասին անելի մանրամասն տե՛ս է. Թաջիրեան, Ս. Կարապետեան, *Յովհաննէս Թովմաճանեան ~ ԺԸ. դարի հայ մատենագիր. Կեանքը եւ մատենագրական գործունէութիւնը*, «Բազմավէպ», 2009, էջ 206-259: Յօդուածում փակագծերում նշուած են ձեռագրի համապատասխան էջերը:

րերի լատիներեն ժամանակակից անուանումների նոյնականացումը մերն է) եւ մնալով այնտեղ 74 օր, 1766 օգոստոս 1-ին դուրս եկաւ այնտեղից Սուրաթ ուղեւորուելու համար: 10 օրից հասնելով «Մուխայ»՝ (al-Mukhā), «որ է մայրաքաղաքն Երջանիկն Արաբիոյ, այսինքն Եմէնու»: Օգոստոսի վերջին նրանց նաւը խարխսի է ձգում («արկին գերկաթն ի ծովն») Սուրաթի ծովածոցում եւ սեպտեմբերի 3-ին նա արդէն Սուրաթում էր՝ Զիդդէից դուրս գալուց մէկ ամիս անց:

Ուղեգիրը, Սուրաթից (ուր մնաց 61 օր) դուրս գալով 1766 թ. նոյեմբերի 1-ին, ուղղում է դէպի Բունա (Pune, Poona - Maharashtra նահանգի մայրաքաղաքը) Մարաթիաների՝ («Մարադու») «կռապաշտ թագաւորի երկիրն՝ ի Քոստմիլիպարն»¹:

Թովմաճանեանը Բունա է հասնում 17 օր անց² եւ քաղաքում մնում է 13 օր: Ապա ուղեւորում է Վիսիապուր (Bijapur)³ ուր պատերազմական գործողութիւնների պատճառով այդ պահին գտնում էր Մարաթիաների թագաւորը: Թագաւորի հետ առեւտրական գործարքի անյաջողութիւնից յետոյ Թովմաճանեանը շարունակում է իր ճանապարհը եւ դեկտեմբերի 28-ին հասնում է Մելա-

¹ Իմա՝ Côte militaire: Հաւանաբար նկատի ունի Սուրաթին մօտ գտնուող (ծովափնեայ) անգլիական ռազմական բազան:

² Հեղինակը մանրամասնօրէն նշում է ճանապարհիին անցած բոլոր բնակավայրերը՝ «գանուանս քաղաքաց եւ գիւղօրէից եղելոց ի Սուրէթու մինչեւ ի Բունայ, են այսոքիկ. նախ ի Սուրէթու՝ Չոքի Քումարի, անտի Չոքի Քալոտրան (Kalotran), Չոքի Պալտոլ (Baltal), Նիքբոր (Nikbor), Բիեռայ, Սունկուրայ, Ռընբուրա, Նիաբուր, Ալտանի, Բիբրննառ, Վիրկամ (Vikram), Ռամսէր, Ճոբոբամ, Պրանգրի, Նիմօռ, Ջեննաբուրի, Պօթայ (Pota), Սինկէ (Sinkli), Մարկաբ (Mārigpur) եւ անտի՝ ի Բունայ»:

³ Հեղինակի ճանապարհացոյցը հետեւեալն է. «...ի Բունայէն մինչեւ ի տեղի պատերազմին անցեալ գիւղօրէից անուանք են այսոքիկ. նախ ի Բունայէն ի գեղն Նունի (Nauni), անտի՝ Ռէճէվար, անտի՝ Չօկամ (Chakan), Մալեսերես, Գոլ (Gol Gumbaz), Տէյվար եւ անտի Վիսիաբուր (Visiapour)»:

բուր (Miyapur), ապա անցնում էթկիր (Udgir), Լարան բերդ, Գուլոն-
դայ եւ 1767 թ. յունուարի 3-ին հասնում Հայտարապատ եւ մնում
այնտեղ մօտ 30 օր:

Հայտարապատից Թովմաճանեանն ուղղում է դէպի 13 օ-
րուայ հեռաւորութեան վրայ անգլիական տիրապետութեան
տակ գտնուող «Մուշիլ Բաթան Պէնտեր քաղաքն Ինկիլիզու»¹ (ի-
մա՛ Machilipatnam, նաեւ Bandar), ուր հասնում է փետրուարի 16-
ին:

Փետրուարի 24-ին դուրս գալով Բենդերից Մարտի 10-ին
Թովմաճանեանը հասնում է Մադրաս²:

Յովհաննէս Թովմաճանեանը առանձին յիշատակում է (էջ
261-262) նաեւ այն բնակավայրերը ուր այցելել էր Մադրասում իր
գործունէութեան ընթացքում. «Եւ ապա, ելեալ անտի, եմուտ ի
Քուլտուր (Cuddalore) քաղաքն ինկիլիզու³, անտի՝ ի Բոոթնով

¹ Հեղինակի ճանապարհացոյցը հետեւեալն է. «...ի Հայտարապատէն
չորս քոս, այսինքն միլ, հեռի է Հայէթնակար (Hayatnagar) եւ էր մեծաշէն
քաղաքն, բայց այժմ յոյժ աւեր, անտի՝ ի Մէլքաբուր (Malkapur), ի Ռամ-
բալի (Rambali), ի Նարքրաբալի (Narketpalle), ի Նաքարքալ (Nakrekal), ի
Սուրիաբերդ (Suryapet), ի Նիլկուրամ, ի Նալագօնդբալի (Nalgonda), ի
Մըքաբերդ (Marapaka), ի Նընկամ (Nandigama), ի Կանիբըթեալ
(Kondapalli) եւ անտի ի Բճվարա (Vijayawada), որ նեղուց ծովոյն Մուշիլ
Բաթանի: Եւ անտի յետ երկուց աւուրց՝ ի Մուշիլ Բաթան ծովեզրն
Մատրասու Պէնտեր քաղաքն Ինկիլիզու եւ եհաս փետրվարի 16-ին եւ
եկաց անդ Թովմաճանն գաւուրս 8»:

² Հեղինակի բերում է Բենդեր-Մադրասի հետեւեալ ճանապարհացոյցը.
«Ի Պէնտերէն յետ երկուց աւուրց մեծ Քիշնագետն (Krishna River)
վերոյգրեալ ի Բճվարա անցին 2 թօպաճ փայտեայ փորոքեալ կոճիւ, որ
եւ մեծ երկիւղ կրեցին ընդ անցանել եւ անտի ի Ելիթուր (Vellaturu), ի
Սունտուր (Sundur), յորում մեծ եւ մեծագին զարմանալի կոստուն մի
գոյր, գոր ֆրանցըզն ընդ առնուլն զայն քաղաք զՍունտուրն քայքայեալ
են, գորոյ զմեծաշէն քարինսն տեսեալ էր Թովմաճանն: Եւ անտի ի
Կաւումաթաբան եւ անտի ի Մատրաս, 1767 մարտի 10»:

³ Բնակավայրը ֆրանսիացիներից անգլիացիներին էր անցել 1760-ից:

(Porto Novo, այժմ՝ Parangipettai) եւ իջեւանեցաւ ի տունն պարսկի ուրումն փղավաճառի, որ ունէր ի պարտիզի իւրում զ33 փիղս: Եւ անտի, ընդ 5 գետս անցանելով, եմուտ ի քաղաքն Տիվիգոթ¹, որ եւ էր ինկիլիզի երկիր, որ երբեմն ի ձեռս ֆրանսըզի անցեալ՝ քայքայեալ էր: Անտի էանց ի Թւմրավազ (Tirumullaiwasal) եւ անտի՝ ի Թրընկեվար (Tranquebar), որ բերդաւոր քաղաք է Տանիմարզի: Եւ անտի՝ ի Կարիկալ (Karikal) քաղաք բերդաւոր ֆրանսըզին է, որ եւ զսա երբեմն առեալ յինկիլիզէն զբերդն քայքայեալ էր: Եւ անտի՝ ի Նակուր (Nakur), որ կենճաւոր ուճային է: Եւ անտի՝ ի Նեկէրաթան (Nagappatinam), որ օլանտըզի է»:

Եթէ սրանց աւելացնենք նաեւ որ առեւտրական գործերով մի քանի օր լինում է նաեւ Պոնդիչէրիում (Pondicherry), ապա լիովին սպառած կը լինենք բնագրում յիշատակուող հնդկական բնակավայրերի ամբողջական ցանկը:

Յովհաննէս Թովմաճանեանի ելքը Մադրասից դէպի Եւրոպա թուագրում է 1768 թ. մայիսի 2-ով:

Երթեւեկութեան միջոցներ, յանձնարարական գրեր, մաքսաստներ

Ուղեգրութեան մէջ հեղինակը մշտապէս հանգամանօրէն նշում է գործածած տրանսպորտի տեսակն ու դրա հետ կապուած կատարուած ծախսերը՝ լինեն տարատեսակ նաւեր ու նաւակներ, ձի, ջորի, փիղ կամ հետիոտն:

Յովհաննէս Թովմաճանեանին ու իր հաբէշ ծառային ուղեկցում էին թարգմանը (15 ռուփի ամսեվճարով), «ձիադարմանը» եւ «գերկուս խասիդս, այսինքն զճանապարհացոյցս» (10 ռուփի ամսեվճարով):

Թովմաճանեանի տեքստը հնարաւորութիւն է տալիս ամենայն մանրամասնութեամբ հասկանալու միջնադարեան վա-

¹ Գուցէ Thaikka կամ Thrigopam:

ճառականի տեղաշարժուելու ու առետրի յաջողութեան հետ կապուած բոլոր մանրամասնութիւնները: Չկայ մի բնակավայր, ուր այցելութիւնից առաջ մեր հեղինակը, օգտուելով հայ վաճառականական ցանցերի ընձեռած հնարաւորութիւններից, նախապէս օժտուած չլինէր յանձնարարական ու երաշխաւորական գրութիւններով¹:

Ի դէպ սոյն գրութիւնները հարկ է տարբերել առետրավաշխատուական մուրհակներից՝ միակողմանի, երկկողմանի եւ այլաբնոյթ կոմենդաններից, որոնք լայնօրէն տարածուած էին ուշ միջնադարեան վաճառականական՝ այդ թուով հայ վաճառականների թե՛ եւրոպական եւ թե՛ արեւելեան գործունեութեան ցանցերում²:

Երաշխաւորական այս գրութիւնները պատասխանատուութեան մեծ բեռ էին կրում իրենց վրայ, քանի որ վաճառականը միայնակ չէր ճամփորդում, այլ ծառաների եւ օգնականների հետ, նրա ճամփորդական միջոցները (ձիեր, ջորիներ, ուղտեր եւ այլն) յաճախ մեծ թիւ էին կազմում: Չանտեսենք նաեւ վաճառականի կողմից տեղափոխուող առետրային կամ ապրանքային կապիտալը, որն ինչպէս թովմաճանի դէպքում, բաւական մեծ արժէք էր ներկայացնում իրենից:

¹ Յանձնարարական, կամ երաշխաւորական գրութիւնների մասին տե՛ս Սեպուհ Դ. Ասլանեան, *Reverendissimi in Christo Patris. Յանձնարարական նամակներ, ցանցեր եւ շարժունակութիւն թովմա Վանանդեցիի կէտնքին մէջ (1677-1707)*, - «Հանդէս ամսօրեայ», 2018, էջ 103-158:

² Աւելի մանրամասն տե՛ս Խաչիկյան Շ. Լ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը եւ նրա տնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ., Երեւան 1988, էջ 121-139: *Sebouh David Aslanian, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa*, University of California Press, California, 2012, pp. 109, 125, 128-144, 176, 196-199, 218-219, 229-231.

Հնդկաստանում իր այցելութեան առաջին վայրից՝ Սուրաթի մաքսատնից նրան դիմաւորում եւ քաղաք է տանում իր բարեկամ «սահատճի» Գրիգորը, որը ծառայութեան մէջ էր «Մէխրօսեան Յովհաննէս աղայի» մօտ: Այսպէս, Սուրաթից այցելելով Բունա, Թովմաճանեանը հաղորդում է. «Եւ ի եօթնետասն արուրեհաս ի Բունայ քաղաքն եւ իջեւանեցաւ ի տունն հեգիմ Յովհաննէս աղային Օատուրեան, առ որ ունէր զյանձնարարական գիրս»:

Բունայում եղած ժամանակ, երբ պիտի ներկայանար Մարաթիաների թագաւորին, յանձնարարական է վերցնում վերջինիս պարսիկ բժշկից, որը նաեւ բացատրում է այն կարգը, որով հիւրերը մուտք են գործում թագաւորի նստավայր: Մպիտակ բեհեգեայ թաշկինակի մէջ Թովմաճանեանը պետք է հինգ ռուփի դնէր եւ խոնարհուելով թագաւորի առջեւ՝ բացեր թաշկինակը: Եթէ թագաւորը վերցնէր այդ դրամը, ուրեմն Թովմաճանեանը սպասուած կամ ընդունելի հիւր էր թագաւորի համար եւ կարող էր ներկայացնել իր ակնեղէնը: Այս արարողակարգը գործում էր Հնդկաստանի բարձր դասակարգի հետ վաճառականների եւ այլոց հանդիպման ընթացքում, եւ Թովմաճանեանը բազմիցս կիրառում է այն բարձրաստիճան տարբեր անձանց հետ իր առեւտրական գործունէութեան ընթացքում:

1767 թ. յունուարի 3ին Թովմաճանը Հայդարապատում էր: Երկու հայ վաճառականներ կային այնտեղ եւ Թովմաճանը՝ յանձնարարական գիր ունենալով հէնց նրանց մօտ էլ իջեւանում է: «Եւ զՕնունդ եւ Յայտնութիւն Տեառն ընդ նոսա արար ընթերցմամբ սաղմոսիք եւ ժամերգութեամբ յունվարի 6ին՝ ըստ Հայոց: Եւ իբրեւ տեսին նոքա զժամասացութիւն եւ զընթերցումսն Թովմաճանին՝ յոյժ սիրայարեցան յարգանօք ընդ նմա» (էջ 248):

Հայրենակիցների ուղեկցութեամբ Թովմաճանը շրջում է Հայդարաբատում եւ հարակից ավմաստի հանքերում, անշուշտ,

գնելով որոշ ակնեղեն: Իսկ Մուշիլ Բաթան Բենդեր¹ ծովեզրեայ քաղաքում, ուր նա հասնում է փետրուարի 16ին, իջեւանում է Գեւորգ Դաւթեանի տանը: Խօսելով այս ընտանիքի մասին Թովմաճանն անդրադառնում է նրանց գործունեութեանը. «Եւ տպէն անդ զղալեմքեարի բարակ կտաւս, այլեւս ձեռօք եւս առնեն զղալեմքեարն զանազան գոյն ներկով: Եւ ներկն սոցին ոչ ի կատաայս հրով եռացուցանելով հանեն, այլ թարմ գոյնզգոյն ծաղկանց ջրովն առնեն զղալեմքեարն, որ ամենեւին ոչ թափէ զգոյնն» (էջ 252):

Վերադառնալով Մադրաս 1767 թ. մարտի 10-ին, Թովմաճանեանը նախ իջեւանում է Ովանէս Մարտիրոսի տանը, որի համար դեռ Հայդարաբադից յանձնարարական գիր ունէր, «եւ ոչ էր ուղղափառ եւ էր փոխանորդ ի Յոլանտա Ղալտարենց Յովհան աղային» (էջ 253)²:

Մաքսատներ մուտք գործելու եւ մաքսավճարների եւ մաքսանենգութեան մասին հեղինակի մօտ եւս կան հետաքրքիր տեղեկութիւններ: Սուրաթի մաքսատանը Թովմաճանեանը, փորձելով խուսափել մաքսավճարից, ակնեղենի մեծ մասը, որոնք համեմատաբար արժեքատուր էր, պահ էր տուել նաւապետին, իսկ մանրերը կրում էր իր վրայ: Մաքսատրոներն, իհարկէ, գտնում են պահուած ակնեղենը, եւ նա ստիպուած բաւական մեծ մաքս է մուծում ե՛ւ դրամով, ե՛ւ ոսկով:

Հանդիպում հնդկահայ համայնքի հետ եւ առեւտրական գործունեութիւն

¹ St' u Machilipatnam, նաեւ Մասուլիպատամ:

² Յովհան Խալդարեանը՝ յայտնի Խալդարեան գերդաստանից, տե՛ս Խաչիկյան Շ. Լ., Լոր Ջուղայի հայ վաճառականությունը եւ նրա տնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-*XVIII* դդ., Երեւան, 1988, էջ 82, 109-110:

Հարկ է նշել, որ պոլսահայ կաթոլիկ վաճառական Թովմաճանեանը, որն իր առեստրական գործունեութիւնը հիմնականում իրականացնում էր Եւրոպայի հետ, հասնելով Հնդկաստան, յայտնուում է պարսկահայ համայնքի ներկայացուցիչների միջավայրում, որն իրեն այնքան էլ ծանօթ չէր: Համայնքն ընդհանուր առմամբ Հայոց առաքելական թեմին էր պատկանում: Սա, անշուշտ, խնդրահարոյց էր թէ՛ իր եւ թէ՛ հնդկահայ գաղթօջախի ներկայացուցիչների համար: Նկատենք, որ հնդկահայ համայնքում իրենց առաքելութիւնն էին իրականացնում նաեւ Մխիթարեան միաբանութեան ներկայացուցիչները¹:

Կարճ ժամանակում ծանօթանալով Թովմաճանեանի առեստրական ունակութիւններին, գիտելիքներին, մարդկային եւ բարոյական արժանիքներին՝ գաղթօջախի հայութեան մէջ Թովմաճանը կարողանում է գտնել իր ուրոյն տեղն ու հեղինակութիւնը: Աւելին, առեստրական գործերով ճամփորդելով քաղաքից քաղաք՝ տարբեր բնակավայրերով, Թովմաճանը հնդկահայ համայնքի երեւելիների կողմից տրուած հաւաստագրեր էր ունենում՝ նոյնիսկ ամենահեռաւոր եւ անկանխատեսելի վայրերում հայ ընտանիքների հովանաւորութիւնը վայելելու համար, որոնցից շատերի ինքնութեան մասին դժբախտաբար տեղեկութիւնները չափազանց սուղ են:

Հնդկաստանում իր այցելութեան առաջին վայրից՝ Սուրաթի մաքսատնից նրան դիմաւորող «սահատճի» Գրիգորը, որը ծառայութեան մէջ էր «Մէխբօսեան Յովհաննէս աղայի» մօտ, Թովմաճանեանի տեղեկատուութեան առաջին աղբիւրն էր՝ իմանալու համար, թէ Սուրաթում ի՞նչ հայրենակիցներ են բնակուում, «գա-

¹ Մանրամասն տե՛ս Մեպոռն Դաւիթ Ասլանեան, Լեոնալիբանանէն մինչեւ Մատրասի Փոքր լեռ. Շարժունակութիւն եւ հայ կաթողիկէ ողորմութեան հաւաքման ցանցեր ԺԸ. դարուն, «Հանդէս ամսօրեայ», 2022, էջ 309-322:

նուանս մեր հայոց մեծամեծաց եղելոց ի Սուրէթ»¹ (էջ 245): Գրիգորը թուարկում է ոմանց՝ «Ռաֆայէլ Ակալար², պարոն Մինա-

¹ 1767 թ. Սարտի 8-ի իր նուիրակական կոնդակում, Միմէօն կաթողիկոս Երեւանցին եւս անուանապէս յիշում է Սուրաթի հայ մեծամեծներին. «Առ Ռաֆայէլն եւ յիւր փեսայ Գրիգորն եւ Յօհանջանի որդի Ջաքարիայն յիշ.: Առ Կիւրեղի որդի Նիկողայոսն վասն ժամուցին եւ յիշատակի եւ Ջամալեան Շատուրն վասն ընծային: Առ Էմնիագի որդի Սէլիքնազ Աղայն եւ յիւր որդի Յակոբ եւ Սկրտիչ Աղայսն յիշատակի:

Առ Քեալանթար Սարգսի որդի Շատուրն, Տէր Մինասեան Միքայէլն եւ Շօթօթեցի Ղազարն յիշատակի:

² Նորջուղայեցի Երեւանցի Ռաֆայէլ աղա Աղալարենց - այսպէս է յիշում Սուրաթի հայկական գերեզմանատան իր ընտանիքի անդամների տապանագրերում (<http://chater-genealogy.com/>, 3146, 3170 էւն): 1775 թ. Մայիսի 26-ին Միմէոն կաթողիկոս Երեւանցին «շնորհակալութեան եւ միամտութեան» թուղթ էր ուղարկում Սուրաթ՝ «առ ջուղայեցի Աղալարի որդի պարոն Ռաֆայէլն գրեաց», «զի ի կենդանութեան իւրում վասն իւր եւ ննջեցելոցն իւրոց իբր հոգեբաժին եւ քառասնից Լ թուման էր խոստացեալ Փիլիպպոս վարդապետին յանուն ս. Աթոռոյս: Եւ գրեալ էր ի Բասրա, զի զայն դրամն՝ ս. Աթոռոյս զանձապետ Միքայէլ Աղային հասուցեն: Եւ թուղթ եւս գրեալ էր սրբ. վեհին: Որոյ աղագար եւ սրբ. վեհն շնորհակալութիւն եւ միամտութիւն գրեաց նմա, զի զայն Լ թումանն առ ս. Աթոռոս եւ առ մեզհասեալ իմացի՝ եւ միամտեցի» (տե՛ս Միմէոն կաթողիկոս. Յիշատակարան, Մասն II (1767-1776), հրատարակեց Գիւտ քհ. Աղանեաց, - «Դիւան Հայոց պատմութեան», Գիրք Ը. Թիֆլիս, 1908, էջ 416): Կարծում ենք, պետք չէ շփոթել մէկ այլ հայ վաճառական՝ Padre Rafael-ի հետ, որ Գրիգոր Խոջամալեանի հետ Լոնդոնում դատական գործ յարուցեց անգլիական գաղութային իշխանութիւնների սանձարձակ կամայականութիւնների դեմ (այս մասին ւաւելի մանրամասն տե՛ս Abdul Majed Khan. *The Transition in Bengal, 1756-1775. A Study of Saiyid Muhammad Reza Khan*, Cambridge at the University Press, 1969, pp. 306-307, 311; Willem G.J. Kuiters. *Law and Empire: The Armenians contra Vereist, 1769-77*, - "The Journal of Imperial and Commonwealth History", 2000, 28:2, pp. 1-22; Willem Kuiters, *The British in Bengal 1756-1773*, գրքի (Paris: Les Indes Savantes, 2002). XVI զուլաբ, վերնագրում՝ "The Armenians in London"): Վերջիսս հայրն է

սենց Յովհաննէս աղա Մուրատ¹, պարոն Մէլիքնազ աղա², պարոն Նիկողայոս³, պարոն Մուրատ⁴ եւ մեծ փարթամ տերտերի որդի պարոն Յարութիւն⁵, որ զբազում ակնեղէնս...» եւ թանկարժէք ունեցուածքը հասցրել էր փախցնել, «...յորժամ գտէրն իւր զանու-

Յովհաննէս Բաբիկեանի եւ եղբայրը՝ տրիեստեան մխիթարեանների վանքի հիմնադիր Աստուածատուր Բաբիկեանի:

¹ Իմա՛ Պարոն Մինասէնց Յովհաննէս աղա Գրիգոր Աղայէնց:

² Իմա՛ Մէլիքնազ Էմինազեան, որ մահացաւ 1780 թ. մարտի կամ ապրիլի 9-ին, իսկ կինը՝ Գուլնաբաթը, 1791 թ. հոկտեմբերի 3-ին (ԴՓ, էջ 87, Գ. Տէր-Վարդանէան, Պարսկա-հնդկահայ մի ընտանիքի՝ Դահբաշեան տոհմի պատմութիւն-տարեգրութիւնը (ԺԷ-ԺԹ. դարեր),- «Բանբեր Մատենադարանի», 1994, թիւ 16, էջ 243, 269) նաեւ պարոն Մէլիքնազ աղա (Mesrovb J. Seth, Armenians in India, 1937, pp. 249, յիշուած է Agah Mackertich Meliknazean... ձեւով):

³ Դժուար է ճշգրիտ նոյնականացնել Թովմաճանեանի նշած Նիկողայոսը, քանի որ այդ ժամանակ Մուրաթում արձանագրուած են այս անունով (կամ՝ Նիկողոս) երկու անձինք՝ ա) Էջմիածնի Մայր Աթոռի զանձապետ քանաքեոցի Կիւրեղի որդի Նիկողայոսը (ըստ տապանագրի՝ վախճ. 1777 թ.: Տէ ս Միմէոն կաթողիկոս. Յիշատակարան, Մասն I (1763-1767), էջ 646): Միմէոն Երեւանցին իր 1775 թ. մայիսի 26-ի նամակում վերջինիս պատուիրում էր իր կոնդակը կարդալուց յետոյ ուղարկել Բոմբէյ եւ տեղեկացնում, որ Քանաքեոի եկեղեցու տանիքը վերանորոգելու համար ուղարկած 200 ռուփի գումարի համար անհոգ լինել՝ թողնելով գործը «յետոյ, ի խաղաղ ժամանակիս», զհուացիք էլ ի «զբաղանս կային» (տէ ս Միմէոն կաթողիկոս. Յիշատակարան, Մասն II (1767-1776), էջ 412): ք) նորջուղայեցի Նիկողայոս Պտղենց Տէր-Ջաքարեանը (ըստ տապանագրի՝ վ. 1811 թ.):

⁴ Իմա՛ ջուղայեցի Մուրադ Մինաս Չակիկէնց (վախճանուել է, ըստ Մուրաթում պահպանուած տապանագրի՝ 1770 թ.):

⁵ Գորգին խանի մօտ գրագիր աշխատած «Մեծ փարթամ տերտերի որդի պարոն Յարութիւն»-ի մասին, «որ զբազում ակնեղէնս եւ զանձս փախուցեալ էր ընդ իւր, յորժամ գտէրն իւր զանուանի Կեօրկի խանն անակնկալ մահուամբ ի Պանկալայ թշնամի սպասաւորք սպանեալ էին», որեւէ վաւերագրական տեղեկութիւններ կամ վկայութիւններ չունենք:

ւանի Կեօրկի խանն¹ անաչնկալ մահուամբ ի Պանկալայ¹ թշնամի սպասաւորք սպանեալ էին, որ եւ էր մեծ աղա Պետրոսին² եղբայրն, որ ի Պանկալայ» (էջ 245):

¹ Գրիգոր Յարութինեան կամ յայտնի որպէս Գորգին խան: Քալանթար Յարութին երեւանցի Նոր Ջուղայեցոյ երեք որդիներից մէկը, աւագ եղբայրն էր Բենգալիայի նշանաւոր խոջա Պետրոսը (տե՛ս ստորեւ ծնթ. 23): Անգլիական գաղութարարութեան դէմ Բենգալիայի զինուած ապստամբութեան ղեկավարներից, սպանուեց դաւադրաբար 1763 թ. Օգոստոս 11-ին, որից յետոյ զինուած պայքարն աստիճանաբար դադարեց: Միմեռն Երեւանցոյ 1767 թ. Մարտի 8-ի նուիրակական կոնդակում կայ Գորգին խանի եղբորը՝ խոջա Պետրոսին ուղղուած մխիթարական գիրը «վասն եղբոր մահուան» (տե՛ս Միմեռն կաթողիկոս. Յիշատակարան, Մասն I (1763-1767), էջ 646): Խօջամալեանի վկայութեամբ նա «սկսաւ ժողովել զօրս բազումս, եւ կարգեաց յազգէս Հայոց եւ այլոց՝ զհաբիւրապետս եւ զհազարապետս առաւել քան զհաբիւր անձինս՝ ըստ կանոնի Քրիստոնէից երոպացոց. եւ ինքին հնարեաց, թափեաց եւ պատրաստեաց զամենայն հրազենս պատերազմաց՝ աւելեօք եւ ոչ պակաս քան զերոպացոցն. եւ էին զօք նորա յոյժ, թէ հեծեալք եւ թէ հետեւակք. որք Գարդիք անուանին, դաս դաս ամենեցուն խոջա տալով սուսերս, քենեակս, հրացանս եւ հրացանիկս չախմախեայս» (տե՛ս Թովմաս Խօջամալեան Նոր Ջուղայեցի, Պատմութիւն Հնդկաց, Մասն երկրորդ, Մասնաւոր սրբագրութեամբ եւ ջանիւք ի լոյս ընծայէ Ս. Դ. Թաղիադեանց, Կալկաթա, 1849, էջ 80):

Տպաւորիչ է Գորգին խանի հազարապետների ցուցակը որ մէջբերում է Խօջամալեանը՝ ա) Մմրու (ազգաւ Ալաման, որ եկեալ է Վիեննայ քաղաքէ ի Քաշմիր՝ ծառայէր միում ի վաճառականաց Հայոց եւ անտի եկեալ ի Փաթանա՝ ազգն Հայոց ողորմելով նա, առաքեցին զնա առ Գորգին խան, զոր առ եւ արար հազարապետ), բ) Մարգար Յովհաննէս Քալանթարեան՝ Նոր Ջուղայեցի, գ) Յարութին Մարգար՝ Նոր Ջուղայի, դ) Գրիգոր Նահապետ Այվազեան՝ Չարսուեցի Նոր Ջուղայ, ե) Պետրոս Աստուածատրեան՝ Հայաստանցի Աղձնիկ, ի գեղջէն Էնեասու, զ) Ղազար Յակոբեան՝ յերկրէն Ատրպատականի ի գաւառէն Մարաղոյ եւ ի գեղջէն Օրայու, է) Մարտիրոս Գրիգորեան՝ ի գաւառէն Մարաղու, ը) Սուքիաս Աւետիսեան՝ յաշխարհէն Ատրպատականի եւ ի քաղաքէն Դավրիժոյ, թ) Յովհաննէս Նազարեթեան՝ ի Դաւրիժոյ. զորս հանդերձ գնդօք զօրաց իւրեանց պահէր միշտ պատրաստի առ ինքն»:

Ի դեպ, հարկ ենք համարում նշել, որ Հնդկաստանի (Բենգալիայի) ազատագրական պայքարի հերոս Գորգին Խանի մասին առաջին գրաւոր վկայութիւնը Յովհաննէս Թովմաճանեանի այս օրագրութեան մէջ է յայտնուել:

Սուրաթում, վերը յիշուած անձանց Թովմաճանեանը ողջոյնի ընծաներ է ուղարկում՝ փոխարէնը ընդունում նրանց այցելութիւնները եւ ընթրիքի հրաւերները: Այսպիսով Թովմաճանեանը, ինչպէս աւանդոյթն էր վաճառականական համայնքներում, փորձում է կապեր հաստատել Սուրաթի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Այստեղ, Ս. Աստուածաձնի ծննդեան տօնի արարողութիւնից յետոյ իր եթովպացի գերուն հայկական ծեսով «փառաւորապէս»

Հարիւրապետներից յիշում են Սկրտիչ Ջաքարիա նորջուլայեցին, Մէլքում Հաշտարիասեցին, Նիկողայոս երեւանցի նորջուլայեցին՝ եւն.: (Նոյն տեղում, էջ 81-85, 97), հմտ. Mesrovb J. Seth. Gorgin Khan the Armenian Minister and Commander-in-Chief of Nawab Mir Kasim of Bengal from 1760-1763,- Reprint from Vol. XXXV of «Bengal: Past and Present». Calcutta, 1928, pp. 1-17; Mesrovb J. Seth. Armenians in India. Calcutta, 1937, pp. 338-418; Բենգալիայում Գորգին խանի իրականացրած ռազմական բարեփոխումների մասին տե՛ս նաեւ Bhaswati Bhattacharya, Between Fact and Fictions: Khoja Gregory Alias Gurgin Khan, the “Evil Genius” of Mir Qasim. Circumambulations in South Asian History. Essays in Honour of Dirk H.A. Kolff, edited by Jos Commans & Om Prakash. (Brill’s indological library; 19), Leiden-Boston: Brill, 2003, pp. 133-158; Abdul Majed Khan. The Transition in Bengal, 1756-1775. A Study of Saiyid Muhammad Reza Khan. Cambridge University Press, 1969, pp. 3, 11, 44-46, 174):

¹ Իմա՝ Բենգալիա:

² Հայկական աղբիւրների հաղորդմամբ, անկասկած, խօսքը Բենգալիայում ապրող «Աղա Պետրոս որդի Քալանթար Յարութիւնի երեւանցի Նոր Ջուլայեցոյ» մասին է, որ. «եկեալ էր յերկրէն Պարսից վաճառականութեան աղազաւ, եւ կեցեալ էր յերկրին Բանկալայ՝ յաւել քան զամս քսան, որ եւ տեղեակ էր ամենայն կանոն երկրին»:

կնքել է տալիս՝ ինքը դառնալով նրա կնքահայրը եւ անուանակոչելով Գրիգոր:

Սուրաթի համայնքի հայ վաճառականներին Թովմաճանեանը ցոյց է տալիս իր ակնեղէնը, մանաւանդ մարջանից երախակալով յայտնի ակնակուտ թուրք, որի գեղեցկութիւնն ու արժէքը հիացնում են տեսնողներին: Նրանք խորհուրդ են տալիս Թովմաճանին այն ներկայացնել Բունայի Սարադու կոապաշտ թագաւորին, քանի որ միայն նա կարող էր վճարել այդքան թանկարժէք ապրանքի գինը:

Քանի որ Թովմաճանեանն այստեղ էր հասել եւրոպական հանդերձանքով, Յովհան աղան, նրան ողջ երեկոյ խրատում էր, թէ եկեղեցում իրեն ինչպէ՛ս պէտք է դրսեւորի: Իսկ Թովմաճանեանը խոնարհաբար լսում էր նրան:

Առաւօտեան եկեղեցում բոլորը հետաքրքրւում էին նորեկով: Իսկ Յովհան աղան նրանց պատասխանում էր թէ «հոռմըցի հայ մի է գոեհիկ»: Եւ բոլորը համոզուած էին, որ «խուրումսախ՝ շուն հոռմեցի ոմն է», ու չէին մօտենում նրան՝ բարի զալուստ մաղթելու:

Այս հետաքրքիր դրուագն ի ցոյց է դնում համայնքում առկայ կրօնա-դաւանաբանական ոչ սահուն մօտեցումները միմեանց հանդէպ:

Թովմաճանեանն իր որդեգրի եւ միւս սպասաւորների հետ միասին առանձնատուն է վարձում հայաշատ թաղամասում: Ապա նրան այցելում եւ ծանօթանում է պարոն Նազար Խօճամալեանը²: Փոխադարձ յարգանք եւ մտերմութիւն է սերմանում այս

¹ Խուրումսախ (տաճկ.) - փեզէվենք (Թովմաճանի թարգմ.), կաւատ, սրիկայ:

² Նազար Խօճամալեան, այլ տեղում՝ «Նազար Խօճամալ ուղղափառ» (այսինքն՝ կաթողիկէ): Սադրասի նորջուղայեցի հայ վաճառականներից, Խոջամալեան ընտանիքի ճիւղերից, Շահամիրեանի մտերիմներից: Սերտ կապեր էր պահպանում Հնդկաստան այցելող Մխիթարեան

երկու անձանց միջեւ, եւ Խօճամալեանն իր օգնութիւնն ու սատարումն է առաջարկում Թովմաճանեանին վաճառականական գործերում:

Պարոն Նազարի հետ մտածում են, թէ ինչպէս պէտք է վաճառեն Թովմաճանեանի մօտ եղած երկու 162 կրան (150 հազար ռուբլի, կամ 300 քսակ դուռուշ) արժողութեամբ, օղերի համար նախատեսուած ադամանդները: Պարոն Նազարը յուշում է, որ «Չայտսիկ ակնեղէնս կարես վաճառել աստ, բայց զայն կլուակ արմասն յայսմ տեղիս Ադա Շամիր Սուլթանում¹ կայ, նա կարող է վաճառել, զի ի բազում մեծամեծ տեղիս մտանէ ...» (էջ 254):

Համաձայնութեան գալով՝ Թովմաճանեանը նկատում է, որ այս երկրում իսկական քարերը կամ զարդերը երբեք ի տես չեն դնում վաճառելու համար, այլ միայն դրանց կրկնօրինակները՝ զանազան վտանգներից խուսափելու համար:

Թովմաճանեանի ուղղափառ (իմա՝ կաթոլիկ) լինելու եւ արժեքաւոր ակնեղէն ունենալու լուրը համայնքում տարածուելով, հայրենակիցներն ընծաներով զալիս են նրան ողջունելու՝ «գոլդ ի բարին, ասելով»: Պարոն Նազարի ուղեկցութեամբ զալիս է նաեւ Ադա Շամիրը՝ յաջորդ օրն իսկ նրան իր թանկարժեք քարերի հետ միասին Մուհամմետ Ալի Խանի² մօտ տանելու մտադրութեամբ:

վարդապետների հետ, յաճախ իր օգնութիւնն էր բերում Մխիթարեան հրատարակութիւնների տարածմանն ու վաճառքին (տե՛ս օրինակ Sebouh David Aslanian, Reader Response and the Circulation of Mkhit'Arist Books Across the Armenian Communities of the Early Modern Indian Ocean, - "Journal of the Society for Armenian Studies", 2013, N° 22, pp. 51-52, մասին ըստ Մէխիկոյի դիւանում եւս անդրադարձ կայ Նազար Խոջամալեանին. տե՛ս Sebouh David Aslanian, From the Indian Ocean..., p. 255):

¹ Ադա Շամիր Սուլթանում - խօսքը Շահամիր Շահամիրեանի մասին է:

² Մուհամմադ Ալի Խան Վալաջահ (1717-1795) Արկոտի նավաբը (իշխան): Մերտօրէն համագործակցել է Անգլիական Արեւելա-հնդկական ընկերության հետ:

Թովմաճանն ու Շամիր աղան յարգանքով հիւրընկալում եւ հիւրասիրում են Խանի պալատում: Արծաթէ սկուտեղի վրայ կանաչ տերեւներով փաթաթուած համեմունքներ են հիւրասիրում: Թովմաճանեանը անծանօթ լինելով՝ հրաժարում է համտեսել, ուստի Շամիր աղան առաջարկում է սեւ սուրճով հիւրասիրել օսմանցոց երկրից եկած հիւրին, իսկ միւսները մեծ ախորժակով տերեւով փաթաթուած համեմունքներն են համտեսում. «Իսկ նոքա առեալ զայն տոլման ի բերանս ծամէին եւ կարմիր թուքս թքանէին, որ եւ մեծ պատիւ է սոյնս ի մէջ իւրեանց, որպէս աստ է ջիզուլաթն» (էջ 255):

Թովմաճանը ցոյց է տալիս ակնեղէնը եւ մարջանէ երախակալով թուրը: Վերջինս թրի զինը 15000 ռուփիից ցանկանում է 7000-ի իջեցնել, որին Թովմաճանը չի համաձայնում, իսկ աղամանդները Խանը շատ է հաւանում, սակայն գտնում է, որ ժամանակը չէ դրանք գնելու: Հիւրերի մէջ է լինում նաեւ «ֆրանցըս վաճառական ոմն Մատրասու Միւսիւ Թըլաշն»¹, որը մտադրում է

¹ Delarche Henry Alexandre - Ծնունծ Պոնդիշերիում 1720 թ. յունուարի 4-ին: Հայրը՝ Ժան Հանրի Դըլարշը, փարիզցի էր, հետեւակային զօրքերի կապիտան: Մայրը՝ Մարի Ռոլանը, ծնունդ էր Պոնդիշերիում: Ծառայութեան է մտել Արեւելահնդկական ընկերութիւնում եւ 1752 թ. նոյեմբերի 17-ին ստացել խորհրդականի յանձնառութիւն: Արեւելեան լեզուների, յատկապէս պարսկերէնի իմացութիւնը նրան դարձնում են ֆրանսիական գաղութային կառավարչապետ Դիւալէքսի թարգմանիչը Հնդկաստանի բոլոր իշխանների հետ յարաբերութիւնների ընթացքում: Նա այդ երկրում հաւաքագրուած այն հազուագիւտ ծառայողներից էր, որոնք հասել են իրենց կարիերայի բարձրակետին: Նա նաեւ Դիւալէքսի այն հազուագիւտ աշխատակիցներից էր, որոնց նկատմամբ վերջինս ներողամտութեամբ էր վերաբերում: Դիւալէքսը նրան փնտձում էր իր փառասիրութեան համար եւ ներում՝ ընդունելով որպէս «Հնդկաստանի ոչ-սովորական գուրակ»: Առաջին ամուսնութիւնից (1743 թ. մայիսի 27) 24 տարեկանում 15-ամեայ Ժաննա Մաղլեն Էլիասի (ծնունծ Պոնդիշերիում) հետ ունեցաւ 4 զուակ: 1754 թ. ապրիլի 8-ին՝ 20 տարեկան հասակում մահացաւ Մաղլեն Էլիասը: Երկրորդ ամուսնութիւնը (1757 թ. հոկտ. 16), Բարբ Կորնէի հետ էր: Վերջինս Մաթիւրէն Էթիէն Կորնէի

մարջանէ երախակալը գնել նրանից՝ Բենգալիայի ֆրանսիական արեւելա-հնդկական ընկերութեան համար: Մադրասում, Շամիր աղայի միջնորդութեամբ նա 7500 ռուփի է առաջարկում Թովմաճանին ականակոտ մարջանէ երախակալի համար: Թովմաճանը կրկին չի համաձայնում: Ի վերջոյ, Շամիր աղայից բացի, գործին Նազար Խօճամալեանն է խառնում, եւ 8000 ռուփիով Միւսիւ Թլաշին վաճառում են երախակալը: Այն ուղարկում է Բենգալիա՝ որպէս նուէր յայտնի մի նաւապետի: Վերջինիս այնքան է դուր գալիս ադամանդակոտ մարջանէ երախակալով թուրը, որ Թլաշի ձեռքով 500 ռուփի ընծայ է ուղարկում Շամիր աղա Սուլթանումին:

Այսպիսով, Թովմաճանեանը եւ Շամիր աղա Սուլթանումը ջերմ բարեկամութիւն են հաստատում, ամէն կիրակի միասին եկեղեցի են գնում, ապա միասին ճաշում Շամիր աղայի տանը:

Պատարագներից մէկի ընթացքում Թովմաճանեանը նկատում է, որ պատարագիչ քահանան «ոչ ունէր զմօրուս, զի հրամանաւ Ղազար Կաթողիկոսի տնօրինեալ էր զմօրունս չտանիլ»¹ (եջ 257): Եւ աղա Շամիրը յորդորում է Թովմաճանեանին մօրուսից հրաժարուել, քանի որ քահանան եւ համայնքի տղամարդիկ եւս մօրուս չունեն: Թովմաճանեանը եւս հրաժարում է մօրուսից:

դուստրն էր՝ որ Բոսսէի հետ միասին Դիւպլէքսի ունեցուածքի, տնտեսութեան ու պարտքերի պատասխանատուն էր եւ նրա հետ միասին էլ իր ծառայութիւնը թողեց 1759 թ.: Նոյն թուականին Դըլարշը եւս վայր էր դրել խորհրդականի եւ Պոնդիչերիի գանձապահի իր պարտականութիւնները (տե՛ս Un livre de compte de Ananda Ranga Poullé (Pillai, 1709-1761) courtier de la Compagnie des Indes. Traduit du tamoul par le R. P. Oubagarasamy Bernadotte; Introduction et notices biographiques par Edmond Gaudart, Bibliothèque coloniale (Pondichéry), E. Leroux, Paris, 1930, pp. 44-45; Martineau, Alfred. Résumé des Actes de l'État civil de Pondichéry. Tome II, De 1736 à 1760. Pondichéry, 1919-1920).

¹ Ղազար Կաթողիկոս Ջահկեցու անունով այդպիսի կոնդակ մեզ յաջողուեց գտնել:

Հետեւելով եկեղեցական թեմային՝ նկատենք, որ պատարագների ժամանակ համայնքի խնդրանքով, մանաւանդ ստիպմամբ Թովմաճանի երգասացութիւնն էին ուզում լսել, եւ շապիկ հագնելով արարողութեան ընթացքում՝ մշտապէս վայելում էին նրա աւելի քան գրագէտ եւ հոգեթով շարականներն ու սաղմոսները:

Բացի այդ, համայնքի խնջոյքներում ու հաւաքներում եւ Թովմաճանեանը սպասուած հիւր էր իր բազմալեզու (հայերէն, թուրքերէն, իտալերէն) երգերով եւ հնչեղ կենացներով: Աւելին, նրան նոյնիսկ խնդրում էին, որ ինքը կազմի հիւրերի ցանկը:

Այս առիթով Թովմաճանը պատմում է նաեւ աղա Շամիրի դուստրերից մէկի որդու մկրտութեան արարողութիւնը, որին շապիկ հագած մասնակցեցին ինքն ու աղա Շամիրը եւ դրանից հետոյ կայացած ճոխ խնջոյքը, որին մասնակցում էր համայնքի ողջ ծաղիկը՝ «պարոն Յովհաննէս տի Մարգար, Պարոն Պօղոս Խաչիկեան Թօփչիենց¹, պարոն Մարգար Շէրիման¹, պարոն

¹ Նոր Ջուղայի նշանատր Թօփչենց առետրական ընտանիքից, որի ներկայացուցիչներն արդէն ԺԷ. դարի 80-ականներին յիշում են Սուրբաթում կնքուած առետրական գործարքերում (Թօփչենց Պօղոսի որդի Մարկոսը Բանդարի Սուրբաթում՝ տե՛ս Յովհաննէս Տէր Դաւթեան Ջուղայեցու Հաշուետումարը, աշխատասիրութեամբ Լ. Ս. Խաչիկեանի եւ Յ. Դ. Փափազեանի, Երեւան, 1984, էջ 92, հմմտ. Levon Khachikian, *Le registre d'un marchand arménien en Perse, en Inde et au Tibet (1682-1693)*, - "Annales. Histoire, Sciences Sociales", 22e Année, No. 2 (Mar. - Apr., 1967), pp. 236, 263; *Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne. Sous la direction de Sushil Chaudhury, Kéram Kévonian, Paris, Éditions de la MSH, 2008, pp. 110, 328*): Նոր Ջուղայի պատմագիր Տէր Յովհաննէսեանը այս ընտանիքից Ստեփան Թօփչենցին է վերագրում առաջինը լինելու պատիւը, որ Ռուսաստանի վրայով 13 ընկերների հետ 1692-ին Շուէդիա գնաց առետրի (տե՛ս Տէր Յովհաննէսեանց Յարութիւն, Պատմութիւն Նոր Ջուղայում որ յԱսպահան, հատոր Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 145): Սակայն յայտնի են տեղեկութիւններ աւելի վաղ կատարուած այցելութիւնների եւ առետրական գործարքների մասին: Այսպէս, 1688-ին օգոստոսին Մոսկուայում մաքսագերծում էին Շուէդի-

Սկրտում Միրզեմի², պարոն Յովսեփ Մարութեան¹, պարոն Նազար Խօճամալ ուղղափառ, Պարոն Յովհաննէս Բենեդիկտոս ուղղա-

այից բերած իրենց ապրանքները Անուշ Վարդանովն ու Մաֆար Վասիլեը Աստրախան ուղեւորուելուց առաջ (տե՛ս Армяно-русские отношения в XVII веке, Т. I. Сб. документов. Под ред. В.А. Парсамян, Ереван: Изд-во НАН, 1953, փաստ. 72, էջ 196-197): Թովմաճանեանի նշած Խաչիկի որդի Պօղոս Թօփչենցը (դատելով մեր ձեռքի տակ եղած տապանաքարի լուսանկարից, ծնուել է Նոր Ջուղայում, ամուսնացած էր Սուրբանումի դստեր հետ (1721-1763) եւ մահացել ու թաղուել է Մադրասում (1711-1779 թթ.): Նրա մասին տե՛ս Sebouh David Aslanian. From the Indian Ocean..., pp. 107):

¹ Մարգար Շեհրիմանեան, որդի Էմանուէլի, մահացել է Մադրասում, 1784-ին (տե՛ս Շեհրիմանեանների տոհմածառը պատրաստուած Մեպոսի Ասլանեանի կողմից՝ Sebouh David Aslanian. From the Indian Ocean..., pp. 152-156): Թարգմանիչ եւ լուսաւորիչ Մարգար Շեհրիմանեանի անգլերէնից կատարած թարգմանութիւնները, որոնք հրատարակուեցին Մխիթարեանների տրիեստեան տպարանում, թոյլ են տալիս պատկերացում կազմելու վերջինիս առաջադիմական աշխարհայեացքի մասին եւ նպատակաւայաց կերպով հայ ընթերցողին ծանօթացնելու արեւելեան ազգերի պատմութեան ու բարքերի մասին եւրոպական գրականութեան, իր տեսանկիւնից, առաւել լուրջ աշխատութիւններին. ա. Լուդովիկոս Քոմբեանց: Թուրք զՉինաց: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1783: բ. Եզովկոս: Առակք: Տրիեստ տպ. Մխիթարեան, 1784: գ. Պրաման: Տնօրէնութիւն մարդկային կենաց: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1784: դ. Բէթսէ Տէլլա Քոչէ: Պատմութիւն Ճենկիզ խանի: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1788: Այս գրքերից միայն առաջինում է, ուր թարգմանչի կողմից գրուած առաջաբանում Մարգարը հաղորդում է որոշ կենսագրական տեղեկութիւններ՝ միաժամանակ որդեգրելով տպագիր խօսքի հանդէպ խիստ գիտական դիրքորոշում:

² Իմա՝ Շահամիրեաններից Միրզամի որդի Սկրտումը, բնակւում էր Մելաբուրում, որի տանը հանգրուանեց Թովմաճանեանը: Վերջինիս հաղորդմամբ (տե՛ս ստորեւ), Մադրասի եկեղեցու զանգակատան կառուցողն էր Սկրտումը եւ այն նոր էր աւարտուել: Մահացաւ 1779-ին եւ թաղուեց իր կառուցած զանգակատան մէջ: Մի հատուած տապանագրից՝ «ի Տէր ինձ ողորմի. անումն իմ Սկրտում կոչի. որ եմ որդի Միրզամի. ի քաղաքի Ջուղայեցի. համի Տեանն իմն 1779...»:

փառ, պարոն Պետրոս Թօմասեան ուղղափառ, պարոն Յովհաննէս Մարտիրոսեան, պարոն Գրիգոր Միքայէլեան², պարոն Փիլիպպոս Աղափիրի Ղալանտարեան» (էջ 258):

¹ Յովսէփ Մարութեան (1734-1785), կամ ինչպէս նրան յիշում է իր շնորհակալական նամակում Սիմէոն Երեւանցին՝ «Մարութի որդի Յովսէփն էւ յիւր մայր Ովսաննայ խաթունն յիշատակի» (Տէ՛ս Սիմէոն կաթողիկոս. Յիշատակարան, Մասն I (1763-1767), էջ 646): Մարութեան Յովսէփը, որպէս Էջմիածնի Մայր աթոռի գործակալ, նշանակուել էր Գրիգոր Միքայէլեան Խոջաջանեան Չաքիկէնցի մահուանից յետոյ վերջինիս «կտակաւ վէթիլ էւ փոխանորդ», այդ իսկ պատճառով նրան էր գրում Սիմէոն Երեւանցին Սբ. Էջմիածնին կտակով նախատեսուածը ձեռք բերելու համար (տէ՛ս Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը. Մասն III (1777-1779), Յաւելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիտ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, հտ. ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 133-134, 198-199: Հմմտ. Դիւան Հայոց պատմութեան, Նոր շարք, Գիրք Առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա (1780-1785), աշխատասիրութեամբ Վարդան Գիրգորեանի, Երեւան, 1984, էջ 520-523, 534-536: Գ. Տէր-Վարդանեան, Պարսկա-հնդկահայ մի ընտանիքի՝ Դահրաշեան տոհմի պատմութիւն-տարեգրութիւնը, էջ 220, 269):

² Ինս՛ Գրիգոր Միքայէլեան Խոջաջանեան Չաքիկէնց: Վերջինիս առատաձեռն նուիրատութեամբ Սիմէոն Երեւանցու օրօք հիմնուեց Մայր Աթոռի տպարանը էւ թղթի գործարանը: Գրիգոր Չաքիկէնցի ծախսով նորատիպ որոշ գրքեր (Տօնացոյց, Զբօսարան) ձրի բաժանուեցին Հայոց եկեղեցիներին: Մաղրասից Էջմիածին ուղարկեց 28 հատոր արհեստագիտական բովանդակութեամբ գրքեր՝ ինչպէս նորահիմն տպարանին, այնպէս էլ թղթի գործարանին օգտակար լինելու համար: Էջմիածնի արտադրուած թղթի ջրանշան նմոյշների վրայ Սիմէոն կաթողիկոսի հրամանով դաջուած է Խոջաջանեան Չաքիկէնցի՝ Գ[րիգոր] Մ[իքայէլեան] անուանատառերը (տէ՛ս Յ. Աբրահամեան, Թղթի գործարան Հայաստանում, Գիտական նիւթերի ժողովածոյ (Պետական ձեռագրատուն-Մատենադարան), 1941, թիւ 1, էջ 67): Գրիգոր Միքայէլեան Խոջաջանեան Չաքիկէնցի մահուան (1776) էւ կտակի հետ կապուած Սիմէոն կաթողիկոսի գրագրութիւնը տէ՛ս Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը. Մասն III (1777- 1779), Յաւելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիտ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, հտ. ԺԱ., Թիֆլիս, 1913, էջ 133-134, 198-199 էւ հետ.):

Իհարկէ խնջոյքը վարում էր Թովմաճանեանը եւ այդ երեկոյ նա յիշեցնում է սեղանակիցներին, թէ ինչպիսի դժկամութեամբ էին իրեն ընդունել Մաղրասում իր այցելութեան առաջին օրերին: Եւ միայն իրեն ճանաչելուց եւ իր հարստութեանը ականատես լինելուց յետոյ են պատուի ու յարգանքի արժանացրել: Նկատեց, որ բոլոր մահկանացուներն էլ ինչ-որ պակասութիւններ ունեն (ոմանց նոյնիսկ յիշեցրեց դրանք) եւ կարիք չկայ նման ընդունելութեան արժանացնել անծանօթին, քանի որ նա կարող շատ յարգուած ու վստահելի անձ լինել: «...բայց սակայն զգրպարտութիւնն զայն զբառն խորումսախ, որ է բեզելենկ, ոչ միայն ոչ ընդունիմ, այլեւս ուրանամ եւ փոխանակ նոյն զրպարտութեանցն զպատիւն իմ պահանջեմ ի ձենջ, քանզի ամենայն ոք պարտի զիր պատիւն պահել եւ պահանջել» (էջ 259):

«Յայնժամ սկսան ամենեքեան ուրախութեամբ ծափ զծափի հարկանելով՝ վիվա Թովմաճան, վիվա գոչելով ասէին, թէ յիրաւի եւ յիրաւի այսու ճարտարութեամբդ շահեցար դու զմեզ եւ մեք զքեզ: Եւ այժմ գիտեմք հաւաստեալ, թէ ունիս զայն կլուակ ավմասն, բայց թէեւ ոչ ունիցիս՝ մեք զքեզ սիրեմք եւ պատուեմք, վասն կատարեալ այր մարդ խոհեմ եւ ուրախ լինելոյդ եւ Տէր Յիսուս հասուցե ըղձակերտեալ փափաքանաց քոց» (էջ 259):

Մաղրասում եւս Թովմաճանեանը բազմաթիւ սուտակներ (կարմիր եագութ)՝ ու մարգարիտներ է ձեռք բերում յարմար գնով, ի զարմանս ամենքի, քանի որ առետուրը առձեռն էր կա-

¹ «Կարմիր եագութն հայերէն գոհար յակինթ եւ ոմանք կայծ քար եւ կարկեհան ասեն, իսկ թալեանք ուռուպինի ասեն սորա լաւ գունով մաքուրն. 15, 20 դիրեթ պոլանթար եղածն էլմասէն, կարմիր եագութն կրկին գնով քան զէլմասն վաճառի եւ հայելով ի կարմիր եագութն աչաց զօրութիւն կուտայ: Բսկ Պոսագիլու կարմիր եագութն շատ աժան է քան զսա եւ ընդունելի չէ: Զամենայն եթէ կարմիր եագութն 4, 5 կուտն 300 դուրուշ արժեացէ եւ նոյն մեծութեամբ Պոսագիլն 20, 30 դուրուշ հագիւ արժէ: Եւ այս կարմիր եագութն հասարակօրէն ըստ մեծի մասին ի *Բեկու* ելանէ» (էջ 522):

տարում եւ ոչ մեծաքանակ: «Այլեւս գնեաց զբազմութիւն բանգէ-
հիրաց¹ գանազան տեսակ, որոց բնաւից կշիռքն էր 6933 մսկալ,
որ եւ է 26 օղայ եւ զայլ պէսպէս քարինս եւ զպէսպէս տեսակս եա-
զութից. այլեւս մաճունցու եագութս² եւս ժողովեաց մի սնտուկ
լի՝ 131 օղայ: Եւ երբեմն ի Մատրաս դիրագին նոցա պատկա-
նեալ զիրս գնէր եւ անդէն նոցա վաճառէր մեծ շահով» (էջ 260):

Աւարտելով իր առեւտրական գործունէութիւնը Հնդկաս-
տանում Յովհաննէս Թովմաճանեանը պատրաստում է մեկնել
Եւրոպա: «Եւ եմուտ Թովմաճանն ի նաւակն, ընդ որդեգիր հապէշ
Գրիգորին, ապա գնացեալ մտին ի Հէքմօստ նաւն ինկիլիզու քա-
բիթան Ջալիս Միարօին³, 1768 եւ յառաջի օրն մայիսի, որ էր տօն

¹ «Բանգէհիր, փանգէհիր, հակաթոյն, դեղթափ» (Հ. Ա. վ. Քիւփէլեան, Երեքլեզուեան բառագիրք տաճկերէն- հայերէն-գաղղիերէն, հանդերձ համառօտ քերականութեամբ օսմանեան բարբառոյ, Վիեննա, 1883, էջ 904): «Բանգէհիրն ի Հնդկս գանազան կենդանեաց յորովայնէ ի լեղոյն ելանէ, ի կովու, ի փիղէ, ի յուղտու, ի սոցանէ ելեալքն խոշոր են, հատն 20 տրամէն մինչեւ 50, 60 տրեմէ եւ այլ կենդանեաց եւ ի կապկէ ելեալք փոքր են եւ ընդունելի է, քան զմիւսն եւ աւելի արժէ եւ մսխալով վաճառի: Որպէս ունէի 26 օղա, որ մսխալն 30 փարաւն մինչեւ ի 60, 70, 80 փարա ծախեցի: Բայց ի կոզնիէն ելած բանգէհիրն փոքր է եւ 100 մինչեւ ի 150 դուրուշ վաճառի հատն» (էջ 526):

² Մաճունցու եագութ, այստեղ՝ հաւանաբար երեսապատման համար նախատեսուած ակնեղէն (Հ. Ա. վ. Քիւփէլեան..., էջ 487):

³ Խօսքը անգլիական Արեւելա-հնդկական ընկերութեան կազմում 1766-1778 թթ. Հարաւային ծովեր նաւարկող Egmont նաւի մասին է, որ պատրաստուել էւ ծով էր իջեցուել Ուելսում 1766-ին: 138.5 ֆունտ երկարութիւն եւ 34 ֆունտ լայնութիւն, մօտ 708 տ տարողութիւն ունեցող այս նաւը պատկանում էր Ուիլիամ Վեբերին: Մադրասից մեկնող "Egmont"-ը Անգլիայից, Charles Mears-ի նաւապետութեամբ, դուրս էր եկել 1767 թ. Մարտի 4-ին եւ կարողացաւ հետ վերադառալ 1768-ի Նոյեմբերի 1-ին (տե՛ս Horatio Charles Hardy. A Register of Ships, Employed in the Service of the Honorable the United East India Company, from the Year 1760 to 1810: With an Appendix, Containing a Variety of Particulars and Useful Information Interesting to Those Concerned with East India Commerce. London, 1811, p 27): "Egmont"-ի այս ուղեւորութեան

Տեառն Համբարձման լաթինացոց: Եւ ի Հնոստան ընդ ամենայն
20 ամիս է նստեալ Թովմաճանն» (էջ 271):

ELIZABET TAJIRYAN
Armenia

HOVHANNES T'OVMACHANEAN IN INDIA

SUMMARY

Keywords: *Surat, Hyderabad, Golconda, Madras, Shamir Sult'anum, Nazar .Khojamalyan, Gorgin Khan, customs, letters of recommendation,*

Chapters XVII-XIX of Hovhannes T'ovmachanean's "History..." kept at the San Lazzaro Manuscript Repository under the number MS 1688, belong to the authorship of the eighteenth century Armenian gem merchant Hovhannes T'ovmachanean. This article explores Hovhannes T'ovmachanean's journey and activities in India, as well as his detailed descriptions of the local Indian officials he met, the Armenian community of India, as well as his social and trade relations with the representatives of the East India companies.

«Նաւամատեան»ը (Journal), «Հաշուեմատեանը» (Ledger) եւ «Ծախսամատեանը» (Pay Book) պահուում են Բրիտանական գրադարանում (տե՛ս դիւանի համարանիշները համապատասխանաբար՝ Egmont: Journal IOR/L/ MAR/B/535E: 3 Dec 1766-9 Jan 1769; Ledger IOR/L/MAR/B/535M(1): c 1766-c 1769; Pay Book IOR/L/MAR/B/535M(2): c 1766-c 1769):

ОГАНЕС ТОВМАЧАНЯН В ИНДИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Сурат, Хайдарабад, Голконда, Мадрас, Шамир Султанум, Назар Ходжамальян, Горгин Хан, таможня, рекомендательное письмо.

Армянский торговец драгоценными камнями и летописец второй половины 18 века Оганес Товмачаян в рукописи «История...», которая хранится в архивах армянской конгрегации Св. Лазаря в Венеции (рук. 1688 г.), 17-18 и 19 главы посвятил поездке в Индию и своей деятельности.

Автор подробно описывает те пути, которые он прошел для осуществления своей торговой деятельности, ссылается на встреченных им индийских чиновников, подробно рассказывает о своих социальных и торгово-экономических связях с армянской общиной Индии, а также с представителями европейских Ост-Индских компаний.

18-ԸՂ ԴԱՐՈՒԻ ԻՐԱՔԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽՆ ԸՍՑ
ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱՂԸԹ ԱՊՏՈՒԼԼԱՆԻ

Հիմնաբառեր. Թապըթ Ապտուլլահ, Միջագետք(Իրաք), հայ վաճառականներ, Պասրա, անապատային նաւահանգիստ, անցլիացի ներկայացուցիչ, առևտրային հայ եւ հրեայ համայնքներ:

Միջագետք (Իրաք)ի հայկական գաղթօճախը, յատկապէս առևտուրի ոլորտին հետ առնչութիւն ունեցող հատուածը, գոյութիւն ունեցած է Բաբելոն (Իրաք)ի մէջ դեռեւս վաղնջական ժամանակներէն, քանզի երկրամասի այս հատդւածը իր աշխարհագրական դիրքին շնորհիւ անցեալին և ներկայիս, մշտապէս եղած է ինչպէս օտար նուաճողներու, նոյնպէս առևտրա-տնտեսական հարցերով հետաքրքրուողներուն ուշադրութեան կեդրոնը: Արեւելքը Արեւմուտքին կապող այս երկրամասը, Պարսից Ծոցին հիւսիսը գտնուող Պասրա նաւահանգիստով, առևտրատնտեսական պատմութեան մէջ իր ուրոյն տեղն ունի: Այս քաղաքը նաւահանգիստ ըլլալով հանդերձ, իւրայատուկ էր իր «անապատային նաւահանգիստ» կամ «կարաւանային քաղաք-կեդրոն» հանդիսանալով, քանզի գտնուելով սուրիական եւ արաբական անապատներուն խաչմերուկին, Պասրան կը հանդիսանար նաեւ կարաւանային հաղորդակցութեան կեդրոն թէ՛ Հալէպի եւ թէ՛ վերոյիշեալ անապատներուն հետ: Հալէպէն հիւսիս-արեւմուտք Իսքէնտերուն (Հայկական ծովածոցն) էր, Անատոլիան, Կ. Պոլիս ապա՝ Եւրոպա: Հետեւաբար, այստեղ ծաւալուող

առեւտրային գործունեութիւնը պիտի չվրիպեր ե՛ւ օտարերկրացի, ե՛ւ տեղացի պատմաբան-հետազօտողներուն ուշադրութենէն: Այնուամենայնիւ, այս երկրամասի վաղ ժամանակի տնտեսական քաղաքականութեան պատմութեան վերաբերեալ սկզբնաղբիւրներու սակաւութեան կամ դժուարամատչելի ըլլալուն պատճառով, քիչեր անդրադարձեր են այս թեմային, որոնցմէ կ'առանձնացնենք իրաքցի պատմաբան-հետազօտող՝ Թապըթ Ապտուլլահը¹ եւ իր «Վաճառականներ, Մամլուքներ եւ Ռճիբ – ԱռեւտրաՔաղաքական տնտեսութիւնը 18-րդ դարու Պասրային մէջ» անգլերէն աշխատութիւնը (2001, Նիւ Եորք) այս նիւթին վերաբերեալ²:

Հեղինակը ծնած եւ նախնական ու երկրորդական ուսումնաստացած է Պաղտատ: Արտագաղթած է ԱՄՆ, ուր պաշտպանած է իր ատենախօսութիւնը՝ նիւթ ունենալով 18-րդ դարուն Պասրայի մէջ ծաւալուող վաճառականական գործունեութիւնը եւ զայն իրականացնող գլխաւոր դերակատարներուն, իմա՛ հայ եւ հրեայ վաճառականներուն դերը: Սոյն աշխատութիւնը լոյս տեսած է Նիւ Եորքի պետական համալսարանի հրատարակչութեան կողմէն 2001 թուականին:

Աշխատութիւնը անդրադարձած է Պասրա նաւահանգիստային քաղաքին մէջ ծաւալուող առեւտրային գործունեութեան այնպիսի ժամանակաշրջանին, երբ հիմնական կառուցուածքային փոփոխութիւններ տեղի կ'ունենային, որոնք կ'ազդէին տարածաշրջանի ժողովուրդներուն տեղաշարժին, գործունեութեան եւ հնարաւորութիւն ու առիթ պիտի ստեղծէին փոքրուզալացիներուն, ֆրանսացիներուն, ապա բրիտանացիներուն տնտեսա-

¹ Ապտուլլահը այժմ կը դասախօսէ Քանասայի Թորոնթօ քաղաքի Եորք համալսարանի պատմութեան ֆակուլտետին մէջ:

² *St u Abdullah A. J., Thabit, Merchants, Mamluks and Murder. The Political Economy of Trade in Eighteenth-Century Basra. 2001, New York, էջ 17:*

կան եւ քաղաքական ներթափանցման համար երկրամասի այս յոյժ կարեւոր շրջանը¹:

Ինչպէս վերը նշեցինք, Միջագետք(Իրաք) անկոյս երկիր մը չէր հայերուն համար, ուր դեռեւս վաղնջական ժամանակներէն բնակութիւն հաստատած եւ դարերու ընթացքին (ընդմիջումներով) կստացեր են իբրեւ կազմակերպուած համայնք, յատկապէս 17-րդ դարէն ետք եւ այնուհետեւ, 20-րդ դարուն երբ Հայոց ցեղասպանութիւնը վերապրած գաղթականները հանգրուանեցան Իրաք եւ տարիներու ընթացքին կազմակերպուեցան, ունեցան իրենց ազգային դպրոցները, եկեղեցիները, եւ ծառայեցին ազգային-հասարակական գործունէութիւն եւ այլն:

Միջին եւ Նոր դարերուն Իրաքի մէջ հայերու գոյութեան մասին կը վկայեն օտար ուղեւորներուն յուշագրութիւնները², հայ մատենագիրները³, նաեւ ԺԴ-ԺԵ դարերու ձեռագիր յիշատակարանները⁴ եւ այլն:

Այնուամենայնիւ, հայերուն ներկայութիւնն ու ձեռք բերած դիրքը տարածաշրջանի առեւտրային գործունէութեան մէջ ընդգծելի կը դառնայ 17-րդ դարուն սկիզբը, երբ 1604 թուականին Շահ Ապպասի կողմէն Արաբատեան դաշտի 300.000-է աւելի

¹ Տե՛ս Abdullah, էջ 7:

² Manwaring G., The Travels and Adventures of Sir Anthony and Sir Thomas, www.wikipedia. George Manwaring Geary G., Narrative of a Journey From Bombay to the Bosphorus, London, 1878, pp. 222-224, www.wikipedia. Grattan Geary, Wellstead J. R., Travels to the City of Caliphs Along the Shores of the Persian Gulf and the Mediterranean, Volume 1, pp. 274-275. www.wikipedia.J.R.Wellstead եւ այլը:

³ Փաստոս Բուզանդ, Սեբեոս, Թովմա Արծրունի եւ Անանուն, Թովմա Մեծոփեցի, Եղիշէ եւ այլք:

⁴ ԺԴ դարի հայերէն ձեռագիր հիշատակարաններ: Նյութեր հայ ժողովուրդի պատմութեան, հ. 2, կազմ. Լ. Ս. Խաչիկյան, Երևան 1950, էջ 618: ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա (1401-1450 թթ.), Երևան., 1958, էջ 282-285:

բնակչութիւնը կ'ենթարկուի բռնագաղթի, որուն իբր հետեւանք Պարսկաստանի Սպահան մայրաքաղաքին մօտ, կը հիմնադրուի Նոր Ջուղան եւ այլ բնակավայրեր: Սէֆեաներուն պաշտպանութեամբ եւ անոնց բարեհաճ վերաբերմունքին շնորհիւ հայ վաճառականները կը յաջողին ընդլայնել եւ տարածել իրենց գործունէութեան սահմանները Ասիոյ ողջ տարածքին (ներառեալ Պասրա քաղաքը) եւ Միջերկրականի երկիրներ¹: Ապտուլլահը կը նշէ նաեւ, որ իրաքցի եւ օտար պատմաբաններուն գերակշիռ մասը կը հաստատէ, որ Սէֆեան Պարսկաստանի արտաքին առեւտուրը հայ վաճառականներուն մենաշնորհն էր, որոնց գործակալները տարածուած էին ե՛ւ Հնդկաց Ովկիանոսի, ե՛ւ եւրոպական երկիրներու տարբեր քաղաքներ եւ նաւահանգիստներ²: Հետագային, այս ժողովուրդէն հատուած մը այլեւայլ դրդապատճառներով³ կ'անցնի սահմանամերձ երկիրներ, ինչպէս Միջագետք (Իրաք)ի տարբեր քաղաքներ՝ Պասրա, Պաղտատ եւ այլուր: Այստեղ եւս, ինչպէս Նոր Ջուղայի մէջ, հայ վաճառականները շուտով յաջողութեան կը հասնին եւ տէր կը դառնան ինչքի եւ պատկառելի հարստութեան:

Այնուհետեւ, 16-րդ դարէն մինչեւ 17-րդ դարուն վերջին քառորդը, Միջագետքը թատերաբեմը կը դառնայ Սէֆեան Պարսկաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ տեղի ունեցող յաճախակի արիւնակի բախումներու: Միայն 1699 թուականին, քաղաքական զանազան իրադրութիւններու հետեւանքով, Օսմա-

¹ Տե՛ս Abdullah, էջ 95:

² Նոյն տեղում:

³ 1722-ին Սէֆեաներուն անկումով եւ Սպահանի անշքացումով, հայ վաճառականները կը գրկուին իրենց գլխաւոր հովանաւորէն եւ կը սկսին գաղթել տարբեր բնակավայրեր, ներառեալ՝ Պասրա, Պաղտատ, «անդ ծաղկեցաւ առ ժամանակ մի վաճառականութիւնն Ջուղայեցոց, որք կալան ընդ Հնդկաստանի գհադորդակցութիւն տուրեւաութեան» (Յովհաննէանց Տէր Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1980, էջ 317):

նեան կայսրութիւնը կը յաջողի ժամանակաւոր կերպով հաստատել իր իշխանութիւնը ինչպէս Պաղտատի, նոյնպէս Պասրա վիլայէթին մէջ¹:

Պասրան, այս վաճառաշահ քաղաք-նաւահանգիստը, հիմնադրուած է 638 թուականին եւ սահմանակից է Պարսկաստանին²: Գտնուելով Իրաքի հարաւը եւ Պարսից Օղջի հիւսիսը՝ կը հանդիսանայ Իրաքի միակ նաւահանգիստը եւ հանգուցակետն է Հնդկաց Ովկիանոսի նաւային բեռնաթափման եւ փոխանցման դէպի կարաւանային ուղիները՝ Պաղտատ, Հալէպ եւ այլն: Ուշագրաւ է այն փաստը, որ Պասրան իր ողջ պատմութեան ընթացքին պատկանած է երկու «աշխարհներու»: Մերձաւոր Արեւելք եւ Հնդկաց Ովկիանոս³: Իր յոյժ կարեւոր եւ բացառիկ դիրքին շնորհիւ, այստեղ կը վերաբերի առեւտրային աշխոյժ գործունէութիւն: Հետեւաբար, հեղինակի աշխատութիւնը կեդրոնացած է առաւելապէս Պասրայի մէջ 18-րդ դարուն ծաւալուող վաճառականական գործունէութեան եւ գլխաւոր դերակատարներուն, իմա՝ հրեայ եւ հայ առեւտրային համայնքերուն եւ անհատ վաճառականներուն⁴:

Պասրան հռչակաւոր էր նաեւ իր բազմաթիւ ջրանցքներով եւ ոլոր-մոլոր առու-առուակներով, որուն պատճառով օտար ուղեւորները զայն կոչած են «Արեւելքի Վենետիկ»: Այս ջրանցք-

¹ St' u Abdullah, էջ 7 (Ahmet Tabakoglu, The Economic Importance of the Gulf in the Ottoman Era. "Studies on Turkish-Arab Relations," vol. 3, 1988, p. 162).

² Պասրա քաղաքը պարսպապատ էր ինչպէս այդ ժամանակուայ բոլոր ռազմավարական կարեւորութիւն ունեցող քաղաքները, ունէր հինգ դարպաս եւ 131 զինուած աշտարակներ, որոնք կը շրջապատէին քաղաքը երեք կողմէ՝ տարածուելով մինչեւ Շաթ-ուլ Արաբ գետը (տե՛ս Abdullah, էջ 22).

³ St' u նոյն տեղում, էջ 3:

⁴ Օհանեան Մ., Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար, Երեւան, 2020, էջ 107:

ներեն ամենակարեւորն էր Աշար կոչուած ջրանցքը, որ կը բաժնուէր Շաթ-ուլ-Արաբ գետնն եւ կը հոսէր ամբողջ քաղաքին երկարութեամբ: Այս գետնն բխող գետակները կ'ոռոգէին այգիներ, պարտեզներ եւ քաղաքի պարիսպներէն ներս գտնուող արտեր: 1758 թուականին օտար ուղեւոր-պատմաբաններէն¹ Էդուարդ Այվըս (Edward Ives) այսպէս կը նկարագրէ զայն. «Խաղողի մեծ այգիներ ընդմիջուած վարդի թուփերով, եգիպտացորենի դաշտերով սփռուած այս ու այն կողմ՝ համադրուելով գետի տեսարանին հետ, կը կազմէին գեղատեսիլ եւ հիասքանչ լանդշաֆտ: Նուրն ու թուզը եւ տարատեսակ բանջարեղէններն ու ամենակարեւորը՝ արմաւենիներու անհաշիւ շարքեր կ'ամբողջացնէին յիշեալ տեսարանի բաղադրիչները: Սակայն, սոյն դարուն (իմա՝ 18-րդ դար) վերջերը այս ջրանցքներն անուշադրութեան էին մատնուած, որմէ ամբողջ քաղաքն էր տուժած: 1863 թուականին քաղաքն արդէն ամբողջութեամբ աներակ էր²:

Նշեալ քաղաքին մէջ բնակութիւն հաստատած ժողովուրդներուն թուաքանակը, ինչպէս օսմանեան բոլոր քաղաքներուն, խնդրայարոյց էր եւ միանշանակ չէր: Ըստ տարբեր աղբիւրներու, Պասրայի մէջ բնակող ժողովուրդներուն թուաքանակը կը տատանուէր 40.000-ի եւ 70.000-ի միջեւ, որ արդիւնք էր առեւտրային գործունէութեանց վերելքներուն կամ վայրէջքներուն, որոնք նշանակալի ազդեցութիւն ունեցած են այս ժողովուրդներուն տեղաշարժի վրան³: Բայց եւ այնպէս բնակչութեան թուա-

¹ Տե՛ս Abdullah, էջ 25 (Edward Ives, A Voyage from England to India in the year MDCCLIV, London, 1773, p. 232):

² Տե՛ս Abdullah, էջ 24-25. Տե՛ս նաեւ Օհանեան Ս., նշ., աշխ., էջ 108:

³ Տե՛ս Abdullah, էջ 25: Առաջին գլուխին մէջ հեղինակը կ'անդրադառնայ Պասրա քաղաքին ընդհանուր պատմութեան եւ իր աշխարհագրական գերակայ դիրքին շնորհիւ՝ ազդեցութիւնը տարածաշրջանի երկիրներուն վրան, ինչպէս նաեւ այդտեղ բնակութիւն հաստատած տարբեր

քանակի կտրուկ անկումը հետեւանք էր ժանտախտի յաճախակի հարուածներուն¹:

Այնուամենայնիւ, հակառակ վերը նշուած անբարենպաստ պայմաններուն, Պասրայի մէջ հաստատուած հայ վաճառականները, շատ կարճ ժամանակուան ընթացքին, ընտելանալով նոր միջավայրին, աշխուժօրէն կը շարունակէն իրենց գործունէութիւնը եւ կը սկսին մրցիլ եւ թերեւս գերազանցել իրենց տեղն արդէն վերագտած տեղացի հրեայ վաճառականները, որ տեղի կու տար անախորժ եւ երբեմն՝ արիւնալի միջադէպերու: Այս առնչութեամբ պատմաբանը իր չափազանց կարելոր աշխատութիւնը կը սկսի հետեւեալ դէպքին նկարագրումով, որ կ'ընդգծէ երկու համայնքներուն միջեւ եղած մրցակցութիւնը, իսկ երբեմն՝ թշնամանքի. «...1791 թուականի Մարտ 22-ի երեկոյեան, Պասրա քաղաքի ծայրամասին գտնուող աղբանոցի մը մէջ տղամարդու դիակ մը կը յայտնաբերուի, որուն արտաքինէն դատելով ակնյայտ էր իր ոչ-հասարակ դասուն պատկանելիութիւնը: Երկար ժամանակ չի պահանջուիր ճշդելու համար զոհին ինքնութիւնը...: Ան Մալլում անունով մեծահարուստ հրեայ վաճառական մըն էր եւ մրցակցութիւնը եւ թշնամանքը երկու համայնքներուն միջեւ այնքան թեժացեր էին, որ Մալլումի սպանութեան համար կը մեղադրուէր ողջ հայ համայնքը: Հրեայ համայնքի պահանջով, որոնց ներկայացուցիչն էր Պասրայի մէջ շատ յայտնի ականաւոր

ժողովուրդներուն (ներառեալ հայերը) թուաքանակին, նրանց զբաղմունքին եւայլն:

¹ St 'u Abdullah, էջ 25: 1690-1800 թուականներուն Պասրայի մէջ վեց տակալի եւ մահացու ժանտախտի համաճարակներ պատահած են: 1773-ին, օրինակի համար, բնակչութեան մէկ երրորդը զոհ կ'երթայ այս հիւանդութեան, միւս մասն ալ կը լքէ քաղաքը եւ ամիսներ ետք միայն ետ կը վերադառնայ, երբ համաճարակը մարած էր արդէն:

*անձնատրուքին մը՝ Խօճա Ապտուլլահ Իպն Եուսուֆ, բազմաթիւ հայեր կը ձերբակալուին*¹:

Հարկ է նշել, որ հրեաները անվերապահ կերպով կը հովանատրուէին թուրք *մութասալլիմին* կողմէն², իսկ հայ համայնքը կը գտնուէր Արեւելա-Հնդկական ընկերութեան անգլիացի ներկայացուցիչի անմիջական պաշտպանութեան ներքոյ:

Հրեայ վաճառականի դիակի յայտնաբերումով Պասրայի մէջ երկու համայնքներուն միջեւ արդէ՛ն գոյութիւն ունեցող վիհն աւելի եւս խորացաւ: Հրեաները, գլխատրութեամբ իրենց մոլեռանդ կրօնամուղ ղեկավար Աբդուլլա իբն Եուսուֆի շարունակեցին պնդել հայերուն հանդէպ աւելի կոշտ քայլեր ձեռնարկել: Այս

¹ Տե՛ս Abdullah, էջ 1-2:

² 18-րդ դարուն Պասրայի մէջ բնակութիւն հաստատած հրեաներու ազդեցիկ դիրք ունենալու մասին Հ. Մ. Չամչեանը, որ Պասրայի հայ կաթողիկէ համայնքի հոգեւոր հովին էր, հետեւեալը կը գրէ իր վերադասին՝ Վենետիկ. «...Տէրութիւն և իշխանութիւն քաղաքիս ընդ կառավարութեան է ի ձեռս հրէից, մանաւանդ ի ձեռս գլխոյ նոցա՝ որ ասի Եադուպ: Եւ թէ որչափ է իշխանութիւն սորա կարէք իմանալ ի հնգից. նախ՝ զի յորժամ միասելլիմն քաղաքիս իշխանութիւն առեալ ի փաշային Պաղտատայ եկն աստ, ի գնալն առ նա Եադուպին՝ ասէ ցնա միասելլիմն. քաղաքս քոյ է, և իշխանութիւն իմ ի ձեռս քոյ. այլ խնդրեմ զի ի կառավարելո՞ զքաղաքս՝ հովանատրութիւն քո մի պակասեսցէ յինէն: Երկրորդ՝ զհաճութեան սորա կախեալ է արկանել կամ նստուցանել զմիասելլիմն: Երրորդ՝ որչափ ինչ գնան ի Պաղտատ թէ դրամքն և թէ այլ ինչ՝ որ հաճութեամբ և ձեռոք պարտին գնալ: Չորրորդ՝ առանց հրամանի սորա ոչ կազմի և ոչ գնայ կարաւան ի Հալէպ: Հինգերորդ՝ առանց հրամանի սորա ոչ կարէ նաւ մի գնալ ի Հնդկաստան, և ոչ նաւն անգլիացոց: Յորժամ հարցանեն անգլիացի նաւապետաց՝ թէ երբ գնայք՝ պատասխանեն՝ Եադուպ գիտէ, նորա հրամանին սպասեմք են: Այս այր թեպէտէ այսչափ բարձրացեալ է, բայց կարի իմն խոնարի է աշխարհորէն» (Հ. Միքայէլ Չամչեանի նամակը 08 Փետրուար 1772 թուագրեալ, Մայր Դիւան Մխիթարեանց, էջ 277-278): Տե՛ս նաեւ **Օհանէան Ս.**, Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար, 2020, էջ 112:

հանգամանքը հայ առևտրային համայնքն ասելի եւս մօտեցուց բրիտանացիներու ներկայացուցիչ Մամուէլ Մանեսթիին, որ իր հերթին կատաղի հակառակորդ էր հրեաներուն: Հարկ է նշել, որ վերջինս ամուսնացած էր տեղացի հայ վաճառականի մը դստեր հետ, որ սեփականատէրն էր բազմաթիւ բնակարաններու եւ արմաւենիներու պարտէզներու:

Շարունակելով իր գրառումը՝ վերոյիշեալ պատմաբանը կը նշէ, որ հայերը, հակառակ թուրք *մութասալլիմի* ակներեւ թշնամական վերաբերմունքին եւ մանաւանդ շնորհիւ իրենց անգուզական միասնութեան ոգիին, կը յաջողին գոյատեւել եւ պահպանել ոչ միայն իրենց ինքնուրոյնութիւնը եւ ազգային միասնականութիւնը, այլեւ ամբողջ 18-րդ դարու ընթացքին, իբրեւ առևտրային համայնք, շարունակեցին մնալ երկու գլխաւոր առաջատարներէն մէկը, միւսը հանդիսանալով հրեայ համայնքը, որ ձեւաւորուած էր դեռ դարեր առաջ, նոյնիսկ իսլամի Միջագետք մուտք գործելէն առաջ¹: Սակայն, հրեաներու ներկայութիւնն ասելի միասնական եւ շեշտուած կերպով ի յայտ կու գայ

¹ Մինչեւ 20-րդ դարու առաջին կէտը, Իրաքի մէջ կ'ապրէր 150,000 հրեայ, որոնք հաստատուած էին հոն տասնեակ դարեր առաջ: Այս համայնքը կ'ապրէր մեծ քաղաքներուն մէջ եւ կը զբաղէր առևտուրով, սեղանաւորութեամբ, ճարտարարուեստական ձեռնարկով եւ լումայափոխութեամբ: Իրաքի անկախութիւնէն վերջ, ելեմուտի գերատեսչութեան առաջին նախարարը հրեայ Հասկել Մասունն էր: Քրտախօս հրեաներ եւս կային Իրաքի հիւսիսակողմը: Հրեական համայնքները (ի շարս միւս փոքրամասնութիւններուն) 1931 թ. հրատարակուած օրէնքով մը ստացեր էին համայնական ինքնավարութիւն, իրենց ներքին գործերուն մէջ: Անոնք ունէին համայնական կազմակերպուած կեանք, բազմաթիւ դպրոցներ, հիւանդանոցներ եւ տարատեսակ բարեսիրական կազմակերպութիւններ: Այս բոլորը այսօր չկան, քանզի 140.000 հրեաներ 1940-1950-ական թուականներուն գաղթեցին Իրաքէն, ոմանք հարկադրաբար, ոմանք ալ՝ կամաւոր (տե՛ս Գեորգեան Կ., Ամէնուն Տարեգիրք, Պէյրութ, 1957, էջ 380):

Ապստաններու ժամանակաշրջանին, հետզհետէ անշքանալով մոնղոլական արշաւանքներու հետեւանքով: Յիշատակութեան արժանի է, որ Լենկ Թիմուր շատ դաժան կերպով վարուած է մասնատրապէս հրեաներուն հետ, երբ 1393-ին արշաւելով Միջագետք՝ կը կործանէ իրենց սինագոգները եւ կոտորել կու տայ համարեայ բոլորին¹:

18-րդ դարուն սկիզբը, հայ վաճառականական համայնքը, բոլոր հաշիւներով անհամեմատ աւելի հարուստ, բարեկեցիկ եւ ազդեցիկ էր, քան Պասրայի մէջ գտնուող միւս դիմմը համայնքները: Ըստ Ապտուլլահին, օտար ուղեւորներէն Նիյբուրը՝ իր ուղեւորական յուշերուն մէջ, հագուադէպօրէն կը յիշէ հրեայ համայնքը, բայց բազմիցս կ'ընդգծէ հայերուն ունեցած դերի կարեւորութիւնը Պասրայի վաճառականական կեանքին մէջ²:

Ապտուլլահը կը նշէ, որ 17-րդ դարու ամբողջ տեւողութեան եւ 18-րդ դարուն սկիզբը, հայ վաճառականներուն մասնակցութիւնը օսմանեան-սէֆեան առեւտուրին կը կայանար մասնատրապէս պարսկական մետաքսի առեւտուրի ղեկավարման մէջ, որուն կը տիրապետէին շատ հմուտ եւ արհեստավարժ կերպով³: 1773-էն առաջ Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի բոլոր առեւտրական կեդրոններուն մէջ, Պասրայի վիլայէթը կ'առանձնանար իր մեծահարուստ պարսիկ, հայ, հնդիկ արաբ եւ հրեայ վաճառական բնակչութեամբ, որոնց առեւտրային գործունէութիւնը կը տարածուէր եւ կ'ընդգրկէր Հնդկաստանի, Պարսկաստանի, Օսմանեան կայսրութեան եւ Եւրոպայի տար-

¹ Տե՛ս Abdullah, էջ 95:

² Տե՛ս նոյն տեղում, էջ 88 (Carsten Niebuhr, Voyage en Arabie & en Autres Pays Circonvoisins, vol. II, Amsterdam, 1780, p. 180).

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 110 (Frangakis – Syrett Elena, The Commerce of Smyrna in the Eighteenth century 1700-1820, Athens: Centre for Asia Minor Studies, 1992, pp. 107-108).

բեր քաղաքներուն հետ: Սակայն, այս յոյժ կարելոր եւ աշխոյժ առեւտրային կեանքը վերջ կը գտնէ 1773 թուականին քաղաքը հարուածող հերթական ժանտախտի համաճարակի պատճառով: Ըստ 1775 թուականի մարդահամարին, Պասրայի հայ վաճառականներուն թիւը նուազած էր մինչեւ 30-ը¹:

Թապըթ Ապտուլլահը կը նշէ նաեւ, որ ի լրումն Հնդկաստանի եւ Պասրայի միջեւ առեւտրական գործարքներուն, Պասրայի հայ վաճառականները շատ զօրաւոր առեւտրային կապեր ունէին Հալէպի իրենց ազգակից եւ կրօնակից վաճառականներուն հետ: Ամբողջ 17-րդ դարուն եւ 18-րդ դարու առաջին կիսուն, Պասրա հաստատուած Նոր Զուղայի վաճառականները կը ներկայացնէին ամենակարելոր եւ ամենանշանակալից առեւտրական համայնքը Հալէպի մէջ: Վերջիններուն հարստութեան եւ բարեկեցութեան գլխաւոր աղբիւրը այնքա՛ն եկամտաբեր պարսկական մետաքսի առեւտուրն էր²:

Յիշատակութեան արժանի է, որ Արեւելա-Հնդկական ընկերութիւնը, Պասրայի գրասենեակի գործունէութիւնն աւելի յաջող եւ արդիւնաւետ դարձնելու համար, կ'որոշէ իր երիտասարդ պաշտօնէականներուն առաքել Սպահան, որպէսզի, մնալով եւ ապրելով հայ վաճառականներուն հետ (որոնք հետագային պիտի տեղափոխուէին Պասրա), իւրացնեն վերջիններուն ճարպիկ գործելակերպը, սորվին հայերէն եւ պարսկերէն, որոնք ամենագործածուող լեզուներն էին այդ տարածաշրջանի առեւտրային կեանքին մէջ:

Առեւտրային եւ քաղաքական գործունէութիւնը աւելի ամուր հիմքերու վրան դնելու միտումով Արեւելա-Հնդկական ընկերութիւնը գործակալական գրասենեակ մը կը հիմնէ Բանդար

¹ (108) - البصرة في الفترة المظلمة وما بعدها - بغداد 1969، صفحة (108) - (Իրաք խաւար շրջանին եւ ետքը, Պաղտատ 1969, էջ 108):

² See u Abdullah, էջ 96:

Ապպասի (Պարսկաստան) մէջ, ուր առետրա-տնտեսական գործունէութիւն կը ծաւալէր ամբողջ մէկուկէս դար: 1723 թուականին Պասրայի մէջ կը հիմնադրէ «Ժամանակատը» նոյնանման գրասենեակ մը, որ հետագային Պարսկաստանի քաղաքական դրութեան վատթարացումով, Բանդար Ապպասի գրասենեակը 1763 թուականին վերջնականապէս Պասրա կը տեղափոխէ, որ մնալուն կը դառնայ ոչ միայն առետրային, այլև որպէս բրիտանական քաղաքական գործունէութեան աշխոյժ կեդրոն: 1822-ին գրասենեակը կը շարունակէր իր գործունէութիւնը, սակայն իբր սոսկ ներկայացուցչութիւն վերոյիշեալ ընկերութեան: Ներկայացուցիչն ալ Բարսեղ անունով տեղացի հայ վաճառական մըն էր, որ այս գործը շարունակեց մինչև 1851 թուականը¹:

Նշենք նաեւ, որ Պասրայի մէջ բրիտանացիներու ամենագորատը դաշնակիցները հայ վաճառականներն էին: Սակայն, 17-րդ դարուն, հայ վաճառականական համայնքը ամենամեծ խոչընդոտը կը համարուէր եւրոպացիներուն Պասրա ներթափանցման: Անոնք (հայերը) գլխաւոր մրցակիցներն էին անգլիացի եւ հոլանդացի վաճառականներուն եւ միւս առետրային ընկերութիւններուն: Սակայն, մրցակցութիւնը աստիճանաբար տեղի կու տայ համագործակցութեան, յատկապէս Սէֆեաներու անկումէն ետք: Հայ վաճառականները աւելի կը նախընտրէին փոխզիջումներու դիմել՝ հասնելու համար անգլիացիներուն պաշտպանութեան: Իր զեկուցման մէջ, անգլիացի ներկայացուցիչը կը հաստատէ, որ անկարելի է վաճառականական գործունէութիւն ծաւալել առանց տեղացի ժողովուրդին օժանդակութիւնը ապահովելու: Երբ Խօճա Պետրոս Դի Գրիգորը, որ Պասրայի ամենակարկառուն հայ վաճառականներէն մէկն էր, 1754-ին մուսուլման ստրուկ աշխատց-

¹ Օհանեան Ս., Հայ վաճառականութիւնն Իրաքի մէջ 17-19-րդ դարերուն, «Հայոց պատմութեան հարցեր», (14), Երեւան 2013, էջ 97:

ներու մեղադրանքով կը ձերբակալուի, անգլիացի ներկայացուցիչը ամէն ջանք ի գործ կը դնէ իր ազատ արձակման համար¹:

Յիշատակելի է նաեւ այն փաստը, որ Պասրայի մէջ բնակութիւն հաստատած ժողովուրդներէն հայերն էին ամենասերտ յարաբերութիւններ մշակած բրիտանացի ներկայացուցիչին հետ: Մինչեւ 1790 թուականը, երբ հայերուն վերաբերեալ որեւէ խնդիր յառաջանար, վերջինս (իմա՝ անգլիացի ներկայացուցիչը) կը ներկայանար Պասրայի դիւանի (քաղաքի հեղինակատր անձերէ բաղկացած մարմին) հաւաքոյթներուն իբր քրիստոնեաներուն ներկայացուցիչ²:

18-րդ դարուն սկիզբը, հայ եւ հրեայ համայնքներուն ունեցուածքի եւ ընդհանրապէս հարստութեան միջեւ եղած համահաւասարութիւնը տակաւին ակնյայտ չէր: Այնուամենայնիւ, ինչպէս վերը նշեցինք, հայ վաճառականական համայնքը, բոլոր տուեալներով, ակելի հարուստ եւ ազդեցիկ էր, քան Միջագետքի մէջ գտնուող մնացեալ «ըիլըլ-դիմը»³ համայնքները: Օտար ճանապարհորդներ ինչպէս Նիբուրը եւ ուրիշներ հազուադէպօրէն կը յիշեն հրեայ համայնքը, բայց բազմիցս կ'ընդգծեն հայերուն ունեցած դերի կարեւորութիւնը Պասրայի վաճառականական կեանքին մէջ: Հեղինակը կը նշէ նաեւ, որ հրեայ համայնքը դեռեւս ճնշուած դրութեան մէջ էր պաշտօնական շրջանակներուն կողմէն: Այս առնչութեամբ հետեւեալ վիճակագրութիւնը կը յստակեցնէ իւրաքանչիւր համայնքի ունեցուածքի չափը, որուն համաձայն Պարսկաստանի նոր տիրակալ Քերիմ Չընդ խանը կը պահանջէ նշուած համայնքներէն ըստ իրենց կարողութիւններուն.

¹ Տե՛ս Abdullah, էջ 110:

² Տե՛ս Abdullah, էջ 36:

³ «Շիլ ըլ-դիմը» համայնքներ կը կոչուին այն ոչ-իսլամ փոքրամասնութիւնները, որոնք, ըստ իսլամական օրէնքի (շարիյիթ), կը գտնուին պետական հովանաւորութեան տակ:

Պարսկական բանակի¹ պահանջած գումարները (թումանով)
1776 թուականին Պասրայի բնակչութենէն.²

Հայ վաճառականներ	17.000
Հրեայ վաճառականներ	17.000
Հաճի Պագըր եւ հաճի Իբրահիմ	13.000
Շէյխ Տարուիշ եւ իր «ժողովուրդը»	40.000
Մէյիդներ, Մուֆթի եւ Պասրայի դիւանի	
հեղինակատր անձինք	20.000
Մնացած բնակչութիւն	18.000

Այնուամենայնիւ, այս իրավիճակը կտրուկ եւ արագօրէն կը փոխուի 18-րդ դարու երկրորդ կիսուն՝ ի նպաստ հրեայ համայնքին՝ շնորհիւ անոնց կարող եւ հեռատես ղեկավար՝ «նասի»ին³ *Շագուբ պէն Աարոն Գալիբայ*-ին՝ շրջանցելով եւ ստուերելով հայ վաճառականական համայնքը, որուն անդամները այնուհետեւ նախընտրեցին անգլիացիներուն հետ գործակցիլ՝ պահպանելու համար տարիներու ընթացքին իրենց կուտակած հարստութիւնը:

Հրեաները կը զբաղէին նաեւ միջնորդութեամբ, փոխառութեամբ ու լումայափոխութեամբ եւ այդ իսկ պատճառով զօրաւոր ազդեցութիւն ունէին կառավարական շրջանակներուն վրան, յատկապէս 18-րդ դարուն վերջերը⁴: Իսկ հայ վաճառականներուն

¹ Պարսկաստանի տիրակալ Քերիմ Խան Չընդ 1775 թուականին կը պաշարէ Պասրա քաղաքը եւ, զայն սովի մատնելով, անձնատուութեան կը պարտադրէ: Բնակչութիւնը 13 ամիս դիմադրելէ ետք, հարկադրուած անձնատուր կ'ըլլայ 1776 թուականի Չատիկի օրը եւ իբր պատերազմական տուգանք կը վճարէ վերոյիշեալ տուրքերը:

² Տե՛ս Abdullah, էջ 88 (IOR Letters from Basra G/29/21, letter dated July 2, 1776, folio 223):

³ Նասիին հրեայ համայնքի ղեկավարն էր:

⁴ Տե՛ս Abdullah, էջ 27:

գերակշիռ մասը, ըստ օտար ուղեւորներու նկատառումներուն, ժամանած էին Նոր Զուղայէն, որոնք նաեւ խանութներու սեփականատէրեր էին, գոհարավաճառներ, օտար ընկերութիւններու եւ քաղաքական դիւանագիտական ներկայացուցչութեան գրասենեակներուն մէջ թարգմանիչներ¹:

Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ տուեալ ժամանակաշրջանին ընդունուած անգիր օրէնք էր, որ վաճառականի կամ ընդհանրապէս գործարարի մը զլխաւոր եւ անհրաժեշտ հարստութիւնը կը կայանար իր ունեցած բարի համբաւին շուրջ, քանզի Պասրայի տարանցիկ առետուրը կ'իրականացուէր ապառիկ կերպով՝ երաշխաւորուած միմիայն տուեալ անհատ/վաճառականի տուած պատույ խօսքով²:

Այս առնչութեամբ, ընդգծելի է այն փաստը, որ Պասրայի առետուրային համայնքներուն անդամները անհաւատալի կերպով ճշդապահ էին իրենց բոլոր գործարքներուն մէջ եւ այդ հասկցողութեամբ պարտատոմսերը երբեք շրջանառութեան մէջ չէին եղած: Հետեւաբար, եթէ որեւէ վաճառական կամ իր գործակալը, կամքէ անկախ պատճառներով, խոստմնազանց գտնուէր, ապա հետագային շատ դժուարութեամբ պիտի յաջողէր վերականգնել իր հեղինակութիւնն ու բարի համբաւը³:

Ուշադրութեան արժանի է, որ Պասրայի կամ ընդհանրապէս Հնդկաց Ովկիանոսի նաւահանգիստներուն մէջ ձեւաւորուած էին առետուրային համայնքներ-արհմիութիւններ, որոնց վաճառական-անդամները կը համագործակցէին իրար հետ՝ հիմնուելով ազգակցական կապերու, էթնիկ ցեղային պատկանելիութեան կամ զիրենք կապող կրօնական յարաբերութիւններուն

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 27 (Herman Gollanze, Chronicle of Events, p. 350):

² Տե՛ս նոյն տեղում, էջ 89:

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 89 (James Tracey, "Introduction", The Political Economy of Merchant Empires, Cambridge, 1991, p. 10):

վրան եւ ընդհանրապէս ազատ էին իշխանութիւններուն խիստ հսկողութենէն¹: Այսպիսով, այս համայնքները ստեղծած էին առետրային ցանցեր, որ կը դիրացնէր առետուրը եւ ընդհանուր առմամբ, կը նպաստէր ներդաշնակութիւն ապահովել տարածաշրջանին մէջ, որ տասնեակ տարիներէ ի վեր ենթարկուած էր մնայուն դարձած քաղաքական եւ ընկերային անկայունութեան²:

Այսպիսով, Պասրայի մէջ 18-րդ դարուն կը գործէին հետեւեալ առետրային համայնքները³.

Համայնք	Թուաքանակ
Սունիական	16
Հայկական	11
Պարսկական	9
Հրեական	5
Միջհամայնքային	2

Յիշատակութեան արժանի է, որ 1660-1780 թուականներուն Պասրայի եւ Հնդկաստանի հայ վաճառականները փոխադարձ վաճառականութեամբ կը զբաղէին, որոնց սեփական նաւերը, ինչպէս «Փաղրոնի», «Սանթա Քրոչէ», «Սանթա Քրուզ», «Արշակ» եւայլն, կը նաւարկէին Պասրայի եւ Հնդկաստանի միջեւ: Այնուամենայնիւ, հնդիկ պատմաբան Աշին Դաս Գուբթա կը նշէ, որ 18-րդ դարուն վերջերը հայ վաճառականներն իրենց թանկարժէք բեռները փոխադրելու համար կ'օգտագործէին առաւելապէս անգլիական նաւերը: Օրինակի համար, անգլիական «Ղըրէք» նաւի մարգարիտի վեց բեռներէն հինգը կը պատկանէր հայ վաճառականներուն⁴:

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 92:

² Տե՛ս նոյն տեղում:

³ Տե՛ս նոյն տեղում (Hala Fattah, The Politics of Regional Trade in Iraq, Arabia and the Gulf 1745-1900, Albany, 1997, p.87):

⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 96:

Հեղինակը իբր եզրակացութիւն կ'արձանագրէ հետեւեալ փաստերը.

Պասրայի առեւտրային գործունէութեան անշքացման պատճառները. թէւ 18-րդ դարը քաղաքի տնտեսական ամենածաղկուն ժամանակաշրջանն էր մինչեւ 1773 թուականը.

Աշխարհը, ուր տեղի ունեցաւ հրեայ վաճառականի սպանութիւնը խորը վերափոխում կ'ապրէր: Ասիացիներուն եւ եւրոպացիներուն միջեւ համագործակցութեան դարաշրջանը տեղի կու տար վերջիններուս ակնյայտ տիրապետութեան:

Երկու իրադարձութիւններ հնարաւոր դարձուցին այդ յեղաշրջումը եւ պատճառ դարձան ընդլայնելու մինչ այդ եւրոպացիներուն սահմանափակ ազդեցութիւնը տարածաշրջանի առեւտրային գործունէութեան: Առաջինը՝ տնտեսական-քաղաքական բռն ճգնաժամերու¹ շարանն էր եւ ժանտախտի բազմաթիւ հարուածներն էին, որ քաղաքը ժամանակաւոր կերպով անմարդաբնակ կը դարձնէին մինչեւ հերթական համաճարակի մարիլը: Երկրորդ իրադարձութիւնը՝ Եւրոպայի մէջ մեկնարկած արդիւնաբերական յեղափոխութիւնն էր, որ հնարաւորութիւն ընձեռեց այդ աշխարհամասի (իմա՝ Եւրոպայի) վաճառականներուն զինուիլ տնտեսական եւ գիտարուեստական (տեխնիկական) նորագոյն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին Ասիայի (ներառեալ Պասրա նաւահանգստային քաղաքը) մէջ ծաւալուող ճգնաժամէն լիարժէք կերպով օգտուելու համար:

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 117: Ճգնաժամերը, որոնց կ'ակնարկէ հեղինակը, Պարսկաստանի կեդրոնական իշխանութեան անկումն էր եւ Պաղտատի ինքնավարութեան ձգտման աճը, ինչպէս նաեւ եւ յատկապէս արաբական ցեղախումբերուն ներխուժումը Պասրա, որոնք ստեղծած էին անորոշ եւ անկայուն մթնոլորտ, եւ անշուշտ ժանտախտի յաճախակի հարուածները, որ անհնարին կը դարձնէր շարունակել առեւտրային սահուն գործունէութիւնը:

Պասրա քաղաքի տնտեսա-քաղաքական անկումի գլխաւոր պատճառներէն էր նաեւ Արաբիայէն տարբեր ցեղախումբերուն արշաւանքները եւ աստիճանաբար ներթափանցումը յիշեալ քաղաքի կեանքին բոլոր ոլորտներուն մէջ, որ պատճառ դարձաւ Պասրայի առեստրայիս գործունէութեան արհեստավարժ եւ հարուստ փորձառութեամբ վաճառականներուն ասպարէզէն հեռացման, յանգեցնելով նաեւ քաղաքի ժողովրդագրական ընդհանուր պատկերի փոփոխման:

SEDA OHANIAN
Ph. D. in History
Armenia

THE ARMENIAN COMMUNITY OF MESOPOTAMIA (IRAQ) ACCORDING TO THABIT A. J. ABDULLAH'S MONOGRAPH

SUMMARY

Keywords: Thabit A.J. Abdullah, Mesopotamia (Iraq), Armenian merchants, Basra, Desert Port, English Representative, Armenian and Jewish Trade communities.

The article refers to mentions of Armenians in Dr. Thabit A. J. Abdullah's monograph "Merchants, Mamluks and Murder. The Political Economy of Trade in Eighteenth-Century Basra" (2001, New York, in English).

Because of its geographical location, Basra port-city has always been the center of lively commercial activities, especially in the 18th century. Therefore, the author Thabit A. J. Abdullah's book is focused on the thriving trade activities in this city and the main competing parties namely Armenian and Jewish merchants as well as individual traders. If the Armenian merchants were under the patronage of the British Representative of the British India Co., then the Jewish

community in general and the merchants in particular enjoyed the protection of the Turkish mutassalem (governor's representative) of local authorities.

СЕДА ОГАНЯН

к.и.н.

Армения

АРМЯНСКАЯ ОБЩИНА МЕСОПОТАМИИ (ИРАКА) ПО МОНОГРАФИИ ТАБИТА А. ДЖ. АБДУЛЛЫ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Табит А. Дж. Абдулла, Месопотамия (Ирак), армянские купцы, Басра, пустынный порт, английский представитель, армянские и еврейские торговые общины.

Статья посвящена напоминаниям армян города Басры в монографии иракского исследователя д-ра Табита А. Дж. Абдуллы «Торговцы, мамлюки и убийство. Политическая экономия торговли в Басре 18 века» (2001, Нью Йорк, на английском). Благодаря своему географическому положению, портовый город Басра всегда был центром оживленной коммерческой деятельности, особенно в 18 веке. Таким образом, книга Табита А. Дж. Абдуллы сосредоточена на процветающей торговой деятельности в этом городе и основных конкурирующих сторонах, а именно - на армянских и еврейских купцах, а также на отдельных торговцах. Если армянские купцы находились под покровительством британского представителя Британской Индийской компании, то еврейская община вообще и торговцы в частности пользовались покровительством турецких мутассалемов (представитель губернатора) местных властей.

ԴԱՆԻԵԼ ԴԵՖՈՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Դանիել Դեֆո, հայ կերպարներ օտարալեզու գրականության մեջ, գաղութահայեր, հայ վաճառականներ, Չինաստանի հայեր, Իրաքի հայեր, «Ռոբինզոն Կրուզոյի հետագա արկածները», «Նշանավոր նավապետ Մինգլթոնի կյանքը, արկածները և ծովահենությունը», «Ռոքսանա. երջանիկ կուրտիզանուհին», «Ճշմարիտ անզլիացի վաճառականը»:

Անզլիացի հանրահայտ գրող Դանիել Դեֆոն (1660–1734) մասնավորապես իր հոշակավոր «Ռոբինզոն Կրուզո» վեպով վաղուց հայտնի է հայ ընթերցողին: Այդ վեպի՝ հայ իրականության հետ առկա աղերսները քննվել են հայ գրականագիտության մեջ¹, սակայն անծանոթ է մնում այն փաստը, որ Դանիել Դեֆոն հայերին հիշել է իր չորս ստեղծագործություններում: Եվ ինչպես ուշ միջնադարի և 19-րդ դարի եվրոպացի հեղինակներից շատերի երկերում, նրա հիշատակած հայերը ոչ թե բուն հայաշխարհի բնակիչներ են, այլ գաղութահայության ներկայացուցիչներ իրենց հատկանիշներով:

Նկատենք, որ նոր ժամանակներում աշխարհի տարբեր լեզուներով ստեղծված ուղեգրական և գեղարվեստական գրականության մեջ հայերը մեծ մասամբ հիշվում են որպես տարբեր

¹ Տե՛ս Վարդան Փարթամյանի «Ռոբինզոնը հայ գրական անդաստանում» հոդվածը (Փարթամյան Վ., Հայ-անզլիական գրական առնչությունները, Երևան, 1975, էջ 121-147):

երկրների բնակիչներ (օրինակ՝ Ժյուլ Վեռնի «Ուրթունն օր աշխարհի շուրջը» վեպում նշված են Բոմբեյի հայկական եկեղեցիները և երկար զգեստներով հնդկահայերը), իսկ եթե ավելի մասնավորեցնենք, ուշ միջնադարում հայերը եվրոպացիներին առավելապես հայտնի էին որպես աշխարհով մեկ առևտուր իրականացնող ձեռնհաս արևելցիներ, որպիսին էլ նրանք ներկայացվել են գրականության մեջ: Բազմաթիվ օրինակներից հիշենք, որ Լոպե դե Վեգայի «Շունը դեզի վրա» և Կառլո Գոլդոնիի «Հնահավաքի ընտանիքը» կատակերգությունների հերոսները ծայտվում են որպես հայ վաճառականներ, Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե-Քրիստո» վեպի հերոսուհի Հայդեին որպես գերի գնում է հայ վաճառականը, հայ վաճառականներ են Լեոն Սազիի «Կնոջ գաղտնիքը» վեպի և Դավիդ Բեյդի «Հայ ֆանտոմասը» նովելի զլխավոր հերոսները և այլն: Հայերը հիմնականում որպես առևտրականներ են հիշված նաև Դանիել Դեֆոյի արձակ գործերում:

1) Հային առաջին անգամ Դեֆոն հիշատակել է «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և արկածները» ստեղծագործության շարունակությունը հանդիսացող «Ռոբինզոն Կրուզոյի հետագա արկածները» վեպում: Ռոբինզոնը վերադառնում է իր կղզին, այնուհետև կատարում է շուրջերկրյա ճանապարհորդություն և Անգլիա է մեկնում Չինաստանով ու Ռուսաստանով: Վեպի իններորդ գլխում Դեֆոն մասնավորապես հիշում է, որ Ռոբինզոնը հայտնվում է Պեկինում, որտեղ մի պորտուգալացի ծովայինից լսում է Մոսկվա մեկնող քարավանի մասին: «Այս առավոտ փողոցում ես հանդիպեցի իմ մի հին ծանոթի՝ մի հայի կամ որին դու կոչում ես հույն, որը նրանց մեջ է. նա եկել էր Աստրախանից, և պատրաստվում էր մեկնել Տոնկին, որտեղ ես նախկինում ճանաչել եմ նրան, սակայն նա փոխեց իր միտքը և այժմ որոշեց քարավանի հետ Մոսկվա վերադառնալ և այնտեղից Վոլգա գե-

տով իջնել Աստրախան»¹: Օայրագույն Արևելքում հային և հույնին կարող էին շփոթել միմյանց հետ: Դեֆոյի այս տեղեկությունը, թեկուզ գեղարվեստական գրականության մեջ, ևս մեկ վկայություն է 18-րդ դարում Չինաստանում հայերի ներկայության մասին, այն էլ ոչ թե ավանդական նավահանգստային կենտրոններում, այլ՝ Տոնկինում, որը Չինաստանի հարավային սահմանակից Վիետնամի հյուսիսային տարածքն է:

Քանի որ այս վեպն իրական հիմք ունի, անհիմն չէ ենթադրել, որ Դեֆոն իրականում լսած կամ կարդացած լինի Չինաստանում գործած որոշակի հայ վաճառականի մասին:

2) Դեֆոյի՝ 1720-ին հրատարակած «Նշանավոր նավապետ Մինգլթոնի կյանքը, արկածները և ծովահենությունը» վեպը նույնպես իրական հենք ունի: Նավապետ Մինգլթոնի կերպարը ներշնչված է համարվում 17-րդ դարի անգլիացի ծովահեն Հենրի Էվրիից: Հնդկական օվկիանոսում ծովահենությամբ զբաղվող հերոսը՝ նավապետ Բոբբը, և իր ընկեր Վիլյամ Ուոլթերսը Անգլիա են վերադառնում Վենետիկով՝ ձևանալով հայեր: Հայտնի պատմական իրողություն է, որ այս ժամանակաշրջանում Արևելքում՝ մասնավորապես Չինաստանում ճանապարհորդած եվրոպացի-

¹ Defoe D., *The Farther Adventures of Robinson Crusoe; Being the Second and Last Part of His Life, and of the Strange Surprizing Accounts of His Travels Round Three Parts of the Globe*, London, 1719, p. 306. *The Novels of Daniel Defoe: Life and adventures of Robinson Crusoe to which is Prefixed a Biographical memoir of Daniel De Foe*, vol. III, Edinburgh, 1810, p. 245246. Իտալերեն թարգմանության մեջ այս հայի հատվածն առկա է (տե՛ս Defoe D., *La vita e le avventure di Robinson Crusoe: storia galante che contiene, tra gli altri avvenimenti il soggiorno ch'egli fece per vintott' anni in un isola deserta situata sopra la costa dell' America vicino all' imboccatura della gran riviera Oroonoca. Il tutto scritto da lui medesimo. Traduzione dal francese, tomo primo, Venezia, 1763, էջ 246*), մինչդեռ ռուսերեն թարգմանության մեջ բացակայում է (տե՛ս Дефо Д., *Дальнейшие приключения Робинзона Крузо*, Москва, 2006, էջ 564):

ներն ապահովության համար կրել են հայկական տարագ ներկայացել են որպես հայեր: Չինաստանի սահմանները փակ են եղել օտարականների՝ հատկապես քրիստոնյաների համար, սակայն դա առաջին հերթին վերաբերել է եվրոպացիներին, իսկ հայերը և արևելյան մյուս քրիստոնյաները բացառություն են կազմել: 16–17-րդ դդ. հայկական տարագով Չինաստան են մուտք գործել մասնավորապես եվրոպացի ճանապարհորդներ և միսիոներներ Պերուզինո դե Կաստելանը, Ժան դը Մոնդ Էուվենիոն, Մեթյու Ռոչլինը և Բենտո դե Գոիշը¹:

Նավապետ Սինգլթոնը Մեծ Մոդոլի պատկանող բենգալական նավի վրա հանդիպել է հինգ հնդիկ վաճառականի և մի քանի հայի, նշված են նրանց ապրանքները՝ համեմունքներ, մետաքս, ադամանդներ, մարգարիտներ, միտկալ և այլն²: Սինգլթոնը Հնդկաստանի Ագրա քաղաքում հանդիպել է մի հոլանդացու, որը Բենգալիայից ճանապարհորդել է Ագրա՝ Մեծ Մոդոլի մայրաքաղաքը: Այդ հոլանդացին ունեցել է հայ ծառա, որին սովորեցրել է հոլանդերեն խոսել³:

Այնուհետև Սինգլթոնն ու իր ուղեկից Վիլյամը, որպես ծախված հայ (սորջուղայեցի) առևտրականներ, հնդկական ապրանքներով բեռնված, եղել են Բասրայում և Բաղդադում: Այնտեղ նրանք շփումներ են հաստատել տեղացի հայերի հետ, որի մասին հայտնի է դառնում հետագա շարադրանքից: Արդեն ժամանելով Վենետիկ՝ «Մենք շարունակում էինք երկար ժամանակ մեզ գաղտնի պահել՝ տակավին ներկայանալով որպես երկու հայ վաճառա-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս *Gulbenkian R., L'habit arménien, laissez-passer oriental pour les missionnaires, marchands et voyageurs européens aus XVIe et XVIIe siècles, «Revue des études arméniennes», tome 25, 1994-1995, էջ 369-388:*

² *Works of Daniel Defoe, with a Memoir of His Life and Writings by William Hazzlitt, vol. II, London, John Clements, Little Pultenery Street, 1841, p. 61.*

³ Նույն տեղում, էջ 90:

կաններ, ինչպես նախկինում էինք արել. և մինչ այդ մենք այնքան շատ էինք սովորել պարսկերեն և հայերեն լեզուներից, որոնք խոսվում էին Բասրայում և Բաղդադում և ամենուրեք, որտեղ որ լինում էինք, որ բավական էր միմյանց հետ խոսել կարողանալու համար, որպեսզի որևէ մեկը մեզ չհասկանար, չնայած երբեմն մենք ինքներս էլ մեզ դժվար էինք հասկանում:

Այստեղ մենք մեր բոլոր ապրանքները վերածեցինք դրամի, որոշ ժամանակ հաստատեցինք մեր կացարանը, և ես ու Վիլյամը, պահպանելով միմյանց հանդեպ անխախտ բարեկամություն և հավատարմություն, ապրում էինք երկու եղբայրների պես. մենք ոչ մի առանձին հետաքրքրություն չէինք ունեցել կամ չէինք փնտրում. մենք լրջորեն և ծանրորեն խոսում էինք և անընդհատ՝ ապաշխարելու թեմայի շուրջ. մենք երբեք չփոխվեցինք, այսինքն՝ չհանեցինք մեր հայկական հանդերձները, և Վենետիկում մեզ անվանում էին երկու հույներ»¹:

Այստեղ դարձյալ տեսնում ենք, որ ինչպես «Ռոբինզոն Կրուզոյում», հայը և հույնը նույնական են ընկալվել:

Հետագա շարադրանքից տեղեկանում ենք, որ Վիլյամը, այնուամենայնիվ, հայկական հանդերձանքը թողնելուց հետո էլ շարունակել է հանդես գալ իր հայկական կեղծանունով և քոջն ու քեռուն ուղղած նամակները ստորագրել է «հայկական դժվարին անունով՝ պարոն Կոստանդին Ալեքսիոն Սպահանցի (Signore Constantine Alexion of Ispahan)»²: Հասկանալի չէ, թե այս անվան մեջ ինչն է դժվարինը...

1724-ին հրատարակած Դեֆոյի վերջին՝ «Ռոքսանա. երջանիկ կուրտիզանուհին» վեպի հերոսուհի Ռոքսանան, հաստատվելով Փել-Մելում (Վեսթմինսթեր), ներդնում է իր փողերը և

¹ Նույն տեղում, էջ 93:

² Նույն տեղում:

դառնում սալոնի տիրուհի՝ Անգլիայում հայտնի դառնալով իր կազմակերպած երեկույթներով, իր հազած արևելյան հագուստներով ու կատարած արևելյան պարերով: Այդ երեկույթներից մեկի ժամանակ հերոսուհին նկարագրում է իր հյուրերից մեկին. «Այդ տիկիներին մեկը, իրոք, շատ սքանչելի էր հագնված՝ Վրաստանի բարձրաստիճան օրիորդի սովորույթի համաձայն, իսկ մյուսը՝ ըստ Հայաստանի նույնանման սովորույթի, և յուրաքանչյուրն ուներ իրեն ուղեկցող մի-մի ստրկուհի»¹:

Այստեղ արտառոց է թվում, որ Անգլիայում կարող էին զանազանել Վրաստանի և Հայաստանի բարձրաշխարհիկ օրիորդներին բնորոշ հանդերձները:

4) Դեֆոյի՝ 1726-ին գրված «Կատարյալ անգլիացի վաճառականը» էսսեում հիշվում է Ասիայում կատարված մի պատմություն, թե ինչպես մի հայ առևտրական եկել է մի անգլիացի վաճառականի մոտ՝ տեսնելու վաճառքի ենթակա անգլիական կտորեղենի մի մեծ ծանրոց: Նա իր հետ բերել է մի հրեայի, որը միջնորդ էր հանդիսանալու իր և անգլիացու միջև՝ գործարք կնքելու և զին նշանակելու համար, որը սովորական էր այդ երկրներում: Վաճառականը հրեայից հետաքրքրվել է իր հայ հաճախորդի բնավորությամբ, և հրեան, ձևանալով, թե շատ անկողմնակալ է, սառը պատասխանել է, թե այդ մասին չի կարող ասել ոչինչ, բացի այն, որ ինքը հավատում է հայի ազնվությանն ու ուշիմությանը: Անգլիացին գոհ չի մնացել այդ խոսքերից, քանի որ հայը քսան օր ժամանակ է ուզել իր ապրանքն իրացնելու համար, որից հետո միայն կկարողանար անգլիացուն վճարել և փո-

¹ The Novels and Miscellaneous Works of Daniel Defoe, vol. 11, London, D. A. Talboys, 1840, p. 191.

խարենը չի առաջարկել իր սեփական ապրանքները. այնպես որ նրանք բաժանվել են¹:

«Մի քանի օր անց հայր միջոցներ է գտնում և նույն հրեայի օգնությամբ տասը տուփ, այսինքն՝ հարյուր կտոր տանում է իր պահեստը, որը պատկանել է կա՛մ այդ հրեային, կա՛մ մեկ այլ անձի, որի համար կարծես հայր կա՛մ վճարել էր, կա՛մ խոստացել էր վերադարձնել:

Այդ ամենից հետո խաբեբա հրեան առիթ է ստեղծում, որ վաճառականին տանի քարվանսարայում կամ իջևանատանը հայի սենյակը, որտեղ անզլիացին տեսնում է տասը հակ անզլիական կտորեղեն: Նա եզրակացնում է, որ հրեան իրեն խաբել է և անտարբեր խոսել հայի մասին՝ վաճառելով դրանք մեկ այլ առևտրականի ու խանգարելով իրեն: Եվ հարցրեց հրեային, թե դա ինչ է նշանակում, ու նա ասաց, որ դրանք մի վաճառականի կտորի հակերն են, որն այնտեղից հեռացել էր մոտ երեք շաբաթ առաջ: Այնպես որ, անզլիացին չկարողացավ հարցնել նրա մասին և որ նա շատ հեշտությամբ վստահեց հային այդ հարյուր կտորը՝ իմանալով, որ նա շատ ազնիվ մարդ է»²:

Այնուհետև Դեֆոն պատմում է, որ անզլիացի վաճառականը դառնում է այդ հայի և հրեայի նենգությունների զոհը, որոնք անհետանում են՝ անզլիացուն թողնելով առանց ապրանքների³:

Ինտելիվ տարբեր ժողովուրդների միջև կատարվող ապրանքների շրջանառության մասին՝ այդ նույն էսսեում նա հայե-

¹ Տե՛ս Daniel Defoe, *The Complete English Tradesman: In Familiar Letters; Directing Him in All the Several Parts and Progressions of Trade ... Calculated for the Instruction of Our Inland Tradesmen; and Especially of Young Beginners*, Charles Rivington, 1727, էջ 68:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 69-70:

րին հիշել է մեկ անգամ ևս՝ նշելով, որ «պարսիկներն ու հայերը գնում են մեր բրդե գործվածքները՝ չնայած նրանք ունեն սեփական մետաքսը»¹:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Դանիել Դեֆոն իր չորս ստեղծագործություններում հիշատակելով հայերին՝ որոշ պատկերացում ունեցել է մեր ժողովրդի մասին՝ որպես Արևելքի հայտնի ազգերից մեկի: Բացառությամբ մեկ ստեղծագործության («Ռոքսանա. երջանիկ կուրտիզանուհին» վեպի), հայերը Դեֆոյի գործերում հիշված են իբրև Արևելքի տարբեր երկրներում առևտրով զբաղվողներ: Նրա նշած հայերը գաղթաշխարհի ներկայացուցիչներ են՝ Չինաստան (Պեկին) և Իրաք (Բաղդադ ու Բասրա): Ու չնայած մանրամասների բացակայությանը՝ Դեֆոյի գեղարվեստական գործերը հավելյալ վկայություններ են այդ երկրներում հայերի ներկայության և նրանց առևտրական գործունեության մասին: Պակաս կարևոր չէ, Դեֆոն ևս վկայել է, որ եվրոպացի վաճառականներն Արևելքում ճամփորդելիս անվտանգության նկատառումներով հազել են հայկական զգեստներ:

ARTSVI BAKHCHINYAN
Ph.D.
Armenia

DANIEL DEFOE ON ARMENIANS

SUMMARY

Keywords: Daniel Defoe, Armenian characters in foreign language literature, Armenians of the colony, Armenian merchants, Armenians of China, Armenians of Iraq, "The Farther Adventures of Robinson Crusoe," The Life, Adventures and Piracies of the Famous Captain Singleton, "Roxana: The Fortunate Mistress," "The Complete English Tradesman."

¹ Նույն տեղում, էջ 109:

The famous English writer Daniel Defoe (1660-1734) has mentioned the Armenians, the Armenian and Armenia in four of his works.

Except for “Roxana: The Fortunate Mistress” novel (where a woman dressed in the habit of a virgin lady of quality of Armenia is remembered), Armenians are presented in Defoe’s works as representatives of the diaspora, traders in different countries of the East. In the novel “The Farther Adventures of Robinson Crusoe” an Armenian merchant in China is mentioned. Two English heroes of the novel “The Life, Adventures and Piracies of the Famous Captain Singleton” meet Armenians in Iraq, from whom they learn Armenian language and travel in Armenian costumes for safety. In the essay “The Complete English Tradesman” Defoe told how once somewhere in Asia an English merchant was deceived by an Armenian and Jewish merchants, who appropriated his goods.

The author of the article concludes that Daniel Defoe in fact had a certain idea of the Armenian people, as one of the acknowledged nations of the East. And despite the lack of details, Defoe’s fictions are additional evidences of the presence of Armenians in various countries and their commercial activities.

АРՇՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

к.ф.и.

Армения

ДАНИЕЛЬ ДЕФО ОБ АРМЯНАХ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Даниель Дефо, армянские персонажи в иноязычной литературе, армяне диаспоры, армянские купцы, армяне Китая, армяне Ирака, «Дальнейшие приключения Робинзона Крузо», «Жизнь и пиратские приключения славного капитана Сингльтона», «Роксана. Счастливая куртизанка», «Совершенный английский торговец».

Знаменитый английский писатель Даниэль Дефо (1660-1734) упомянул армян, армянское и Армению в своих четырех произведениях.

За исключением романа «Роксана. Счастливая куртизанка» (где вспоминается женщина, одетая «по обычаю барышни из высшего класса Армении»), армяне упоминаются в произведениях Дефо как представители диаспоры, торговцы в разных странах Востока. В романе Дефо «Дальнейшие приключения Робинзона Крузо» упоминается армянский купец в Китае. Два английских героя романа «Жизнь и пиратские приключения славного капитана Сингльтона» встречаются в Ираке армян, у которых они учат армянский язык и в целях безопасности путешествуют в армянской одежде. В эссе «Совершенный английский торговец» Дефо рассказал, как однажды где-то в Азии английский купец был обманут еврейским и армянским купцами, которые присвоили его товары.

Автор статьи приходит к выводу, что Даниэль Дефо имел некоторое представление об армянах как об одном из небезызвестных народов Востока. И несмотря на отсутствие подробностей, художественные произведения Дефо являются дополнительными свидетельствами присутствия армян в разных странах и их коммерческой деятельности.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԻԳՈՒՍՏ ՖՐԱՅՆԵՐ ՖՈՆ
ՀԱՔՍՏՀԱՌԻԶԵՆԻ «ԱՆԴՐԿՈՎԿԱՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հիմնարատեր, Հաքստհաուզեն, Արևելյան Հայաստան, Խաչատուր Աբովյան, ուղեգրական նոթեր, հայկական կենցաղ, հարկատեսակներ:

Հոդվածը նվիրված է գերմանացի հայտնի ուղեգիր Աուգուստ Ֆոայիեր ֆոն Հաքստհաուզենի «Անդրկովկաս» աշխատությանը, որը հրատարակվել է 2 մասով և ներառում է Հաքստհաուզենի ճանապարհորդական հիշատակությունները և ականատեսի վկայությամբ արված նշումները՝ Անդրկովկասի ժողովուրդների վերաբերյալ: Այն հրատարակվել է 1856 թ.՝ Լայպցիգում՝ «Բրոքսիուզ» տպագրատանը:

Աշխատությունը մեծ մասամբ ընդգրկում է Սև և Կասպից ծովերի ավազաններում ապրող մի քանի ժողովուրդների սոցիալական վիճակների, ընտանեկան և տոհմային կյանքի, ինչպես նաև ժողովրդական տեղաշարժերի վերաբերյալ տվյալներ¹:

Գերմանացի նշանավոր ուղեգիր Աուգուստ Հաքստհաուզենը սերում է ազնվական ընտանիքից: Նա Վեռներ Ադոլֆ Ֆրայիեր ֆոն Հաքստհաուզենի 8 որդիներից վերջինն էր: Ծնվել էր Պա-

¹ August Freiherr von Haxthausen, Transkaukasien, erstes, zweites Teil, Leipzig, 1856.

դերբոռնում, սովորել Հալլեում, 1811 թ.-ից՝ Կլաուստալի հանքագործական դպրոցում, իսկ հետո շարունակել է ուսումը Գյոթինգենում:

Ռուսաստանի ցար Նիկոլայ Առաջինը 1843-1844 թթ. Հաքստհաուզենին հրավիրում է իր մոտ՝ հողային հարցերն ուսումնասիրելու նպատակով, քանի որ տեղեկացել էր գյուղատնտեսության ոլորտում նրա մասնագիտական հաջողությունների մասին: Գտնվելով Ռուսաստանում և կատարելով իր վրա դրված պարտականությունը՝ հեղինակը որոշում է ուսումնասիրություններ կատարել նաև Անդրկովկասում: Իր հետազոտությունները Հաքստհաուզենը հրատարակել է տարբեր մենագրություններով: Նրա վերջին աշխատանքը Ռուսաստանի հողային սահմանադրության մասին էր: Բացի դրանից, լույս է տեսել նաև նրա կողմից հավաքագրված բազմաթիվ ժողովրդական հոգևոր և աշխարհիկ երգերի հավաքածուն: Հաքստհաուզենն ակտիվ մասնակցել է 1861 թ. ռուսական գյուղացիական ազատագրական շարժումներին: Մահացել է 1866 թ. Հաննովերում և թաղված է Բելլերսենի գերեզմանատանը:

Հաքստհաուզենը եղել է Արևելյան Հայաստանում և ակադեմիկոսական վկայությամբ գրի է առել իր հուշերն ու տպավորությունները երկրում տիրող հարկային քաղաքականության, տեղական ինքնակառավարման կարգի, հայերի կենցաղի, ընտանեկան ավանդույթների ու ժողովրդի տեղաբաշխման վերաբերյալ:

Հայաստանում գտնվելու ընթացքում Հաքստհաուզենը ծանոթացել է Խաչատուր Աբովյանի հետ, որը նրան ներկայացրել է հայ ժողովրդի կենցաղն ու ավանդույթները: Հաքստհաուզենը գրում է, որ Աբովյանն այնքան մանրամասն ու պարզ է այդ ամենի մասին խոսում, որ իրեն թվում է, թե տարիներ շարունակ նա շփվել է հայ ժողովրդի հետ: Իր հուշերում նա գրել է. « Եթե ես ամիսներ շարունակ շրջեի նրանց շարքերում, միևնույնն է այս-

քան բան չէի կարող պարզել ինձ համար: Նա (Աբովյանը – Գ. Շ.) հենց սկզբից՝ հասկացավ, որ ես բոլոր ժողովուրդների կենցաղի մասին սիրով եմ գրում, այդ իսկ պատճառով այդ ամբողջ տեղեկատվությունն ինձ տրամադրեց մեծ պատրաստակամությամբ և շատ պարզ՝ բոլոր կարևոր փաստերի վրա կենտրոնացնելով իմ ուշադրությունը»¹:

Աբովյանը, լինելով ծնունդով Քանաքեռից, Հաքստիաուզենին հրավիրում է իր հայրենի գյուղը և փորձում հենց Քանաքեռի օրինակով հեղինակին ծանոթացնել հայ ժողովրդի բարքերին:

Հաքստիաուզենն անդրադարձել է երկրում տիրող կառավարման կարգին: Հեղինակի ներկայացրած բոլոր տեղեկությունները կարող են արժեքավոր սկզբնաղբյուր դառնալ տվյալ հարցերով զբաղվող հետազոտողների համար:

Նախկինում պարսկական, իսկ այժմ ռուսական տիրապետության տակ գտնվող ամբողջ երկիրն ուներ միայն մեկ ղեկավար՝ Երևանի մելիքը, որն Աղամալովների, Աղամալյանների ընտանիքի գլխավորն էր (Հաքստիաուզենը նշում է, որ հայկական հիմնական ազգանունները վերջանում են «յան»-ով, սակայն ռուսներն այն փոխում են «ով» -ով, այդ իսկ պատճառով ընտանիքը կոչվում է Աղամալով)²: Վերջինս ուներ իշխանություն և մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն հայ բնակչության, այլ նաև պարսիկների շրջանում: Շրջակա գյուղերը հարկային պարտավորություններ ունեին Երևանի մելիքի նկատմամբ: Տեղի բնակչությանն առնչվող դատական, հատկապես քրեական բնույթի վճիռների սահմանման իրավասությունը պատկանում էր Երևանի մելիքին: Նրա լիազորությունների կարևոր մասն էին կազմում ձերբակալման, բանտարկելու և տուգանելու որոշումներ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 179

² Նույն տեղում, էջ 190:

կայացնելը¹: Մինչև Ռուսական տիրապետության հաստատումը, այսինքն՝ պարսկական տիրապետության ընթացքում, բոլոր տեսակի վճիռները կայացվում էին բանավոր կերպով, սակայն հետո (1828 թ. փետրվարի 10, Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո) նրանց պարտադրեցին բոլոր վճիռները կատարել գրավոր: Դա հատկապես վերաբերվում էր սահմանային խնդիրներին²:

Ավելի ցածր օղակներում կառավարման ձևը հիմնականում ընդօրինակված էր Ռուսական կայսրությունից: Այստեղ նշանակվում էր վերակացու, ինչպես նաև 2-5 ավագներ: Նման պաշտոնները ցմահ էին, եթե, իհարկե, նրանք չէին հրաժարվում կամ ինչ-որ հանցանքի համար հեռացվում պաշտոնից: Տանուտերներին ընտրում էր համայնքը, որոնց հետո հաստատում էր շրջանային խորհուրդը: Սկզբնական շրջանում, պարսիկների տիրապետության ժամանակ ավագները գտնվում էին բեկերի ենթակայության տակ, իսկ ռուսական տիրապետության ժամանակ՝ ոչ: Նրանք կատարում էին ցարական կառավարության ցուցումները, որոնք ամրագրված էին ամբողջ շրջանի համար:

Ուղեգիրն անդրադարձել է նաև հարկային քաղաքականությանը: Նա նշել է, որ հայ ազնվական ընտանիքներն ազատված էին հարկերից, սակայն չունեին որևէ արտոնություն. համայնքից ոչինչ չէին ստանում, չէին կարող պահել ճորտեր³:

Յուրաքանչյուր ծխից գանձում էին հաստատուն հարկ, իսկ ցորենի ու գարու համար գանձում էին տասանորդ: Հայերի համար գործում էին նաև այլ հարկատեսակներ, որոնք գանձվում էին հատուկ նպատակներով, օրինակ՝ կալանավայրերի, ռազմական հոսպիտալների, հիվանդանոցների, ճանապարհների ու

¹ Նույն տեղում, 190-193:

² Նույն տեղում, էջ 188:

³ Նույն տեղում, էջ 164:

կամուրջների վերականգնման կամ նորերի շինարարության, փոստային և այլ ծառայությունների նպատակով:

Նմանատիպ բազմատեսակ հարկերը ծանրացել էին հայ ժողովրդի ուսերին: Նրանք հազիվհազ հասցնում էին վճարել դրանք ու ջանում հոգալ ընտանիքի հոգսերը: Ի տարբերություն թաթարների, որոնք զբաղվում էին բացառությամբ անասնապահությամբ և հատկապես ձիերի ու ոչխարների բուծմամբ, հայ գյուղացիությունը հիմնականում զբաղվում էր այգեգործությամբ, անասնապահությամբ և խաղողագործությամբ, մշակում էր ցորեն, գարի, մասամբ նաև՝ բրինձ և վուշ¹:

Հեղինակն անդրադարձել է նաև տվյալ ժամանակահատվածի բնակչության աշխատանքի դիմաց ստացվող վարձավճարների չափերին: Հաքստահուզենը նշում է, որ հայ տղամարդու օրական վարձավճարն ամռանը կազմում էր 1 ու կես ռուբլի արծաթ (1769-1843 թթ. շրջանառության մեջ մտել է արծաթը, 1897 թ.՝ ոսկեդրամը), իսկ ձմռանը՝ 20 կոպեկ, ներառյալ ձրի սևունը: Բատրակի վարձավճարն ամսեկան կազմում էր մոտավորապես 30 ռուբլի արծաթ: Կանայք, ի տարբերություն տղամարդկանց, օրավարձով չէին աշխատում, քանի որ նրանք դաշտում չէին աշխատում, ինչպես նաև չկային վարձու աղախիներ²:

Ոչ միայն Հաքստահուզենը, այլ նաև գերմանացի այլ ուղեգիրներ բազմիցս նշել են իրենց աշխատություններում, որ դարեր շարունակ հայերի կարևոր զբաղմունքներից է եղել առևտուրն ու փերեզակությունը: Նրանք պատրաստում էին շարձեր և գորգեր, որոնք վաճառում էին ոչ միայն երկրի ներսում, այլ նաև առևտրի զարգացման հետևանքով լայն թափ էր ստացել նման ապրանքների արտահանումը³:

¹ Նույն տեղում, էջ 163:

² Նույն տեղում, էջ 165:

³ Նույն տեղում, էջ 164:

Շեղինակը հաղորդում է որոշ կարևոր ժողովրդագրական տվյալներ՝ հիմք ընդունելով Քանաքեռի օրինակը, ինչը պակաս կարևոր չէր այդ ժամանակաշրջանի համար: Նա նշում է, որ Քանաքեռի շրջակայքի գյուղերում թաթարները մեծամասնություն էին կազմում՝ 100-300 ծխով, իսկ հայերի տների քանակը չէր գերազանցում 100 ծուխը: Հաքստհաուզենը գրում է, որ այժմյան Քանաքեռը ժամանակի փայլուն մի վայրի մնացորդն է: Նախկինում այստեղ հաշվվում էին 1300 ծուխ՝ ներկայիս 72-ի փոխարեն: Սկզբում Քանաքեռը գյուղ չի եղել: Պատերազմի ժամանակ շրջակայքի փոքրիկ գյուղերն ավերվել և թալանվել են, իսկ բնակիչների մնացորդները եկել են Քանաքեռ՝ հիմնական հողամասերը մեծացնելով տեղի հողային տարածքների հաշվին¹, ինչի պատճառով այն գյուղ է դարձել: Մինչ ավերիչ պատերազմները Քանաքեռը, գտնվելով Երևանից ոչ այնքան մեծ հեռավորության վրա, քաղաքի բնակիչների համար ծառայում էր որպես ամռան տապից պատսպարվելու վայր: Շատ-շատերն ամռանը բնակարան էին վարձում այդտեղ, զբաղվում հողագործությամբ և այլ գյուղատնտեսական աշխատանքներով: Սակայն հատկապես պարսկական պատերազմի (1826-1828 ռուս-պարսկական պատերազմը, երբ 1827 թ. հոկտեմբերի 1-ին գրավեցին Երևանը) ժամանակ այն գրեթե ամբողջովին ավերվեց:

Քանաքեռի տարածքի ներքին հատվածում եղել է լավ պահպանված, քառակուսի քարերից կառուցված եկեղեցի, որտեղ մատուցվում էր պատարագ: Հայկական եկեղեցիներից բացակայում էր գմբեթի բյուզանդական ձևով քառանկյունը: Փոխարենը եկեղեցիների տանիքների վրա վեր էր խոյանում սուր աշտարակը: Ներքին հարդարանքները ավելի շատ նմանվում էին հունական եկեղեցիներին, իսկ խորանը հիմնականում դրված էր

¹Նույն տեղում, էջ 181:

ազատ վայրում՝ ավելի շատ պատին մոտ, ինչպես լատինական եկեղեցիներում էր¹: Եկեղեցու ներքին և արտաքին տեսքի նկարագրությունից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է 17-րդ դարում կառուցված Քանաքեռի Սուրբ Հակոբ (1695 թ.) եկեղեցուն:

Ինչ վերաբերում է հայերի կենցաղին և ընտանեկան ավանդույթներին, Հաքստհաուզենը նշում է, որ ընտանիքը հայոց մեջ նահապետական էր: Մինչ այն ժամանակը, երբ ընտանիքի մայրը կամ հայրը ողջ են, բոլորն ապրում են մի հարկի տակ: Չնայած ընտանիքի բազմանդամությանը երբեք խոսք չի լինում ունեցվածքի բաժանման վերաբերյալ, ինչը վկայում է *ընտանիքում* իրավահավասարության մասին: Կարևոր հատկություններից մեկն այն է, որ ընտանիքի բոլոր անդամները հնազանդ են ընտանիքի ավագին՝ նահապետին: Ընտանիքի բազմանդամության վերաբերյալ հիշատակված տեղեկությունը կարելի է փաստել հետևյալ մեջբերմամբ. մի ընտանիքում 80-ամյա նահապետի կողքին ապրում է մոտավորապես 3 սերունդ. 4-5 որդիները՝ մոտ 50-60 տարեկան, հետո նրանց երեխաները 30-40 տարեկան ու նրանց թոռները: Կան կալվածքներ, որտեղ միաժամանակ ապրում է 40-50 անձ²: Նմանատիպ ընտանիքներում բոլորն աշխատում են հանուն ընդհանուրի շահի:

Երկու սեռի չամուսնացած երիտասարդները վայելում են անսահմանափակ ազատություն սովորույթների և ավանդույթների շրջանակներում, մինչ այլ ասիական ժողովուրդների մոտ ամուսնության միակ ձևը կանաց գնումն է, իսկ աղջիկները մինչ այդ ամբողջովին փակված են մնում տանը: Հայ կինն իրավունք ունի կրթություն ստանալու, որից հետո ազատ էր և կարող էր

¹ Նույն տեղում, էջ 182:

² Նույն տեղում, էջ 199:

ստանձնել ամուսնացած կնոջ պարտականությունը: Հայերի մոտ իգական սեռի դիրքն ընտանիքում, նրա ինքնության իրավահավասարության և արժանապատվության ճանաչման փաստն ամբողջով է հայկական ընտանեկան ներքին օրենքներով: Այստեղ ըստ հեղինակի, նշանակություն ունի հայերի բարձր մշակույթը, ինչպես նաև իրենց ապագայի նկատմամբ ունեցած հոգևոր վսեմ դրսևորումները, ինչը կոչված էր կապող օղակ դառնալու Եվրոպայի և Ասիայի միջև: Հայերի մոտ, ի տարբերություն մահմեդականների, մշակույթի բարձր գնահատական է համարվում կնոջը որպես իրավահավասարի ընդունման փաստը, խորը հարգանքը նրա նկատմամբ: Կնոջ դերը մեծ է նաև այն պատճառով, որ հայերը, սփռված լինելով աշխարհի սարբեր կողմերում, ձգտում են պահպանել իրենց ինքնությունը և չձուլվել շրջապատող այլազգի ժողովուրդներին: Հայերի մեջ հավատքն ունի ազգային բնույթն, ինչի շնորհիվ նրանք միասնական են¹:

Հաքստահուզենն այն գիտնականներից է, որն ականատեսի վկայությամբ պատմել է հայերի և Հայաստանի մասին, մանրամասն ուսումնասիրել է հայերի պատմությունը, (բազմաթիվ մեջբերումներ է կատարել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»): Նրա վկայությունները կարող են լուրջ աղբյուր հանդիսանալ հետազոտողների համար:

¹Նույն տեղում, էջ 198:

TESTIMONIES ABOUT ARMENIANS AND ARMENIA IN
AUGUST VON HAXTHAUSEN'S "TRANSCAUCASIA"

SUMMARY

Keywords: Haxthausen, Eastern Armenia, Khachatur Abovyan, travel notes, Armenian everyday life, tax types.

Present paper is devoted to the issues of the social status, the demography of Armenians, as well as the judicial and administrative systems, tax policy of Eastern Armenia in the forties of the 19th century, described by German traveler August von Haxthausen.

August von Haxthausen visited the Russian Empire in 1843 to study the agrarian relations, way of life and characteristics of agriculture. In 1845-1846 Haxthausen visited Eastern Armenia, and described his observations on the characteristics of land relations in the two-volume work.

Outlining the peculiarities of agriculture in the above-mentioned territory, Haxthausen notes that the Armenian peasants were mainly engaged in gardening, viticulture, cultivation of grain crops on the land leased from the state.

The author in the same work also tells about the culture, faith, life and traditions, the role of women in the society of Eastern Armenians, noting that the Armenian woman, among other things, has the right to receive education unlike the Muslim women of the Caucasus.

It should be noted that the above-mentioned work contains detailed information about the socio-economic and cultural life of the Eastern Armenians in the middle of the 19th century, which was presented by an eyewitness, and therefore deserves special trust and deep research.

ГАЯНЭ ШАХКЯН
Армения

СВИДЕТЕЛЬСТВА ОБ АРМЯНАХ И АРМЕНИИ В ТРУДЕ АВГУСТА ФОН ГАКСТГАУЗЕНА «ЗАКАВКАЗСКИЙ КРАЙ»

РЕЗЮМЕ

Ключевые слова: Гаксткаузен, Восточная Армения, Хачатур Абовян, путевые заметки, армянский быт, налоги.

Статья посвящена вопросам социального положения, демографии армян, также судебной и управленческой системы, а налоговой политики на территории Восточной Армении в 40-ых годах XIX в., изложенным немецким путешественником Августом фон Гаксткаузенем.

Август фон Гакстгаузен посетил Российскую империю в 1843 г. с целью изучения аграрных отношений, быта и особенностей ведения сельского хозяйства. В 1845-1846 гг. Гакстгаузен побывал в Восточной Армении и описал свои наблюдения, посвященные особенностям земельных отношений, в двухтомном труде.

Излагая особенности ведения сельского хозяйства на вышеуказанной территории, Гакстгаузен отмечает, что армяне-крестьяне в основном занимались садоводством, виноградарством,

возделыванием зерновых культур на арендованных у государства землях.

Также автор в том же труде повествует о культуре, вере, быте и традициях, роли женщины в обществе восточных армян, отмечая, что армянка помимо прочего имела право на получение образования в отличие от мусульманских женщин Кавказа.

Необходимо отметить, что вышеуказанный труд содержит подробную информацию о социально-экономической и культурной жизни восточных армян середины позапрошлого века, изложенную очевидцем, и посему заслуживающую особенного доверия и пристального изучения.

**ՊՐՈՖ. ԻԼՅԱ ԲԵՐՅՈՋԻՆԻ «ՃԱՆԱՊԱՐՀՆՈՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՂՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅՄՐԿՈՎԿԱՍՈՒՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՄՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ՝**

*Հիմնաբառեր. Կուրի ձախափնյակ, արևելագետ, Սանկտ-
Պետերբուրգ, Դաղստան, Արևելյան Այսրկովկաս, Իլյա Բերյոզին,
Ճանապարհորդություն*

Կուրի ձախափնյակում և մերձկասսայան շրջաններում հայ էթնիկ տարրի հնաբնակության և մշակութակերտ գործունեության փաստը հայկական աղբյուրներից բացի հավաստում են նաև եվրոպական և ռուսական աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է Կազանի համալսարանի արևելագետ-մագիստրանտ (հետագայում Կազանի և Սանկտ Պետերբուրգի համալսարանների պրոֆեսոր) Իլյա Բերյոզինը, որը նույն համալսարանի արևելագետ-մագիստրանտ (հետագայում՝ պրոֆեսոր) Վիլյամ Դիտտելիի հետ 1842-1845 թթ. ճանապարհորդելով Դաղստանում և Այսրկովկասում, գիտական ուսումնասիրություններ է կատարել նաև մերձկասսայան երկրամասում և հավաքած հսկայածավալ նյութը զետեղել «Ճանապարհորդություն

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 21T-6A163 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Դադաստանում և Այսրկովկասում» աշխատության մեջ: 1845 թ. օգոստոսին մերձկասսայան շրջաններում ճանապարհորդելու ժամանակ, Բերյոզինը ուշագրավ տեղեկություններ է հայտնում նաև տեղի հնաբնակ հայերի մասին:

Ստորև հակիրճ ներկայացնենք նրա երկում հայերի մասին պահպանված համառոտ տեղեկությունները:

Սկսելով իր ճանապարհորդությունը Դերբենդից, Բերյոզինը այնտեղից անցնում է Կասպիական մարզ և հայերի մասին առաջին բնութագրական տեղեկությունը հայտնում Ղուբա քաղաքից¹: Նշենք, որ Բերյոզինին ճանապարհորդության ողջ ընթացքում ուղեկցել է Կարապետ անունով հայր: Ըստ Բերյոզինի, հայերը քաղաքում ունեին մեկ եկեղեցի²: Ի դեպ, նա նկատի է ունեցել տեղի հայ վաճառական Ստեփանոս Լազարյանցի և նրա եղբոր՝ առաջին գիղիայի վաճառական Հովհաննեսի միջոցներով 1845 թ. Մոսկվայի հայկական Ս. Աստվածածին եկեղեցու տիպօրինակով հայկական թաղի մեջ հիմնարկված աղյուսաշեն, ոսկեգօծ խաչով համանուն եկեղեցին:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Այշերոնյան թերակղզու և Բաքու քաղաքի հայերի վերաբերյալ տեղեկությունները: Ըստ Բերյոզինի՝ 1842 թ. հունիսին, իր այցելության ժամանակ քաղաքն ուներ 200 տուն հայ բնակչություն, որոնք հիմնականում զբաղվում էին նավթարդյունաբերությամբ: Քաղաքի հայ առևտրաարդյունաբերողներից Բերյոզինը հիշատակում է ոմն Տ. Այվազյանին, որը Կասպից ծովում բա-

¹ Ղուբա քաղաքի հայերի պատմության մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Ղուբա քաղաքի հայերի պատմութիւնից (վաղ ժամանակներից մինչև 1920), «Հայկազեան Հայագիտական հանդէս», Բեյրութ, 2021, N 40, էջ 247-266:

² Տե՛ս և Березин И., Путешествие по Дагестану и Закавказью: Издание 2-е пополненное, Казань, (ч. IV. От Кубы до Баку), 1850, с. 178.

նեցնում էր նաև նավ: Բերյոզիհնը նշում է, որ Բաքվի շրջակայքում նախկինում շատ գյուղեր բնակեցված են եղել հայերով, սակայն պարսկական տիրապետության ժամանակ հայերը լքել են իրենց բնակավայրերը և կենտրոնացել Բաքվում, իսկ դատարկված բնակավայրերը զավթել են մահմեդականները¹:

Բերյոզիհնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Ապշերոնյան թերակղզու հայկական, սակայն հետագայում մահմեդական դարձած Բաքվից 30 կմ հեռավորության վրա՝ թերակղզու հյուսիսային եզրին գտնվող Բուզովնա գյուղի մասին: Հատկապես հետաքրքիր են գյուղում բնակվող հայերի և նրանց սրբատեղիների՝ Ս. Հովհաննեսի և Ս. Անդրեասի դամբարանի և նրանց կից քառանկյուն, կլոր թաղակապ ծածկով ոչ մեծ մատուռի մասին տեղեկությունները: Մատուռի մուտքին նշմարվել են հայերեն տառերով արձանագրության մնացորդներ²: Համաձայն մատուռի կողքի եզրապատի՝ արձանագրության՝ շինությունը 1480-1481 թթ. կառուցել է ոմն հայ Աթանվարը³: Բերյոզիհնը գրում է, որ Բուզովնայի հայերն այստեղ են կատարել իրենց պաշտամունքային ծեսերը, և իր այցելության ժամանակ հանդիպել է ուխտագնացության եկած երեք հայ ընտանիքի⁴:

Այնուհետև Բերյոզիհնը տեղեկություն է հայտնում Ջավաթի (Ջեվադի) գավառի կենտրոն Սալյան ավանի հայերի մասին: Ըստ նրա՝ տեղի հայերի հիմնական զբաղմունքը եղել է ձկնարդյունաբերությունը⁵:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

² Տե՛ս նույն տեղում, էջ 64:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 64-65:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 105:

Կասպիական մարզի վերջին գավառը, ուր այցելել է Բերյոզինը՝ Լենքորանն է: Ներկայացնելով տեղի բնակիչների զբաղմունքը՝ Բերյոզինը հայտնում է, որ Լենքորան քաղաքից ոչ հեռու ոմն Խանումովն (Խանումյան) ուներ շաքարեղեգի պլանտացիաներ:

Այսպիսով, եթե հանրագումարի բերենք Բերյոզինի թողած ճանապարհորդական նոթերի տեղեկությունները՝ ակնհայտ է, որ դրանք լրացնելու են գալիս հայկական և եվրոպական աղբյուրներում պակասող նյութը: Մկզբնաղբյուրային արժեք ունեցող այդ վկայությունները փաստում են Ղուբայում, Ապշերոնյան թերակղզում, հայերի վաղ ժամանակներից բնակեցված և մշակութակերտ լինելու իրողությունը, նրանց ակտիվ մասնակցությունը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքին:

11

GEVORG STEPANYAN
Dr. Professor Institute of History
Armenia

PROFESSOR ILYA BERYOZIN'S "TRAVELS IN DAGESTAN AND
SOUTH CAUCASUS" AS A SOURCE FOR THE ARMENIANS IN
SOUTH EAST CAUCASUS

SUMMARY

Keywords: Left shores of the River Kura, Orientalist, St. Petersburg, Dagestan, South Eastern Caucasus, Ilya Beryozin, Travels.

Ancient settlement and cultural activities of ethnic Armenians at the eastern shores of the river Kura and Near-Caspian regions are well proved by non Armenian sources like Russian and European scientific works. In this connection Professor of Kazan and St. Petersburg universities, orientalist Ilya Beryozin is really outstanding. During his travels in Dagestan and South Caucasus in the years of 1842-1845 he made extensive researches in the Near-Caspian regions as well and the accumulated huge amount of material was included in his book "Travels in Dagestan and South Caucasus". In August 1845, during his travels in the Near-Caspian Regions, Beryozin gave remarkable information about ethnic Armenians living in the abovementioned places.

ГЕВОРГ СТЕПАНЯН
д.и.н., профессор
Армения

ТРУД ПРОФ. ИЛЬИ БЕРЕЗИНА «ПУТЕШЕСТВИЕ ПО
ДАГЕСТАНУ И ЗАКАВКАЗЬЮ» КАК ИСТОЧНИК ИСТОРИИ
АРМЯНСТВА ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ

РЕЗЮМЕ

Ключевые слова: левобережье Куры, востоковед, Санкт-Петербург, Дагестан, Восточное Закавказье, Илья Березин, путешествие.

Помимо армянских и европейских источников русские источники также подтверждают факт древнего расселения и культурной деятельности армянской этнической группы на левобережье Куры и Прикаспии. В этом отношении особенно выделяется востоковед, профессор Казанского и Петербургского университетов Илья Николай Березин. Путешествуя по Дагестану и Закавказью в 1842-1845 гг., он также проводил научные исследования в Прикаспийской области и включил собранный им огромный материал в труд «Путешествия по Дагестану и Закавказью». Во время путешествия по Прикаспию в августе 1845 г. Березин сообщает также примечательные сведения о местных армянах.

ուսումնասիրությունը դարձնում են ուշագրավ, ինչպես նաև ուսանելի, քանի որ տեղի հայությունը, իր երկարատև կեցությամբ և խիստ բազմազանությամբ հանդերձ, կարողացել է հիմնականում պահպանել ազգային դիմագիծը և ակտիվ մասնակցություն ունենալ տվյալ տարածաշրջանի տնտեսական կյանքում:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքը հիմնականում ձևավորվել է 18-20-րդ դդ.՝ գլխավորապես Իրանից և Օսմանյան կայսրությունից գաղթածների հաշվին: Հիշեցնենք, որ 18-րդ դ. երկրորդ կեսին, կապված հյուսիս-արևմտյան Կովկասում սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխության հետ, այն դարձել էր Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ազդեցության համար պայքարի ասպարեզ, Ղրիմի խաները, ջանալով ամրապնդել այնտեղ իրենց դիրքերը, սկսեցին լեռնցիների մեջ իսլամ տարածել, ինչի հետևանքով չերքեզահայերին սկսեցին հետապնդել իրենց հավատի համար: Բացի այդ, դժգոհություն էին առաջացնում նաև չերքեզահայերի Ռուսաստանի և Կուրանի ռուսական հատվածում ապրող հայերի հետ ունեցած լայն առևտրային կապերը: Արդյունքում, Անդրկուրանի հայերն իրենց համար ճակատագրական որոշում են կայացրել՝ լեռնային շրջաններից տեղափոխվել հարթավայրեր՝ ռուսական սահմանային ամրությունների պաշտպանության ներքո: Հայերի վերաբնակեցման հիմնական պատճառներն էին քրիստոնեական հավատը և Կովկասում ունեցած իրենց սոցիալ-տնտեսական դերի պահպանումը: Իր հերթին Ռուսաստանը նույնպես շահագրգռված էր Կուրանի ափերին ու հարթավայրերում չերքեզահայերի բնակավայրերի առաջացմամբ: Ռուսական իշխանությունները հույս ունեին հայերի միջնորդությամբ ակտիվացնել Անդրկուրանի շրջանի առևտուրը և արհեստները, քանի որ հայ վաճառականները կազմում էին ձեռներեցների դասի ամենաուժեղ խումբը Հյուսիսային Կովկասում:

Ըստ ռուսական աղբյուրների՝ 1824 թ. մի խումբ հայեր, որոնք ապրում էին Կուբան գետի հակառակ կողմում գտնվող չերքեզական աուլում, Կուբանի կազակական ատամանից թույլտվություն խնդրեցին Կուբան գետի աջ կողմում բնակություն հաստատելու համար: Նրանց բարեխոսը Ավագեմ Չենտամիրովն էր¹: 1839 թ. վերաբնակեցված հայերի թիվը 53 էր²: Նրանք բնակություն են հաստատել Կարասուն գետի շրջակայքում՝ Պաշկովսկի բնակավայրի մոտ: Նույն թ. Ռուսաստանի կողմն անցած հայերի մեկ այլ վերաբնակների խումբ հիմնեց առանձին հայկական աուլ, որը 1841 թ.-ից կոչվեց Արմավիր՝ պատմական Հայաստանի մայրաքաղաքներից մեկի անունով: 1840 թ. այստեղ չերքեզահայերի 400 ընտանիք էր ապրում³: Չերքեզահայերի թիվն Արմավիրում մի քանի տարի անց հասնում է 3,5 հազարի⁴:

19-րդ դարավերջին Արմավիրը դարձավ Հյուսիսային Կովկասի գլխավոր արդյունաբերական և առևտրային կենտրոններից մեկը: Բնակություն հաստատելով Արմավիրում՝ չերքեզահայերն առաջին տասնամյակներին պահպանեցին լեռնցիներից փոխառած մշակույթի հիմնական տարրերը: Միաժամանակ, Արմավիր տեղափոխվելուն զուգընթաց, սկսում են նկատվել նաև հայկական բանահյուսության որոշ երանգներ: Հետագայում՝ 1859-1911 թթ., Արմավիրում ռուս բնակչության թվաքանակի զգալի ավելացման հետ միասին, չերքեզահայերի էթնոմշակութային զարգացումն ընթանում է սերտ շփման պայմաններում:

¹ Дьячков-Тарасов А. Н., Горячий Ключ и его минеральные воды, «Известия общества любителей изучения Кубанской области», Вып.3, Екатеринодар, 1902, с. 6. http://kubangenealogy.ucoz.ru/index/izvestija_oliko/0-203

² Նույն տեղում, էջ 7:

³ Щербина Ф. А., История Армавира и черкесо-гаев, Екатеринодар, 1916 с. 29.

⁴ Նույն տեղում:

Նրանց միջավայրում նկատելի են դառնում ռուսների նյութական և հոգևոր մշակույթի տարրերը, մասնավորապես, մեծ տարածում են ստանում ռուսական երգերը, պարերը, ինչպես նաև ռուսերենը: Ավելի հաճախակի են դառնում ամուսնությունները ռուսների հետ: Այս շրջանում տարածում են ստանում նրանց ազգանունների ռուսացված տարբերակները, օրինակ՝ Պոպովներ, Բարոնովներ, Դավիդովներ և այլն: Ներկայումս չերքեզահայերի հետևորդների մեծ մասն ապրում է Արմավիր, Մայկոպ, Կրասնոդար քաղաքներում: Չերքեզահայերից են սերել նշանավոր այնպիսի հայտնի արդյունաբերողներ, ինչպիսիք են Տարասովները, Բոգոբուկովները: Նրանց էին պատկանում մի շարք շինություններ խոշոր քաղաքներում, այդ թվում՝ Մոսկվայում, և այլուր:

Չնայած դրան, լեոնային հայերը չեն կազմում շրջանի հայ բնակչության մեծամասնությունը: Կրասնոդարի երկրամասում նրանց հիմնական մասը Արևմտյան Հայաստանից գաղթականներն էին: Օսմանահպատակ հայերի զանգվածային վերաբնակեցումը Կուբանի շրջան սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսից: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ օսմանյան կառավարությունը զանգվածային կոտորածներ էր կազմակերպում: 1864 թ. Ռուսաստանը վերջնականապես գրավեց Կովկասի սևծովյան շրջանը: Նվաճված լեոնցիները չցանկացան մնալ Ռուսաստանի տիրապետության տակ. գաղթեցին Թուրքիա և ընդարձակ տարածքը՝ «Նովոռոսիյսկից մինչև Մոչլի» փաստորեն մնաց առանց բնակչության: Ցարական կառավարությունը սևծովյան շրջանը բռնի բնակեցնում է Կուբանի կազակներով: Ծովափնյա կլիմայական պայմաններին, լեոնային տեղանքին անսովոր կազակները որոշ ժամանակ անց հեռանում են այդ հողերից: Անհրաժեշտ համարելով բնակեցնել Սև ծովի ափը՝ կառավարությունը մարդ է ուղարկում արտերկիր՝ հայեր և հույներ հա-

վաքագրելու համար¹: Արդեն 1866 թ. Օսմանյան կայսրությունից գաղթած հայերի մի մեծ խումբ բնակեցվեց Թենզինյան կիրճում, որտեղ այդ ժամանակ արդեն ոչ մի լեռնական չէր մնացել²: Վերաբնակեցումը զանգվածային տարածում է ստացել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: 1878 թ. Սևծովյան շրջանում հայ բնակչությունը կազմում էր 2239 մարդ³: Ավելի ուշ՝ 1894-1895 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքների սաստկացմանը զուգընթաց արտագաղթողների թիվն ավելանում է՝ հիմնականում Տուապսեի, Մոչիի, Ադլերի, Անապայի, Նովոռուսիյսկի, Մայկոպի ուղղությամբ: 1894թ. ձևավորվում է Եկատերինոդարի հայկական գաղութը:

Ուսումնասիրվող շրջանի հայկական բոլոր գաղթօջախներին բնորոշ էին որոշակի առանձնահատկություններ: Կրասնոդարի երկրամասի հայկական բնակավայրերում առավելագույն զարգացումը ստացել է ներքին և արտաքին առևտուրը, որը փոխկապակցված է արտադրության հետ: Հիմնականում զարգացվում էր գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտը: Տարածում էր ստանում միջին և փոքր ապրանքների արտադրությունը:

Արդեն 19-րդ դարի II կեսին Արմավիրի բնիկ չերքեզահայերը տնտեսական կապեր են հաստատում Դոնի հայ համայնքի հետ: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, 1858 թ. Արմավիր գյուղի բնակիչներից 45 ընտանիք՝ 309 հոգի, մտել է Դոնի Նախիջևանի համայնքի մեջ⁴: Դա արվել է առևտրի ոլորտում

¹ Кубань и Черноморское побережье Кавказа: Справочная книга на 1914 год. Екатеринодар, 1914, с. 223.

² Адобашьян В. Л., Из истории армянского населения на территории Краснодарского края, «Вестник общественных наук», 1968, № 7, с. 51.

³ Նույն տեղում:

⁴ Государственный архив Краснодарского края (далее – ГАКК). Ф.774 (Канцелярия Помощника Начальника Кубанской области по управлению

իրավական վիճակի բարելավման և օգուտներ ստանալու նպատակով: Ռուս պաշտոնյա Կ. Դուլվետովը, որ 1859 թ. մանրամասն ուսումնասիրել է Արմավիրը, նկարագրել է, որ Դոնի Նախիջևան նշանակվածները «Արմավիրի բնիկ բնակիչներն են, նրանք այնտեղ ունեն բակեր, տներ, գյուղացիներ և իրենք մշտապես ապրում են աուլում... հնարավորություն ունենալով ապացուցել, որ իրենց նախնիները Նախիջևանից և Մոզդոկից են, նրանք կրկին կցվել են այդ քաղաքներում և իրենց մեջ կան շատ առևտրականներ: Նրանք իրենք էլ գիտակցում են իրենց ներկայիս դիրքի անհարմարությունը՝ համարվել Նախիջևանի և Մոզդոկի բնակիչներ, քանի որ քիչ ընդհանրություններ ունեին այդ քաղաքների հետ և նրանց բոլոր շահերը կենտրոնացած են Արմավիրում»¹: Այսպիսով, արդեն 19-րդ դարի II կեսին Արմավիրում հայտնվել է նորնախիջևանցիների բավականին նշանակալից խումբ. թեև նրանք իրականում տեղի բնակիչներ էին, բայց կենցաղային և էթնովնակութային առումով առանձնապես չէին տարբերվում բնիկ չերքեզահայերի մեծ մասից:

Նշենք, որ նույն 1858 թ. Դոնի Նախիջևանի վաճառականների դասին վերագրվում էր Արմավիրի ամենանշանավոր վաճառականների մի մեծ ընտանիք՝ Տարասովները, որոնց նախահայրը՝ Ասլանը, հայկական աուլի առաջին վերաբնակիչներից էր: Նա մահացավ 1857 թ. թողնելով հինգ որդի, որոնք հետագայում դարձան այդ ժամանակաշրջանի ռուսական գործարար էլիտայի մաս՝ ձեռք բերելով իսկական «արտադրական արքաների» մեծ փառքը²: Նոր Նախիջևանի վաճառականների տիտղոսը

горцами), оп.1, д. 216 (Переписка с начальником Кубанской обл. и окружными управлениями о заселении переселенцами казенных земель в Кубанской области), л. 59.

¹ Նույն տեղում, թ. 60:

² Щербина Ф. А., նշվ. աշխ., էջ 51:

ստանալուց հետո Տարասովները երկար ժամանակ ապրել են Արմավիրում՝ պահպանելով մշակութային բազմաթիվ ավանդույթներ, օրինակ՝ ընդհանուր թամբայի՝՝ տոհմական նշանի օգտագործումը, որի պատկերը նրանք տեղադրել էին տների ճակատներին և նույնիսկ իրենց առևտրային ձեռնարկության փաստաթղթերի վրա:

Բացի եղբայրներ Իվան, Ալեքսանդր, Ղազար, Գաբրիել և Միխայիլ Ասլանովիչ Տարասովներից, որոնք զբաղվում էին արտադրական առևտրով, հայտնի էր 1-ին գիլդիայի Դոնի Նախիջևանի վաճառական, ժառանգական պատվավոր քաղաքացի Արտեմի Մարկովիչ Տարասովը, որն ապրում էր Արմավիրում և ուներ մթերային մեծ խանութ²: Մակայն նա իրականում բնիկ արմավիրցի էր, որն ազգակցական կապեր ուներ Ասլանի հետնորդների հետ, քանի որ թամբան, որը նա պատկերել էր իր ընկերության բլանկների վրա, ոչ մի կերպ չէր տարբերվում Տարասովների տոհմից³:

Հնարավոր է, որ գյուղում ապրող Իվան, Նիկոլայ և Գրիգորի Կարպովիչ Դավիդով եղբայրներն իրենց ծագմամբ նույն տեղացի չերքեզահայերն էին, և մանուֆակտուրայի վաճառքի համար նրանք ստեղծել էին Առևտրի տունը, որի գլխավոր գրասենյակը Արմավիրում էր: 19-րդ դ. վերջի, 20-րդ դ. սկզբի աղբյուրներում նրանք հաշվառված էին որպես Դոնի Նախիջևանի վաճառականներ⁴:

¹ Նույն տեղում:

² Ктиторov С.Н., Казаров С.С., Вклад армян из Новой Нахичевани И Ростова-на-Дону в хозяйственноэкономическое развитие Армавира (вторая половина XIX – начало XX в.). Материалы Всероссийской научно-практической конференции с международным участием / гл.ред. А.Р. Галустов; науч. ред. С.Н. Ктиторova. – Армавир: Изд. ИП Ершова О.А. 2019, с. 58.

³ Նույն տեղում:

⁴ Казаров С., Нахичеванское купечество (конец XVIII – начало XX века), Ростов н/Д., 2012, с.131.

Դոնի հայերի զանգվածային ներհոսքն Արմավիր սկսվում է 1875 թ. Ռոստով-Վլադիկավկազ երկաթուղու բացումից հետո, որը որոշիչ գործոն դարձավ գյուղի՝ որպես խոշոր առևտրաարդյունաբերական կենտրոն արագ վերափոխման համար: Նորնախիջևանցիները հաստատուն տեղ են գրավել տեղական տնտեսական կյանքում՝ ակտիվորեն ներգրավվելով առևտրի և արդյունաբերության տարբեր ոլորտներում:

Արդեն 1878 թ. սկզբին “Кубанские областные ведомости” թերթի թղթակիցներից մեկը, նկարագրելով Արմավիրի վերափոխումը երկաթուղու կառուցումից հետո, նշել է, որ այն «լցված էր ռուս մարդկանցով, ռուս բնակչությամբ. ամեն տեղից սկսեցին հոսել ռուս արհեստավորներ, ռուս աշխատավորներ, ամենուրեք բացվեցին պահեստները, գոմերն ու գրասենյակները: Այսպիսով, ի հայտ եկան սպառողներ, որոնց շնորհիվ ավելացավ ու բարելավվեց առևտուրը, ինչը մեծ մասամբ գտնվում է նախիջևանի հայերի ձեռքում: Հարևան գյուղերից և աուլներից տեղական գործեր բերվեցին այստեղի շուկա, խանութների դռներից հանվեցին ծանր կողպեքները, Արմավիրը վերածնվեց, և սկսեց իրարանցում»¹: Չնայած հեղինակի կողմից տեղական առևտրում նորնախիջևանցիների դերի ուռճացմանը, պետք է խոստովանել, որ այն, անկասկած, շատ նշանակալից էր:

Խորհրդային հետազոտող Լ. Ա. Պողոսյանը վկայակոչում է, որ 1880-ական թթ. Արմավիրում արդեն ապրում էր մոտ 200 նորնախիջևանցի²: Ու թեև մենք աղբյուրներում ստույգ տեղեկություններ չունենք Արմավիրում հետագա շրջանում Դոնի հայերի թվաքանակի մասին, սակայն կարող ենք վստահորեն ասել, որ

¹Кубанские областные ведомости. Екатеринодар, 1878. № 6. http://kubane-genealogy.ucoz.ru/index/kov_1878/0-210

² Погосян Л., Армянская колония Армавира, Ереван, 1981, с. 53.

նրանց թիվը միայն ավելացել է. դա է վկայում գյուղի բազմակի աճը, որը ներգաղթի արդյունք էր:

Գյուղի տնտեսական կյանքում Դոնի հայերի կարևորության մասին բավականին ճշգրիտ պատկերացում կարելի է ստանալ Արմավիրի ոստիկանապետի՝ 1909 թ. մարտի 22-ի զեկույցից, որին կցված է տեղական առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների ցանկը: Այդտեղ նշված է նրանց դրամական շրջանառության չափը: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում հաստատությունների սեփականատերերի կոչման, կրոնի և ազգային պատկանելության մասին տեղեկությունները:

Ստորև բերված է Արմավիրի Դոնի հայերի առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների ցանկը 1909 թ. մարտի դրությամբ: Այն ընդգրկում է՝

1. Վաճառականներ Դավիդով եղբայրների առևտրական տան արտադրական խանութը, որի տարեկան շրջանառությունը կազմել է 600 000 ռուբլի:

2. Առևտրի տան վաճառականներ Գենչ-Օղլուևի և Շապոշնիկովի՝ գործունեության տեսակի մասին տեղեկություններ չկան, բայց հայտնի է, որ ընկերությունն առևտուր է արել ավանտի արտադրությամբ, որի տարեկան շրջանառությունը կազմել է 700,000 ռուբլի:

3. Նիկիտին Պոպովի մանուֆակտուրային խանութ, որի տարեկան շրջանառության մասին տեղեկություն չկա:

4. Նիկոլայ Մարտինովիչ Կոբիլնի և Ակսենտի Գեորգիևիչ խասպեկովի խանութ-սրահ, որի տարեկան շրջանառությունը 20000 ռուբլի էր:

5. «Նիկիտա և Ֆյոդոր Մանուիլովս Զումալովս» ավանտաշինական, արտադրական և օժանելիքի խանութ-սրահը, որի տարեկան շրջանառությունը կազմում էր 100000 ռուբլի:

6. Կարպ/Պետրովիչ Խաչիկովի սպասքի խանութը, որի տարեկան շրջանառությունը 110 000 ռուբլի էր:

7. Իլյա Ստեպանովիչ Պոպովը զբաղվում էր օճառի առևտրով, որի տարեկան շրջանառությունը 12000 ռուբլի էր:

8. Օլգա Սետովնա Ավակովայի երաժշտական խանութի տարեկան շրջանառությունը կազմում էր 25000 ռուբլի:

9. Սերգեյ Խրիստոֆորովիչ Սարմակեշևի պարկերի և կտորի խանութի տարեկան շրջանառությունը կազմել է 150,000 ռուբլի:

10. Արտեմ Մոխեսևիչ Պոպովի մանր առևտուրի խանութի տարեկան շրջանառությունը հասել է 1000 ռուբլու:

11. Կասպար Եգորովիչ Մուրատչանի ծխախոտի գործարանի տարեկան շրջանառությունը կազմել է 161.000 ռուբլի, իսկ ծխախոտի խանութինը՝ 15.825 ռուբլի¹:

Ըստ 1909 թ. ցուցակի տվյալների՝ Արմավիրում Տարասով վաճառականներն ունեին արտադրական խանութ, որի շրջանառությունը կազմում էր 700 000 ռուբլի:

1909 թ. ցանկում ընդգրկված է նաև պարսկահայ հպատակներ Ունանով եղբայրների ձեռք գործարանը՝ 800.000 ռուբլի շրջանառությամբ: Այն հանդիսանում էր Արմավիրի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից²: Դեռևս 1868 թ. եղբայրներ Պետրոս և Դանիլ Բվանովիչ Ունանովները Դոնի Ռոստովում բացեցել են մթերային խանութ, սկսելով մրգերի և այլ ապրանքների առևտուր: 1891 թ. նրանք այնտեղ հիմնել են նաև «Պ. և Դ. Ունանով եղբայրներ» առևտրի տունը: 1903 թ. Դանիլ Բվանովիչը մահացավ՝ ժառանգներ չթողնելով, իսկ ընտանեկան գործը շարունակեցին Պետրոսը և նրա որդիները:

¹ ГАКК, ф. 449 (Кубанское областное правление), оп.2, д.1826 (1870-1917 гг.), л. 34-104.

² Նույն տեղում, թ. 34-36:

Այսպիսով, փաստաթղթերը վկայում են, որ 19-րդ դարի վերջին հայ առևտրականները կարևոր դեր էին խաղում Կրասնոդարի երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքում: Բացի այդ, հայերը հաճախ հանդես էին գալիս որպես միջնորդ Կովկասի և Ռուսական կայսրության ժողովուրդների միջև. Հավատքով՝ մոտ Ռուսաստանին, իսկ ծագումով՝ Կովկասին: Հայ վաճառականներն ապահով կերպով ներթափանցեցին ռուսական կողմի նկատմամբ թշնամաբար տրամադրված Կովկասի բնակչության խորքերը, որտեղ նրանց դիմավորեցին ջերմությամբ և հյուրընկալությամբ, քանի որ նրանք առաքում էին կենցաղային օգտագործման համար անհրաժեշտ իրեր: Հայտնի է, որ ապրանքները լեռնականները ոչ մեկից չէին կարողանում ստանալ, բացի հայերից: Շահավետ էր հայերին ռուսական կողմ ներգրավելը, քանի որ լեռնային հայերին փրկելով կրոնական ճնշումներից՝ Ռուսաստանը ի դեմս նրանց ձեռք բերեց հավատարիմ դաշնակիցներ: Լեռներում գտնվելու ընթացքում բազմաթիվ հայեր ծառայել են որպես ռուսական կողմի լրտեսներ՝ սահմանային իշխանություններին կարևոր տեղեկություններ հաղորդելով լեռնականների կողմից նախապատրաստված թշնամական գործողությունների մասին:

Կարող ենք եզրահանգել, որ

1. Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները բացառիկ դեր ունեցան հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Հայերը, ստիպված լքելով հայրենի հողը՝ փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից և իրենց երկրորդ տունը գտան Ռուսաստանում, քանի որ նրանց մեծ մասի համար Ռուսաստանի քաղաքացու կարգավիճակը խոչընդոտ չի հանդիսացել հայկական ինքնագիտակցության պահպանման համար:

2. Հայերն արագորեն ինտեգրվելով տվյալ տարածաշրջանում՝ իրավունք և հնարավորություն ստացան մասնակցելու Կրասնոդարի երկրամասի տնտեսական կյանքին՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, արհեստների և առևտրի ոլորտներում:
3. Կրասնոդարի երկրամասի հայ համայնքը տնտեսական ուրույն զարգացում ապրեց և նշանակալի դեր խաղաց Ռուսաստանի հարավի սոցիալական և առևտրա-տնտեսական կյանքում: Հատկապես հայերը առաջատար տեղեր են զբավել քաղաքի առևտրականների և սննդարդյունաբերության ոլորտի ձեռնարկատերերի շրջանում:
4. Կրասնոդարի երկրամասի հայ համայնքը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային կյանքի կարևոր կենտրոն էր: Տեղի հայերը կարողացան ստեղծել բավական ուրույն մշակույթ, որը, բնույթով ազգային լինելով, կրում էր նաև ռուսական միջավայրի ազդեցությունը՝ միաժամանակ խաչաձևվելով տեղական ժողովուրդների մշակութային կյանքին:

KRISTINE MELKONYAN
Ph.D., associate professor
Armenia
EDUARD ZOHRABYAN
Ph.D., associate professor
Armenia

ECONOMIC ACTIVITIES OF ARMENIANS IN KRASNODAR KRAI (19TH CENTURY)

SUMMARY

Keywords: North Caucasus, Krasnodar krai, armenian merchants, Circassian Armenians, economy, Armavir, tamgay, national feature, Russia.

In the 19th century, a populous Armenian colony was formed in the Krasnodar region, which passed a unique way of historical development. Armenians received the right and opportunity to participate in the economic life of the country - in its industry, agriculture, crafts and trade.

The Armenian colonies played a significant role in the socio-economic and cultural formation and development of the South of Russia. Initially, the process of their resettlement was a necessary factor for Russia to settle and develop the southern regions of the empire, which contributed to their organic inclusion in a single whole of Russia.

КРИСТИНЕ МЕЛКОНЯН

к.и.н., доцент

Армения

ЭДУАРД ЗОГРАБЯН

к.и.н., доцент

Армения

ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯН В КРАСНОДАРСКОМ КРАЕ (19 В.)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Северный Кавказ, Краснодарский край, армянские купцы, черкесские армяне, экономика, Армавир, тамгай, национальная черта, Россия

В 19 веке в Краснодарском крае образовалась многолюдная армянская колония, прошедшая уникальный исторический путь развития. Армяне получили право и возможность участия в экономической жизни страны – в ее промышленности, сельском хозяйстве, ремеслах и торговле.

Армянские колонии сыграли заметную роль в социально-экономическом и культурном становлении и развитии Юга России. Изначально процесс их переселения являлся необходимым для России фактором заселения и развития южных районов империи, что способствовало их органичному включению в единое целое России.

ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ
Ռուսինիայի հայերի միության նախագահ,
տնտ. դոկտոր
Ռուսինիա

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՌՈՒՄԻՆԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հիմնադրատեր. Ռուսինիա, հայ համայնք, գաղթօջախ, Յորդա, Սիրունի, Մոլդովա, Տրանսիլվանիա, Ղորթոջա, Բուխարեստ, Կոնստանդա:

Ռուսինիայում մոտ հազարամյա հայ համայնքի վերաբերյալ բազմաթիվ ռուսներեն աղբյուրներ կան, որոնք հիմնականում վերաբերում են 14-15-րդ դարերից սկսած իրադարձություններին, երբ արդեն հստակ տեղեկություններ կային զարգացած հայ համայնքների մասին: Այդ արժեքավոր տեղեկությունները, բացի հայկական տարատեսակ աղբյուրներից, մեզ հասել են մի շարք իշխանական հրովարտականներից, ճանապարհորդների գրառումներից, արխիվային բազմաթիվ փաստաթղթերից և այլն:

Ռուսինիայի տարբեր քաղաքների հայ համայնքների մասին ռուսներեն բազմաթիվ աղբյուրներ կան, որոնց հեղինակների շարքում հանդիպում ենք ինչպես ռուսինացի, այնպես էլ ռուսինահայ ուսումնասիրողների: Հսկայական ժառանգություն է թողել ռուսինացի մեծ պատմաբան, հայագետ Նիկոլաե Յորգան¹, որը խորը ուսումնասիրություններ է կատարել ինչպես Հայաստանի և հայ ժողովրդի, այնպես էլ ռուսինահայ համայնքի վերա-

¹ Նիկոլաե Յորգան (1871-1940) 1931-1932 թթ. զբաղեցրել է Ռուսինիայի վարչապետի պաշտոնը:

բերյալ: Վերջինները հիմնականում վերաբերում են պատմական Մոլդովայի շրջանի հայ համայնքներին, որտեղ հայերը մի քանի դար շարունակ ազդեցիկ դեր են ունեցել¹:

Ռումինիայի հայ համայնքի վերաբերյալ բազմաթիվ ռումիններեն աշխատությունների հեղինակ է մեծ հայագետ Հակոբ Միրունին, որի ներկայացրած ռումիններեն աղբյուրներն ամփոփված են հիմնականում «Անի» հանդեսի համարներում²:

Արժեքավոր ուսումնասիրություններ ունեն Վլադ Բընըցեանուն, Բոգդան Պետրիչեյկու Հաշդեուն և այլն, իսկ առանձին քաղաքների հայ համայնքների վերաբերյալ ռումիններեն աղբյուրները շատ ավելի մեծ թիվ են կազմում:

Վլադ Բընըցեանուն իր ուսումնասիրությունները հրատարակել է «Հայերը ռումինական կյանքում և պատմության մեջ» գրքում³: Նա ուսումնասիրություններ է կատարել ռումինահայ համայնքի պատմության և Ռումինիայի մի շարք բնակավայրերի անվանումների՝ հայկական ծագում ունենալու վերաբերյալ: Այս համատեքստում ընդգծենք Ռումինիայի Արճեշ մարզի անվանման հայկական ծագում ունենալու մասին ռումինացի պատմաբան Բոգդան Պետրիչեյկու Հաշդեուի հողվածը, որում նա առաջ է քաշում փաստարկներ՝ ըստ որոնց այդ մարզի անվանումը գալիս է հայկական Արճեշ քաղաքից⁴:

Ռումինիայի հայ համայնքի կարկառուն գործիչների վերաբերյալ կարևորագույն աղբյուրներից է Արշակ Բոգդան Քըուշի

¹ Յորգա Նիկոլաե, Պատմական հիշատակումներ հայերի մասին, Բուխարեստ, 1999 (ռումիներեն):

² Միրունի Հակոբ, Անի, Բուխարեստ, 1935-1943 (ռումիներեն):

³ Բընըցեանու Վլադ, Հայերը ռումինական կյանքում և պատմության մեջ, Բուխարեստ, 1938 (ռումիներեն):

⁴ Հաշդեու Բոգդան Պետրիչեյկու, Արճեշ գետը, Արճեշ քաղաքը, Արճեշ եկեղեցին, «Նոր ամսագիր», Բուխարեստ, հ. 4, 1888, մարտի 15, էջ 121-128 (ռումիներեն):

կազմած բառարանը՝ «Ռումինիայի հայ ականավոր անձինք» վերնագրով¹, ինչպես նաև Միմիոն Դավիդյանի «Ռումինիայի կարկառուն հայերը» աշխատությունը²:

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստի հայկական եկեղեցու և համայնքի մասին արժեքավոր տեղեկատվություններ է պարունակում Էդվարդ Ժամկոչյանի «Բուխարեստի հայկական տաճարը» գիրքը, որը մայրաքաղաքի հայ համայնքի պատմությունը ուսումնասիրողների համար պարտադիր գրականության ցանկում է³:

Ռումինիայի տարբեր քաղաքների հայ համայնքների վերաբերյալ աղբյուրներից նշենք կարևորները.

Բոտոշանի հայ համայնքի վերաբերյալ Վիորիկա Պոպան և Ֆլորին Միմիոն Էզները հրատարակել են «Բոտոշանի հայ համայնքի պատմությունը (1045-2012)» աշխատությունը, որտեղ ներառված են հայ համայնքի պատմության, եկեղեցիների, դպրոցների և գերեզմանատների գոյության վերաբերյալ բազմաթիվ տվյալներ⁴: Ավելի ուշ առանձին աշխատություններ են հրատարակվել դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Ռոման քաղաքի հայ համայնքի վերաբերյալ մի շարք տվյալներ է փոխանցում քաղաքի հայկական եկեղեցու ռումինացի քահանա Դորու Յոնելը իր «Ռոմանի հայկական եկեղեցին և համայնքը» գրքում: Հայ բնակչության թվաքանակի կտրուկ նվազման պատճառով տասնամյակներ առաջ եկեղեցին հանձն-

¹ Բոգդան Քրուշ Արշակ, Ռումինիայի հայ ականավոր անձինք, Բուխարեստ, 1997 (ռումիներեն):

² Դավիդյան Միմեոն, Ռումինիայի կարկառուն հայերը, Կոնստանցա, 2006 (ռումիներեն):

³ Ժամկոչյան Է., Բուխարեստի հայկական տաճարը, Բուխարեստ, 2008 (ռումիներեն):

⁴ Պոպա Վիորիկա, Էզներ, Ֆլորին Միմիոն, Բոտոշանի հայ համայնքի պատմությունը (1045-2012), Բոտոշան, 2012 (ռումիներեն):

վեց Ռումինիայի Ուղղափառ եկեղեցու ժամանակավոր օգտագործմանը¹:

Պատմական Տրանսիլվանիայի շրջանի հայ համայնքների վերաբերյալ աղբյուրների մեծ մասը հունգարերեն կամ հայերեն է, իսկ հատկապես վերջին տասնամյակներում լույս տեսած գրքերից շատերը նաև ռումիներեն են: Վերջիններից նշենք Նիկոլան Գազդովիցի «Տրանսիլվանիայի հայերի պատմությունը»² և Պալ Յուդիթի «Հայերը Տրանսիլվանիայում»³ աշխատությունները: Չենք կարող չանդրադառնալ նաև հայերի կողմից կառուցված Գեոլա քաղաքի (որն ավելի քան 200 տարի կոչվում էր Հայաքաղաք) հայերի պատմությունը մանրամասն ներկայացնող հունգարահայ Քրիստոֆ Սոնգոտի հատորներին, որոնք բնագրով հունգարերեն են, բայց թարգմանվել են ռումիներեն և հրատարակվել Բուխարեստի «Արարատ» հրատարակչությունում⁴:

Պատմական Դոբրոջայի շրջանի հայ համայնքների⁵ պատմության մասին Միմիոն Դավիդյանը հրատարակել է «Դոբրոջայի հայերը ռումինացիների պատմության և քաղաքակրթության մեջ» գիրքը, որն այս շրջանի հայ համայնքների մասին տեղեկություններ հաղորդող եզակի աշխատություններից է:⁶

¹ Դորո Յոնել, Ռոմանի հայկական եկեղեցին և համայնքը, Բուխարեստ, 2009 (ռումիներեն):

² Գազդովից Նիկոլան, Տրանսիլվանիայի հայերի պատմությունը, Բուխարեստ, 1996 (ռումիներեն):

³ Յուդիթ Պալ, Հայերը Տրանսիլվանիայում, Կլուժ-Նապոկա, Տրանսիլվանիայի ուսումնասիրությունների կենտրոն, 2005 (ռումիներեն):

⁴ Սոնգոտ Քրիստոֆ, Ազատ թագավորական քաղաք Գեոլան, Բուխարեստ, 2012-2014 (ռումիներեն):

⁵ Այս շրջանում հայ համայնքներ եղել են Կոնստանցա, Տուլչա, Բարադազ և Մուլինա քաղաքներում: Այսօր բացի Կոնստանցա քաղաքից շրջանի մյուս քաղաքներում հաշվված թվով հայեր են մնացել:

⁶ Դավիդյան Միմեոն, Դոբրոջայի հայերը ռումինացիների պատմության և քաղաքակրթության մեջ, Կոնստանցա, 2003 (ռումիներեն):

Եթե մեր կողմից նշված ռումիներեն աշխատությունները ամբողջովին կամ մեծ մասամբ վերաբերում են Ռումինիայի հայ համայնքներին, ապա պետք է արձանագրենք, որ գոյություն ունեն ռումիներեն հարյուրավոր գրքեր և հոդվածներ, իշխանական հրովարտակներ (սկսած 1401 թ. Սողոմոնյան հայկական եպիսկոպոսության հիմնադրման վերաբերյալ Ալեքսանդր Բարի իշխանի հրովարտակից), այլազգի ճանապարհորդների գրառումներ և Ռումինիայի մի շարք թանգարաններում պահվող արխիվային փաստաթղթեր, որոնցում այս կամ այն կերպ արձարծվում են հայկական համայնքին առնչվող հարցեր և կարևոր տեղեկություններ տալիս մեզ: Չնայած համայնքի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ և տեղեկություններ կան հայերեն աղբյուրներում, իսկ Տրանսիլվանիայի հայ համայնքների դեպքում՝ նաև հունգարերեն աղբյուրներում՝ ռումիներեն աշխատությունները էական նշանակություն ունեն հայկական այս գաղթօջախի պատմությունը ուսումնասիրելիս:

VAROUJAN VOSGANIAN

Ph.D. economics, Romania

ROMANIAN SOURCES ON ROMANIA ARMENIAN COMMUNITY SUMMARY

Keywords: Romania, Armenian community, settlement, Iorga, Siruni, Moldova, Transilvania, Dobrogea, Bucharest, Constanța.

There are a large number of Romanian sources about the millennial Armenian community in Romania, which mainly refer to the events since the 14th-15th centuries, when there was already clear

information about the developed Armenian communities. Apart from various Armenian sources, this valuable information has reached us from a considerable number of princes' edicts, travelers' notes, numerous archival documents, etc.

There are many Romanian sources about the Armenian communities in different cities of Romania, among the authors of which we find both Romanian and Romanian-Armenian scholars. The great Romanian historian, Armenologist Nicolae Iorga left a huge legacy, who conducted in-depth studies on both the Armenian people and Armenia and the Armenian community in Romania.

ВАРУЖАН ВОСКАНЯН

д-р эк. наук

Румыния

РУМЫНСКИЕ ИСТОЧНИКИ ОБ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В РУМЫНИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Румыния, армянская община, поселение, Йорга, Сируни, Молдова, Трансильвания, Добруджа, Бухарест, Констанца.

Существует большое количество румынских источников о тысячелетней армянской общине Румынии, которые в основном относятся к событиям, начиная с 14-15 веков, когда уже имелись четкие сведения о развитых армянских общинах. Помимо различных армянских источников, эти ценные сведения дошли до нас из значительного числа княжеских указов, путевых записок, многочисленных архивных документов и т. д. Сведения об этой старой армянской общине сообщали сотни зарубежных авторов.

Существует множество румынских источников об армянских общинах в разных городах Румынии, чьи авторамия являются как румынские, так и румыно-армянские ученые. Огромное наследие оставил великий румынский историк, арменовед Николае Йорга, глубоко изучавший как армянский народ, так и Армению и армянскую общину Румынии.

**ԹՈՄԱՍ ՄԿՐՏԻԶԱՆՆ ՈՒ ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԸ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՌԱԶԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Հիմնաբառեր. Առաջին համաշխարհային պատերազմ, Բրիտանական հետախուզություն, Օսմանյան կայսրություն, Թոմաս Մկրտիչյան, Արշակ Սաֆրաստյան, Թոմաս Բոյաջյան:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը ևս իր ծանրակշիռ ներդրումն է ունեցել Դաշնակից երկրների հաղթանակի կոման գործում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի աշխարհամարտում ներգրավված Մեծ Բրիտանիային հայերի ցուցաբերած անփոխարինելի օգնությունը, որն արտահայտվել է զանազան բնագավառներում: Այս խնդիրը, սակայն, մինչև օրս հարկ եղած չափով ուշադրության չի արժանացել թե՛ բրիտանական, թե՛ հայկական պատմագիտության կողմից: Ասվածի առնչությամբ խիստ կարևոր է նաև մի այնպիսի հարցի ուսումնասիրությունը, ինչպիսին է բրիտանական հետախուզական ծառայություններում ընդգրկված հայերի գործունեությունը: Մինչև օրս հրապարակված արխիվային փաստաթղթերը ներկա փուլում թույլ են տալիս ասելու, որ Օսմանյան կայսրությունում բրիտանական հետախուզության մարմիններում ներգրավվել էին նաև կայսրության հպատակ ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնց շարքում ուղղակի անփոխարինելի դեր ունեին հայերը, հրեաներն ու հույները:

Բրիտնական հետախուզությանը ծառայած հայերից հայտնի են Թոմաս Մկրտիչյանի, Թոմաս Բոյաջյանի և Արշակ Սաֆրաստյանի անունները: Այս մարդիկ ստացել էին ժամանակի փայլուն կրթություն, տիրապետում էին մի շարք օտար լեզուների և, պատահական չէ, որ նշանակալի դիրքեր էին զբաղեցնում Օսմանյան կայսրությունում բրիտանական դիվանագիտական ծառայություններում, ինչպիսին օրինակ թարգմանների և փոխհյուպատոսների պաշտոններն էին: Թոմաս Մկրտիչյանի, Թոմաս Բոյաջյանի և Արշակ Սաֆրաստյանի դերը բրիտանացիների համար անփոխարինելի էր հատկապես տեղի՝ ինչպես հայ, այնպես էլ թուրք, քուրդ բնակչության հետ շփումներում: Աշխարհամարտի սանձազերծումից հետո, երբ Օսմանյան կայսրությունը ևս մտավ պատերազմի մեջ ընդդեմ Անտանտի երկրների, բրիտանացիները շատ ավելի բարձր գնահատեցին հայերի դերն իրենց ծրագրած գործողություններում:

1914 թվականին բողոքական հայ քահանա, Դիարբեքի-րում բրիտանական փոխհյուպատոս Թոմաս Մկրտիչյանն ստիպված էր լքել Օսմանյան կայսրությունը, քանի որ իշխանությունը հրահանգել էր Դիարբեքիի նահանգապետին՝ ձերբակալել և մահապատժի ենթարկել նրան իբրև Անտանտի երկրների գործակալի¹: Թ. Մկրտիչյանն ստիպված էր մի այնպիսի շտապողականությամբ հեռանալ երկրից, որ չհասցրեց նույնիսկ տեսակցել իր ընտանիքի անդամներին՝ կնոջն ու վեց երեխաներին, որոնց գլխին ևս կախվել էր մահվան վտանգը:

Հարկ է նաև նշել, որ նախքան պատերազմը բրիտանական հյուպատոսարաններում, ինչպես արդեն նշվեց, լայնորեն օգտագործվում էին հայ թարգմանների հմտություններն ու կարո-

¹ Թոմաս Բոյաջյանն ամենայն հավանականությամբ սպանվել է 1894 թ. Մասունի կոտորածների ժամանակ:

¹ 1 Ugur Umit Ungor, *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913- 50.* (Oxford University Press, 2011), p. 58.

ղությունները՝ հետախուզական տվյալներ ժողովելու և տեղի բնակչության հետ՝ շփվելու գործում: Նրանց շարքում իրենց մտավոր բարձր կարողություններով ու զբաղեցրած հասարակական դիրքով առանձնանում էին բրիտանական շահերն իրենց գավառներում սպասարկող փոխհյուպատոսներ Թ. Սկրտիչյանը, Թ. Բոյաջյանը և Ա. Մաֆրաստյանը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունից հեռանալուց հետո բրիտանական ծառայություններում ընդգրկված հայերի մի զգալի մասը զբաղվում էին հետախուզական աշխատանքով և թարգմանչական ծառայություններով: Ընդ որում, հարկ է նշել, որ թեև օտարազգի պատմաբանները խորությամբ ուսումնասիրել են բրիտանացի այնպիսի կարկառուն դեմքերի և գործիչների գործունեությունը, ինչպիսիք են Մարկ Մայքսը, Լլոյդ Ջորջը, Թ. Լոուրենսը և այլոք, հայ թարգմանների, փոխհյուպատոսների և հետախույզների գործունեությունը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ:

Գաղտինք չէ, որ բրիտանացիները ռազմավարական շահեր էին հետապնդում ամբողջ Օսմանյան կայսրությունում և 19-րդ դարի գրեթե ողջ ընթացքում ձգտում էին իրենց վերահսկողությամբ հզորացնել այդ տերությունը՝ Ցարական Ռուսաստանին ու նրա հավակնություններին հակազդելու համար: Բրիտանական գրեթե բոլոր կառավարություններն Օսմանյան կայսրությունը դիտարկում էին իբրև բուֆեր՝ ընդդեմ Ռուսաստանի, որը, իր հերթին, ջանում էր սեփական հսկողության տակ առնել հատկապես Բոսֆորը, Դարդանելը, իսկ հետագայում՝ նաև Մուեզի ջրանցքը, որը կկտրեր Մեծ Բրիտանիայի ճանապարհը դեպի իր գաղութ Հնդկաստան¹: Բացի այդ, բրիտանացիները քաջ գիտակցում էին, որ Օսմանյան կայսրության փլուզումը կարող էր

¹ Arman Kirakossian, *British Diplomacy and the Armenian Question: From the 1830s to 1914.* (Princeton, NJ: Gomidas Insitute, 2003), p. 36.

հանգեցնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության՝ ան-
նախադեպ աճին և տիրապետության հաստատմանը:

Մյուս կողմից, Մեծ Բրիտանիայի բազմաթիվ կառավա-
րություններ համարում էին, որ Օսմանյան կայսրության հետ
սերտ դաշինք կազմելով՝ իրենց կհաջողվեր հնազանդություն
պարտադրել Հնդկաստանի մահմեդական հպատակներին, ո-
րոնց աչքին օսմանյան տիրակալն Աստոծո ներկայացուցիչն էր
երկրի վրա: Այս հարցն ավելի էր սրվել Հնդկաստանում 1857 թ.
բռնկված հակաբրիտանական ապստամբությունից հետո, երբ
հինդուներն ու մահմեդականները հրաժարվում էին ճանաչել
բրիտանական իշխանությունը¹:

Մեծ Բրիտանիան գտնում էր, որ օսմանյան սուլթանի՝
խալիֆի և իսլամական սրբավայրերի պաշտպանի հետ դաշինքը
իրենց հնարավորություն կտար նաև վերջինիս միջոցով տիրել
աշխարհի մահմեդականներին: Ամենամեծ մտավախությունն
այն էր, որ Օսմանյան կայսրությունը կարող էր դաշնակցել Գեր-
մանիայի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի հետ, որոնք կարող
էին հակաբրիտանական խռովությունների և անպստամբություն-
ների դրդել բրիտանական գաղութներում և ազդեցության գոտի-
ներում²: Գերազանցապես այս մտավախություններն էին և Օս-
մանյան կայսրությունում ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելու
ձգտումը, որ հարկադրեցին բրիտանացիներին հյուպատոսութ-
յուններ հիմնել թուրքական տերության արևելյան նահանգնե-
րում:

Օսմանյան կայսրության ժողովրդագրությունը շատ խայ-
տաբղետ էր, որի սահմաններում բնակվում էին էթնիկ և կրոնա-
կան տարբեր խմբեր, ժողովուրդներ: Արդյունքում, բրիտանական

¹ 3 Peter Hardy, *The Muslims of British India*. (London: Cambridge University Press, 1972), pp. 81, 89.

² Geoffrey Miller, *Straits: British Policy towards the Ottoman Empire and the Origins of the Dardanelles Campaign* (Hull: University of Hull, 1997), p. 282.

հյուպատոսություններն ամբողջ Օսմանյան կայսրությունում տեղացիների հետ արդյունավետ աշխատելու նպատակով աշխատանքի էին ընդունում նրանց իսկ ներկայացուցիչներին իբրև հիմնականում թարգմանների, թեպետ պետք է ասել, որ վերջիններս չէին բավարարվում միայն նշված աշխատանքով¹: Նրանք զբաղվում էին նաև հետախուզական տվյալների հավաքմամբ, միջնորդում էին բրիտանացիներին տեղական այս կամ այն վեճը հոգուտ տեղացիների օսմանյան իշխանությունների կողմից լուծելու համար²: Այս առնչությամբ Մկրտիչյանը, Բոյաջյանը և Սաֆրաստյանն ուղղակի անփոխարինելի էին բրիտանացիների համար, որոնք բարձր էին գնահատում նրանց ունակությունները՝ տեղական սովորույթները, լեզուն և ապրելակերպը հասկանալով՝ հետախուզական բնույթի տեղեկություններ հավաքելու գործում³:

Առաջին աշխարհամարտի տարիներին բրիտանական կառավարությունն ընդլայնեց իր հայանպաստ քաղաքական գիծը, որպեսզի իր բանակների շարքերում լայնորեն ներգրավեր տարբեր երկրներում բնակվող հազարավոր հայերի: Պատահական չէ, որ բրիտանացիները պնդում էին, թե կովում են ի պաշտպանություն հավատակից բրիտոնյաների՝ ընդդեմ իսլամական բարբարոսության⁴: Այդուհանդերձ, նույնիսկ այդ օրերին էր շատ-շատերին պարզ, որ բրիտանական կողմը պարզապես փորձում էր իր շահերին ծառայեցնել հայկական ուժը: Հայերի նկատմամբ հակասական այս վերաբերմունքի պատճառով հենց բրիտանական արտաքին գործերի նախարարությունն էր, որ երբեմն չէր

¹ John Dickie, *The British Consul: Heir to a Great Tradition*. (New York: Columbia University Press, 2008), 69.

² Waugh, *Turkey Yesterday, To-day and To-morrow*, 26-27.

³ Yigal Sheffy, *British Military Intelligence in the Palestinian Campaign 1914-1918*. (New York: Routledge, 1998), 12.

⁴ Laycock, *Imagining Armenia: Orientalism, Ambiguity, and Intervention*. (Manchester: Manchester University Press, 2009), pp. 109-114.

վատահում հայ գործակալների հաղորդագրություններին: Ընդ որում, պետք է ասել, որ իրավիճակը նույնն էր նաև հրեաների պարագայում: Ինչպես վկայում է բրիտանացի հետազոտող Սքոթ Անդերսոնը, բրիտանական գործակալները լիովին չէին վատահում գյուղատնտես և «Նիլլի» խմբի հիմնադիր Ահարոն Ահարոնսոնի կողմից հավաքված հետախուզական տվյալների իսկությունը բացառապես վերջինիս էթնիկ պատկանելության պատճառով¹: Անդերսոնը նշում է, որ հրեա գործակալը պետք է գործով ապացուցեր «իր արժանավորությունը»²: Հեղինակի կարծիքով՝ չնայած հրեայի խոսքը բառի իսկական իմաստով անարժեք չէր, սակայն նրա զեկույցը հավաստիության առումով գրեթե միշտ ստորադասվում էր բրիտանացու զեկույցին: Վիճակը նույնն էր նաև հայերի պարագայում:

•••

Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը բրիտանական հյուպատոսները և փոխհյուպատոսները տեղեկատվության կարևորագույն աղբյուր էին Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում: Ըստ հրեա հետազոտող Յիզալ Շեֆֆիի. «...գորքերի տեղակայման և տեղաշարժի, ինչպես նաև [օսմանցիներին] գերմանական օգնության ձևերի մասին գրեթե ողջ տեղեկատվությունը» տրամադրվել է բրիտանական հյուպատոսությունների կողմից³:

1914 թվականին Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև պատերազմի հայտարարությունից հետո Դաշնակից երկրների բոլոր հյուպատոսները վտարվեցին Թուրքիայից: Բրիտանական հետախուզական տվյալների հավաքման կենտրոնը տեղափոխվեց Կահիրեում Բրիտանական հետախուզության վարչութ-

¹ Scott Anderson, *Lawrence in Arabia: War, Deceit, Imperial Folly and the Making of the Modern Middle East*. (New York: Anchor Books, 2013), p. 229.

² Anderson, *Lawrence in Arabia*, p. 229.

³ Yigal Sheffy, *British Military Intelligence in the Palestinian Campaign 1914-1918*. (New York: Routledge, 1998), p. 39.

յուն: Մկրտիչյանը ծառայելու էր հենց այդ վարչությունում իբրև Ավստրալիայի և/Նոր Զելանդիայի հեծյալ դիվիզիայի՝ հետախուզության սպա: Մկրտիչյանը և բազմաթիվ ուրիշ հայ գործակալներ կարևոր դեր խաղացին Գալիպոլիի, Պաղեստինի արշավանքներում և Կովկասյան ճակատում: Նրանցից շատերը համոզված էին, որ ծառայելով Բրիտանական կայսրությանը՝ ծառայում էին իրենց ժողովրդին, քանի որ հավատում էին, որ հաղթանակից հետո Հայաստանը ևս ձեռք էր բերելու անկախություն: Այդ պատճառով էր, թերևս, որ 1915 թ. ընթացքում Մկրտիչյանն անընդհատ փորձել է համոզել Հետախուզության վարչությանը՝ ավելի շատ հայերի զինել և ներգրավել բանակի շարքերում¹:

Ըստ ամերիկացի հեղինակ Պոլլի Մոհսի՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության նկատմամբ բրիտանական քաղաքականությունն ուղղորդվում էր ավելի շուտ հետախուզության աշխատակիցների, քան Լոնդոնի, Եզիպտոսի և/կամ Հնդկաստանում բրիտանացի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, քանի որ հետախուզությունը տիրապետում էր բավականին ճշգրիտ տվյալների²: Մոհսն այնուհետև նշում է, որ անգլո-թուրքական դիմակայության ընթացքում ամենաարդյունավետ ռազմավարությունն իրականացվել է տեղերում ծառայող հետախուզության աշխատակիցների կողմից³:

Մկրտիչյանը, Բոյաջյանը և Սաֆրաստյանը, փայլուն տիրապետելով թուրքերենին, քրդերենին, արաբերենին, պարսկերենին, ֆրանսերենին և անգլերենին, խիստ արդյունավետ գործու-

¹ Michael John Rettig, Armenians in British Intelligence during World War I: A Case Study of Thomas Mugerditchian, a thesis submitted in partial fulfillment of the requirements for the degree of Master of Arts in History in the College of Social Sciences California State University, Fresno, December 2017, p. 22.

² Polly Mohs, Military Intelligence and the Arab Revolt: The First Modern Intelligence War. (London: Routledge, 2008), p. 1.

³ Mohs, Military Intelligence and the Arab Revolt, p. 4.

նեություն էին ծավալում ինչպես եվրոպացիների, այնպես էլ օսմանյան ու արաբական շրջաններում¹:

Մկրտիչյանը կարողանում է հավաքագրել նոր հետախույզների, թարգմանում է փաստաթղթեր և հարցաքննում թուրք գերիների ու բանտարկյալների:

Նրան հաջողվում է նաև սերտ կապեր հաստատել ազդեցիկ արաբ գործիչների հետ, որի շնորհիվ մեծացել է նաև իր ազդեցությունը բրիտանական ռազմա-քաղաքական պաշտոնեության վրա:

Ինչպես վերը նշվեց, Օսմանյան կայսրության կողմից Մեծ Բրիտանիային պատերազմ հայտարարելուց հետո Թ. Մկրտիչյանը հայտարարվեց որպես բրիտանական հյուպատոսության գործակալ, և էնվերն անհապաղ ստորագրում է նրա ձեռքակալման հրամանագիրը իբրև թշնամու հետախույզի: Այդուհանդերձ, Մկրտիչյանին հաջողվում է Դիարբեքիից փախչել Կահիրե՝ բրիտանական փոխհյուպատոս Մոնք-Մեյսոնի և նրա ընտանիքի անդամների հետ: Հալեպում նրանք միանում են Օսմանյան կայսրությունը լքող 27 այլ բրիտանացիների և մեկնում Բեյրութ: Մկրտիչյանը թուրքերենի, քրդերենի և արաբերենի իմացությունն ի սպաս է դնում խմբի փրկությանը և հաջողեցնում մարդկանց անվնաս հասցնել Կահիրե²: Պետք է ասել, որ Սաֆրաստյանն ավելի վաղ՝ 1911 թվականին էր մեկնել Լոնդոն՝ ուսումը շարունակելու նպատակով: Հենց այնտեղ էլ նրանք հանդիպում են միմյանց և որոշակի ծրագրեր քննարկում հայ ժողովրդի համար ստեղծված ծանր դրության վերաբերյալ: Ուշագրավ է, որ հետագայում և՛ Սաֆրաստյանը, և՛ Մկրտիչյանը օգտագործեցին իրենց պաշտոնական դիրքերը հայերի նկատմամբ թուրքական վայրա-

¹ Michael John Rettig, Armenians in British Intelligence during World War I, p. 25-27.

² Alice Muggerdichian Shipley, We Walked Then Ran. (Phoenix: A.M. Shipley, 1984), p. 47.

գությունները փաստագրելու համար: Նրանց մի քանի զեկույցներ տեղ գտան Ջեյմս Բրայսի Կապույտ գրքում:

1915 թ. սեպտեմբերին Սաֆրաստյանը, թողնելով ուսումը, Լոնդոնից մեկնում է Հայաստան՝ հայկական զորախմբերի կազմում կռվելու թուրքերի դեմ: Պետք է ասել, որ Հայաստան էին մեկնել նաև Մկրտիչյանի բոլոր երեք որդիները¹:

Իր հերթին, Ջեյմս Բրայսն աջակցում էր Մկրտիչյանին և Սաֆրաստյանին հայ կամավորներ հավաքագրելու և Անտանտի երկրների կողմից կռվելու համար: Անզլիայում հավաքագրված մարդիկ ուղարկվում էին նաև Կովկասյան ռազմաճակատ: Հատկանշական է, որ այդ քայլերից հետո Բրայսը դիմում է իր երկրի կառավարությանը և նշում, որ հայերն արժանի ներդրում են ունենում պատերազմում, և հարկ է նրանց լուրջ օգնություն ցուցաբերել²:

Թիֆլիսում Սաֆրաստյանը հարցազրույց էր վերցրել Սասունից մի հայ փախստականից՝ Պողոսյան ազգանունով, որն իր փախուստի ընթացքում ականատես էր եղել կոտորածների բազմաթիվ դրվագների: Վերջինս մանրամասնել էր, թե ինչպես էին Վանի հայերը դիմադրել իրենց կոտորելու եկած թուրքական բանակին մինչև ռուսական զորքերն ու հայ կամավորները օգնության էին հասել: Երկու ամիս անց թուրքական առաջխաղացումը ստիպել էր Վանի հայերին ռուսական բանակի հետ նահանջել: Պողոսյանը նկարագրել է, թե ինչպես էին հարյուրավոր հայեր կոտորվել քրդերի կողմից դեպի Ռուսաստան նահանջի ժամա-

¹ Der Megerditchian, Treasures of Vasbouragan, 556; W.E.D. Allen, "Arshak Safrastian." The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, no. 1/2 (1959), pp. 93-94; TNA: PRO FO 141/468/3 Thomas Mugerditchian to Sir Edmund Allenby, 21 April 1919.

² The British Empire and the Armenian Genocide: Humanitarianism and Imperial Politics from Gladstone to Churchill. (London: I.B. Tauris, 2007), p. 146.

նակ¹: Սաֆրաստյանի՝ բրիտանացիներին ուղարկած այս և նման հաղորդագրությունները Բրայսը ներառեց պառլամենտական Կապույտ գրքում²:

1916 թ. գարնանը Սաֆրաստյանն սկսեց օգտագործել իր անգլիական կապերը՝ հայ գաղթականներին օգնելու համար: Այդ նպատակով նա թողեց ռուսական բանակը և միացավ բրիտանական «Լորդ Մայորի հիմնադրամի» քարտուղար Հարոլդ Բաքսթոնին: Այդ հիմնադրամը հիմնվել էր 1915 թվականին՝ հարավկովկասյան տարածաշրջանում հայ գաղթականների համար գումար հայթայթելու նպատակով: Հիմնադրամը համագործակցում էր բրիտանական և ամերիկյան օգնության այլ կազմակերպությունների հետ՝ բարելավելու հայերի վիճակը Հարավային Կովկասում³: Օգնության բրիտանական կազմակերպությունները հանգանակված գումարները փոխանցում էին Մոսկվայում բրիտանական հյուպատոսին, որն էլ, իր հերթին, դրանք փոխանցում էր կովկասյան տարածաշրջանում գործող կազմակերպություններին ու հասարակական-քաղաքական գործիչներին: Օրինակ, 1916 թվականի մարտին Սաֆրաստյանը «Հայկական կարմիր խաչի» անունից 200 ֆունտ ստեռլինգ է բաժանել հայ փախստականներին⁴: Ամռանը Սաֆրաստյանը Բաքսթոնի և մի խումբ բուժքույրերի հետ ձեռնամուխ է լինում Արևելյան Հայաստանում կարիքավորների օգնությանը⁵: Սաֆրաստյանը ծառայում էր որպես խմբի ղեկավար, քանի որ տիրապետում էր երկրի մասին մանրամասն տեղեկությունների, պահանջված գիտելիքների, սահուն կերպով հաղորդակցվում էր անգլերենով ու հայերենով:

¹ James Bryce, *The Treatment of the Armenians in the Ottoman Empire 1915-16*, (London: Sir, Joseph Causton and Sons, 1916), pp. 83-87.

² Bryce, *The Treatment of the Armenians in the Ottoman Empire 1915-16*, pp. 74.

³ Tusan, *The British Empire and the Armenian Genocide*, p. 159.

⁴ "Armenian Red Cross and Refugee Fund," *The Scotsman* [Midlothian], March 16, 1916.

⁵ "Armenian Refugees: Lord Mayor's Fund," *The Times*, April 7, 1916

Մոտ երեք ամիս Սաֆրաստյանի ղեկավարած խումբը զբաղվել է Հայաստանում ավելի քան 250,000 հայ որբերի կարիքների լուծման ծրագրերով¹:

1916 թ. Սաֆրաստյանը վերադառնում է Լոնդոնի տնտեսագիտության դպրոց՝ շարունակելու ուսումը, որտեղից, սակայն, բրիտանական կառավարությունը նրան կանչում է հետախուզական ծառայության և որպես բանակի սպա գործուղում Կովկասյան ճակատ:

• • •

1914 թվականի ձմռանը Եգիպտոսում բրիտանական բանակի հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելը չուներ բավարարող ակադեմիկական հետախույզներ: Մեծ Բրիտանիայի ռազմական գերատեսչությունը Կահիրե էր ուղարկել յոթ թուրքալեզու փորձագետների՝ Ստյուարտ Նյուքոմբին, Հետախուզական վարչության տնօրեն Լյոդ Ջորջին, Օբրի Հերբերտին, Լեոնարդ Վուլֆին, բրիտանացի հնագետ և Մերձավոր Արևելքի փորձագետ Ջ. Հեյին, Հարրի Պիրի-Գորդոնին և Թոմաս Լոուրենսին (Արաբացի)²: Այս մարդկանց պարտականությունն ու նպատակը հետախուզական տվյալների ժողովումն էր, թուրքական բանակների ու դրանց շարժերի վերաբերյալ տվյալների փոխանցումը բարձր հրամանատարական կազմերին, փախստականների ու գերիների հարցաքննությունները և այլն: Բացի այս գործակալներից, Հետախուզական վարչությունն իր աշխատանքներում ներգրավել է նաև Օսմանյան կայսրությունում բրիտանական նախկին հյուպատոսներից շատերին՝ այդ թվում Մկրտիչյանին, որպեսզի վերջիններս զբաղվեին հասկապես թուրքական կողմից ստացվող տեղեկու-

¹ "Nation Driven from Home," Evening Despatch [West Midlands], May 20, 1916. "Armenians Dying in Prison Camps," The New York Times, Aug. 21, 1916

² Sheffy, British Military Intelligence in the Palestinian Campaign 1914-1918, 46; T.E. Lawrence, T.E. Lawrence: The Selected Letters, ed. Malcom Brown. (New York: W.W. Norton and Company, 1989), pp. 69-70.

յունների թարգմանությամբ և գերիների՝ իրենց լեզվով հարցաքննություններով: Այս փուլում Մկրտիչյանը կարողացավ նաև սերտ կապեր հաստատել Լլոյդ Ջորջի և Լեոնարդ Վուլլիի հետ¹:

Մկրտիչյանը բավականին արդյունավետ գործունեություն էր ծավալում և իր աշխատանքների մասին պարբերաբար գեկուցում էր Հետախուզական վարչությանը, ինչպես նաև Օբրի Շերբերտին և Լլոյդ Ջորջին, որոնք գլխավորապես հետևում էին թուրքական բանակի շարժերին²: Մկրտիչյանին հաջողվել էր նաև վերականգնել փոխյուպատոս աշխատած տարիներին ստեղծած կապերը անգլիական և Եգիպտոսում հայկական որոշ շրջանների հետ: Օրինակ, Եգիպտոսում հայտնի ընտանիքներից մեկի՝ Ասատուրյանների հետ հանդիպման ժամանակ Մկրտիչյանը հանդիպում է Օսմանյան կայսրությունից փախած Մադիկ բեյին, որը հիմնադրել էր երիտթուրքական կառավարությանն ընդդիմադիր «Օսմանյան ազատական կուսակցությունը»³: Մադիկ բեյը նշում էր, որ դեմ էր Գերմանիայի հետ էնվեր փառայի դաշինքին և Անտանտի երկրներին հակադրվելու քաղաքականությանը, որը նա հիմարություն էր որակում⁴: 1915 թ. փետրվարին Մկրտիչյանը և կապիտան Շերբերտը այցելում են Նուրեդդին փառային՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի նախկին բժշկին, որը բավականին արժեքավոր տեղեկություններ է փոխանցում ինչպես Աբդուլ Համիդի, այնպես էլ թուրքական կառավարությունների գործունեության վերաբերյալ⁵: Մի քանի շաբաթ անց Մկրտիչյանը կազմակերպեց Լլոյդ Ջորջի և Շվեդիայում Թուրքիայի նախ-

¹ Sheffy, *British Military Intelligence in the Palestinian Campaign 1914-1918*, p. 46. Michael John Rettig, *Armenians in British Intelligence during World War I*, p. 61.

² T.E. Lawrence: *The Selected Letters*, ed. Malcom Brown. (New York: W.W. Norton and Company, 1989), p. 69.

³ "A Turkish Opposition Leader," *The [Manchester] Guardian*, Feb. 27, 1912.

⁴ Michael John Rettig, *Armenians in British Intelligence during World War I*, p. 62.

⁵ "Young Turks Win," *Courier-News [Bridgewater]*, April 23, 1909. Michael John Rettig, *Armenians in British Intelligence during World War I*, p. 63.

կին դեսպան և երիտթուրքերի կուսակցությունից հեռացած Շերիֆ փաշայի հանդիպումը¹: Մկրտիչյանի այս կապերը խիստ օգտակար էին բրիտանացիներին արաբական, թուրքական և հայկական շրջաններում կողմնակիցներ ձեռք բերելու համար: Այս ժամանակահատվածում բրիտանական հետախուզությանը հաջողվեց օգտագործել հայ, հույն, հրեա և արաբ փախստականներին ու թշնամական բանակների դասալիքներին, որոնք իրենց աջակցությունն էին հայտնել Անտանտի երկրներին և տարատեսակ տեղեկություններ էին տրամադրում բրիտանական կողմին²: Պատահական չէ, որ հայ և արաբ գործակալներ գործուղվեցին Փոքր Ասիա՝ ներթափանցելու թշնամու թիկունք՝ լրտեսական գործունեություն ծավալելու համար: Եգիպտոսում բրիտանական իշխանությունները որոշեցին 1915 թ. սկզբին թույլատրել հայ կամավորներից կազմված գնդին ֆրանսիացիների հրամանատարությամբ արշավել Սիրիա, սակայն այս գործողությունը չեղարկվեց, երբ Փարիզում հայերը դժգոհեցին, թե այդ քայլը կարող էր վտանգի ենթարկել Օսմանյան կայսրության հայ բնակիչներին³: 1915 թ. Օբրի Հերբերթին ուղղված մի նամակում Մարկ Սայքսը գրում էր, որ Սիրիայում դիվերսիոն նպատակներով գերադասելի էր իբրև «հուսալի գործակալներ» ուղարկել հայերի⁴: Ի դեպ, ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև Եգիպտոսում բրիտանական գործակալները հետախուզական նպատակներով օգտագործում էին հայերին, հույներին և հրեաներին, սակայն Մեծ Բրիտանիայի ռազմական գերատեսչությունը վարանում էր համատարած սկզբունքով զինել հայ գաղթականներին:

¹ "Turkish Statesman Denounces Atrocities." The New York Times, Oct. 10, 1915.

² Sheffy, British Military Intelligence in the Palestinian Campaign 1914-1918, 76-78.

³ TNA: PRO FO 141/629 Commander and Chief EEF to The High Commissioner, 8 Sept. 1916.

⁴ Margaret Fitzherbert, The Man Who Was Greenmantle: A Biography of Aubrey Herbert. (London: John Murray, 1984), p. 143.

1915 թվականի հունվարի 2-ին Մեծ Բրիտանիայի՝ Պատերազմի խորհուրդը որոշեց հարձակվել Օսմանյան կայսրության վրա՝ ստիպելով թուրքերին Կովկասյան ռազմաճակատից դուրս բերել իրենց ուժերը¹: Բրիտանական կողմը ծրագրել էր գրավել Ալեքսանդրեթը (հարկ է նշել, որ այդ ծրագրին կողմ էր նաև Պոդոս Նուբար փաշան): Լոուրենս Արաբացին և Մկրտիչյանը ևս այս ծրագրի ջատագովներից էին և կարծում էին, որ Ալեքսանդրեթ ներխուժումը կդրդեր Օսմանյան կայսրության արաբ և հայ հպատակներին ապստամբություն բարձրացնել²:

1915 թվականի փետրվարին բրիտանացիները հարձակվեցին Դարդանեղի վրա: Պատերազմական խորհուրդը կարծում էր, որ Դարդանեղի հաղթանակը նրանց հնարավորություն կտար գրավել Կոստանդնուպոլիսը և ճնշում գործադրել թուրքերի վրա, որպեսզի հանձնվեն: Այդ ժամանակ Մկրտիչյանը մեծ դեր է ունեցել հետախուզական տվյալների ժողովման գործում: Հարձակումից երկու շաբաթ անց նա Հետախուզական վարչություն է բերում երկու հայերի՝ բժիշկ Արսեն Խորենին և Թաթուլ Ներկիզյանին, որոնք արժեքավոր տեղեկություններ ունեին Բոսֆոր և Դարդանեղի նեղուցների ուղղությամբ գործող թուրքական բանակների վերաբերյալ³: Երբ Պատերազմի խորհուրդը եզրակացրեց, որ հնարավոր չէր վերահսկողություն սահմանել նեղուցների վրա, ապրիլի 25-ին հաստատվեց մեկ ուրիշ՝ Գալիպոլիի ռազմական գործողության ծրագիրը:

Կահիրեում բրիտանական Հետախուզական վարչությունը բժիշկ Խորենին և Ներկիզյանին ուղարկում է Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բանակային կորպուս՝ Գալիպոլիի ցամաքային հարձակմանը մասնակցելու համար: Նրանց հաջողվում է արդ-

¹ Rogan, *The Fall of the Ottomans*, pp. 95-97, 129-130.

² Anderson, *Lawrence in Arabia*, 96-99. Michael John Rettig, *Armenians in British Intelligence during World War I*, p. 64.

³ Michael John Rettig, *Armenians in British Intelligence during World War I*, p. 65.

յունավետ գործունեություն ծավալել՝ հատկապես թուրք գերինե-
րից օսմանյան գորքերի ու նրանց բարոյահոգեբանական վիճակի
մասին տեղեկություններ ստանալու գործում¹:

Գալիպոլիում ձախողվելուց հետո բրիտանական զորքերը
նահանջում են, որից հետո թուրքական կողմն է հարձակում ձեռ-
նարկում Մուեզի ուղղությամբ, որը ևս հաջողություն չի ունենում
և օսմանյան զորքերը հետ են շարտվում: Այս ամբողջ ընթացքում
Մկրտիչյանը զբաղված էր գերինների հարցաքննություններով և
նրանցից ստացած տեղեկությունները բրիտանացիներին փո-
խանցելով: Ի դեպ, ուշագրավ է, որ երբ թուրքական բանակից գե-
րեվարված ազգությամբ հայ հինգ գերինների հարցաքննում էին
Հերբերտ Օբրին և Լյոյդ Ջորջը, նրանք հրաժարվում էին որևէ տե-
ղեկություն հայտնել իրենց գորամիավորումների վերաբերյալ,
իսկ երբ նրանց հետ սկսում է զրուցել Մկրտիչյանը, վերջիններս
համաձայնում են հայտնել այն ամենը, ինչ իրենց հայտնի էր²:
Մկրտիչյանին հաջողվում էր նաև բացահայտել բրիտանացիների
թիկունքում կազմակերպվող բազմաթիվ դավադրություններ,
լրտեսների ու հետախույզների³:

Մուեզի վրա անհաջող հարձակումից կարճ ժամանակ
անց Լոուրենս Արաբացին հրահանգում է Մկրտիչյանին գաղտնի
կազմել մարտական փորձ ունեցող հայերի ցուցակ և հրահանգել
նրանց 24 ժամվա ընթացքում պատրաստ լինել Կիլիկիա մեկնե-
լու համար⁴: Մկրտիչյանն այդ ծրագրի մասին անմիջապես տեղե-
կացնում է Պողոս Նուբար փաշային, որը պատրաստվում էր
հանդիպել գեներալ Մաքսվելի հետ Կիլիկիայում հնարավոր գոր-
ծողությունների մանրամասնությունները ճշգրտելու համար:
Մկրտիչյանը զեկույց է ներկայացնում նաև Պատերազմի գրա-

¹ TNA: PRO WO 157/668 ANZAC Examination of Prisoner 26/27 April 1915.

² Michael John Rettig, Armenians in British Intelligence during World War I, p. 66.

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 67:

սենյակին, որտեղից, սակայն, նրան հայտնում են, թե ռազմական գործողությունը դեպի Կիլիկիա ժամանակավորապես դադարեցվել է¹:

1915 թ. փետրվարի վերջերին Մկրտիչյանի, Նուբար փաշայի և Ֆիլիպ Գրեյվաի միջև մի շարք հանդիպումներից հետո Մկրտիչյանին կրկին խնդրում են գտնել Կիլիկիա ներթափանցելու պատրաստ տասը հայերի: Մկրտիչյանն անձամբ է պատրաստակամություն հայտնում մեկնելու՝ իբրև ուղեկիցներ առաջարկելով իր հետ աշխատող հայերի՝ ոմն Աբահի և Ասատուրյանի: Այդուհանդերձ, ծրագրերը կրկին փոխվում են²:

Մկրտիչյանը մարտ և ապրիլ ամիսներին զբաղվել է անգլերեն, թուրքերեն, արաբերեն և հունարեն լեզուներին տիրապետող թարգմանիչների որոնման աշխատանքներով՝ Գալիպոլիի արշավանքում ներգրավելու համար: Այդ գործում նա որոշակի դժվարությունների բախվեց, քանի որ որակյալ մասնագետների խիստ պակաս էր զգացվում, իսկ Լլոյդ Ջորջն իր ամենօրյա խնդրանքներով շտապեցնում էր նրան: Այդ իսկ պատճառով Մկրտիչյանը խնդրում է իր հարազատներին և ընկերներին իրեն տեղեկացնել ցանկացած մարդու մասին, որը տիրապետում էր նշված որևէ օտար լեզվի³: Նա նշում էր, որ երիտասարդ թարգմանիչները ոչ միայն կարող էին օգնել բրիտանական կառավարությանը, այլև կկարողանային օգտակար լինել սեփական ազգին: Մկրտիչյանը հավատում էր, որ օգնելով բրիտանացիներին՝ հայերը պայքարում էին նաև անկախ հայկական պետության ստեղծման համար: Մյուս կողմից, նա քննադատում էր կուսակցամոլությունը և նշում, որ այն պարզապես չարիք էր հայ ժողովրդի համար: Ըստ Մկրտիչյանի՝ բազում կուսակցամոլ հայեր պարծենում էին խաղաղ ժամանակներում կռվելու իրենց պատ-

¹ Նույն տեղում, էջ 68.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

րաստակամությամբ, սակայն անհրաժեշտության դեպքում անհետանում էին: Շատերը պնդում էին նաև, որ չէին կարող պայքարել բրիտանացիների համար առանց իրենց կուսակցությունների թույլտվության¹: Մկրտիչյանը ցավով էր նշում, որ հայերը նման չէին բրիտանացի և ֆրանսիացի լրտեսներին, որոնք «բոլորը կրթված են և... կարող են շատ լավ օրինակ ծառայել մեր հայրենակիցների համար»²:

Թեպետ դժվարությամբ, սակայն Մկրտիչյանին հաջողվում է հավաքագրել հայ և հույն թարգմանիչների, որոնց ուղարկում են Կահիրեի մոտ տեղակայված բրիտանական զորքերի՝ «Մենա Հաուս» ճամբար: Նրանք ծառայելու էին Դունկան Գլասֆուրդի հրամանատարությամբ: Ինքը՝ Մկրտիչյանը, ծառայության նշանակվեց Ավստրալական զորախմբի շտաբում: Նա ղեկավարելու էր հայ և հույն թարգմանիչների աշատանքը:

Ապրիլի 16-ին Մկրտիչյանին է մոտենում նրա ընկերներից մեկը՝ Այվազյան ազգանունով, և առաջարկում իր օգնությունը բրիտանական բանակին Դարդանեյի օպերացիայի մշակման ժամանակ: Մկրտիչյանը միջնորդում է բրիտանացիներին և չորս օր անց Այվազյանը շոգենավով մեկնում էր Աթենք՝ օգնելու բրիտանական ռազմական ուժերին³:

Նշված ժամանակաշրջանում Մկրտիչյանը նաև ջանքեր էր գործադրում բրիտանական զինվորական հրամանատարության շրջանում՝ Կիլիկիա արշավելու համար: Վկայակոչելով բրիտանացի գեներալ Մաքսվելի հետ Պողոս Նուբար փաշայի հանդիպումները՝ Մկրտիչյանը նշում էր, որ Կիլիկիայի հայերը պատրաստակամ էին լրջորեն օգնելու բրիտանական զորքերին, եթե նրանք արշավեին այնտեղ⁴: Այդ նպատակով նա հանդիպումներ

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 69:

³ Նույն տեղում, էջ 70:

⁴ Նույն տեղում:

է ունենում նաև Եգիպտոսում հայկական որոշ շրջանների հետ Պողոս Նուբարի ղեկավարությամբ «Հայոց ազգային պաշտպանության կոմիտե» ստեղծելու մտայնությամբ, որի նպատակն էր լինելու հայ կամավորների համար անհրաժեշտ զենք, զինամթերքի և այլ միջոցների ձեռքբերումը, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենային մասնակցել դեպի Կիլիկիա ծրագրվող արշավանքին¹: Ձևավորված այդ կոմիտեի անդամները պարբերաբար խնդրում էին բրիտանական իշխանություններին կազմակերպել դեպի Կիլիկիա արշավանք մինչև 1915 թվականի ամառը: Մկրտիչյանը եգիպտահայ պետական գործիչ Յադուբ Արթին փաշայի հետ հանդիպումներում լավատեսորեն նշում էր, թե հայերի երազանքը կկատարվեր Մեծ Բրիտանիայի օգնությամբ²:

Հասնելով Աթենք՝ Այվազյանն այնտեղ եկած եվրոպական միսիոներներից տեղեկանում է հայկական ջարդերի մասին ահասարսուռ պատմությունների մասին և 1915 թ. հուլիսի 8-ին Պողոս Նուբարին հասցեագրված մի զեկույց է ուղարկում Մկրտիչյանին, որտեղ մանրամասն ներկայացնում էր հայերի տեղահանություններն ու զանգվածային սպանությունները³: Այվազյանը շեշտում էր, որ հայ ժողովրդի միակ հույսը դաշնակիցների արշավանքն էր Կիլիկիա: Մկրտիչյանը Պողոս Նուբարին է հանձնում Այվազյանի զեկույցը, ինչպես նաև իր նկատառումներն այն մասին, որ Օսմանյան կայսրությունում համակարգված ձևով իրականացվում էր հայերի բնաջնջման քաղաքականություն: Եվ «...ի՛նչ օգուտ ազատագրված Հայաստանից առանց հայերի...», -նշում էր նա⁴:

¹ Նույն տեղում:

² Nubar, Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918, 115-116; On Yakoub Artin Pasha: Arthur Goldschmidt, Biographical Dictionary of Modern Egypt. (Boulder: Lynne Rienner Publishers, 2000), pp. 25-26.

³ Նույն տեղում, էջ 145-148:

⁴ Նույն տեղում, էջ 218:

1915-ի աշնանն արդեն ակնհայտ էր, որ անգլիացիները որևէ քայլ չէին ձեռնարկելու Կիլիկիայի արշավաքնի իրականացման համար, քանի որ հնարավոր չէր գորմասեր առանձնացնել Դարդանեյի ուղղությամբ գործող գորամիավորումներից: «- Հայոց ազգային պաշտպանության կոմիտեն» տեղեկացնում է գեներալ Մաքսվելին, որ այլևս չէին կարող սպասել: Նրանք խնդրում են բրիտանական կողմին, որպեսզի վերջինս թույլատրեր բրիտանական զորքերի կազմում կովող հայ կամավորներին արշավել դեպի Կիլիկիա¹: Կահիրեում բրիտանական գործերով Գերագույն հանձնակատարը հայերի խնդրանքը փոխանցում է Լոնդոն, որտեղ, սակայն, այն մերժվում է²: Մեծ Բրիտանիայի կառավարությունն ու, մասնավորապես, արտաքին գործերի նախարարությունը նշում էին, թե Կիլիկիան ազատագրելու ծրագրի ողջ պատասխանատվությունը և մանրամասնությունները պետք է թողնվեին ֆրանսիացիների հայեցողությանը...³: Արտգործնախարարությունը համաձայնում է Եգիպտոսում գտնվող հայ կամավորներին ուղարկել Կիպրոս, որտեղ նրանց կմարզեին ֆրանսիացի սպաները և կընդգրկեին Ֆրանսիայի օտարերկրյա լեզուների կազմում⁴: Ուշագրավ է, որ այդ կամավորներից շատերը մուսալեոցիներ էին⁵:

Մկրտիչյանը մինչև աշխարհամարտի ավարտը մնաց բրիտանական զորքերի կազմում և զբաղվում էր հիմնականում փախստականների և ռազմագերիների հարցաքննություններով:

Սաֆրաստյանն Առաջին համաշխարհային պատերազմի վերջին շրջանում ծառայում էր Բրիտանական կառավարության

¹ Նույն տեղում, էջ 203-204, էջ 272:

² Michael John Rettig, Armenians in British Intelligence during World War I, p. 70.

³ TNA: PRO FO 141/629 Secret Cipher: Troopers W.O. to Superflux, Cairo, 21 Sept. 1915.

⁴ TNA: PRO FO 141/629 Cipher: FO to High Commissioner of Cairo, 19 Oct. 1916.

⁵ TNA: PRO FO 141/629 High Commissioner for Egypt to Foreign Office, 9 Oct. 1916.

տեղեկատվության նախարարությունում իբրև հետախուզության աշխատակից, որը գեներալ Լայոնել Դանսթերվիլի գործերի կազմում մեկնում է Կովկաս¹: Դանսթերվիլի առաքելությունն էր՝ կանխել Գերմանիայի և Թուրքիայի ներխուժումները տարածաշրջան և պաշտպանել դեպի Հնդկաստան տանող ճանապարհները²: Նա փոքրաթիվ ուժերով՝ մոտ 1000 զինվորներով 1918 թվականին մտնում է Բաքու և տեղի հայերի օգնությամբ պաշտպանում նավթով հարուստ շրջանը թշնամական հարձակումներից³: Դանսթերվիլը փորձում էր նաև կազմակերպել տեղի վրացական և հայկական ուժերը՝ թուրքական ներխուժմանը դիմակայելու համար: Հետաքրքրական է, որ վրացիները դրսևորում են անտարբերություն և չեն ցանկանում կռվել թուրքերի դեմ, մինչդեռ հայերը գենք վերցրին՝ պաշտպանելու քաղաքը⁴: Ըստ Սաֆրաստյանի՝ հայերը կազմում էին Բաքվի ինքնապաշտպանական ուժերի 90 տոկոսը⁵: Այդուհանդերձ, ուժերն անհավասար էին և սեպտեմբերի 14-ին Դանսթերվիլն ու հայ կամավորների մի մասը ստիպված էին թողնել Բաքուն:

Ամփոփելով նշենք, որ բրիտանական ռազմա-քաղաքական ուժերում և պետական մարմիններում ծառայող Մկրտիչյանը, Սաֆրաստյանը և բազում ուրիշ հայեր կարևոր դեր խաղացին իբրև թարգմանիչներ ու հետախույզներ՝ անփոխարինելի ծառայություններ կատարելով Գալիպոլիում, Պաղեստինում և Կովկասյան ճակատում: Նրանք համոզված էին, որ իրենց ծառայութ-

¹ TNA: PRO HS 9/1298/9 Letter to Major Vivian, 13 Nov. 1934.

² Fromkin, David. *A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*. New York: Henry Holt and Company, 2009, p. 355-358.

³ Fromkin, David. *A Peace to End All Peace*, p. 359.

⁴ Lionel C. Dunsterville, *The Adventures of Dunsterforce*. (London: Edward Arnold, 1920), pp. 4-5.

⁵ Arshak Safrastian, "Mistakes of Armenian Propaganda," *The [Manchester] Guardian*, December 15, 1919.

յունը կօզներ նաև ազատագրելու իրենց հայրենակիցներին օսմանյան լծից, և պատերազմից հետո կստեղծվեր հայկական անկախ պետականություն:

VAHRAM GHARAKHANYAN
Ph.D. in History
Armenia

THOMAS MUGERDICHIAN AND ARSHAK SAFRASTIAN
IN THE BRITISH INTELLIGENCE SERVICES DURING WORLD
WAR I

Keywords: World War I, British intelligence services, Ottoman Empire, Thomas Mugerditchian, Arshak Safrastian, Thomas Boyajian.

SUMMARY

The role that Armenians played in British intelligence services has not been largely investigated up to now. The present article deals with the multifaceted identities of Armenians, served as dragomans, vice-consuls, and intelligence officers in British services through the careers of Thomas Mugerditchian and Arshak Safrastian, who inhabited an exclusive middle-ground between the East and the West. They worked skillfully to navigate both European and Ottoman circles, making them effective as intelligence officers. Thomas Mugerditchian, Arshak Safrastian and many other Armenian agents remained important to the British Empire as intelligence officers and translators when the Ottoman Empire joined the World War I.

ТОМАС МЕГЕРДИЧЯН И АРШАК САФРАСТЯН В РАЗВЕДКЕ
БРИТАНСКИХ СПЕЦСЛУЖБ
ЗО ВРЕМЯ ПЕРВОЙ ВЕСМИРНОЙ ВОЙНЫ

Ключевые слова: Первая всемирная война, британские разведслужбы, Османская империя, Томас Мегердичян, Аршак Сафрастян, Томас Бояджян.

Роль, которую армяне играли в британских спецслужбах, до сих пор практически не изучена. В статье рассматривается многогранная идентичность армян, служивших драгоманами, вице-консулами и офицерами разведки в британских службах на примере Томаса Мегердичяна и Аршака Сафрастяна, которые являлись своего рода посредниками между Востоком и Западом. Они умело ориентировались как в европейских, так и в османских кругах, что сделало их эффективными офицерами разведки. Томас Мегердичян, Аршак Сафрастян и, в целом, множество армян играли важную роль для Британской империи в качестве офицеров разведки и переводчиков, когда Османская империя вступила в Первую мировую войну.

**ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՇԵՏՈ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ, ՆՐԱՆՑ
ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ¹**

Հիմնաբառեր. Տրանսիլվանիա, Բուդապեշտի հայկական արխիվ, Համաշխարհային պատերազմ, ցեղասպանություն:

Մեր ուսումնասիրության շրջանակում կցանկանայի ներկայացնել աղբյուրների մի հավաքածու, որը մինչ այժմ անհայտ է եղել: Բուդապեշտի Հայ կաթոլիկ եկեղեցում կա արխիվ, որը դեռ ուսումնասիրված չէ: Երբ մենք 2015 թվականին Բուդապեշտում պատրաստեցինք Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես, եկեղեցու ղեկավարությունը մեր ուշադրությունը հրավիրեց մի պահարանի վրա, որի մեջ գեղեցիկ փաթեթավորված ծանրոցներ կային: Մենք բացեցինք փաթեթները, որտեղ գտանք շատ հետաքրքիր արխիվային նյութեր: Այս հավաքածուում առկա էր ոչ միայն քահանաների նամակագրությունը կամ միայն եկեղեցու արխիվը, այլ շատ ավելին²:

¹ Գերմաներենից թարգմանությունը՝ Գայանե Շախկյանի:

² Katalog Über Die Ausstellung: Հայերի ողբերգությունն Առաջին համաշխարհային պատերազմին. Հայոց ցեղասպանությունը 100 տարի առաջ: Բուդապեշտի Ազգային Մեչենյի և Հայաստանի Ազգային գրադարանների համատեղ ցուցահանդես գործընկեր՝ Պիտեր Պազմանյ Կաթոլիկ համալսարան. Բուդապեշտ, մարտի 20-մայիսի 20, 2015 թ., Բուդապեշտ, 2019.

- Համիդյան ջարդերից հետո Հունգարիա, այդ թվում Բուդապեշտ եկած հայ փախստականների մասին տվյալներ պարունակող նյութեր:

- 1920-ական թվականներին հայերի կողմից հիմնադրված տարբեր քաղաքացիական իրավունքների (մասնավոր իրավունքի), կազմակերպությունների մասին նյութեր. դրանց հիմնադրման, դրանց անդամակցության մասին և այլն: Այս արժեքավոր նյութերի շնորհիվ կարելի է մանրամասնորեն վերականգնել Բուդապեշտում և Հունգարիայում Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ համայնքի մասին տվյալները:

- Նյութեր այն մասին, թե ինչպես Բուդապեշտի հայ քահանաները 1944 թ. փրկեցին հրեաներին Նոլքոստից. ավելի քան 200 հրեաներ մկրտվել են Բուդապեշտի հայկական եկեղեցում: Դրանք գրանցված են եկեղեցու մկրտության մատյանում: Կան նաև վկայություններ 1946 թ.-ից ավելի քան 20 նամակ, որոնք գրել են փրկված հրեաները: Դրանցում նկարագրված է 1944 թ. իրավիճակը, հիշատակված են նաև հայ քահանաները, որոնք նրանց օգնել են այդ ընթացքում:

Արխիվի ողջ պատկերը հասկանալու համար պետք է գիտակցել, որ Բուդապեշտում և Հունգարիայում հայ համայնքը Առաջին համաշխարհային պատերազմից հետո շատ բազմաբնույթ էր: Հայերը չեն հիմնել հայկական կուսակցություններ (Դաշնակցություն, Հնչակյան կամ Ռամկավար), սակայն հիմնել են տարբեր այլ կազմակերպություններ, որոնց հասկանալու համար պետք է լույս սփռել նրանց գաղթի պատմական նախապատմության վրա.

Երկու համաշխարհային պատերազմների ընթացքում հունգարահայերի մասին վերլուծությունները անհրաժեշտ է սկսել երեք ելակետային դրույթներից¹.

¹ Իրավիճակը գրեթե նույնն էր, երբ «հունգարահայերը» հանդիպեցին ցեղասպանությունից փրկված փախստական «նոր» հայերի հետ: Երկու

- Կարպատյան ավազանում՝ հատկապես Տրանսիլվանիայում, հայերն ապրել են դեռևս 17-րդ դարից: Նրանք չեն խոսում հայերեն, սակայն հպարտանում են իրենց հայկական արմատներով և ավանդույթներով: XIX դարում նրանք հաստատվել են Հունգարիայի այլ տարածքներում, օրինակ՝ Բուդապեշտում¹:
- Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Հունգարիան կորցրեց իր տարածքների մի մասը, Տրանսիլվանիայի հայերը հաստատվեցին Հունգարիայում՝ հատկապես Բուդապեշտում:
- Հայոց ցեղասպանությունից հետո հայերի մի խումբ հաստատվել է Կարպատյան ավազանում՝ Տրանսիլվանիայում, ինչպես նաև Բուդապեշտում²:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հունգարիայում գոյություն ունեին հայերի տարբեր խմբավորումներ: Այդ է պատճառը, որ նրանք փորձել են ստեղծել կառույցներ, որոնք

խմբերի միջև կար լարվածություն (տե՛ս Bálint Kovács: Reproduktion der Diaspora. Armenische Ansiedlungen im östlichen Europa nach dem Genozid am Beispiel Gherla/ Armenierstadt in Siebenbürgen. „Armenisch-Deutsche Korrespondenz“, 2015 / Heft 3, էջ 39-42):

¹ Տրանսիլվանիայի կաթոլիկ հայերի մասին վերջին հետազոտություններից տե՛ս Nagy Kornél: *Orxendio Virziresco unitus misszionárius 1687. évi olasz nyelvű levele hittérítői tevékenységéről*. *Lymbus - Magyarságtudományi Forrásközlemények* 19, 2021, էջ 543-553, Նույնի, *The Church-Union of the Armenians in Transylvania (1685-1715)*, Göttingen, 2021:

² Մինչ օրս պահպանվում է լարվածությունը Տրանսիլվանիայի հայերի և «նոր» հայերի միջև, որոնք վերաբնակեցվել են Բուդապեշտում ցեղասպանությունից հետո խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում: Այդ մասին Լայպցիգի համալսարանում Հակոբ Մաթևոսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Տե՛ս ատենախոսության սեղմագիրը **Matevosyan Hakob A.**: *Incompatible Identities. The Armenian Diasporic Communities in Hungary. Armenians in Post-Socialist Europe*. Edited by Konrad Siekierski and Stefan Troebst. Köln-Weimar-Wien, 2016, էջ 170-178:

կմիավորեին այդ տարբեր խմբավորումները: Այդ առումով ստեղծվել են հետևյալ կառույցները, որոնք ներկայացնում ենք ժամանակագրական հերթականությամբ¹.

- «Մասիս» կազմակերպությունը (1919 թ.) և Լեփսիուսի բարեգործական ընկերությունը,
- Հայ-հունգարական առևտրական բաժնետիրական ընկերությունը,
- Հունգարիայի հայերի ընկերակցությունը (1920 թ.),
- Բուդապեշտի Հայ կաթողիկե եկեղեցին:

Արխիվային նյութը հասկանալու համար ես կցանկանայի ներկայացնել այս կազմակերպությունների վերաբերյալ մի փոքրիկ վերլուծություն

«Մասիս» կազմակերպությունը (1919 թ.) և Լեփսիուսի բարեգործական ընկերությունը

Նշված կառույցներից առաջին երկուսի գործունեությունը մեծ չէր՝ «Նոր դար» ամսագրի տպագրությունը, որը հրատարակվել է ընդամենը մի քանի համարով²: Դեռևս այդ ժամանակ մենք կարող ենք տեսնել լարվածությունը հունգարահայերի երկու խմբերի միջև:³ Այդ են վկայում նաև պաշտոնական փաստաթղ-

¹ St' u Kovács Bálint: Örmények Magyarországon a két világháború között: kapcsolatok és önszerveződés. Az emlékezet száz éve. Így látja az utókor az örmény népirtást Szerkesztette: Botos Máté - Kovács Bálint. Budapest, 2019, էջ 123-146:

² Այն Հունգարիայում միակ հայկական ամսագիրը չէ: 19-րդ դարում հայերը Տրանսիլվանիայում հիմնել են «Արմենիա» ամսագիրը: Հունգարիայում հայկական ամսագրերի մասին (տե՛ս Simonjan, Anahit: The Weekly Newspapers of Hungarian-Armenian Communities at the End of the 19th/ Beginning of the 20th Century. In: Armenier in Östlichen Europa. Eine Anthologie. Armenier im östlichen Europa. Eine Anthologie. Herausgegeben von Tamara Ganjalyan, Bálint Kovács und Stefan Troebst. Köln-Weimar-Wien, 2017, էջ 485-494):

³ Հովհաննես Լեփսիուսը կապ է ունեցել Բուդապեշտի հայերի հետ, Բուդապեշտում՝ Հայկական արխիվում պահպանվում է Հովհաննես

թերը: Որպես օրինակ կարող է լինել «Մասիս» կազմակերպության ստեղծման փաստաթուղթը, որտեղ որպես կազմակերպության նպատակ նշված է. *«Մեզ ընդունեք ոչ որպես օտարների, այլ որպես Ձեր եղբայրների: Մենք ակնկալում ենք Ձեր աջակցությունը, և գիտենք, որ չեք հուսահատեցնի մեզ»:*

Հայ-հունգարական առևտրական բաժնետիրական ընկերություն

Կառույցի նպատակը հայ համայնքի մեջ կապեր ստեղծելն էր, ինչպես նաև ձեռնարկատիրություններ, որոնց միջոցով սփյուռքահայերը կարող են օգնել Հունգարիայի միջազգային առևտրին:

Հունգարիայի հայերի ընկերակցություն¹

Այս կառույցը հիմնադրվել է 1920 թ., ունեցել է 409 անդամ և գոյությունը շարունակել է մինչև 1950 թ.: Ուսումնասիրելով կազմակերպության պատմությունը՝ պարզ է դառնում, որ նոր անդամների գրանցումն ունեցել է ակտիվ և պասիվ շրջաններ: Ամենակտիվ շրջանը 1921 թվականի մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներն էին: Հետաքրքրական է այն, որ ամիսների և համապատասխան օրերի մեջ ևս կան տարբերություններ: Հատկանշանական է, որ 1921 թ. ապրիլի 24-ին ամենաշատ են ընկերակցությանը անդամակցության հայտ ներկայացրել:

1920-ական թվականների սկզբներին Բուդապեշտի հայկական համայնքը ապրիլի 24-ին, ոգեկոչել է Հայոց ցեղասպանությունը: Օրվա ընտրության պատճառների բացահայտման հետ կապված դժվար է գտնել մեկ այլ ուսցիոնալ բացատրություն, քան Հայոց ցեղասպանության ոգեկոչումը:

Ուսումնասիրելով ընկերակցության արձանագրությունները՝ պարզում ենք, որ հենց այդ օրը ասոցիացիայի տնօրենը՝

Լեփսիուսի շնորհակալական նամակը՝ ուղղված Բուդապեշտի հայերին (22 հոկտեմբեր, 1924):

¹ Այս հետազոտության համար մենք օգտվել ենք Բուդապեշտի հայկական արխիվից:

Ֆելիքս Ավեդիքը, ունեցել է երկար և հայրենասիրական ելույթ, որի ընթացքում խոսել է պատմության տարբեր ժամանակներում հայերի տառապանքների մասին՝ շեշտադրելով միասնականության կարևորությունը:

Ստորև ներկայացված են ասոցիացիայի բոլոր անդամների վերաբերյալ մի շարք կարևոր փաստեր:

Ծննդավայր: Եթե ուսումնասիրենք ասոցիացիայի անդամների ծննդավայրերը, ապա կարող ենք բացահայտել նրա անդամների ծագման վերաբերյալ հետաքրքիր տեղեկատվություն՝ Տրանսիլվանիա – 68 %, Հունգարիա (բացի Տրանսիլվանիայից) 13 %, Օսմանյան կայսրություն – 13 %, Կովկաս – 2%, Ղրիմ – 3%, Ավստրիա – 1%:

Կրթություն: Ընկերակցության անդամների կեսից ավելին ունեցել է բարձրագույն կրթություն, ինչպես նաև մեծ թիվ են կազմել գիտական աստիճան ունեցողները:

Զբաղվածությունը ևս բազմաշերտ է, մեծ խումբ են կազմում առևտրականները, վարչական աշխատողները, բժիշկները:

Բնակավայրի առումով գերակշռել է Բուդապեշտը՝ 75%, իսկ մնացյալ 25% ապրել են Հունգարիայի այլ տարածաշրջաններում:

Չնայած ընկերակցության անդամների գերակշռող մասն ապրում է Բուդապեշտում և հատկապես կենտրոնական հատվածներում, սակայն հասցեների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Բուդապեշտի հայ համայնքային կյանքը չի զարգացել անկլավային ձևով:

Կրթություն և ծննդավայր կապը

Երբ համակցում ենք անդամների կրթական մակարդակը և ծննդավայրը, ապա ստանում ենք, որ Հունգարիայում ապրող հայերի մեծ մասն ունեցել է բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան: Նրանք, ովքեր Հունգարիայում հաստատվել են Տրանսիլվանիայից, ունեն խառը պատկեր: Իսկ Օսմանյան կայսրությունից եկածներն ունեցել են ամբողջությամբ հակառա-

կը պատկերը. միայն մեկ հոգի է եղել բարձրագույն կրթությամբ: Նա եղել է առաքելական եկեղեցու հովիվ: Ցեղասպանությունից փրկված հայերի մեծ մասը առևտրականներ էին, հատկապես գորգավաճառներ:

Բուդապեշտի հայ կաթողիկե եկեղեցի¹

Եկեղեցին համայնքային ամենամեծ կառույց է եղել, ունեցել է 698 անդամ: Կառույցի նպատակը նույն է, ինչ որ ոչ կրոնական կազմակերպությունների դեպքում:

Կազմակերպության անդամների սեռային բաշխվածությունը հետևյալն է՝ 69% արական, իսկ 31%՝ իգական:

Եթե համեմատենք այս ցուցանիշները այլ կազմակերպության՝ Հունգարիայի հայկական ընկերակցության տվյալների հետ, ապա կտեսնենք էական տարբերություն. 90% արական, իսկ 10%՝ իգական սեռի ներկայացուիչներ:

Այս ամենի արդյունքում մենք կարող ենք ձևավորել հետևյալ վարկածը՝

Ի տարբերություն կրոնական կառույցի, որտեղ անդամների սեռային բաշխումն այս կամ այն չափով համաչափ է, Հունգարիայի հայկական ընկերակցությունն ավելի նահապետական է, երբ հաշվի ենք առնում էթնիկ բաղադրիչը, քանի որ ավանդական ընտանիքներում տան գլխավորը տղամարդն է:

Երբ դիտարկում ենք երկու կազմակերպությունների կապերը, ապա կարևոր է ընդգծել, որ ինչպես համայնքների անդամների, այնպես էլ ղեկավարների շրջանում հանդիպում է միաժամանակյա անդամակցություն երկու կառույցներին: Մակայն երկու կազմակերպությունները բացի իրենց հիմնական առաքելություններից, իրականացրել են նաև այլ կարևոր գործառույթներ՝ օրինակ, Հունգարիայի հայերի ընկերակցությունը գործում էր որպես իբրև թե հյուպատոսարան: Նրանք՝ օգնում էին Հունգարիա ժամանած նոր հայերին հատկապես փաստաթղթերի ձևակերպման և այլ վարչական այլ հարցերով: Նրանք կապ էին

¹ Տե՛ս նույն տեղում:

հաստատում սփյուռքահայերի, ինչպես նաև արտասահմանյան այն կառույցների հետ, որոնք զբաղվում էին հայերի հարցերով, ինչպես՝ Յոհաննես Լեփսիուսի կազմակերպության: Իսկ եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայերին տրամադրել է պաշտոնական փաստաթղթեր, որով հավաստիացրել են, որ նրանք հայեր են և արիացի քրիստոնյաներ:

Կազմակերպությունների գործունեության դերը

Բուդապեշտի հայերի արխիվը ցույց է տալիս, որ կազմակերպությունները կատարել են նաև այսպես կոչված «հյուպատոսական դեր»: Արխիվային գրառումներից պարզ է դառնում, որ կազմակերպությունը պատասխանատու էր առևտրային լիցենզիաների տրամադրման համար (օրինակ՝ գորգերի արտադրության), կորցրած փաստաթղթերը փոխարինելու, ոստիկանության հետ առնչվելու, ինչպես նաև արտասահմանյան ներկայացուցչությունների հետ կապ հաստատելու համար: Ընկերակցությունը ցանկանում էր, որ նմանատիպ առաջադրանքը կատարեր արտերկրում գտնվող հայկական անկախ դիվանագիտական ներկայացուցչությունը, և 1922 թ. այդ հարցով դիմել են Փարիզի հայկական պատվիրակությանը:

Զարգացումները Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկու կազմակերպությունների գործը շատ հետաքրքիր դարձավ Բուդապեշտի հայ կաթոլիկները գրավոր դիմել են հայ քահանաներին՝ կոչ անելով իրենց անունները հանել հայ եկեղեցու ցուցակից: Արխիվում կան հարյուրից ավելի նման նամակներ, որոնցում հայ կաթոլիկ համայնքի հիմնադիրներն անդամությունից հեռացման պահանջը պարզաբանում էին հետևյալ կերպ. իրենք հայ չեն, գուցե Տրանսիլվանիայի իրենց ընտանիքը հայ է եղել, քայց իրենք արդեն հունգարացի կաթոլիկներ են:

Մյուս կազմակերպության՝ Հունգարիայի հայերի ընկերակցության դեպքը նույնքան հետաքրքրական էր: Ընկերակցությունը 1950-ին որոշեց կազմալուծվել, քանի որ անդամներն էթնիկ հիմքի վրա հիմնված միավորման կարևորությունը չէին

տեսնում սոցիալիզմի օրոք և Հայկական մշակույթի պահպանումը հանձնեցին Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության մշակութային մարմիններին: Իրականում շինծու պատճառաբանության հիմքն այլ էր. էթնիկ հիմքով քաղաքացիական միավորումը չէր կարող գոյատևել սոցիալիստական պետությունում:

Օրլայ փողոցում գտնվող Բուդապեշտի հայկական արխիվի նյութերը շարունակվել են լրացվել հայկական կազմակերպությունների հիմնադրումից ի վեր, այսինքն՝ 1920 թ.-ից մինչև 1950 թ.: Արխիվում ավելի հարուստ նյութեր կան հայ կաթոլիկ եկեղեցու գործունեության մասին մինչև 1988 թ.՝ մինչև վերջին հայ քահանա Դանիել Քաղարյանի մահը¹:

BÁLINT KOVÁCS
Ph.D. in History
Hungary

SOURCES ABOUT ARMENIANS IN HUNGARY AFTER THE FIRST WORLD WAR INTERNAL STRUCTURES AND THE ARMENIAN ORGANIZATIONS

SUMMARY

Keywords: Transylvania, Budapest Armenian Archive, World War I, Genocide.

Our paper primarily focuses on the sources about the Armenians in Hungary after the First World War. It is important to mention, that in Hungary there were two groups of Armenians: (1)

¹ Մխիթարյան միաբանության աքաբայր Դանիել Ա Քաղարյանի և 20-րդ դարում Հունգարիայի հայերի մասին տե՛ս Péter Pál Kránitz, The New Homeland: Armenian Refugees in Hungary after the Armenian Genocide. In: Far Away from Mount Ararat. Armenian Culture in the Carpathian Basin. Exhibition Catalogue. Budapest, 2013, էջ 105-108:

Armenians who have fled to the Carpathian basin from the genocide, and have settled down mainly in Budapest; and (2) Armenians who have been living here for hundreds of years. The sources about their interactions show how the „old” and „new” Armenians of Hungary tried to form their organizations between the two world wars; how they built their connections. They founded their common organizations in the '20s (Masis Association (1919); Association of Hungarian Armenians (1920); the Hungarian-Armenian Trading Company (1924); the Armenian Catholic Church of Hungary (1924); the Hungarian organization of Lepsius Relief Organization). Some of them rooted in the over-ideologization of certain stereotypes, however, they were significant in the way of institutionalization. Based on the archives of the Armenian Catholic Church in Budapest, we introduce the aims of these organizations, the circumstances of their foundation, the formation of their membership, and their connections with each other as well as with the institutions of the Armenian Diaspora. As the independent and later sovietised Armenia did not have foreign representation in Hungary, these organizations have played an important role in clarifying the legal status of the Armenian refugees, and in making connections with the Hungarian authorities. After World War I, a great number of Catholic Armenians moved from Transylvania to Hungary, they helped founding the Armenian Catholic Church of Hungary in Budapest, the parsons of which belonged to the Mekhitarists of Vienna. This newly founded Armenian Catholic church has become the common religious organization of every Armenian residing in Budapest and in Hungary.

ИСТОЧНИКИ ОБ АРМЯНАХ В ВЕНГРИИ ПОСЛЕ ПЕРВОЙ
МИРОВОЙ ВОЙНЫ ВНУТРЕННИЕ СТРУКТУРЫ И
АРМЯНСКИЕ ОРГАНИЗАЦИИ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Трансильвания, Армянский архив Будапешта, мировая война, геноцид.

Наша статья в основном сосредоточена на источниках об армянах в Венгрии после Первой мировой войны. Важно отметить, что в Венгрии существовали две группы армян: (1) армяне, бежавшие в Карпатский бассейн от геноцида и обосновавшиеся в основном в Будапеште, и (2) армяне, проживавшие здесь сотни лет. Источники об их взаимодействии показывают, как "старые" и "новые" армяне Венгрии пытались создать свои организации в период между двумя мировыми войнами; как они налаживали свои связи. Они основали свои общие организации в 20-е годы (Ассоциация Масиш (1919); Ассоциация венгерских армян (1920); Венгерско-армянская торговая компания (1924); Армянская католическая церковь Венгрии (1924); венгерская организация организации помощи Лепсиуса). Некоторые из них коренились в чрезмерной идеологизации определенных стереотипов, однако они были значительны в плане институционализации. Основываясь на архивах Армянской католической церкви в Будапеште, мы представляем цели этих организаций, обстоятельства их основания, формирование их состава, их связи

друг с другом, а также с институтами армянской диаспоры. Поскольку независимая, а затем советизированная Армения не имела иностранного представительства в Венгрии, эти организации сыграли важную роль в выяснении правового статуса армянских беженцев и установлении связей с венгерскими властями. После Первой мировой войны большое количество армян-католиков переехало из Трансильвании в Венгрию, они помогли основать в Будапеште Армянскую католическую церковь Венгрии, прихожане которой принадлежали к венским мхитаристам. Эта вновь основанная армянская католическая церковь стала общей религиозной организацией всех армян, проживающих в Будапеште и в Венгрии.

..

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄԻՄԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՄԻՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. ամերիկյան միսիոներներ, կրթալուսավորական գործունեություն, Օսմանյան կայսրություն, Հայոց ցեղասպանություն, ԱՄՆ-ի հայ համայնք:

Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդը

ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում 1810 թ. հիմնված Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը [American Board of Commissioners for Foreign Missions], որի նպատակն էր «Աւետարանը տարածել ի սփիւռս աշխարհի»¹, դեռևս 1819 թ. Օսմանյան կայսրության դարավոր հետամնացության խավարի մեջ հանձինս հայերի գտել էր իր քրիստոնեական-բարեկարգչական գաղափարների և լուսավորչական գործունեության հուսալի և ամուր պատվար:

Արդեն 1831 թ. Կ. Պոլսի Բերքի թաղամասում հիմնված Հայկական Առաքելության [Armenian Mission] միջոցով Ամերիկյան խորհուրդը կառուցել է ավետարանական եկեղեցիներ, դպրոցներ, կոլեջներ, որտեղ իրականացվել են եվրոպական և ամերիկյան կրթական մակարդակի դասընթացներ ու քարոզներ:

¹ Ճիզմեճեան Մ. Գ., Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրէզնո, 1955, էջ 103:

Դեսպան Հ. Մորգենթաուի բնորոշմամբ, ամերիկյան գաղափարների «խաղաղ թափանցումին կերպը»¹ հանդիսացող այդ հաստատությունները նաև մեծապես նպաստել են հայության հոգեգիտակցական զարթոնքին և արևմտամետ աշխարհայացքի ձևավորմանը՝ սկզբնավորելով դեպի ԱՄՆ հայերի նախ կրթական, ապա տնտեսական բնույթի ժամանակավոր պանդխտությունը:

Պանդուխտ հայերից շատերը, ԱՄՆ-ում հանդիպելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ազատության և բարեկեցության, հաստատվել են Նոր Երկրում՝ նվազեցնելով հայրենիք վերադարձողների թիվը և պայմաններ նախապատրաստելով հետագա տասնամյակներին պատմաքաղաքական ստիպողական հանգամանքների բերումով գաղթի դիմած հազարավոր հայրենակիցներին նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու, ինչպես նաև համախմբելու և որպես համայնք կազմակերպելու ուղղությամբ²:

Արդեն 1914 թ. Ամերիկյան Խորհրդի ջանքերով և ԱՄՆ-ի դեսպանատան հովանավորության ներքո Օսմանյան կայսրության հայաբնակ գրեթե բոլոր վայրերում ընդհանուր առմամբ գործել է՝

- ❖ 369 նախնական դպրոց՝ 22.700 աշակերտով և 850 ուսուցչով,
- ❖ 137 եկեղեցի՝ 50.900 հետևորդով, 13.891 հաղորդական անդամով և 179 քարոզիչ առաջնորդով,
- ❖ 46 գիշերօթիկ և միջնակարգ դպրոց՝ 4.090 աշակերտով,
- ❖ 19 հիվանդանոց՝ 39.503 հիվանդով,

¹ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղենի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 55:

² Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 17-46:

- ❖ 15 միսիոներական կենտրոն՝ 146 քարոզիչով,
- ❖ 10 կոլեջ՝ 1.748 ուսանողով,
- ❖ 8 արդյունաբերական դպրոց,
- ❖ 5 հիվանդախնամ-քույրական վարժողական դպրոց,
- ❖ 5 որբանոց,
- ❖ 4 Աստվածաբանական ճեմարան՝ 24 ուսանողով,
- ❖ 3 արատավոր (կույր, խուլ և համր) երեխաների դպրոց,
- ❖ 2 տարեցների տուն և այլ հաստատություններ¹:

Ահա թե ինչու, “The Missionary Review of the World” պարբերականը 1915 թ. նոյեմբերյան իր համարում «*Ամերիկյան միսիոներական շահերը*» հոդվածում, հայերի հանդեպ ամերիկացիների ունեցած մեկդարյա հետաքրքրությունը հիմնավորել է հետևյալ կերպ. «Ամերիկյան ողջ Եվրոպայից ավելի մեծ հետաքրքրություններ ունի Թուրքիայում, քան որևէ այլ երկրում: Այդ հետաքրքրությունը քաղաքական չէ, այլ՝ մարդասիրական: 1819 թ. Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդը սկսել է աշխատել Օսմանյան կայսրությունում և արդեն գրեթե մեկ դար կատարում է այդ աշխատանքը եռանդուն ու պետականորեն, հեռատեսորեն և ընդարձակ: Միսիոներները երկիր են բերել տպարան և պարբերական, գրականություն, ժամանակակից դեղորայք և սանմաքրում, ժամանակակից հիվանդանոց, արդյունաբերության նոր ոլորտներ և առևտրական ձեռնարկություններ, նաև՝ արևմտյան կրթություն, որի զագաթնակետը լավ կազմակերպված կոլեջներն էին և ավարտա-

¹ Chopourian, G. H. Our Armenian Christian Heritage. Philadelphia, 1962, pp. 100, 101. Հայ Աւետարանական Եկեղեցին. Պատմական ակնարկ (1846-1986), Պեյրուք, 1986, էջ 39: Tootikian, V. H. The Armenian Evangelical Church. Detroit, 1982, pp. 27-28, 272-273. Papajian, S. A Brief History of Armenia. Fresno, 1985, p. 89.

կան դպրոցները: ...Որպես ժողովուրդ հայերն ամենից արձագանքողը եղան ժամանակակից կրթության կոչերին: Միրիայի հյուսիսում գտնվող դպրոցների 25.000 սովորողների մեծամասնությունն այս պատմական և քաջ ազգից էին: Հազարավորները վերապատրաստման դասընթացներ էին անցել Միացյալ Նահանգներում: Կարելի է ասել, որ Ամերիկյան է հայտնագործել հայցեղը և այն ներկայացրել Արևմտյան աշխարհին: Ահա թե ինչու, բացառիկ դիպվածքով, այս մահվան պայքարում Ամերիկյան առաջինը պետք է իր բողոքի ձայնը բարձրացնի և ամենից պատրաստակամը լինի առաջարկելու իր աջակցությունը այս ազգը բնաջնջումից փրկելու համար»¹:

ԱՄՆ դիվանագիտական և միսիոներական ներկայացուցիչները Հայոց ցեղասպանության մասին

“The World’s Work” պարբերականը 1918 թ. նոյեմբերին գրել է, որ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն (1913 թ. նոյեմբեր - 1916 թ. գարուն) թեև կոչված էր «...սոսկ ներկայացնելու իր կառավարությունը որքան հնարավոր է արժանավայել կերպով, պաշտպանել ամերիկյան շահերը և, մասնավորապես, հսկել ամերիկյան կրթական հաստատությունները, որոնք այդքան մեծ գործեր էին իրականացրել քրիստոնյա բնակչության համար»², այդուհանդերձ, իր դիվանագիտական ողջ կարողությունն ի սպաս է դրել քրիստոնյա բնակչության, մասնավորապես՝ հայության, տառապանքները փոքր-ինչ մեղմելու և երիտթուրքական ղեկավարների ջարդարար ծրագրերը դատապարտելու և ինչ-որ կերպ սաստելու առումով:

¹ Kloian, R. D. The Armenian Genocide. News Accounts from the American Press (1915-1922). Berkeley, 1985, “The Missionary Review of the World,” November, 1915, pp. 102, 103:

² Նույն տեղում, “The World’s Work,” November, 1918, էջ 232:

Ահա թե ինչ է ասել Հ. Մորգենթաուն Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարար Թալեաթին հայերի նկատմամբ շարունակվող հալածանքները դադարեցնելու մասին և ի պաշտպանություն ամերիկյան քարոզիչների շահերի. «...Հայերու դէմ ձեր հալածանքներէն նախատուած կը զգան Ամերիկացիները: Դուք ձեր սկզբունքները պէտք է հիմնէք մարդկայնասիրութեան (humanitarianism) վրայ, ո՛չ թէ ցեղային խտրականութեան. եթէ ո՛չ Միաց.-Նահանգները ձեզ բարեկամ եւ հաւասար չպիտի նկատեն: ...Դուք կ'արհամարհէք ամերիկացի միսիօնարները, բայց մի՛ մոռնաք որ՝ Ամերիկայի է՛ն ընտրուած դասակարգն է որ՝ կը պաշտպանէ անոնց կրօնական գործը, ինչպէս նաեւ անոնց կրթական հաստատութիւնները: ...Այս պատերազմը վերջ գտնելէն ետքը, դուք նոր կացութեան մը դէմ պիտի գտնուիք: Դուք կ'ըսէք թէ՛ եթէ յաղթական ելլէք, կրնաք աշխարհի ասպարեզ կարգալ, բայց կը սխալիք: Դուք ամէն կողմ հանրային կարծիքը ձեզի դէմ պիտի գտնէք, մանաւանդ Միաց.-Նահանգներուն մէջ: Մեր ժողովուրդը երբեք չպիտի մոռնայ այս ջարդերը: Ամերիկացիները միշտ ոյս պիտի պահեն Թիւրքիայի մէջ Քրիստոնեաներուն միահաղոյն բնաջնջումին համար: Անոնք զայն ուրիշ բան չպիտի նկատեն, բայց եթէ կամաւոր ոճրագործութիւն եւ լրջօրէն պիտի դատապարտեն բոլոր այն մարդիկը՝ որոնք անոր պատասխանատուններն են»¹:

Պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում սաստկացող զրաքնության պայմաններում Հ. Մորգենթաուն երկրի փոքրասիական տարածաշրջանում ծավալվող տեղահանությունների, ջարդերի ու կոտորածների մասին ամենայն մանրամասնությամբ տեղեկացել է ամերիկյան միսիոներներից, որոնք, հաղթահարելով ճանապարհային արգելքները, իրենց

¹ Նույն տեղում, էջ 266:

կյանքը վտանգի ենթարկելով, գալիս էին դեսպանատուն՝ վկայելու իրենց տեսածն ու լսածը: Իր հուշերում Հ. Մորգենթաուն գրել է. «Անոնք (միսիոներները - Ք. Ա.) ժամերով կը նստեին գրասենեակս, եւ, արցունքը հոսելով իրենց երեսէն վար, կը պատմէին ինծի այն սարսափները՝ որոնցմէ անցած էին: Անոնցմէ շատերը, թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ, գրեթէ հիվանդացած էին այն տեսարաններէն՝ որոնց ականատես եղած էին: Ասոնցմէ ոմանք, ամերիկեան հիւպատոսներէ նամակներ բերին ինծի, որոնք կը հաստատէին իրենց պատմութիւններուն ամէնէն զարհուրելիները աւելցնելով մանրամասնութիւններ՝ զորս կարելի չէ հրատարակել: Այս բոլոր չլուած տեղեկագիրներուն ընդհանուր ոգին ա՛ն էր թէ՛ թիւրք նկարագիրին տարապայման վատթարացումը եւ դիւայնութիւնը, որ դարերու ընթացքին արդէն բաւականաչափ հոշակուած էր, այս անգամ ինքզինքը գերազանցած էր: Մօտ 2.000.000 ժողովուրդը՝ ջարդէ եւ անսուղութենէ եւ աւելի գէշ չարիքներէ փրկելու միակ յոյս մը կար, կ'ըսէին, - ատիկա Միաց.-Նահանգներու բարոյական ուժն էր: Նահատակ եղող ազգի մը այս փոխանորդները կը յայտարարէին որ եթէ ամերիկեան Դեսպանը չկարենար համոզել Թիւրքերը, որպէսզի կեցնէին իրենց աւերիչ զօրութիւնը, բովանդակ հայ ազգը պիտի անհետանար»: Այդ կարծիքին էին նաև եվրոպական տերութիւններին ղեկավարները¹:

Օսմանյան կայսրութիւնում ԱՄՆ-ի դեսպանատունն իր դիվանագիտական ողջ կարողութիւններն ի գործ է դրել՝ փորձելով դադարեցնել երիտթուրք ղեկավարների խելացնոր ծրագրերը, «որոնց համար քաղաքակրթութիւնը պատասխանատու պիտի բռնէ Թիւրքը»²:

¹ Նույն տեղում, էջ 263:

² Նույն տեղում, էջ 260:

2. Մորզենթաուն երիտթուրք ղեկավարներից պահանջում էր ապահովության և անվտանգության երաշխիք ինչպես ամերիկացիների, անգլիացիների ու ֆրանսիացիների, նույնպես և՛ հայերի համար: Մակայն Օսմանյան կայսրությունը հայերի ապահովութեան երաշխիքներ չէր տալիս և մտադիր չէր ետ կանգնել ողջ ազգի բնաջնջման իր ծրագրից: Ընդհակառակը, երիտթուրք ղեկավարները 2. Մորզենթաունի հայտարարում էին, որ հայերի հանդեպ իրենց վերաբերմունքի հարցը բոլորովին չպետք է վերաբերվի ԱՄՆ-ին, և, որ հայերը մեծավ մասամբ շահած կլինեին, եթե ԱՄՆ-ի խնամակալական աջակցությունից գերծ լինեին, ինչը կստիպեր նրանց ապավինել միայն թուրքական պետության բարեհաճությանը¹:

Դեսպան 2. Մորզենթաուն առիթը բաց չի թողել իր հեղինակությունն ի նպաստ հայերի ծառայեցնելու համար: Այսպես, մահմեդականների կրոնական մեծագույն տոնի՝ Բայրամի առիթով նա միջնորդել է Օսմանյան կայսրության Ռազմական գործերի նախարար Էնվերին և հասել Իզմիրի զինվորական դատարանի կողմից մահվան դատապարտված յոթ հայերի ազատագրմանը: Դեսպան 2. Մորզենթաուն, իրատեսորեն գնահատելով Օսմանյան կայսրությունում հայության համար ստեղծված իրավիճակը և, համոզված լինելով, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել «...հայ ազնիւ, վաղընջական եւ քաղաքակրթուած Քրիստոնեայ ժողովուրդին բեկորները տեւականապէս փրկելու համար Թիւրքին ճիրաններէն», դիմել է ամերիկյան կառավարութեանը եղեռնից հրաշքով փրկված 550.000 հայերին ԱՄՆ տեղափոխելու համար: Դեսպանին հաջողվել է փոխադրության հետ կապված գումարի մի մասը՝ 1.000.000 դոլար, ղնել երիտթուրքական իշխանավորների վրա: Ամերիկյան դեսպանատունն իր հյուպատոսներ-

¹ Ամերիկյան դեսպան 2-երի Մորզենթաունի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, էջ 119, 275, 281, 291:

րի և միսիոներների միջոցով կազմակերպել է Անատոլիայի հայության փրկված բեկորներին ԱՄՆ-ի մարդասիրական հաստատությունների կողմից հավաքված սննդամթերքի, հագուստեղենի, դեղորայքի և այլ անհրաժեշտ օգնության մատակարարման հարցերը¹:

Շուտով, երբ պարզ է դարձել հայկական ողբերգության ընդգրկած մեծ չափերը, և 1915 թ. նոյեմբերին Շ. Մորգենթաուն հաղորդել է այն մասին, որ «ականատեսի խոցող տեղեկագիրները կը ցուցնեն, թե ցեղասպանության արշաւ մը կը յառաջանայ», Հայկական Նպաստից Ամերիկյան Հանձնախումբն ընդարձակել է իր գործունեությունը և միավորվել Սիրիայի և Պաղեստինի համապատասխան խմբերի հետ՝ վերանվանվելով Հայկական և Սիրիական Նպաստից Ամերիկյան Հանձնախմբի: 1917 թ. ԱՄՆ-ի հետ Օսմանյան կայսրության դիվանագիտական հարաբերությունների վատթարացման պայմաններում անգամ այս կազմակերպությունը շարունակել է իր բարեսիրական առաքելությունը²: Ժամանակի արևմտյան պարբերականն իր խմբագրականում այդ առիթով գրել է. ««Հայկական Հարցի» լուծումը պետական այրերի խնդիրն է, սակայն Հայաստանի սնումն ու վերականգնումը, ինչը իրականացվում է Հայկական և Սիրիական Նպաստամատույց Ամերիկյան Կոմիտեի միջոցով, Ամերիկայի յուրաքանչյուր տղամարդու և կնոջ խնդիրն է»³:

¹ Morgenthau, H. The Tragedy of Armenia. London: Spottiswoode, Ballantyne & Co., Ltd., 1918, p. 16. Kloian, R. D., նշվ. աշխ., "The New York Times." October 2, 1915, էջ 50; "The Literary Digest," October 2, 1915, էջ 52:

² Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1915-1965, Պէրյուք, 1965, էջ 935: Barton J. L., Story of the Near East Relief (1915-1930). New York, 1930, pp. 4-5: Hovannisian, R. G. The Republic of Armenia (1918-1919). Vol. I, Berkeley, Los Angeles, London, 1974, p. 133:

³ Kloian, R. D., նշվ. աշխ., "The Independent," June 23, 1917, էջ 205:

2. Մորգենթաուն, որն իր պաշտոնաթողությունից հետո խնդիր ուներ ԱՄՆ-ի ժողովրդին հասու դարձնել հայության տառապանքների մասին և նրանց առավել չափով ներգրավել հայկական կարիքների սատարմանը, հետևյալ կերպ է արտահայտվել. «Եթե ես քաջություն ունենամ կրկնել այն պատմությունները, որ լսել եմ, տեսել և ստորագրել, դրանք կստիպեն տղամարդկանց ու կանանց լաց լինել և յուրաքանչյուրը կտեսնի համակրանքի ու օգնության կարիք: Ես կուզեի զորություն ունենալ պատկերելու հայկական գաղթականական ճամբարը և պատմելու, թե ինչպես ամերիկյան միսիոներական հիվանդանոցը ետնադոնից կերակրում էր հազարավոր սովահար մարդկանց օրական միջին հաշվով յուրաքանչյուրին 3 սենթով՝ օրվա համար մեր տված 30 դոլարով: ...Ինչ պետք է այս մեծ երկիրը անի դրսևորելու իր գնահատանքը հիասքանչ օրհնությունների հանդեպ, որ տեղում էին մեզ վրա մեզնից յուրաքանչյուրին իր բաժին լուսման կատարած լինելու համար: Պատկերացրեք, որ դուք անձնապես պատասխանատու եք մեկ կամ երկու մարդու սովահարության համար: Քսանհինգ դոլարը հնարավորություն պիտի տա հայ ընտանիքին համեմատական սփոփանք գտնել: Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր մարդ երջանիկ կլինի ինչ-որ բան նվիրաբերել և կտա 25 դոլար հայերի համար: ...Մենք լսել ենք մարդկային եղբայրության մասին: Եթե մենք բոլորս եղբայրներ ենք, իսկ մենք՝ ենք, արդյո՞ք մենք իրավունք ունենք ապրել հանգստի և շքեղության մեջ և թույլ տալ, որ այս մարդիկ սովահարվեն: Ես չեմ կարծում, որ ունենք: Ես հավատում եմ, որ դա մեր պարտքն է, դա մեր առանձնաշնորհումն է, մեզնից յուրաքանչյուրին ստանձնելու որքան հնարավոր է շատ հայերի խնամակալությունը: ...Ես հավատում եմ, որ Ամերիկայի բարոյական ուժը պիտի կրկնապատկվի և եռապատկվի, եթե մնացյալ աշխարհը հասկանա, որ մենք

պատրաստակամ ենք և հոժար և մտահոգ օգնելու տառապող զանգվածներին»¹:

Համաձայն “The Independent” թերթի, երբեմնի դեսպան Հ. Մորգենթաուն, արդեն որպես Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի պատասխանատու անձ, 1920 թ. կոչ է արել ամեն գնով փրկել հայ ժողովրդի եղեռնից վերապրած հատվածին՝ 1.200.000 մերկ ու սոված չափահասներին, 250.000 որբերին, թուրքական հարեմներում ստրկացված նույնքան կանանց, որոնց 100.000-ն արդեն փրկվել էր կոմիտեի ջանքերով: «Եթե նրանք այնքան լավն էին, - գրում է Հ. Մորգենթաուն, - որ կովեցին ու գոհվեցին մեզ համար, երբ մենք այդքան ցավալիորեն կարիք ունեինք նրանց օգնությանը, արդյո՞ք նրանք այնքան լավը չեն, որպեսզի ստանան որոշ փշրանքներ մեր առատությունից: ...Թող այժմ ամերիկյան կարգախոսը դառնա՝ ծառայի՛ր հայերի կենսական անհրաժեշտություններին մի փոքր երկար, որպեսզի նրանք պահպանվեն ազգային ազատության և վերածննդի օրվա համար, որին ոչ մի ժողովուրդ այդքան անկեղծորեն և մեծապես արժանի չէ»: Որպես ականատես Հ. Մորգենթաուն հիմնավորել է. «Պատերազմի ընթացքում տեղահանություններն ու կոտորածները անկազմակերպ ամբոխի տարերային դրսևորումները չէին, այլ հետևանքն էին զանգվածային բնաջնջման լավ դավադրված ծրագրի, որին մասնակցեցին թուրքական կանտնավոր սպաներն ու զորամասերը, ասես ռազմադաշտում՝ թշնամու դեմ արշավելիս»: Ուստի՝ եզրակացել է. «Եթե Ամերիկյան պատրաստվում է թողություն տալ այս հանցագործներին, եթե նա պատրաստվում է թույլ տալ, որպեսզի սպառնացող իրավիճակը շարունակվի և՛ կրկնվի, ուրեմն նա մասնակից է ռճիրին: Այս մարդիկ պետք է ազատագրվեն նման սարսափների հոգեվարքից և վտանգից: Նրանք ոչ

¹ Նույն տեղում, “The Literary Digest,” June 17, 1916, էջ 149:

միայն պետք է փրկվեն ներկայի համար, այլ կառավարական գործունեությամբ կամ Ազգերի Լիգայի պաշտպանության ներքո պետք է ապահովագրություն ստանան, որ ապագայում նրանք խաղաղության մեջ ազատ կլինեն և ոչ մի վնաս նրանց չի սպառնա»¹:

ԱՄՆ-ի հայկական և տեղական քաղաքական ու մարդասիրական կառույցների գործակցությունը

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից պատմական տարբեր հանգամանքների բերումով ԱՄՆ-ում ստվարացած հայությունը, հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական դարձած տարիներին, համախմբելով երկրի ներհամայնքային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով, ամերիկյան մարդասիրական, ինամակալական, քաղաքական և այլ կառույցների հետ գործակցած, սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանությանը, ազատագրմանն ու վերականգնմանը:

Ամերիկահայերը մասնակցել են ինչպես բնօրրանում ծավալված կամավորական շարժումներին, բազմահազար կարոտյալ հայրենակիցներին ու գաղթականներին սատարելուն, այնպես էլ Եվրոպայում և ԱՄՆ-ում Հայոց հարցի պաշտպանությունը հետամտող քաղաքական, դիվանագիտական, ռազմական և այլ բնույթի ձեռնարկներին: Ամերիկահայ ազգանպաստ այդպիսի միավորներից էին սկզբնապես կրթասիրաց, Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո՝ այրիախնամ, որբախնամ, աղքատախնամ և վերաշինաց, ապա՝ հայրենակցական միությունները, քաղաքական կուսակցությունները (1890 թ.՝ Սոցիալ դեմոկրատ հնչակյան, 1895 թ.՝ Հայ հեղափոխական դաշնակցություն, 1921

¹ Նույն տեղում, "The Independent," February 28, 1920, էջ 341:

թ. Ռամկավար-ազատական), բարեսիրական հաստատությունները Հայկական բարեգործական ընդհանուր միության ԱՄՆ-ի մասնաճյուղը (1908 թ., Բոստոն), Ամերիկայի հայ կարմիր խաչը (1910 թ., Նյու Յորք), Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը (1918 թ., Ուստր) և նմանատիպ այլ կազմակերպություններ¹:

Հայկական բարեգործական ընդհանուր միության ԱՄՆ-ի կենտրոնական հանձնաժողովի նախագահ Միհրան Կարազյոզյանը հայանպաստ գործակցություն է իրականացրել Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհրդի ընդհանուր քարտուղար վեր. դոկտ. Ջեյմս Բարթոնի հետ: Վերջինս, անաալով նաև Կ. Պոլսի դեսպան Հ. Մորգենթաուի 1915 թ. սեպտեմբերին ուղարկած այն հեռագրին, թե՛ «Հայ ցեղին փչացումը Թուրքիոյ մէջ կը յառաջանայ արագորէն», ուստի՝ անհրաժեշտ է փրկել մնացորդացին, Քլիվլենդի Հայ Տան հետ միասին ստեղծում է Հայկական հալածանքները քննող ամերիկյան հանձնախումբ: Ամերիկյան միսիոներներից, մարդասերներից, արդյունաբերողներից, դասախոսներից բաղկացած խորհրդից էլ կազմվել է Հայկական նպաստից ամերիկյան հանձնախումբը, որի նախագահ վեր. դոկտ. Ջեյմս Բարթոնը հանձնախմբի ստեղծման առիթով ասել է. «Հայերը ոչ ոք չունեն իրենց համար խոսող և անկասկած ժամանակն է, որ քրիստոնեության ձայնը բարձրացվի»: Հայկական նպաստից ամերիկյան հանձնախումբը 100.000 դոլար է հանգանակել և առաքել ժամանակին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուին՝ հայության կարիքների համար²:

¹ Ավագյան Ք., նշվ աշխ., 2000, էջ 89-111:

² Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1915-1965, Պեյրուր, 1965, էջ 934: Barton J. L., նշվ աշխ., էջ 4-6:

Ամերիկահայ քաղաքական գործուն հաստատություններից էին՝ Միջկուսակցական խորհրդատուները (1914 թ., նոյեմբեր, Բոստոն), որը շուտով վերանվանվել է Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբի (Ա.Պ.Ա.Հ.), Ազգային շահերի պաշտպանության միությունը (Ա.Շ.Պ.Մ.) (1915 թ., Նյու Յորք) և այս երկուսի միավորումից կազմավորված Ազգային պաշտպանության Ամերիկայի միությունը (Ա.Պ.Ա.Մ.), ինչպես նաև ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցչական մարմինը՝ Ամերիկայի հայ ազգային միությունը (Ա.Հ.Ա.Մ.) (1917 թ., մարտ, Բոստոն), որն ԱՄՆ-ում գործող իր 187 մասնաճյուղերով հանդիսանում էր ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը: Այն հիմնել էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ գործող Հայ ազգային միության Հանրականության գրասենյակ (1918 թ., Նյու Յորք), հետագայում վերանվանվել էր Մամլո գրասենյակ, և ավելի ուշ՝ Հանրականության կոմիտե՛:

1919 թ. ապրիլի 24-ից Հայկական և Սիրիական նպաստից ամերիկյան հանձնախումբը վերանվանվել է Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի, իսկ օգոստոսին Կոնգրեսի որոշմամբ՝ Մերձավոր Արևելքի նպաստամատույցի (Near East Relief - NER) (նախագահ՝ վեր. դոկտ. Ջեյմս Բարթոն, փոխնախագահ, հոգաբարձուների խորհրդի անդամ՝ Հենրի Մորգենթաու): 1919 թ. մայիսից կոմիտեն գործել է նաև Հայաստանում և Անդրկովկասում Ամերկոմ անունով: Հիշյալ նպաստամատույցն ազգային բարեսիրական կառույց էր, քանի որ իր աջակցությունն էր ստանում ողջ ամերիկյան ժողովրդից, Կոնգրեսից և երկրի նախագահից, համագործակցում էր ազգային խնամակալական

¹ Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 8-12, 27, 30, 31:

մարմինների, Ամերիկյան կարմիր խաչի և բարեսիրական այլ հաստատությունների հետ: Այն ամերիկյան ժողովրդի առատաձեռնության և մարդասիրության առաջին հավաքական դրսևորումն էր: Մերձավոր Արևելքի նպաստամատույցը պատերազմի աղետյալներին տրամադրել է 116 մլն. դոլար, ներառյալ ԱՄՆ-ի կառավարության 25 մլն. դոլար արժողության սնունդն ու հագուստեղենը, ինչպես նաև՝ ամերիկահայերի հանգանակած 1 մլն. դոլարը: Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը երեք աշխարհամասերի 11 երկրներում իր հիմնած հիվանդանոցների, որբանոցների, դպրոցների, արհեստանոցների միջոցով, առանց դավանանքի խտրության, դարմանել, պատասպարել, սնել և նոր հույս է ներարկել տասնյակ հազարավոր կարոտյալների, կրթել 132.000 որբերի՝ հանդիսանալով «...ամերիկյան մարդասիրութեան եւ գթասիրութեան խորհրդանիշը ... Միջին Արևելքի արհւնամած հողին վրայ»¹:

Մերձավոր Արևելքի նպաստամատույցը Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ գործակցած 1924 թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպայում և Ամերիկայում իրականացրել է «Միջազգային ոսկեղեն կանոնի կիրակի» ձեռնարկը: Ծրագրի էությունը հետևյալն էր. «Նախ – Կըլիստոքուի որ այդ Կիրակի օր ամեն մարդ փոխանակ ճոխ սեղանին, որբերուն պարզ կերակուրը ուտէ: Երկրորդ – Այդ օր ամեն մարդ Ոսկեղեն Կանոնի չափով առատաձեռն դրամական նուէր մը տայ որբերուն հոգատարութեան գործին»: Ամերիկահայությունը կոչված էր հանգանակել 100.000 դոլար: Հավաքված ընդհանուր գումարը հավասարապես պիտի բաժանվեր երկու կազմակերպությունների միջև: Բարեսի-

¹ Յուշամատենան Մեծ Եղեռնի. 1915-1965, էջ 935, 944: Kloian, R. D., նշվ. աշխ., "The Independent," February 28, 1920, էջ 341: Hovannisian R. G., The Republic of Armenia (1919-1920). Vol. II, Berkeley, 1982, p. 398. Barton, J. L., նշվ. աշխ., էջ 6, VIII, X, XI:

րական այս միջոցառման շնորհիվ առնվազն 32.000 հայ որբեր պիտի փրկվեին: «Միջազգային ոսկե կանոն» ձեռնարկում հայկական հանձնախումբը ներկայացնում էին ամերիկահայ համայնքի երևելի 90 ազգայիններ՝ ներառյալ հայ ավետարանական և առաքելական եկեղեցու սպասավորներ, մտավորականներ, զինվորականներ և ուրիշներ¹:

Մերձավոր Արևելքի նպաստամատույցի նախագահ վեր. դոկտ. Ջ. Բարթոնի գնահատմամբ՝ «Կոմիտեի աշխատանքը ցուցադրել է գործնական Քրիստոնեությունը՝ առանց հարանվանական և առանց եկեղեցական կերպի, ճանաչելով յուրաքանչյուրի և բոլորի իրավունքներն իրենց նախնիների հավատի նկատմամբ, կրոնն արտահայտել զոհաբերությամբ և ծառայությամբ, որպեսզի ուրիշները կարողանան ապրել և շահել: Նրա հավատամքը Ոսկեդեն Կանոնն էր, իսկ նրա ծիսակարգը՝ կյանքի և հարստության նվիրաբերումը պատերազմի պատճառած վերքերը դարմանելուն: ...Սա ամերիկյան իդեալների պատմությունն է՝ թարգմանված անշահախնդիր ծառայության: ...Սա ամերիկյան մարդասիրության վկայությունն է»²:

Հայության համար ամերիկյան մարդասիրությունն իր փաստացի դրսևորումն է գտել նաև հանձինս ԱՄՆ-ի ժամանակի նախագահ Վուդրո Ուիլսոնի, որը հայության կոտորածների ու տառապանքների մասին քաջաձանոթ էր դեսպան Հ. Մորգենթաուի հաղորդումներից: ԱՄՆ-ի նախագահի քաղաքական դիրքորոշումը հայերի հանդեպ խարսխված էր 1918 թ. արտահայտած նրա հետևյալ խոսքերի վրա. «Ձենքերը վար պիտի չդնենք, մինչև որ Թուրքիոյ կողմէ ճնշուած ազգերը գտնեն իրենց ազատութիւնը ... Հայերու հանդէպ գործադրուած մեթոտիկ ջարդերը

¹ International Golden Rule. Sunday 7. N. p., 1924, pp. 1-4.

² Barton, J. L., նշվ. աշխ., էջ IX, XI:

մեզ կը ստիպեն արելու Երոպայի վրայէն այս տգէտ և վատա-
ռողջ արագակախումբը: Հայաստանին պէտք է տրուի իր պատ-
մական իրատունքը»¹:

ԱՄՆ-ի ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում լոբբիստական գործունեություն իրականացնող Ամերիկայի հայ ազգային միության, ինչպես նաև Հ. Մորգենթաուի առաջարկի շնորհիվ, ԱՄՆ-ի նախագահ Վ. Ուիլսոնը Հայաստանի Առաջին Հանրապետություն (1918-1920 թթ.) է առաքել գեներալ Ջ. Հարբորդի ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ՝ տեղում ուսում-նասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները, ինչպես նաև Հայաստանի նորահաստատ պետությանը տնտեսական օգնություն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորըն Հարդինգ) 1918 թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին ու 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների Հայոց հարցին առնչվող հաղորդումները²:

Ամերիկահայ գաղութի հայրենանպաստ ջանքերի և Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ հնարավոր է դարձել 60 հայասեր ամերիկացիների համախմբմամբ 1919 թ. հունվարին կազմել Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (նախագահ՝ Ջեյմս Ջերարդ), որը խնդիր էր դրել ամերիկյան ժողովրդի ու քաղաքական բարձրաստիճան շրջաններում համակրանք ստեղծել հայերի նկատմամբ, ճնշում գործադրել ամերիկյան կառավարության վրա՝ ճանաչելու Հայաստանի լիակատար անկախության իրավունքը: 1919 թ. մարտին ամերիկյան առաջավոր

¹ Kloian, R. D., նշվ. աշխ., "The New York Times," March 10, 1916, էջ 146: Լագեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 284:

² Ավագյան Զ., նշվ. աշխ., էջ 119: Hovannisian, R. G., նշվ. աշխ., Vol. II, էջ 334:

հասարակայնության 15.300 ներկայացուցիչներ (15.000 բողոքական և 75 եպիսկոպոսական եկեղեցականներ, 35 նահանգների կառավարիչներ, 200 կոլեջների ու համալսարանների նախագահներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի Խաղաղության ժողովում ձեռնարկվելիք ջանքերը և դրանք վերածելու գործուն քայլերի¹:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ամերիկյան մարդասիրության խորհրդանիշը դարձած Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդը Օսմանյան կայսրությունում իր գոյության շուրջ 100 տարիների ընթացքում ներդրել է շուրջ 20 մլն. դոլար, կրել՝ բարոյական անասելի զրկանքներ, տվել՝ մարդկային մեծաթիվ կորուստներ: Առաջին աշխարհամարտի տարիներին, հավատարիմ իրենց առաքելությանը, ամերիկյան քարոզիչները (շուրջ 400 հոգի) մինչև վերջ մնացել են Օսմանյան կայսրության մեջ իրենց հիմնած հաստատություններում, ծառայել քրիստոնեությանը՝ վկայելով հայության կրած տառապանքների մասին²: Սակայն, արդյունքում, Օսմանյան կայսրությունը (Արևմտյան Հայաստան, Կիլիկիա և հայաբնակ տարածքներ) հասցվել է քրիստոնեաթափման՝ դեպի ԱՄՆ սկզբնավորված և ապա պարբերական կոտորածներով ստվարացած արտագաղթերով:

Հայերի հանդեպ ԱՄՆ-ի դիվանագիտական, ինչպես նաև միսիոներական հաստատությունների հետաքրքրությունը քաղաքական բնույթի էր՝ քողարկված մարդասիրական գործունեությամբ ու ելույթներով: Քաղաքական այդ հետաքրքրությունը

¹ Ավագյան Զ., նշվ. աշխ., էջ 119:

² Kloian, R. D., նշվ. աշխ., "The Independent," September 27, 1915, էջ 40; "The Outlook," September 29, 1915, էջ 44:

սկիզբ էր առել դեռևս XIX դ. առաջին կեսից՝ դեպի Անդրկովկաս Ռուսաստանի առաջխաղացմանը զուգընթաց և ի հեճուկս:

Արևմտյան Հայաստանի հանդեպ ԱՄՆ-ի հետաքրքրությունն իր ավարտին է հասել Հայոց ցեղասպանությամբ, իսկ Արևելյան Հայաստանի հանդեպ այն ընդհատումներով շարունակվում է մինչև օրս: Եթե նախկինում ԱՄՆ-ի միսիոներական կառույցներն Արևելյան Հայաստանի տարածքում Հայ առաքելական եկեղեցու և տեղի բնակչության դիմադրության հետ միասին հանդիպել են հիմնականում ռուսական ցարիզմի, իսկ հետո՝ խորհրդային իշխանությունների արգելքին, ապա հետխորհրդային տարիների լիբերալ թողտվության պայմաններում ամերիկյան կրոնակրթական, հասարակական-քաղաքական կառույցների հետևողական գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետությունից ևս ստվարացել է դեպի ԱՄՆ արտագաղթը:

KNARIK AVAGYAN
Doctor of History
Armenia

**THE US DIPLOMATIC AND MISSIONARY REPRESENTATIVES IN
THE OTTOMAN EMPIRE
ABOUT THE ARMENIAN GENOCIDE
AND THE AMERICAN-ARMENIANS**

SUMMARY

Keywords: American missionaries, educational activities, Ottoman Empire, Armenian Genocide, the Armenian community of the USA

During its 100 years of existence in the Ottoman Empire, the American Board of Commissioners for Foreign Missions invested about \$20 million dollars, suffered unspeakable moral deprivations and

numerous human losses. During World War I, American preachers (about 400 people), true to their mission, remained in the institutions they established in the Ottoman Empire until the end, serving Christianity, testifying the suffering of the Armenians. The interest of US diplomatic and missionary institutions towards Armenians was of a political nature, disguised by humanitarian activities and speeches.

During the years of the World War I and the following years, which were disastrous for the Armenian people, the Armenian community of the US, assembling its entire intra-communal intellectual, financial, public and political resources, has assisted the Motherland and its people by all possible diplomatic, political, military and human means and has taken part in the enterprises aiming at the defense of the Armenian Action in Europe and in the USA.

The Armenian-American compatriotic unions, national-political parties, the American branch of the Armenian General Benevolent Union, the Armenian National Union of America and other organizations were engaged in such kind of nation-supporting activities.

ДИПЛОМАТИЧЕСКИЕ И МИССИОНЕРСКИЕ
ПРЕДСТАВИТЕЛИ США В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ
О ГЕНОЦИДЕ АРМЯН И АМЕРИКАНСКИЕ АРМЯНЕ

РЕЗЮМЕ

Ключевые слова: американские миссионеры, просветительская деятельность, Османская империя, геноцид армян, армянская община США

За 100 лет своего существования в Османской империи Американский совет иностранных миссионерских комиссий инвестировал около 20 миллионов долларов, понесли немислимые моральные лишения и многочисленные человеческие потери. Во время Первой мировой войны американские проповедники (около 400 человек), верные своей миссии, до конца оставались в учреждениях, созданных ими в Османской империи, служа христианству, свидетельствуя о страданиях армян. Интерес дипломатических и миссионерских учреждений США к армянам носил политический характер, который был замаскирован гуманитарной деятельностью и речами.

В ставшим роковым для армян годы Первой мировой войны (и после), американские армяне объединили весь свой умственный, финансовый, социальный, политический и прочий потенциал в целях оказания дипломатической, политической,

военной, людской и прочей всевозможной помощи родной стране и народу. Они активно участвовали в акциях в защиту Армянского Вопроса в США.

Американо-армянские земляческие союзы, национально-политические партии, американский филиал Армянского Всеобщего Благотворительного Союза, Армянский Национальный Комитет Америки и другие организации всецело поддержали национальным интересам.

THE HAY HOROMS OF IZMIT REGION¹

Keywords: Hay Horoms, Orthodox Armenians, Chalcedonian Armenians, Armenian-speaking Greeks, Bithynia, Izmit, Western Armenia, Armenian Genocide, Greek Genocide, Armenian migrations.

The migration and settlement of Armenians in Izmit (historical Bithynia) dates to the 15th c. and is connected with Tamerlan's (1370-1405) catastrophic invasions into Armenia. In 1399 Tamerlan captured the famous city of Sebastia (in historical Armenia Minor)². The following year, about 400 Armenian families abandoned their homes and migrated to Bithynia, where they founded a village named Tonikashen (later re-named Atabazar). The details of this event were preserved by two eye-witnesses, the scribe Grigor and his son, the Priest Grigor, who composed a short "History" of this migration in

¹ In this brief research besides published works are used some oral information gathered from the Hay Horom villagers (survivors of massacres) and gathered in Athens' Centre for Asia Minor Studies (Κέντρο Μικρασιατικών Σπουδών (ΚΜΣ)), in special envelopes (φάκελοι) of Archive of Oral tradition (Αρχείο Προφορικής Παράδοσης (ΑΠΠ)): B-13, B-14, B-15, B-16, B-32, B-34, B37, B-39.

² A detailed account of the Timurid conquest of Sebastia and its horrific material and human losses may be found in the Armenian chronograph by the hegumen of the Metsop Monastery, Thovma (1378-1446), in which the event was dated to the year 1402 (Thovma Metsopetsi 1999, 102-105. Cf. Ormanyanyan 2001, 2341).

1466. According to their accounts, in 1409 the Orthodox Armenians reached Bithynia: "...The 'Chalt'ik' Armenians, called by foreigners (i.e. by Turks – G. K.) 'Dini ayrı Ermeniler', came to us. They were 1506 families divided into groups and settled around Mt. Geyve and in the rocky foothills of Sekirtli... They viewed us with suspicion, and the Greeks hated them as well due to their Armenian language. The Greeks called them 'Eutyichian Armenians' whereas they called us 'Arian Armenians'. [The Greeks] levelled various accusations against the Armenian nation, so that the poor would not come to us and many people refused to eat our food" [«...Եկին առ մեզ Չալթիկ Հայք այլազգիք անուանեին 'տինի այրի էրմենիլեր' նոքա էին ՌՇԶ (1506) ընտանիք բաժանեալ ի խումբս խումբս բնակեցան ի լերին Կէյվեու եւ ի լերինս Սեկիրթլիու ապառաժուտ լերին... Նոքա եւս չար ակամբ հայէին առ մեզ: Իսկ Յոյնք նոքա եւս ասէին վասն բարբառելոյ ի հայ լեզուի արտասանութեան կոչէին ի Յունաց Արմէնոս Էփտիխոս. զմեզ կոչէին Արմէնոս Արիոս ինչ ինչ բարուրանս բարդէին ի վերայ ազգին Հայոց, մինչ զի աղքատ որ մուրացիկ լինէին ոչ գային առ մեզ եւ զհաց մեր ոչ կամէին ուտել բազումք»]¹.

This account, while brief, contains a number of crucial pieces of information. Firstly, who are the enigmatic 'Chalt'ik' Armenians? Undoubtedly this unknown word, as Prof. Muradyan has proposed², is the well-known from medieval sources word $\delta\alpha(\iota)\rho$ (in byzantine sources $\text{T}\zeta\acute{\alpha}\theta\iota\omicron\varsigma$). It originates from the Arabian term

these Armenians as “Armenians of different faith” (in Turkish “Dini ayrı Ermeniler”) is absolutely justified¹.

Unfortunately, the account provides no information on the provenance of these Orthodox Armenians, making no mention of the region in Armenia from which they came. However, the passage paints a vivid picture of ethno-confessional enmity both between local Greeks and Armenians and between migrant Armenians of different faiths.

In the late 19th - early 20th centuries the Hay Horoms², i. e. the Orthodox Armenians of Izmit, believed that their ancestors had first settled there about 250 years previously³. This allows scholars to hypothesize that there was another, second wave of emigration from Western Armenia to Bithynia in the XVII c. This particular wave could be connected with the Turkish-Persian wars and related hardships⁴. Indeed, it must be noted that the migrations of Hay Horoms from the villages of Akn⁵, as well as from the village of Hoghus in Yerznka (Higher Armenia)⁶ to Izmit continued until the early 20th c.

¹ The Ottomans had not yet conquered Constantinople, and they gave Armenian refugees some prerogative and supported their settlement in Bithynia to exert pressure on the local Greek population, intending to force the Greeks to emigrate (Ormanyan 2001, 2341-2343. Muradyan-Musheghyan 1998, 17-18).

² In this term the “Hay” (Հայ) is the self-name of Armenians, whereas the “Horom” (Հորոմ) means “Roman”, “Byzantine”, “Orthodox”. The term should thus be translated as “Armenian Orthodox” or “Byzantine Armenian”, but not “Armenian-speaking Greek”.

³ Paskhalidis 1891, 2.

⁴ Farhat 1910 III, 1.

⁵ About the Hay Horoms of Akn, see Kazaryan, 2016.

⁶ About the village Hoghus, see Maravelakis 1955, Lamtzidis 1956, Kazaryan 2020.

Regardless, up to the late 19th c. the Hay Horoms of Izmit remained unknown to the wider Armenian and Greek communities. From materials published during this period it is known that the main settlements of the Orthodox Armenians were Ortakyoy and Khoodi. Both of them were located in the Geyve sanjak of Izmit vilayet. The ancestors of the habitants originated from Akn in Western Armenia, from the villages of Mijingyugh (also Ortagyugh, Ortakyoy)¹ and Aghberak (Agrak)² or Khudi respectively. Ortagyugh was located 79 km south-east of Izmit (historical Nicomedia), whereas Khudi was located 3 km east of Ortagyugh and 48 km south – east of Izmit.

Below we present the different numbers of habitants of the villages of Ortakyoy and Khudi, during different years and according to various authors.

	Ortakyoy		Khudi		
	Hay Horoms		Apostolic Armenians	Hay Horoms	Turks
Archim. Poghos Natanian, 1870 ³	Appr. 450 families, 2250 persons		App. 200 (1000 persons)		

¹ Mijingyugh (Միջինգյուղ) means “The Middle Village” in Armenian. It shares this meaning with the Turkish word “Ortaköy”. The name “Ortagyugh” is a combination of the Turkish “Orta” (middle) and the Armenian “gyugh” (village). The Greek name “Mesokhori” (Μεσοχώρι) also has the same meaning.

² Farhat 1910 III, 2. Farhat identifies two villages, Aghberak and Agrak, but in reality two different villages existed near Akn – Aghberak or Khudy, and Horomi Ag(a)rak (trans. Farm of Horom).

³Natanyan 1871, 12-13.

G. Paskhalidis, 1891 ¹ 1915 ²	6000 (approximately 500 families)	2000 (approximately 200 families)	250 families, appr. 2000 persons	200 families
G. Pakhtikos, 1892- 1893 ³	6000 or 4000 persons	2000 persons		
M. Gasapyan ⁴	750 families (appr. 3750 persons)	190 families (appr. 950 persons)	250 families	
ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β- 33	1500 families, appr. 4500-5000 persons		250 families, appr. 1200 persons	
ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β- 34	7000 persons	80 families	1500 families	
ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β- 39			250-300 families, appr. 1200- 2000 persons	70 families, appr. 500-800 persons

¹Paskhalidis 1881, 2. According to the same autor, originated from Khudi, each family had at least six children, so with the parents each family had eight members. Beside of it, very often the families of tree or for brothers consist an extended patriarchic family (in Armenian; զերդաստան) with 20-30 members, headed by the grandfather (ibid). Cf. Kitromilidou 1988, 247.

² Paskhalidis 1915, 234.

³ Pakhtikos 1893, 7. Pakhtikos 1892, 96.

⁴ Farhat 1910 III, 1. According to M. Gasapyan ("Farhat"), the total number of Hay Horom families of Geyve district villages (i. e. Ortakyoy, Khudi, Geyve Station, Burhanie, Sashli and Gyup) was 1150 with at about 5750 persons (ibid.).

The main settlements of the Hay Horoms in Izmit were Ortakyoy and Khudi. During the 18th-19th c. the Hay Horom inhabitants of these settlements founded other, smaller villages throughout the Izmit region. Initially, during the years 1744-1753, they founded four villages known by the common name Findikli in the Kandra district of Izmit, 4 hours north-east of the town of Atabazar. These villages were Papaz, Levend (in Armenian: Veri Gyugh), Kadar and Ashaa (in Armenian: Vari Gyugh or Nerk'in Findikli)¹. Another Hay Horom village of Izmit was Burhanie, founded by Anastas Mirak'oghli (Mirak'ian, 1820-1903) from Khudi who was given the honorific Haji after his pilgrimage to the Holy City of Jerusalem. His son Jakob (1854-1920) was a priest, and was martyred in 1920 during the Hay Horoms' massacres. Burhanie initially had 65 families, but these soon grew to 100². Additionally, inhabitants of Ortakyoy founded the villages of Gyup and Sashli³. Both Orthodox and Apostolic Armenians lived in the town of Geyve (together with 5,000 Turks) and in the nearby village of Echme. Below we present the numbers of the Christian inhabitants of the aforementioned settlements, according to various sources and early-20th c. research⁴.

	Levend	Papaz	Kadar	Ashaa	Gyup	Sashli	Geyve	Echme	Burhanie
Archim Poghos	244 families (1140 persons)		Orthodox	Armenians					

¹ ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β-13.

² ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β-37. ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β-39.

³ΚΜΣ/ΑΠΠ, φακ. Β-34.

⁴ For further details, see Kazaryan 2021, 131-133.

Natanian, 1870 1	20 families Apostolic Armenians (80 persons)								
ΚΜΣ/Α ΠΠ, φ.α.κ. Β- 13, Β-14		2 families of Apostolic Armenians	1 family of Apostolic Armenians	100 families of Hay Horoms 15 families of Apostolic Armenians					
ΚΜΣ/Α ΠΠ, φ.α.κ. Β- 13, Β-15			180 families of Hay Horoms 1 family of Apostolic Armenians						
ΚΜΣ/Α ΠΠ, φ.α.κ. Β- 13, Β-16	100-110 or 150 families of Hay Horoms	40-50 families of Hay Horoms 2 families of Apostolic Armenians	70-80 families of Hay Horoms	60-70 families of Hay Horoms					

¹ Natanian 1871, 5-6.

ΚΜΣ/Α ΠΠ, φακ. Β- 16	100- 110 famil ies of Hay Hor oms	40- 50 famil ies of Hay Hor oms	70-80 families of Hay Horoms	60-70 famili es of Hay Horo ms					
Μ. Kleonim os-Ch. Papadop ulos ¹	Appr. 300 families of Hay Horoms								
Μ. Gasapya n ²	170 families of Hay Horoms	90 families of Hay Horoms	63 famili es of Hay Horo ms	55 famil ies of Hay Horo ms	40 familie s of Hay Horom s	15 familie s of Hay Horom s		40 families of Hay Horoms	
ΚΜΣ/Α ΠΠ, φακ. Β- 33, Β-34				60 famil ies of Hay Horo ms	40 familie s of Hay Horom s	5000 habita nts, from which 10-15 familie s of Hay Horom s (appr. 70 person s), 10- 15 familie		50-60 families of Hay Horoms	

¹ Kleonimos-Papadopoulos 1867, 155.

² Farhat 1910 VI, 1. According to M. Gasapyan ("Farhat"), the total number of Hay Horom families of Kandra district (i. e. of villages Levend, Papaz, Kandar and Vari Gegh) was 323, approximately with 1615 persons (ibid.).

						s of Apostolic Armenians, the - others Turks		
ΚΜΣ/Α ΠΠ, φακ. Β- 37				80 famil ies of Hay Hor oms				100 families of Hay Horoms

The Process of Hellenization and the Massacres of the Hay Horoms

The Orthodox Armenians began to be Hellenized in the late 19th c.¹ Due to the lack of their own ecclesiastical hierarchy and their absolute dependence on that of the Greek Orthodox Church, no development of a national education system of any note, and their complete isolation from the wider Armenian nation², the Hay Horoms had no means to oppose Hellenization. This painful process coincided

¹ We have dedicated a special study to the details of this process: Kazaryan, 2019.

²Already in 1910 M. Gasapyan warned that all members of the Armenian people should be united around “a broad national progressive idea. This idea can be realized by those who do not only accept the ‘nation’ within the walls of the Armenian Church, but also acknowledge that there are native members of the Armenian people outside those walls, be they Evangelical, Catholic or Greek Orthodox, because it is a crime in the present times to confuse the nation with religion, which is only a matter of individual conscience” (Farhat 1910 I, 1).

with the anti-Armenian policy of Sultan Abdul Hamid II (1876-1909); the “bloody” Sultan on one hand massacred the Armenians, while overtly favoring the Greeks on the other, thus precluding any chance of Armeno-Greek collaboration and mutual assistance¹. In such conditions, it was only natural for the Orthodox Armenians to want to be considered Greeks (albeit Armenian-speaking), but not “Ermeni” and thus condemned to death.

In Izmit, particularly influential means of Greek propaganda were the sowing of religious discrimination and the spread of the Greek language. As a result, relations between the Apostolic and Orthodox Armenians became strained to the point of fanaticism and bloody conflicts². For example, even if the adults in Ortakyoy were still able to find common ground, there would be clashes between children and young people of the two faiths, with religious animosity provoked by the clergymen on either side³.

In the early 20th c. the Hay Horoms of Bithynia, although they had almost lost their Armenian national consciousness and covered their actual nationality in every way, declaring themselves Greeks, nevertheless maintained the most crucial indicator of Armenian identity, the Armenian language. This became the main target of the Greek propagandists. Use of the Armenian language was persecuted in public places and schools, there was a fine for speaking Armenian for adults and corporal punishment for children in schools⁴. However, even these means were insufficient to eradicate the mother tongue of the Orthodox Armenians.

¹ Chasiotis 2015, 154-159.

² Farhat 1910 IV, 1-2.

³ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. Β-34. Farhat 1910 IV, 1-2.

⁴ Farhat 1910 V, 2.

An honest attempt was made to regulate the educational situation of the Hay Horoms of Izmit in 1912, by the Ecumenical Patriarch Joachim III (1878-1884, 1901-1912)¹. Moreover, the Greeks and Armenians realized that they were in mortal danger, and made efforts to unite against the Young Turks. Nevertheless, that same year the Turks began to sow discord between the Orthodox and the Apostolic Armenians of Izmit. In particular, the Turks in Geyve pushed the Armenians to terminate their employment of Hay Horoms and avoid contact with them. Eventually, the Orthodox Armenians were forced to leave Geyve and settle in Ortagyugh².

In 1915, when the Armenian Genocide started and the Apostolic Armenians of Ortagyugh were led to their deaths, the Hay Horoms swiftly appropriated their abandoned property. Thus, some individuals went to the Armenian school to remove the floorboards and use them for their own purposes³. However, the same terrible fate was in store for the Orthodox Armenians of Izmit a scant few years later: Over the course of a few summer days in 1920, about 10,000 Hay Horoms were exterminated⁴.

Christos Hajigeorgiou (Hajiants), a Hay Horom survivor from Ortagyugh, discussed the massacres in Ortagyugh in detail in his memoir⁵. According to him, on 13 April 1920, the Tuesday following Easter, Kemalist troops surrounded Ortagyugh and began shelling it. The armed villagers defended themselves for three days, but were

¹ Chasiotis 2015, 482-483.

² ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. Β-33:

³ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. Β-34:

⁴ Very few survived this horrific massacre, about 10% of the Armenian Horoms, who happened to be absent from their villages. For example, only 50 of the 600 inhabitants of Burhaniye survived.

⁵ Chatzigeorgiou 1965.

eventually forced to take refuge in the mountains, leaving the village defenseless. The Turks had already set fire to several houses and killed about 200 people.

On Turkish orders, the locals left Ortagyugh and the neighboring villages, but returned to their homes a few days later. During this first attack, the village leaders were arrested and deported to Karin (Erzerum). At the same time, the Turks tortured the priest of Ortagyugh, Fr. Angelos Dimitriadis (Dimitryants) and exiled him to Mamuret-el-Aziz, where he died¹.

The Turks returned in mid-May, invading and looting the village and massacring the inhabitants. Catching about 200 men, they seized their belongings, stripped them, butchered them, and burned them in St. George Orthodox church². The Turks left after torching Ortagyugh and murdering its inhabitants, leaving behind a number of survivors who attempted to subsist among the ashes and ruins³.

The third and final destruction of Ortagyugh took place in the summer of the same year, when the bandits of the Kemalist Chete leader Gyavur Ali completely razed the village. The other Armenian villages of the region shared the same tragic fate. According to Dr. V. Adamandiadis' testimony, "This whole population ... with about fifteen thousand inhabitants gathered in caravans near the Kara Chai (Sangarios) river. There they were tortured, disgraced and finally slaughtered by the Chetes, who were supported by the local Turkish population. It is said that the massacre lasted for three days. Additionally, the remains of the population who took refuge in the surrounding forests were chased with the help of dogs, and the

¹ Ibid. 7, 23.

² Ibid. 34.

³ Ibid. 44.

detainees were mutilated with disgrace”¹. The same author mentions the number of Hay Horom families in Izmit, the communal and personal property confiscated from them in Turkish paper lira, according to this².

Settlement	Number of families	Community property	Personal property
Fundukli (the villages Ashaa, Levend, Kastar)	400	250 000	1 200 000
Town Geyve and Geyve Station	200	180 000	600 000
Ortakoy	1200	800 000	7 200 000
Burhanie	600	300 000	1 800 000
Khudi	800	450 000	4 000 000
Gyup	120	60 000	360 000
Sashli	80	30000	240 000
Total	3400	2 million 70.000 lira	15 million 400.000 lira

SUMMARY: The influx of Armenian refugees from Akn and Yerznka regions of Western Armenia into historical Bithynia dates to the XV century, and is connected with Timur’s destructive invasions. A further wave of migration followed in the late XVI and early XVII centuries, this time driven by the hardships of the Ottoman-Persian wars. Other migrants reached the region of Izmit in the XIX and early

¹ Adamandiadis 1957, 86-87. Cf. Pelagidis 2011, 47-48.

² Adamandiadis 1957, 95, 97.

XX c. The Hay Horom migrants lived in the settlements of Ortagyugh and Khudi and certain other, smaller villages around Izmit. The Hellenized Orthodox Armenians (about 10.000 individuals) were almost completely exterminated in 1920 (after the Armenian Genocide) during the massacres of the Greek population of the Izmit region by Kemalist paramilitary groups. Thus, the Armenian population that had lived in Bithynia for five centuries ceased to exist.

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ
աստվ. դոկտոր
Հունաստան

ԻԶՄԻԹԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԸ

ԱՍՓՈՓՈՒՄ

Հիմնաբառեր. Հայ հոռոմներ, ուղղափառ հայեր, օրթոդոքս հայեր, հայ քաղկեդոնականներ, հայախոս հույներ, Բյուրանիա, Իզմիթ, Արևմտյան Հայաստան, Հայոց ցեղասպանություն, հույների ցեղասպանություն, հայկական գաղթօջախներ:

Արևմտյան Հայաստանի Ակնա և Երզնկայի շրջաններից հայ գաղթականների հոսքը դեպի պատմական Բյուրանիա սկսվել է 15-րդ դարից՝ Լենկթեմուրի ավերիչ արշավանքների հետևանքով: Գաղթի հետագա ալիքները 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. սկզբին, շարունակվել է գաղթը այժմ արդեն թուրք-պարսկական պատերազմների հետևանքով: Հետագայում հայ գաղթականները Իզմիթի շրջանում հաստատվել են 19-20-րդ դ.դ. սկզբներին: Հայ հոռոմ գաղթականները բնակվում էին հիմնականում Օրթազյուղ ու Խուղի բնակավայրերում, ինչպես նաև մի քանի այլ փոքր գյուղերում: Հելլենացված ուղղափառ հայերը

(մոտ 10.000 հոգի) զանգվածաբար բնաջնջվեցին 1920 թ. (Հայոց ցեղասպանության ընթացքում), Իզմիրի շրջանի հույների ջարդերի ժամանակ, որոնք իրականացրին քեմալական զինված խմբավորումները: Այսպիսով, Բյուրանիայի 500-ամյա պատմությունն ունեցող հայկական համայնքը դադարեց գոյություն ունենալ:

REFERENCES

Archival Sources

Athens' Centre for Asia Minor Studies (Κέντρο Μικρασιατικών Σπουδών), Archive of Oral tradition (Αρχείο Προφορικής Παράδοσης), envelops: B-13, B-14, B-15, B-16, B-32, B-34, B37, B-39.

Published Works

Adamandiadis 1957: Β. Αδαμαντιάδης, «Έκθεσις ἐπὶ τῆς εἰς ἀνθρώπινας ὑπάρξεις καὶ εἰς χρέμα ἀπώλειας συνεπείᾳ τῆς ἐκρίζωσης τοῦ ἑλληνισμοῦ τῆς βορειοδυτικῆς Μικρᾶς Ἀσίας» [Report About the Human and Financial Losses Due to Uprooting of Greek Population of Nord-Western Asia Minor], *Μικρασιατικά Χρονικά* 7 (1957), 83-100.

Chasiotis 2015: Ι. Κ. Χασιώτης, *Αδελφὰ ἔθνη ἐν μέσω θυέλλης: Ἀρμένιοι καὶ Ἕλληνες στις μεγάλες κρίσεις του Ανατολικού ζητήματος (1856-1914)* [The Brother Nations in the Storm: the Armenians and the Greeks in the Great Crises of the Oriental Question (1850-1914)], University Studio Press, Θεσσαλονίκη, 2015.

Chatzigeorgiou 1965: Χ. Χατζηγεωργίου, *Τὸ Ὀρτάκιοι Βιθυνίας. Αἱ σφαγαὶ καὶ ξεθεμελίωσις αὐτῶν* [Ortaköy of Bythynia, its Massacres and Demolition], Ἀθήναι, 1965.

Kazaryan 2016: G. Kazaryan, "The Orthodox Armenians (Armenian Horoms) of Akn", *Vardzk*, № 12, 2016, pp. 19-26.

Kazaryan 2019: Գ. Ղազարյան, «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ», *Լևոն Խաչիկյան. Հայրենապալ:*

Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-29 հունիսի 2018 թ.) [The Ethnic Identity of Hay-Horoms], *Levon Khachikian. Centenary. Proceedings of the International Armenological Conference, Dedicated to the 100th Anniverxary of Academician Levon Khachikian's Birth 928-30 June, 2018*), Yerevan, Matenadaran, 2019, 180-204.

Kazaryan 2020: Գ. Ղազարեան, «Բարձր Հայքի Հըղու գիղը յունալէզու հրապարակներու» [“The Village Hoghoos of Higer Armenia in the Greek Publications], *Handes Armesore*, 2020, 357-382.

Kitromilidou 1988: Μ. Κιτρομηλίδου, «Πασχάλης Πασχαλίδης, ο ιεροδιδάσκαλος του Χουδίου. Πληροφορίες για την εκπαιδευτική και πνευματική κίνηση ὀρθοδόξων ἀρμενοφώνων πληθυσμῶν της Βιθυνίας στὰ χρόνια 1903-1909» [Paschalis Paschalidis, the Teacher of Khoudi. Information About Educational and Spiritual Movement of Orthodox Armenian-speaking Populations of Bythinia in 1903-1909], *Μικρασιατικά Χρονικά*, 18 (1988), 241-274.

Kleonimos-Papadopoulos 1867: Μ. Κλεώνυμος, Χ. Παπαδόπουλος, *Βιθυνικά ἢ ἐπίτομος μονογραφία της Βιθυνίας καὶ τῶν πόλεων της* [Bythinika or a Short Monography of Bythinia and Its Cities], Κωνσταντινούπολις, 1867.

Lamtzidis 1956: Κ. Λαμτζίδης, «Χογούζ. Ἐλληνικὸν Ἀρμενόφωνον χωρίον τοῦ Ἐρζιγγιᾶν Πόντου» [Hoguz: an Armenian-speaking Greek Village in Erzingian of Pontus], *Πονπακὴ Ἑστία*, 74-75 (1956), 3578-3581.

Maravelakis 1955: Μ. Μαραβελάκης, Α. Βακαλόπουλος, «Αἱ προσφυγικαὶ ἐγκαταστάσεις ἐν τῇ περιοχῇ Θεσσαλονίκης» [The Settlements of Refugees in Thessaloniki Region]. Ἐταιρεία Μακεδονικῶν Σπουδῶν, Ἴδρυμα Μελετῶν χερσονήσου τοῦ Αἰμοῦ 4, Θεσσαλονίκη, 1955.

Muradyan-Musheghyan 1998: Արմաշի դպրեվանքը, աշխ. Պ. Մուրադեանի և Ա. Մուշեղեանի [The Monastic School of Ardash, P. Muradyan, A. Musheghyan (eds.)], Yerevan, publ. "Gandzasar", 1998.

Natanyan 1871: Առաջին տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ այցելութեամբ Նաթանեան Պօղոս վարդապետի [The First Report of Nikomedia Diocese According by the Visit of Archimandrite Poghos Natanyan], Constantinople, 1871.

Ormanyan 2001: Օրմանեան Մաղաքիս արք., Ազգայաւանում [Ormanyan Maghakia, Archb., The History of Nation], Vol. I-III, Mother See Holy Etchmiadzin, 2001.

Pakhtikos 1892: Γ. Δ. Παχτικός, «Ὀρτάκιοι τῆς Βιθυνίας», *Ἑστία (Ἀθήνα)*, 1892, 6 (Ἰανουάριος-Ἰούνιος) [Ortakoy of Bythinia], *Ἑστία*, 1892, 6 (January-June), 96.

Pakhtikos 1893: Γ. Δ. Παχτικός, *Ὀλυμπιακοὶ Ἀγῶνες ἐν Βιθυνίᾳ* [The Olympic Games in Bythinia], Ἀθήνα, 1893.

Paskhalidis 1981: Γ. Α. Πασχαλίδης, Ἀρμενόφωνοι Ἕλληνες ἐν Χουδίῳ τῆς Μικρασίας (Ἐθνολογικαὶ σημειώσεις), [The Armenian-speaking Greeks in Khudion of Asia Minor (Ethnological Notes), *Ἑβδομάς*, 28 December, 1981, 2-3.

Pelagidis 2011: Σ. Πελαγίδης, «Τὰ δεινοπαθήματα τῶν Ἑλλήνων στὶς περιοχές Νικομήδειας καὶ Νίκαιας (καλοκαίρι τοῦ 1920)» [The Ordeals of the Greeks in Nikomedia and Nicea Regions (Summer of 1920)], *Ἀρχεῖον Πόντου*, vol. 53 (2011), 45-58.

Piperyan-Yeghisheyan 1960: Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին, խմբ. Ա. Պիպերեան և Վ. Նիշեղեան, [The Book of History of Glorified City Atapazar, A. Piperyan, V. Yeghisheyan (eds.)], Paris, 1960.

Thovma Metsopetsi 1999: Թովմա Մեծովեցի, Պատմագրություն,
աշխ. Լ. Խաչիկյանի, [Thovma Metsopetsi, Historiography, by L.
Khachikian], Yerevan, “Magaghat”, 1999.

ՀԱԼԷՊԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԲԺԻՇԿ ԹԱՀԱ ԻՍՀԱԿ ԱԼ-ՔԱՅԱԼԻԻ
«ՀԱԼԷՊԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, ԲԺԻՇԿՆԵՐՈՒ,
ԱՍԱՄՆԱԲՈՅԺՆԵՐՈՒ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» -Ը ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հիմնաբառեր. Գաղթավայր, Հալեպ, սփիւտքի համայնք, յուշագրութիւններ, բժշկական համալսարան, Կ. Պոլիս, Այնթապ, Ատանա, բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալի, «Բժիշկները Հալեպի մէջ»

Ներածութիւն

Հայկական գաղթավայրերու հին եւ միջնադարեան, ինչպէս նաեւ հայ Սփիւտքի համայնքներու պատմութեան ուսումնասիրութեան համար հայ եւ Օտարազգի պատմագիրներու, աշխարհագիրներու եւ հայ մատենագիրներու աշխատութիւններու կողքին աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն ունին նաեւ տուեալ երկրի մէջ հաստատուած օտարերկրեայ պաշտօնեաներու յուշագրութիւնները, ուղեւորութեան գրառումներն ու տեղաբնիկ բժիշկներու, գիտնականներու, դիւանագէտներու, մտաւորականներու եւ այլոց վկայութիւններն ու յուշագրութիւնները:

Օտարազգի, յատկապէս արաբ պատմիչներու, աշխարհագիրներու եւ հայ մատենագիրներու աշխատութիւններուն մէջ առկայ մեծածաւալ նիւթերը լաւագոյն ապացոյցն են երկու ժողովուրդներու պատմամշակութային շփումներու աշխուժացման: Գաղտնիք չէ, որ արաբները իրենց որդեգրած նուաճողական քաղաքականութեան իրականացման ճանապարհին, ծանօթանալով

տուեալ ժողովուրդներու մշակութային առաձնայատկութիւններուն, փորձած են ե՛ւ պահպանել իրենց ենթակայ ժողովուրդներու մշակոյթները, ե՛ւ կատարելագործել ու զարգացնել զանոնք՝ գիտութեան ոլորտէն ներս բանալով նոր հորիզոններ:

Այս առումով ԺԹ. դարու երկրորդ կիսուն եւ Ի. դարու առաջին տասնամեակներու Հալէպի հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութեան համար շատ արժեքաւոր աղբիւր է բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալիի աշխատութիւնը՝ նուիրուած Հալէպի բժշկութեան պատմութեան, որ անուանուած է «Հալէպի բժշկութեան, բժիշկներու, ատամնաբոյժներու եւ դեղագործներու պատմութիւն»-ը¹: Գիրքի յետքննութիւնը կատարած է բժշկ. Սաստ Թահա Ալ-Քայալին: Երկու ժողովուրդներու վաղեմի պատմութեան փոխյարաբերութիւններու հիմունքներով լոյս տեսած բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալին գործը հանրագիտարանային բնոյթ ունի:

Արդ, գիտութիւնն է կամրջողը մշակոյթներու եւ գիտութիւններու փոխկապը քաղաքակրթութիւններու եւ ժողովուրդներու միջեւ: Եւ այս զաղափարէն ծնունդ առած է սուրիացի բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալիի աշխատութիւնը: Ծնունդով հալէպցի (ծնած է 1917 թ.-ին Հալէպ, մահացած է 1997 թուականին), մասնագիտութեամբ բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալին բարձրագոյն կրթութիւնը ստացած է Հալէպի ֆրանսական Լայիք վարժարանէն, որմէ ետք ուսումնառութիւնը շարունակած է Դամասկոսի արաբական բժշկական ինստիտուտի (հիմնարկի) մէջ եւ 1948 թ.-ին՝ ասարտած բժշկական համալսարանը²:

¹ الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيانة، الجزء الأول، الطبعة الأولى، حلب، 1999 م.

Ալուսթագ ալթապիպ Թահա Իսհակ ալ-Քայալի, Թարիխ ալթըպ ուալ աթիպպա ֆի Հալապ ուա աթիպա ալասնան ուալսայատիլա, ալճըըը ալաուալ, ալթապասա ալուլա, Հալէպ, 1999:

² Բժիշկ. Թահա Իսհակ ալ-Քայալին աշխատած է Հալէպի Ալ-Ղուրապա հիւանդանոցը եւ նպաստած է Անգգայացման բաժանմունքի

Բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալին աշխատութեան համար առաւելապէս օգտուած է նաեւ Խորհրդային Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի անդամ եւ Բժշկութեան պատմութեան միջազգային ակադեմիայի իսկական անդամ՝ փրոֆէսոր Լեւոն Յովհաննիսեանի «Հայաստանի բժշկութեան պատմութիւնը (հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը)» աշխատութենէն¹, որմէ հատուած մը արաբերէնի թարգմանած էր հալէպահայ ակնաբոյժ բժշկ. Ռոպէր Ճէպէճեանը²:

Բժշկ. Թահա Իսհակ Ալ-Քայալիի գիրքը եզակի է իր բովանդակութեամբ: Թէեւ աշխատութիւնը Հալէպի բժշկութեան պատմութեան մասին է, բայց հեղինակը «Բժշկութեան պատմութիւնը Սուրիոյ մէջ» խորագիրով համառօտակի անդրադարձ կը կատարէ Սուրիոյ աշխարհագրական դիրքին, տէրութիւններու նուաճողական քաղաքականութեան՝ շեշտը դնելով առաւելաբար քաղաքակրթութեան եւ մշակոյթներու հատման կեդրոն ըլլալու հանգամանքին:

Դժբախտաբար, բժշկ. Թահա Իսհակ Ալ-Քայալիին աշխատութիւնը լոյս կը տեսնէ յետմահու: Մահէն տարի մը անց, 1998թ., իր որդին՝ բժշկ. Սաատ Թահա Ալ-Քայալի կը ձեռնարկէ ի մի բերել, ստուգել, վերաքննել հօրը կատարած հետազօտութեան բովանդակութիւնը՝ նուիրուած Հալէպ քաղաքի բժշկութեան եւ բժիշկներու պատմութեան ուսումնասիրութեան, որ երկար տարիներու անխոնջ աշխատանքի արդիւնք էր: Գիրքի Ա.

արդիականացմանն ու սարքաւորումներու ձեռքբերման: Աւելի մանրամասն տե՛ս

الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب واطباء الأسنان والصيادلة، مصدر نفسه، ص 7-11.

¹ Հովհաննիսյան Լ., Հայաստանի բժշկութեան պատմությունը (հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը), Երևան, 1958:

² Բժիշկ. Ռոպէր Ճէպէճեան Լ. Յովհաննիսեանի երկէն «Հայ Բժշկութեան Պատմութիւնը Եւ Հայ-Արաբ Բժշկական Դպրոցներու Կապերը» վերտառութեամբ թարգմանած է արաբերէնի, որ լոյս տեսած է Պէրոյթ, 1967 թ.:

հատորը կը յանձնուի տպագրութեան եւ լոյս կը տեսնէ 1999 թուականին:

Բժշկ. Թահա Իսհակ Ալ-Քայալին հետազոտական գրառումներուն մէջ առանձնակի տեղ յատկացուցած է Հալէպ ծնած, մահացած, այդտեղ աշխատած եւ ժամանակաւոր կեցութիւն հաստատած հայ բժիշկներու ունեցած դերի եւ անոնց ներմուծած նորարարութեան՝ Հալէպի բժշկութեան պատմութեան մէջ, յատկապէս ԺԹ. դարէն մինչեւ 1940-ական թթ.:

Աշխատութեան մէջ կը ներկայացուին Հալէպ քաղաքի անուան հետ կապուած տարբեր մեկնաբանութիւններ՝ զանոնք քաղելով տարբեր աղբիւրներէ¹, ապա՝ Հալէպ քաղաքի պատմականը հնագոյն ժամանակաշրջաններէ մինչեւ 20-րդ դարու ֆրանսական իշխանութեան ժամանակահատուածը²:

«Հալէպի բժշկութեան, բժիշկներու, ատամնաբոյժներու եւ դեղագործներու պատմութիւն»-ը աշխատութիւնը եւ հալէպահայ բժիշկները

Սուրիոյ, յատկապէս Հալէպի եւ հալէպահայութեան քաղաքական, կրթամշակութային եւ մասամբ նորագոյն շրջանի պատմութեան ուսումնասիրութեան նուիրուած բազմապիսի աշխատութիւններ կատարուած են: Այնտեղ շատ քիչ անդրադարձ կայ (երբեմն ալ չկան) բժշկութեան պատմութեանը: Յաճախ հետազոտողներու կողմէ սակաւ ուսումնասիրուած են այնպիսի կարեւոր բնագաւառներ, ինչպիսիք են Հայերու կողմէ տուեալ զաղթավայր կամ համայնք ներթափանցած արհեստները, արտ-

¹ الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيادلة، الجزء الأول، الطبعة الأولى، 1999 م، صفحة 39.

² الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيادلة، مصدر نفسه، ص 39-84.

ւեստները եւ գիտական ոլորտը, որոնք կը խօսին հայ ազգաբնակչութեան բարոյահոգեբանական վիճակի, բարքերուն եւ արանդոյթներու մասին: Բարեբախտաբար, վերոյիշեալներու պատաստիկներուն մենք պարբերաբար կը հանդիպինք օտար ճանապարհորդներու, դիւանագիտական պաշտօն զբաղեցնող անձնաւորութեանց գրառումներուն կամ տեղի մտաւորականներու, հետազօտութիւններու կամ գեղարուեստական երկերու հեղինակներու գործերուն մէջ:

ԺԹ. դարու վերջաւորութեան Օսմանեան կայսրութեան վարած անողոք քաղաքականութեան հետեւանքներէն էին Համիտեան կոտորածները, որոնց հետեւանքով տասնեակ հազարաւոր գոհերու կողքին հայ ժողովուրդի մէկ հատուածը, սահմանակից Սուրիա կամ Հալէպ փախուստի դիմելով, կայք հաստատեց պատմական Հալէպ քաղաքի մէջ: Անոնք իրենց հետ Հալէպ բերին արհեստներն ու բարձրագոյն համալսարաններէն ստացած գիտութիւնը. բժշկական ոլորտէն ներս մեծ եղաւ անոնց ներդրումը եւս:

«Հալէպի բժշկութեան, բժիշկներու, ատամնաբոյժներու եւ դեղագործներու պատմութիւն» գիրքի հեղինակը խօսելով հայ-արաբական դարաւոր փոխյարաբերութեան եւ բժշկութեան պատմութեան մասին, առանձին՝ «Բժիշկները Հալէպի մէջ» վերնագիրով, յաջորդաբար կը ներկայացնէ Հալէպի բժիշկներու (օտարագրի եւ արաբ քրիստոնեայ) անուանացանկը Ժ.դարէն սկսեալ, որոնց շարքին՝ յիշատակութիւն հալէպահայ բժիշկներու մասին:

«Յառաջաբան» մասով հեղինակը կը ներկայացնէ գիրքի ուրուագիծը: «Բժիշկները Հալէպի մէջ» բաժինով ան անդրադարձ կը կատարէ Հալէպ ծնած, ապրած, աշխատած, մահացած եւ կամ անցորդ բժիշկներու անունները: Հեղինակի սկզբնաղբիւրները եղած են Մոտուաֆակ Ալ-Տին Ապի Ապպաս Ահմատ իպըն Ալ-Կասեմ իպըն Խալիֆա հանրածանօթ իպն ապի Ասիպասի եւ

Ահմատ Իսա պեյի աշխատութիւնները¹: Աշխատութեան 91-151 էջերու վրայ համառօտ ծանօթագրական տուեալով կը խօսի իւրաքանչիւր դարաշրջանի Հալէպի բժշկութեան պատմութեան եւ բժիշկներու մասին: Յիշատակութիւն կայ Ժթ. դարու բժիշկ Յովհաննէս վարդապետ հայի² վերաբերեալ: Ան ծնած է 1827 թ.-ին Սայտա (Լիբանան): Ան հայազգի գիտնական, աստուածաբան, մշակութային գործիչ էր, որարաբական միջավայրին ծանօթ էր Եռուհաննա Վարդապետ, երոպականին՝ ճոն Վարդապետ անուններով: Ուսանած է Պէրուքի մերձակայ Ապէյի գիւղի միսիոներական քոլէճը. աստուածաբանական բարձրագոյն կրթութիւնը ստացած է Սքոթլանտ (Շոտլանդիա), իսկ բժշկականը՝ Էտինպուրկի եւ Նիւ Եորքի մէջ: Եղած է արաբական լուսաւորական կազմակերպութեան գիտութիւններու եւ արուեստներու տարածման սուրիական ընկերութեան (1847-1857), Պէրուքի սուրիական գիտական ընկերութեան (1867-1873) եւ Գիտութիւններու արեւելեան ակադեմիայի (1882-1885) հիմնադիրներէն ու նախագահի տեղակալ: Գրած է մէկ տասնեակէ աւելի բժշկական դասագիրքեր (արաբերէն), նաեւ «Սուրիոյ կրօններու վերաբերեալ հետազօտութիւններ» (անգլերէն, 1860) աշխատութիւնը: 1862 թ.-ին կը փոխադրուի Հալէպ, կ'աշխատի որպէս բժիշկ միաժամանակ բժշկութիւն կ'ուսուցանէ շուրջ մէկ տասնեակ բժշկագիտականի ուսանողներուն³:

Բժշկ. Թահա Իսհակ աշխատութեան մէջ հայ-արաբ բժշկութեան պատմութեան անդրադարձ կատարելէ ետք եւ

¹ الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيدلة، مصدر نفسه، ص 90.

² الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيدلة، مصدر نفسه، ص 86-89.

³ الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيدلة، مصدر نفسه، ص 145-146.

յենելով բժիշկներու անուանացուցակին՝ կը նշէ, որ ժԹ. դարու կէսէն մինչեւ 1940 թուական Հալէպի մէջ գործող բժիշկներու ընդհանուր թիւը եղած է 260, որոնցմէ 80-ը՝ հայեր: Հեղինակը համակարգուած ձեւով կը ներկայացնէ հայ բժիշկներու անունները, որոնք նպաստած են Հալէպի բժշկագիտութեան ոլորտին:

Բժշկ. Թահա Քայալիի կողմէ յիշատակուած Հալէպի մէջ գործող՝

ա- 13 ակնաբոյժներէն¹ 5 հայեր եղած են. բժշկ.-ներ՝ Յարութին Սարգիսեան² (Հալէպի առաջին ակնաբոյժը), Մելքոն Ճիրէճեան³, Լորտ Չամիչեան⁴, Սամուէլ Մկրտիչեան⁵ եւ բժշկ. դոկտոր Ռոպէր Ճէպէճեան⁶:

¹ Նոյնը տեղը, էջ 154:

² Բժշկ. Յարութին Սարգիսեան, ծնած է 1863 թ.-ին: Երջանաւարտ Շիքակոյի բժշկական համալսարանէն՝ 1891 թ.-ին: Նոյն տեղը, էջ 182:

³ Բժշկ. Մելքոն Ճիրէճեան. ծնած է Տիարպէքիր 1880 թ.-ին: Երջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1906 թ.-ին: Աշխատած է Հալէպ: Նոյն տեղը, էջ 184:

⁴ Բժշկ. Լորտ Չամիչեան. ծնած է Այնթապ 1883 թ.-ին: Երջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1910 թ.-ին: Աշխատած է Հալէպ: Նոյն տեղը, էջ 184:

⁵ Բժշկ. Սամուէլ Մկրտիչեան. ծնած է Քեսապ 1881(2) թ.-ին: Երջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1910 թ.-ին: 1919 թ.-ին կը հաստատուի Հալէպ եւ 1925 թ.-ին մաս կը կազմէ Հայ Ազգային Միութեան: Նոյն տեղը, էջ 184: Տե՛ս նաեւ **Թորանեան Թ.**, Հայ բժիշկներ եւ բուժաշխատողներ Սուրիոյ մէջ, Հալէպ, 2012, էջ 12:

⁶ Բժշկ. Ռոպէր Ճէպէճեան. ծնած է Այնթապ 1911 թ.-ին. շրջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1934 թ.-ին: Աշխատած է Հալէպ: Աւելի մանրամասն տե՛ս

الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيدالة، مصدر نفسه، ص 184.

բ- Մաշկային¹ վեց բժիշկներէն 2-ը հայ՝ բժշկ.-ներ Հասան Դանիէլեան² եւ Միհրան Գուլաքճեան³:

գ-Տարբալուծարանային⁴ 12-էն 3-ը հայ՝ ամենահինը՝ բժշկ.-ներ Բարսեղ Մերտեան⁵, Գեորգ Արսլանեան⁶, Մարտիրոս Նաճարեան⁷:

դ-Մանկաբարձներու⁸ 6-էն երեքը հայ՝ բժշկ.ներ Զարեհ Պօղոս Արսլանեան⁹ (ամենահինը, Իսկէնտը Օստուր Քասիւ¹, Մկրտիչ Նշան²:

¹ الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب واطباء الأسنان والصيدالة، مصدر نفسه، ص 145-146

² Բժշկ. Հասան Դանիէլեան. ծնած է Կ. Պոլիս 1861 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ բժշկական համալսարանէն 1892 թ.-ին: Նոյն տեղը, էջ 198:

³ Բժշկ. Միհրան Գուլաքճեան, ծնած է Մարաշ 1886 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ զինուորական բժշկական համալսարանէն 1915 թ.-ին: Նոյն տեղը, էջ 198:

⁴ Նոյն տեղը, էջ 154:

⁵ Բժշկ. Բարսեղ Մերտեան, ծնած է Տերիկ 1876 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ բժշկական զինուորական համալսարանէն 1891 թ.-ին: Նոյն տեղը, էջ 200:

⁶ Բժշկ. Գեորգ Արսլանեան. ծնած է Այնթապ 1875 թ.-ին. շրջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1902 թ.-ին: Այնթապի մէջ հիմնած է Կրթասիրաց եւ եկեղեցասիրաց միութիւնները: 1905 թ.-ին կը հաստատուի Հալէպ: Ապա Պոլսոյ, Կովկասի եւ Ռումանիոյ ճակատներուն վրայ որպէս զինուորական բժիշկ կը ծառայէ, իսկ զինադադարէն ետք կը հաստատուի Հալէպ, ուր ազգային պաշտօններ կը վարէ: Նոյն տեղը, էջ 200. տե՛ս նաեւ Թորանեան Թ., նշ. աշխ., էջ 12:

⁷ Մարտիրոս Նաճարեան. ծնած է Հալէպ 1888 թ.-ին. շրջանաւարտ Դամասկոսի բժշկագիտական համալսարանէն: Նոյն տեղը, էջ 154:

⁸ Նոյն տեղը, էջ 154:

⁹ Բժշկ. Զարեհ Պօղոս Արսլանեան. ծնած է Խարբերդ 1878 թ.-ին: 1899 թ.-ին շրջանաւարտ Պոլսոյ Բժշկական համալսարանէն. աւարտած է Պէրուքի Ամերիկեան համալսարանը: 1905 թ.-ին հաստատուած է Հալէպ: 1912-1913 թթ. անցած է Երոպա՝ մասնագիտանալու. նոյն տեղը, էջ 207:

ե- Անշուշտ, հայ վիրաբույժները³ եւս կարելու էր ունեցած են շնորհիւ բժշկ. Ասատուր Ալթունեանի⁴ առաջնորդութեան. վիրաբույժներու ընդհանուր թիւը երեսուներկու է, իսկ հայ բժիշկներու թիւը՝ ինը. փրոֆ. Ասատուր Ալթունեան, բժիշկներ՝ Արթին Տէր Պօղոսեան⁵, Կարապետ Պապիկեան⁶, Տաճատ Պաղտոյեան⁷ Յարութիւն Տէր Ղազարեան⁸, Յակոբ Ճուրեան¹, Էոնեստ Ալթունեան², Մովսէս Քիւփէլեան³, Օհաննէս Ռազաշ:

¹ Բժշկ. Իսկէնտէր Ծատուր Քասիս, ծնած է Հալէպ 1904 թ.-ին, շրջանաւարտ Պէրուրի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1935 թ.-ին: Ուսումնառութեան ասարտէն ետք կը վերադառնայ Հալէպ եւ Թիլէլ փողոցի իր սեփական քիմիքէն ներս կը շարունակէ իր աշխատանքը: Ժամանակ մը աշխատած է Հալէպի Նոր Գիւղի Կիւլպէնկեան Մայրանոցէն ներս, միաժամանակ կառուցելով իր անձնական ծննդատուն-հիւանդանոցը Ազիզիէի մէջ. նոյն տեղը, էջ 207:

² Բժշկ. Մկրտիչ Նշան, ծնած է Եոզղաթ 1880 թ.-ին. շրջանաւարտ Պէրուրի Ֆրանսական բժշկական համալսարանէն (թուականը անյայտ), էջ 208:

³ Նոյն տեղը, էջ 154:

⁴ Ծնած է Սվազ 1857 թ.-ին: Մանրամասն տե՛ս

الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي، تاريخ الطب والاطباء في حلب وأطباء الأسنان والصيادلة، مصدر نفسه، ص 223-226

⁵ Բժշկ. Արթին (Յարութիւն) Տէր Պօղոսեան, ծնած է Այնթապ 1878 թ.-ին. շրջանաւարտ Պէրուրի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1892 թ.-ին: Աշխատած է Հալէպ: Նոյն տեղը, էջ 226:

⁶ Բժշկ. Կարապետ Պապիկեան. ծնած է Այնթապ, 1878 թ.-ին. շրջանաւարտ Պէրուրի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1899 թ.-ին, 1908 թ.-ին Լոնտոնի մէջ կը մասնագիտանայ: Կը վերադառնայ Հալէպ ու կ'աշխատի որպէս վիրաբույժ: Նոյն տեղը, էջ 227: Տե՛ս նաեւ Թորանեան Թ., նշ. աշխ., էջ 11:

⁷ Բժշկ. Տաճատ Պաղտոյեան. ծնած է Այնթապ 1879 թ.-ին. շրջանաւարտ Պէրուրի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1903 թ.-ին: Աշխատած է որպէս վիրաբույժ Հալէպի մէջ: Նոյն տեղը, էջ 227:

⁸ Բժշկ. Յարութիւն Տէր Ղազարեան, ծնած է Մարաշ 1887 թ.-ին. շրջանաւարտ Պէրուրի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1906 թ.-ին: Նոյն տեղը, էջ 227:

Աշխատութեան մէջ յիշատակութեան կայ նաեւ Հալէպի ատամնաբոյժներու վերաբերեալ: Հեղինակը կը նշէ, որ մինչեւ 1921 թ.-ին Հալէպի ատամնաբոյժներու թիւը 27-ն էր, որոնցմէ 18-ը հայեր եղած են: Աղիւսակով կը նշէ այն ատամնաբոյժներու անունները (անուն, ազգանուն, ծննդավայր, ծննդեան տարեթիւ, համալսարանն ու շրջանաւարտութեան թուականը), որոնք աշխատած են Հալէպի մէջ 1887 թ.-էն սկսեալ⁵: Ստորեւ կը ներկայացնէ 18 հայ ատամնաբոյժները. Միհրան Իշխանեան⁶, Գեորգ Յակոբճեան⁷, Նիշակ(ն) Պշաբճեան⁸, Վաղարշ Պակարեան¹, Գասպար Պետրոսեան²,

¹ Բժշկ. Յակոբ Ճուրեան, ծնած է Սվազ 1883 թ.-ին. շրջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1911 թ.-ին: Նոյն տեղը, էջ 227:

² Բժշկ. Էոնեստ Ալթունեան, ծնած է Լոնտոն 1889 թ.-ին. շրջանաւարտ Անգլիոյ Գամպրիճ համալսարանէն 1915 թ.-ին: Աշխատած է հօր՝ Ասատուր Ալթունեանի հետ իրեն սեփական հիւանդանոցէն ներս: Նոյն տեղը, էջ 227:

³ Բժշկ. Մովսէս Քիւփէլեան, ծնած է Այնթապ 1893 թ.-ին. շրջանաւարտ շրջանաւարտ Պէրուքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1916 թ.-ին: Նոյն տեղը, էջ 228:

⁴ Բժշկ. Օհաննէս Ռաքաշ: ծնած է Եոզղատ 1893 թ.-ին. շրջանաւարտ Միշիական բժշկական համալսարանէն (Ամերիկայի Միացեալ Նահանգներ) 1917 թ.-ին: Նոյն տեղը, էջ 228:

⁵ Նոյն տեղը, էջ 319, 321-322:

⁶ Բժշկ. Միհրան Իշխանեան, ծնած 1889 թ.-ին Այնթապ: Վկայուած է Պէրուքի Ամերիկեան Համալսարանէն 1916 թ.-ին: 1919-1921 իր սեփական դարմանատունը ունեցած է Հալէպի մէջ, ապա վերջնականապէս հաստատուած է Գահիրէ: Նոյն տեղը, էջ 321: Տե՛ս նաեւ **Թորանեան Թ.**, նշ. աշխ., էջ 136:

⁷ Բժշկ. Գեորգ Յակոբճեան, ծնած է Քիլիս 1875 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1904 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁸ Բժշկ. Նիշակ(ն) Պշաբճեան, ծնած է Ատանա 1882 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1907 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321. այլ տեղեկութիւններ չունինք:

Յակոբ Թաթարեան³, (Ճորճ) Ներսէս Չամիչեան⁴, Հայկ Ճիրէճեան⁵,
Գեորգ Խրաճեան⁶, Ստեփան Ռուպեան⁷, Գրիգոր Սարգիսեան⁸,
Յակոբ Շիրոյեան⁹, Հաննա Թոսունեան¹⁰, Յովհաննէս Թաշճեան¹¹,
Վարդան Գեորգեան¹², Աւետիս Քէլէշեան¹³, Սալիմ Սինասեան¹,
Լեւոն Նիկողոսեան²:

¹ Բժշկ. Վաղարշ Պակարեան, ծնած է Թեքիր Տաղ (Կիլիկիա), շրջանաւարտ Նիւ Եորքի Ամերիկեան բժշկական համալսարանէն 1910 թ.-ին:

² Բժշկ. Գասպար Պետրոսեան. ծնած է Կեսարիա 1887 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1910 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

³ Բժշկ. Յակոբ Թաթարեան, ծնած է 1900 թ.-ին Հալէպ: Երկու տարի ուսանած է Դամասկոսի Բժշկական Համալսարանին, տարի մը Պոլսոյ Բժ. Համալսարանին մէջ, ապա աւարտած է Փարիզի Բժշկական Համալսարանի ատամնաբուժական բաժինը եւ հաստատուած է Հալէպ: Նոյն տեղը, էջ 321: Տե՛ս նաեւ Թորանեան Թ., նշ. աշխ., էջ 134:

⁴ Բժշկ. (Ճորճ) Ներսէս Չամիչեան. ծնած է Այնթապ 1874 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1903 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁵ Բժշկ. Հայկ Ճիրէճեան. ծնած է Հալէպ 886 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1906 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁶ Բժշկ. Գեորգ Խրաճեան. ծնած է Հալէպ 1882 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1907 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁷ Բժշկ. Ստեփան Ռուպեան. ծնած է Սարաշ 1873 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1909 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁸ Բժշկ. Գրիգոր Սարգիսեան. ծնած է Քիլիս 1867 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1902 թ.-ին: Նոյն տեղը, էջ 321:

⁹ Բժշկ. Յակոբ Շիրոյեան. ծնած է Հալէպ 1886 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1906 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

¹⁰ Բժշկ. Հաննա Թոսունեան. ծնած է Ուրֆա 1858 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1909 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

¹¹ Բժշկ. Յովհաննէս Թաշճեան. ծնած է Հ. 887 թ.-ին. շրջանաւարտ Հաշմեան բժշկական համալսարանէն Յորդանան, 1920 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

¹² Բժշկ. Վարդան Գեորգեան. ծնած է Ատանա 1873 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1902 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

¹³ Բժշկ. Աւետիս Քէլէշեան, ծնած է Հալէպ 1902 թ.-ին: Ան իր նախնական ուսումը Հալէպի Հայկազեան Վարժարանէն կը ստանայ ու ապա

Աշխատութեան մէջ անդրադարձ կայ հալէպահայ դեղագործներու վերաբերեալ: Հեղինակին համաձայն մինչեւ 1920 թ. ութունհինգ դեղագործներէն քսանհինգը հայեր եղած են³, որոնք բացի Հալէպէն գործած են նաեւ Ազէզ եւ այլ շրջաններ⁴: Աշխատութեան մէջ յիշատակուած են ոչ միայն դեղագործի անձնական տուեալները, այլ նաեւ գործող դեղարանի անունը:

1927 թ.-ին Հալէպի մէջ գործող բժիշկները կը փորձեն հիմնել Հալէպի բժիշկներու միութիւն մը: Ան կ'ունենայ իր ծրագիր-կանոնագիրը, որով տարեկան դրութեամբ միութիւնը իրաւասու էր ընտրել նոր վարչական կազմ: 1928 թ.-էն սկսեալ միութեան մէջ պաշտօններ կը ստանձնեն նաեւ հայ բժիշկներ⁵:

Եւ վերջապէս, բժիշկ Թահա Իսհակ եւ իր որդին՝ բժիշկ Սաստ Թահա, դրուատանքով կը յիշատակեն հայերու կողմէ Հալէպի մէջ գործող հիւանդանոցներուն եւ հիմնադիրներուն անունները, որոնք «ակադեմական յատկութիւններով» նպաստած են մարդկային հոգիներ փրկելու⁶:

Գերմանական Վարժարան կը յաճախէ: Աւելի ուշ 1923-26 ուսումնական տարեշրջաններուն Դամասկոսի նորաբաց բժշկական ֆաքիւլթէի ուսանողներէն էր, որուն առաջին շրջանաւարտներէն մէկը կ'ըլլայ: Ան տարի մը Համայի մէջ կ'աշխատի, ապա կը հաստատուի Հալէպ, իր դարմանատունը հիմնելով Խանտաք պողոտային վրայ: Տե՛ս Թորանեան Թ., նշ. աշխ., էջ 140:

¹ Բժշկ. Սալիմ Մինասեան. ծնած է Այնթապ 1882 թ.-ին. շրջանաւարտ Կ. Պոլսոյ Բժշկական համալսարանէն, 1909 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

² Բժշկ. Լեւոն Նիկողոսեան. ծնած է Ատանա 1895 թ.-ին. շրջանաւարտ Ֆրանսական Բժշկական համալսարանէն՝ Փարիզ, 1921 թ.-ին: Նոյն տեղը, էջ 322:

³ Նոյն տեղը, էջ 155:

⁴ Տե՛ս Նոյն տեղը, էջ 342-345:

⁵ Նոյն տեղը, էջ 239-241:

⁶ Նոյն տեղը, էջ 155, 258-260:

Եզրակացություն.

Բժիշկ Թահա Իսհակ Ալ-Քայալիի գիրքը պատմա-հետազոտական աշխատություն է՝ նուիրումը բժշկության պատմության: Հեղինակը ե՛ր համապարփակ ու ճշգրիտ պատմական տեղեկություններ կը ներկայացնէ, ե՛ւ միւս կողմէ հիւանդանոցներու, հայ եւ արաբ բժիշկներու, մասնագիտություններու, դեղագործներու, ատամնաբոյժներու, մանկաբարձներու, թլփատողներու եւ ժողովրդական բժշկութեան հետ կապում մանրամասնություններ, կը փոխանցէ ընթերցողին, որոնք լրացում են անուններով, տարեթիւերով եւ զարգացումներով: Գիրքին մէջ առանձին անդրադարձ կայ հայոց եւ այլ ժողովուրդներու բժշկութեան պատմութեան վերաբերեալ: Ան հարուստ գիտելիքներ ունի իր դարաշրջանի մշակոյթներու, գրականութեան եւ պատմութեան, յատկապէս հոգեբանութեան, բժշկագիտութեան հետ առնչուող գիտություններու մասին:

Ուստի, ան կարելոր սկզբնաղբիւր է Հալէպի եւ հալէպահայ բժշկութեան պատմութեան ուսումնասիրութեան համար:

ANI FISHENKJIAN
Ph.D. in History
Armenia

THE EFFECTIVE OF ARMENIAN DOCTORS IN ALEPPO
WRITTEN BY Dr.TAHA ISHAQ AL-KAYYALI
THE HISTORY OF MEDICINE, DOCTORS, DENTISTS
AND PHARMACISTS IN ALEPPO

SUMMARY

Keywords: Settlement, Aleppo, diaspora community, memoirs, medical university, Constantinople, MD Taha Ishaq Al-Kayali, "Doctors in Aleppo".

Dr. Taha Ishaq Al-Kayali's book is a unique historical-research work dedicated to the history of medicine. In the work, the author makes a separate reference to the history of medicine of Armenians and other peoples, and also comprehensively presents information related to the centuries-old history of Armenian-Arab medicine. In his research notes, the author devotes a special place to the role of Armenian doctors who were born and died in Aleppo, who worked and settled there temporarily, and the innovation they introduced in the history of medicine in Aleppo, especially from 19th century to 1940. According to the author's data, 80 of the 260 doctors who worked in Aleppo during the above-mentioned period (from the middle of the (19th century to 1940) were Armenians. systematically presents the names of Armenian doctors who contributed to the field of medicine in Aleppo.

Therefore, the above book of Dr. Taha Ishaq Al-Kayali is an important source for the research of the history of Aleppo Armenian Doctors and medicine.

АНИ ФИШЕНКДЖЯН

к.и.н.

Армения

**ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ ВРАЧЕЙ АЛЕППО ПО КНИГЕ
ДОКТОРА ТАХА ИСХАК АЛЬ-КАЙЯЛИ "ИСТОРИЯ
МЕДИЦИНЫ, ВРАЧЕЙ, ДАНТИСТОВ И ФАРМАЦЕВТОВ
АЛЕППО".**

РЕЗЮМЕ

..

Ключевые слова - поселение, Алеппо, диаспора, воспоминания, Медицинский университет, Константинополь, доктор Таха Исхак аль-Кайяли, «Врачи в Алеппо».

Книга доктора Таха Исхака аль-Кайяли представляет собой уникальное историческое исследование, посвященное истории медицины. В работе автор отдельно указывает историю медицины армян и других народов, а также комплексно излагает сведения, относящиеся к многовековой истории арабо-армянской медицины. В своих исследовательских заметках автор особое место уделяет роли армянских врачей, родившихся и умерших в Алеппо, работавших и временно поселившихся там, и нововведениям, внесенным ими в историю медицины Алеппо, особенно начиная с XIX века по 1940 г. По данным автора, из 260

врачей, работавших в Алеппо в указанный период 80 были армянами. В книге систематически представлены имена армянских врачей, внесших свой вклад в развитие медицины в Алеппо.

Таким образом, приведенная выше книга доктора Таха Исхака аль-Кайяли является важным источником в исследованиях истории армянских врачей и медицины в Алеппо.

**ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ**

Հիմնաբառեր. իրանական պաշտոնական դիրքորոշում, կրոնական փոքրամասնություն, հայ համայնք, իրավական կարգավիճակ, արյան գին՝ դիե, արյան վրեժ՝ դեսաս:

Հայ համայնքի իրավական կարգավիճակի հարցում իրանական պաշտոնական դիրքորոշումը հասկանալու համար անհրաժեշտ է նախ ներկայացնել իրանահայ համայնքի՝ որպես կրոնական փոքրամասնության, ձևակերպման հարցը:

Դեռևս 1980-ական թվականներին իրանահայ ազգային-հասարակական գործիչ Հրայր Խալաթյանը (1929-1988)¹ Բանիմացների ժողովի նիստում Հիմնական օրենքի 13-րդ հոդվածը քննարկելու ընթացքում, բողոքելով «կրոնական փոքրամասնություն» արտահայտության գործածման դեմ, ընդդիմացել է ասորի և քաղդեացիների պատգամավոր դոկտոր Սարգոն Բեյթ Ուշանային, քանի որ նա հակառակ նախապես միմյանց միջև ձեռք բեր-

¹ Մեր Հրայր Խալաթեանը, <https://ourhamaynk.wordpress.com/2008/07/10/hrair-khalatian-1/> դիտվել է 18.02.2021: 1979 թվականին «Ալիք» օրաթերթի խմբագիր, հրապարակախոս Խալաթյանը ընտրվել է իրանահայության պատգամավոր Իրանի Բանիմացների առաջին ժողովում, որը պետք է քննարկեր ու հաստատեր Իսլամական Հանրապետության Հիմնական օրենքը: Հ. Խալաթյանն ընտրվել է նաև Իսլամական Խորհրդարանի առաջին նստաշրջանի Թեհրանի և Հյուսիսային իրանահայության պատգամավոր (1980-1984 թթ.):

ված պայմանավորվածության «հասարակության» փոխարեն «փոքրամասնություն» բառն էր գործածել: Այդպիսով Հ. Խալաթյանը փորձում էր իրանահայությանը գերծ պահել քաղաքական-կրոնական որակումներից ու հնարավոր թյուրըմբռնումներից: Մինչդեռ, ըստ նրա, հասարակություն բառը ներառում է հասարակական, ազգային, կրոնական, մշակութային և պատմական յուրահատուկ մի համակարգի գոյություն¹: Ցավոք, այդ բառի փոխարեն ներմուծվեց «կրոնական փոքրամասնություն» ձևակերպումը՝ հարցը կարծես մի տեսակ նեղացնելով և տանելով դեպի կրոնական հարթություն: Ահա թե ինչու, սույն հոդվածում կիրառել ենք պաշտոնապես ընդունված ձևակերպումը:

2000 թ. օգոստոսին Իրանի Իսլամական խորհրդարանի կրոնական փոքրամասնությունների 5 պատգամավոր հանդիպել է նախագահ Մ. Խաթամիի հետ՝ իսլամադավանների և ոչ իսլամադավանների արյան գինը՝ դիէն, հավասարեցնելու հարցով: Այդ հանդիպումից 1,5 տարի անց՝ 2002 թ. փետրվարի 25-ին, դատական ուժի բարձրաստիճան պատասխանատուները որոշեցին Իսլամական պատժի օրենքի 30-րդ կետին ավելացնել ծանոթագրություն, ըստ որի՝ Հիմնական օրենքի կողմից ճանաչված կրոնական փոքրամասնությունների դիէի չափը որոշելու է կրոնապետը, որը ստանալու նպատակով հարցումը կատարում է դատական ուժի պետը և հղվում է դատարաններին:

Նշենք, որ Իսլամական օրենքում տուժողը խոսում է այն մասին, թե ինչպես պետք է հանցագործը պատժվի: Այս սկզբունքը հայտնի է որպես դիէ, որը համարժեք է «արյան գին» կամ «զոհի փոխհատուցում» արտահայտություններին: Սակայն երբեմն դիէի վճարումները կարող են կատարվել նաև ավելի փոքր հան-

¹ Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 29.05.2000, թիւ 111 (18048):

ցագործությունների և անփույթ գործողությունների համար: Վերջին դրույթն էլ համայնքում դարձել էր խնդրո առարկա:

2002 թ. փետրվարի 27-ին «Էնթելխաբ» օրաթերթին տված հարցազրույցում Իսլամական խորհրդարանի պատգամավոր Լևոն Դավթյանը նկատում է. «Շուրջ մէկ ու կէս տարի առաջ այս ուղղութեամբ մի դիմում ներկայացրինք նախագահ պրն. Խաթամին, որի արդիւնքները ձեւակերպում են այսօր: Որոշւած է այս որոշումը նախագծի կերպով ներկայացւի խորհրդարանին»¹: Համայնքում տիրում էր այն մթնոլորտը, որ, նկատի ունենալով հեղափոխության առաջնորդի դրական դիրքորոշումը փոքրամասնությունների նկատմամբ, ի վերջո նա կընդունի օգտակար որոշում: Ի դեպ, վերոնշյալ դիմումը ստորագրել են խորհրդարանի կրոնական փոքրամասնությունների բոլոր պատգամավորները՝ պահանջելով «վերահասու լինել այն մեծ տարբերութեանն, որ գոյութիւն ունի պաշտօնապէս ճանաչւած փոքրամասնութիւնների եւ մեր իսլամ քոյրերի ու եղբայրների դիէի միջեւ»²:

Մինչև 2005 թ. մահմեդականի կողմից ոչ մահմեդական սպանելու դեպքում հանցագործը ոչ միայն ըստ օրենքի որևէ պատիժ կրելու ենթակա չէր, այլև չէր վճարում նաև արյան գինը: Սույն խտրական մոտեցումն իր արտացոլումն էր գտել Քրեական օրենսգրքի (Իսլամական պատժամիջոցների համակարգի) բոլոր հոդվածներում և դրույթներում՝ բազմիցս սուր քննադատության ենթարկվելով մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների կողմից: Դրությունը միտվեց դրական փոփոխության նախագահ Խաթամիի կառավարման տարիներին³:

¹ Տե՛ս «Ալիք», 11.03.2002, թիւ 53 (18554):

² Նույն տեղում:

³ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 85:

«Ուշագրավ է մեկ տարվա կտրվածքով կրոնական փոքրամասնությունների՝ դիե վճարելու վիճակագրությունը, ըստ որի, դեսասի՝ արյան վրեժի, դեպքում հայերի հետ տեղի է ունեցել երկու դեպք: Սակայն դատական բարձրաստիճան պատասխանատուների հաստատագրում՝ գրավոր հաստատումը պարունակող փաստաթղթում, չի նշվել այդ մասին, և քանի որ դեպքերի մեծ մասը վերաբերել է պատահարներին, ուստի դիեի վճարումը մեծ թիվ է կազմել: Հիրավի, խնդիրը կրոնական փոքրամասնությունների մեծագույն դժվարություններից մեկն էր՝ թե՛ նյութական, թե՛ բարոյական տեսակետից:

Դավթյանը հակված էր Իսլամական հեղափոխության առաջնորդի կողմից կրոնական փոքրամասնությունների դիեի վերաբերյալ ընդհանուր ֆաթվան՝ կրոնական հրահանգն արձակել տալ: Այդպիսով, հարկ չէր լինի ամեն անգամ հարցում կատարելու հոգևոր առաջնորդին, իսկ դատարանները կիմանային իրենց անելիքը:

Ի լրումն վերոնշյալի, 2002 թ. մարտի 15-ին Հանրապետության նախագահի իրավական հարցերով օգնական հոջաթօլեւլամ Աբթահին հայտարարում է, որ կառավարությունը համաձայնվել է կրոնական փոքրամասնությունների ու մուսուլմանների դիեի հավասարեցման նախագծի ընդունմանը: Նրա խոսքով՝ *«դիեի հարցը որոշ դեպքերում անլուծելի դժվարություններ է ստեղծում: Պետք է փորձենք իրականացնել այդ քայլի մասնագիտական փուլերը»*¹: Ըստ էության՝ նույն կարծիքին էր նաև Բանիմացների խորհրդի անդամ Հաշեմ Հաշեմզադե Հարիսին. *«Բազմաթիւ հարցերում պիտի պահպանւի կրոնական փոքրամասնութիւնների պատիւն ու հարգանքը՝ իսլամի հովանու ներքո: Իրական որոշ հարցերում փոքրամասնութիւնների կապակցու-*

¹ Տե՛ս «Ալիք», 16.03.2002, թիւ 57 (18558):

Թեամբ կան որոշ կրոնական օրենսդրական դժվարություններ: Այս ուղղութեամբ նոյնիսկ օժանդակութեան է հրավիրել կրոնագիտական հոլովզեն»²: Փաստորեն բարձրաստիճան պաշտոնյաների կողմից առկա էր գիտակցումը, որ հարցի տեսական քննարկումից պետք է անցում կատարվեր գործնականին:

Խնդրո առարկայի շրջանակներում պետք է դիտարկել 2001 թ. հետևյալ նախաձեռնությունները՝ Թեհրանի հայոց առաջնորդարանում իրանահայերի անձնական իրավունքների հարցով դասախոսության կազմակերպումը³, կարիքավոր մարդկանց հայ երիտասարդ 6 իրավաբանների կողմից պատգամավոր Լ. Դավթյանի գրասենյակի խորհրդատվության տրամադրումը⁴, ինչպես նաև հայերի, հրեաների և ասորիների ներկայացուցիչների՝ իրենց հուզող հարցերի շուրջ ելույթներով հանդես գալը Մարդու իրավունքների Իսլամական կազմակերպության ամենամյա ժողովի ընթացքում⁵: ..

Խնդրահարույց էին նաև հայ զույգերի ընտանեկան դատերին առնչվող հարցերը, որոնք նույն թվականի նոյեմբերի 25-ին Լ. Դավթյանը քննարկում է Թեհրանի Ընտանեկան դատարանների ընդհանուր տնօրեն դոկտոր Համիդիանի հետ: Արդյունքում երկու օր անց Թեմական խորհրդի և թեմի դատական խորհրդի ատենապետները մասնակցում են Թեհրանի Ընտանեկան դատարանների նախագահների խորհրդակցական նիստին,

¹ Հովզեն կրոնական նշանակության հարցերով զբաղվող պետական կառույց է, որի կարծիքը հաշվի է առնվում իրավական նորմերի ու օրենքների ձևակերպման ընթացքում:

² Տե՛ս «Ալիք», 24.12.2001, թիւ 273 (18495):

³ Տե՛ս «Ալիք», 26.04.2001, թիւ 80 (18302):

⁴ Տե՛ս Հաղորդագրութիւն ԹՀ թեմական խորհրդի գործունեութեան 28 սեպտեմբերի առ 30 նոյեմբերի 2003թ., «Ալիք», 27.12.2003, թիւ 275, (19058):

⁵ Տե՛ս «Ալիք», 03.01.2002, թիւ 3 (18786):

որի ընթացքում ձեռք է բերվում համաձայնություն ընտանեկան դատերի հասանելիության կարգի մասին¹:

Վերոնշյալի համատեքստում պետք է դիտարկել 2001 թ. դեկտեմբերի 27-ին և 29-ին Տ. Սեպուհ եպս. Սարգսյանի հանդիպումը նշված թվականին ամուսնացած զույգերի հետ և նրանց հուզող իրավական բնույթի հարցերի քննարկումը²:

Հիրավի, իրավական կարգավիճակը որոշակի ազդեցություն է թողել նաև համայնքի ժողովրդագրական պատկերի վրա: Այդ մասին են վկայում Թեհրանի Հայոց թեմի ազգային առաջնորդարանի դիվանի տարբեր տարիներին հրապարակված հաղորդագրությունները:

Թեհրանի հայոց թեմում տեղի ունեցած կրոնական արարողությունների թվային տվյալները 1995-2005 թթ. ³							
Առիթը	Տարեթիվը						
	1995	2000	2001	2002	2003	2004	2005
Սկրտություն	456	1067	337	297	282	278	302
Պսակ	379	350	266	235	261	261	250
Ապահարգան	18	27	27	31	41	28	33
Թաղում	424	435	529	480	522	482	545

¹ Տե՛ս «Ալիք», 03.01.2002, թիւ 3 (18786):

² Տե՛ս «Ալիք», 07.01.2002, թիւ 4 (18505):

³ Տե՛ս «Լույս», N 123, օգոստոս, 2006, էջ 4, Տե՛ս նաև՝ Հաղորդագրութիւն Դիւան Ազգային առաջնորդարանի Թեհրանի Հայոց թեմի, «Ալիք», 30.01.2002, թիւ 23 (18524), 22.01.2003, թիւ 16 (18799), 08.02.2004, թիւ 30 (19092), 23.01.2005, թիւ 18 (19361):

Հարկ է նշել, որ հաշվի առնելով ապահարգանի դիմած գույզերի հոգեկան և նյութական խնդիրները՝ 2003 թ. Թեմական խորհուրդը կազմակերպել է քննարկում Թեհրանի հայոց թեմի Դատական խորհրդի հետ¹:

Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին պետական կառավարման համակարգում ներառելու նպատակն ուներ 2002 թ. հունվարի 15-ին հանրապետության նախագահի քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Սեյեդ Ջավադ Ղադիմի Ջաբերի ստորագրությամբ՝ «Ալիք» օրաթերթում հրապարակված նամակը՝ հղված Իսլամական խորհրդարանի պատգամավոր Լ. Դավթյանի գրասենյակին: Նշված գրությանը կցված էր կրոնական փոքրամասնություններին պետական հիմնարկներում աշխատելու վերաբերյալ նախագահի առաջին օգնական Մոհամադոեզա Արեֆի հրապարակած շրջաբերականը: Հաշվի առնելով նամակի կարևորությունը՝ մեջբերում ենք այն ամբողջությամբ.

«Առ ի գործադրում հիմնական օրենքի՝ 20 և 28-րդ հոդվածների, որոնք վերաբերում են ժողովրդի բոլոր միավորների օրինական հավասար հովանաւորութեանը ու բոլորի հասարակական իրավունքների պահպանման ու աշխատանքային միօրինակ պայմաններ ստեղծելու հարցում կառավարութեան ունեցած պարտականութիւններին (Չեշտուած նաեւ 1367.11.13 թւակիր համար 11-4462 շրջաբերականում) եւ ի նկատի ունենալով, որ դա Իրանի Իսլամական հանրապետութեան պաշտոնական քաղաքականութիւնն է, առ այդ, հարկ է, որ երկրի բոլոր նախարարութիւնները, պետական հիմնարկութիւնները ու կազմակերպութիւնները, Իսլամական հեղափոխութեան կառոյցները եւ նա-

¹ Տե՛ս Հաղորդագրութիւն Թ. Հ. Թեմական խորհրդի գործունեութեան, 19 փետրւարի առ 10 մայիսի 2003 թ. «Ալիք», 08.06.2003, թիւ 110 (18893):

հանգապետարանները բժախնդիր վերահսկողութեամբ եւ լիարժեք կերպով գորավիզ լինեն կրոնական փոքրամասնութիւնների իրավունքների հարգելուն, որոնք ճանաչած են Հիմնական օրենքի 13-րդ հոդուածով, այդ թվում նաեւ նրանց աշխատելու եւ աշխատանքի ընդունվելու իրավունքը, որը պետք է, ըստ նախկինի, աշխատանքի հրավիրման հայտարարութիւններում օրինական չափանիշներով եւ շեշտված կերպով նկատի առնւի, որպէսզի աշխատանքի ընդունման քննութիւններում ընդունվելու դէպքում, ստեղծվի նրանց մասնագիտութիւնից ու ունակութիւններից առավելագոյնս օգտվելու հնարավորութիւնը:

Մոհամմադռեզա Արեֆ

*Հանրապետութեան նախագահի
առաջին օգնական»¹:*

Հարկ է նշել, որ չնայած աշխատանքային միօրինակ պայմանների ստեղծումը և պահպանումը համարվում էր կառավարության պարտականությունը և պաշտոնական քաղաքականությունը, այդուհանդերձ, գործնականում դրա կիրարկման հազվագյուտ օրինակներ կարելի է նշել: Այդ համատեքստում ինչ-որ տեղ կարելի է դիտարկել 2001 թ. Նախագահի գրասենյակի կողմից կազմակերպված «Նահատակ Ռաջայի» անվան 4-րդ փառատոնում Վեհանուշ Համբարձումյանին՝ որպէս ազգային օրինակելի պաշտոնյայի ճանաչումը²: Նա 1981 թ.-ից աշխատել է՝ որպէս թարգմանիչ Իրանի Իսլամական Հանրապետության ռադիո-հեռուստատեսության արտասահմանյան հաղորդումների հայերէն ռադիոժամում:

Հարկ է նկատել, որ 2002 թ. մարտի 1-ին ազգային խտրականության դէմ պայքարի միջազգային օրվա առթիվ Թեհրանի

¹ Տե՛ս «Ալիք», 15.01.2002, թիւ 10 (18511):

² Տե՛ս «Ալիք», 16.01.2002, թիւ 11 (18512):

Անձնուրացների գրասենյակի նախաձեռնությամբ և խորհրդարանի պատգամավոր Լևոն Դավթյանի գրասենյակի համագործակցությամբ մեծարվել են Իրան-իրաքյան պատերազմի տարիներին զոհված հայ և զրադաշտ մարտիկները: Նշված գրասենյակի պատասխանատու Նուրիզադեի համոզմամբ՝ *«Մենք հակառակ ոմանց հավակնություններին ուզում ենք աշխարհին փաստել, որ Իրանում չկա ազգային խտրականություն»*¹: Ակնհայտ է, որ մարդու իրավունքների հարցը միշտ էլ տարբեր առիթներով պատրվակ է գերտերությունների ձեռքում՝ Իրանի դեմ ճնշում գործադրելու համար: Ահա, թե ինչու կառավարությունը կրոնական փոքրամասնությունների խնդիրների լուծումը համարում էր գերակա:

Նույն թվականի ապրիլի 8-ին Հանրապետության նախագահ Մ. Խաթամին նշված հարցն է քննարկում Հարավային իրանահայության պատգամավոր Ժորժիկ Աբրահամյանի հետ: Վերջինիս խոսքով՝ *«Հանդիպման զլխաւոր առանցքը անցեալ տարի պրն. Խաթամիի հետ ունեցած տեսակցութեանը արծարծւած հարցերի հետապնդման արդիւնքների քննարկումն էր»*²: Ըստ էության, հանդիպման օրակարգը չէր փոխվել, քանի որ 2001 թ. հանդիպման ընթացքում և՛ բանավոր, և՛ գրավոր տեքստով նախագահին էին փոխանցվել կրոնական փոքրամասնությունների խնդիրները, որոնք նա խոստացել էր լուծել: Ավելին, նախագահի կարգադրությամբ Ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվել էր այդ հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողով: Դրանով հանդերձ՝ Ժորժիկ Աբրահամյանը նկատում է. *«Այսօր մասամբ քննարկւեցին այդ յանձնաժողովի գործունեութիւնը եւ*

¹ Տե՛ս «Ալիք», 02.03.2002, թիւ 46 (18547):

² Տե՛ս «Ալիք», 09.04.2002, թիւ 69 (18570):

ձեռք բերած արդիւնքները: Մակայն պիտի նշել, որ աշխատանքները ընթանում են դանդաղ կերպով (ընդգծումը՝ մերն է)»¹:

Պատգամավորը մտահոգված էր արտագաղթին նպաստող ազդակներից: Դրանք էին՝ դիէի և դէսասի՝ արյան գնի և մահապատժի, դպրոցների, պետական հիմնարկներում փոքրամասնությունների աշխատանքի հարցերը:

Այնուամենայնիվ, դանդաղ կերպով տեղի ունեցան որոշ տեղաշարժեր: Այդ մասին է վկայում 2002 թ. հունիսի 10-ին Դատական ուժի պետ Հաշեմի Շահոռլի՝ պատկան պատասխանատուների ժողովի ընթացքում հայտարարությունը, ըստ որի, կրոնական փոքրամասնությունների արյան գնի՝ դիէի, նախագիծը, հանձնվել է Իսլամական խորհրդարանին²: Նա նշում է, որ Իսլամական հեղափոխության առաջնորդը ևս համաձայն է հենց այդ նախագծին³:

Հիշարժան է, որ 2002 թ. հոկտեմբերի 17-ին Հանրապետության նախագահի կրոնական փոքրամասնությունների հարցերի պատասխանատու Մոհամմադալի Աբթահին ժնկում Քրիստոնյա-Իսլամ երկխոսության միջազգային համագումարի նախագահ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսի հետ քննարկում է հայության հարցերը⁴: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն է հայտնել արյան գնի հարցով իրանական պետության ընդունած դրական որոշման առթիվ:

Թերևս հայության խնդիրներին պետական այրերի ուշադրությունն էր հրավիրում Թեհրանում հրատարակվող «Մոդաբեր» օրաթերթը (17.12.2002)՝ «Մենք փոքրամասնություն ենք, սակայն իրանցի փոքրամասնություն» խորագրի ներքո: Թղթակցու-

¹ Տե՛ս Նույն տեղում:

² Տե՛ս «Արաս» ամսագիր, ԺՋ տարի, թիվ 28 (III), մայիս, 2002, էջ 9:

³ Տե՛ս «Ալիք», 11.06.2002, թիւ 115 (18616):

⁴ Տե՛ս «Ալիք», 17.10.2002, թիւ 221 (18722), 19.10.2002, թիւ 223 (18724):

հի Նարգես Ռասուլին նշում է. «Այս ռեպրտաժում ջանացել ենք մասնագիտական հայացքով վերլուծել կրոնական փոքրամասնություններից հայերի հասարակական ու մշակութային դժվարությունները, որպեսզի նաև մի բաց դռնակ ստեղծվի նրանց համար, որոնք առավել հետաքրքրված են հասարակական այս խավով»¹:

Իսկ համայնքի դժվարությունները ներկայացրած Լ. Ղավթյանը բարձրացնում է նախարարության կողմից հայազգի ուսուցիչների վարձատրության և հայկական միություններն ու դպրոցները պահպանելու համար պետական աջակցության հարցերը: Ինչ վերաբերում է դիեի հարցին, ապա պատգամավորի խոսքով՝ «Երբեմն անտեղեկության ու կատարալապես չճանաչելու հետևանքով հայ հասարակութեան անհատների ու խլամների միջև տեղի են ունենում անցողիկ ու մակերեսային հարցեր, սակայն սրանք բացառություներ են և որեւէ առանձնակի միտում ու նպատակ չկայ այսպիսի հարցեր առաջացնելու մեջ»²:

Սակայն փոքրամասնությունների նկատմամբ պետության որդեգրած քաղաքական գծին հակասում էր 2003 թ. ապրիլի 16-ին Իսլամական խորհրդարանի նիստում Կրթության և գիտահետազոտության հանձնաժողովի ներկայացրած Իրանի հոգեբանական ու խորհրդատվական համակարգի կազմակերպության հիմնադրման նախագծի քննարկումը: Խնդիրն այն էր, որ նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ կետում նշվում էր, որ կազմակերպության կենտրոնական խորհրդին անդամակցելու պայմաններից է՝ պատկանելությունն իսլամ կրոնին, որն անընդունելի էր:

¹ Տե՛ս «Ալիք», 29.12.2002, թիվ 281 (18782):

² Տե՛ս Նույն տեղում:

Ուշագրավ է, որ նախագիծն ուներ ծանոթություն, ըստ որի, ԻԻՀ հիմնական օրենքում պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնությունները ենթարկվում են իրենց պաշտոնական կրոնին: Այս կետին դեմ էր Պահապանների խորհուրդը, և հանձնաժողովը ընդունել էր՝ հանել այն: Փաստորեն, ծանոթությունը հանելու դեպքում կրոնական փոքրամասնությունները չէին կարող անդամակցել այդ կազմակերպությանը, իսկ մնալու դեպքում էլ ստացվում էր, որ ընդունում են պաշտոնական կրոնը՝ իսլամը: Դրանով էր պայմանավորված Լևոն Դավթյանի հիշարժան ելույթը. «*Այդ խնդիրը զարմանք ու վիշտ է պատճառել կրօնական փոքրամասնությունների պատգամաւորներին, քանզի մեր կարծիքով՝ դա հակասում է Իրանի Իսլամական Հանրապետութեան հիմնական սկզբունքներին ու դիրքորոշումներին, որը վերաբերում է կրօնական փոքրամասնությունների իրաւունքներին: Արտագաղթի պատճառներից են՝ խտրականութիւն առաջացնող օրենքները, որոնք անկուսութիւն եւ աշխատանքային ու հասարակական բնագաւառներում անապահովութեան զգացումնք են առաջացնում կրոնական փոքրամասնությունների մօտ*»¹: Պատգամավորն իր գործընկերներից խնդրում էր, որ, քվեարկելով նշված կետը չհանելու օգտին, հարգեն կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

Ի վերջո, ծանոթության հանմանը չքվեարկեց խորհրդարանը: Որոշում է ընդունվում դրա մեջ նշված «Իրանի հիմնական օրենքում պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնությունները» բառերի փոխարեն գրել՝ «Իրանի հիմնական օրենքում բացատրված կրոնական փոքրամասնությունները»²: Փաստորեն, հարցը մասամբ լուծվեց:

¹ Տե՛ս «Ալիք», 19.04.2003, թիւ 75 (18858):

² Տե՛ս Նույն տեղում:

Չնայած 2003 թ. մայիսի 26-ին Պահապանների խորհուրդը մերժեց կրոնական փոքրամասնությունների դիեի՝ արյան գնի, օրինագիծը՝ հղելով Համակարգի նպատակահարմարությունը որոշող ժողովին վերջնական լուծում տալու համար¹, այդուհանդերձ, նույն թվականի դեկտեմբերի 28-ին հոգևոր առաջնորդի վճռով կրոնական փոքրամասնությունների արյան գինը ճշտվում է մուսուլմանների արյան գնին համահավասար:

Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովի նիստում քննարկվում է Իսլամական պատժարարքի օրենքի 297-րդ հոդվածին կրոնական փոքրամասնությունների արյան գնի վերաբերյալ մի կետ ավելացնելու խնդիրը, որը վավերացրել էր խորհրդարանը: Ի վերջո, Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովը որոշում ընդունեց, Իսլամական հեղափոխության առաջնորդի հրահանգի համաձայն, հավասարեցնել մուսուլմանների և ոչ մուսուլմանների արյան գինը:

Դեռևս 1991 թ. վավերացված Իսլամական պատժի օրենքի 297-րդ հոդվածին մեկ կետ ավելացնելու նախագիծը 2002 թ. նոյեմբերի 3-ին քննարկվեց խորհրդարանում և հաստատվեց: Սակայն Պահապան խորհուրդը դեմ էր եղել կրոնական սկզբունքներին և կրկին հղել խորհրդարանին, որով պատգամավորները 2003 թ. մարտի 16-ին բարեփոխեցին այն՝ Պահապան խորհրդին բավարարելու նպատակով: Նշելի է, որ կրոնական փոքրամասնությունների արյան գնի հավասարեցման նախագիծը, որ 2 անգամ մերժել էր Պահապան խորհուրդը, խորհրդարանի Իրավական և դատական հանձնաժողովի կողմից հաստատվելով՝ վերջնական որոշման համար մինչ այդ ներկայացվել էր մեկ այլ պետա-իրավական ազդեցիկ կառույցի՝ Համակարգի նպատակահարմարությունը բնորոշող ժողովին²:

¹ Տե՛ս «Ալիք», 26.05.2003, թիւ 102 (18885):

² Տե՛ս «Ալիք», 28.12.2003, թիւ 276 (19059):

« Լևոն Դավթյանի խոսքով՝ «Կարևոր իրավական խնդիրներից մեկը դեռևս չի լուծվում, որը արյունագնի՝ դիեի, խնդրի լուծվելուց հետո՝ առաջնահերթություն ունի»¹: Նրա մեկ այլ խոսքով՝ զգալիորեն նվազել էր արտագաղթը, քանի որ ժողովուրդը գիտակցել էր խնդրի բացասական ազդեցությունը համայնքի վրա:

Չնայած 2004 թ. խորհրդարանն ուներ դրամական խնդիրներ², այդուհանդերձ, ձեռքբերում էր համարվում դիեի հարցի լուծումը, որը նախկինում կազմում էր մահմեդականների արյան գնի 1/13 մասը, իսկ այժմ օրենքով հավասարվել էր: Ձեռքբերում էր համարվում նաև ուսումնադաստիարակչության նախարարության կազմում հայ պաշտոնյաների ներառումը, պետության կողմից 200 հոգու որպես ուսուցիչ վարձվելու իրավունք տալը³: Իսլամական խորհրդարանը 2004 թ. բյուջեում կրոնական փոքրամասնություններին հատկացրել է 1 մլրդ⁴, իսկ 2005 թ.՝ 1,75 մլրդ թուման: Փաստորեն, այդ հարցում ևս գրանցվել է որոշակի հաջողություն նախորդ տարվա համեմատ:

Նշելի է, որ 2002 թ. հոկտեմբերի 27-ի դրությամբ արդեն որոշ դատարաններ դիեի համահավասար վճիռներ են արձակել, և այդ հարցով պատգամավոր Լ. Դավթյանի գրասենյակ դիմած 23 հոգուց 7-ին դատարանը դիեի համահավասար վճիռ է արձակել⁵:

¹ Հարցազրույց հիւսիսային իրանահայութեան պատգամավորի հետ, «Ալիք», 15.12.2003, թիւ 266 (19049):

² Կրոնական փոքրամասնությունների 5 պատգամավոր առաջարկել էր բյուջե հատկացնել իրենց: Սակայն Պահապան խորհուրդը երկու անգամ մերժեց այդ նախագիծը: Համակարգի նպատակահարմարությունը որոշող ժողովը ևս չընդունեց, և հայ համայնքը զրկվեց հասարակական, մշակութային և կրոնական աշխատանքների համար տարեկան պետական բյուջե ունենալուց:

³ Տե՛ս «Ալիք», 18.02.2004, թիւ 37 (19099):

⁴ Տե՛ս «Ալիք», 10.03.2005, թիւ 53 (19396):

⁵ Տե՛ս «Ալիք», 28.10.2002, թիւ 229, (18730):

Դավթյանը մի շարք հանդիպումներ էր ունեցել ԻԻՀ նախագահի օգնական Աբթահիի հետ և քննարկել փոքրամասնություններից 200 հոգու ուսումնա-դաստիարակչության նախարարության մեջ վարձելու հարցը:

2002 թ. մարտին ԻԻՀ դատական իշխանության ղեկավար Շահոռղիի գլխավորությամբ որոշում ընդունվեց «Սուրբ գրքեր» ունեցող փոքրամասնությունների (քրիստոնյաներ, հուդայականներ և զրադաշտականներ) և մահմեդականների դիեի հավասարության վերաբերյալ: Երեք տարի անց՝ 2005 թ., իսլամական խորհրդարանը հաստատեց այդ որոշումը, որը որպես օրենք մտավ ուժի մեջ¹: Համայնքին հուզող դատական տարբեր հարցեր L. Դավթյանը քննարկել էր Շահոռղիի հետ:

Հարկ է նշել, որ 2002 թ. նոյեմբերի 3-ին Իսլամական խորհրդարանը վավերացրեց կրոնական փոքրամասնությունների ու մուսուլմանների դիեի հավասարեցման օրինագիծը²: Օրինագծի վավերացումը կոչվում է իսլամական պատժի օրենքի 297-րդ հոդվածին կցվող նախագծի 1991 թ. վավերացված օրինագիծ: ԻԻՀ հիմնական օրենքում պաշտոնապես ճանաչված կրոնական փոքրամասնությունների արյան գնի՝ դիեի ճշտման չափանիշը հավասար է մուսուլմանների արնագնին՝ ժամանակի կրոնապետի հաստատումով, որը դատական ուժի հարցադրումից հետո հղվում է դատարաններին:

Դիեի հարցում դատաիրավական մակարդակում ձեռք բերված հաջողությունների մասին խոսելով՝ Իսլամական խորհրդարանի Հարավային իրանահայության պատգամավոր Ժորժիկ Աբրահամյանը բարձր է գնահատել երիտասարդ իրավագետ Հո-

¹ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը, էջ 85:

² Տե՛ս «Ալիք», 04.11.2002, թիվ 235, (18736):

վիկ Բեհբուի կատարած ջանքերն այդ ուղղությամբ¹: Իսկ ընդհանրապես դիեի հարցում առաջընթաց ունենալու համար կրոնական փոքրամասնությունները երկարատև ու համառ աշխատանքներ էին ծավալել:

Հետաքրքրական է, որ 2003 թ. դիեի հարցով Իսլամական խորհրդարանի որոշմանը դեմ արտահայտվեց Պահապանների խորհուրդը, որը նամակով դիմեց խորհրդարանին. *«Նկատի ունենալով, որ շարիաթի դիտանկյունից ճշտված է կրոնական փոքրամասնությունների դիեի չափը, ուստի Իսլամական պատժի օրենքի 297-րդ հոդվածի 2-րդ հավելումը շարիաթի սահմանումներին հակասում է»*: Ապա թեական ձևակերպմամբ ավելացնում է. *«Մակայն եթե հեղափոխության Առաջնորդի կարծիքով, պետք է կրոնական փոքրամասնություններին իրենց դիեից ավելի գումար վճարվի մինչև հավասարվի մուսուլմանների դիեի հետ, ըստ այնմ պետք է վարվեր»²*:

Փաստորեն Պահապանների խորհուրդն այդպիսով հարցի լուծման բանալին թողեց Հեղափոխության առաջնորդի ձեռքում: Ահա թե ինչու, այդ օրերին «Արաքս» ամսագիրը գրում է. *«Կրոնական փոքրամասնությունների հայացքը սևեռված է Առաջնորդին և սպասում են նրա որոշմանը»³*: Իսկ ահա 2004 թ. հունվարի 5-ին Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Ալի Խամենեին կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ընդգծում է, որ նրանք երկրում ունեն համահավասար քաղաքացիական իրավունք⁴:

¹ Տե՛ս «Ալիք», 14.12.2002, թիվ 268, (18769):

² Տե՛ս «Արաքս» ամսագիր, ԺԷ տարի, թիվ 38-40 (121-123), մարտ-մայիս 2003, էջ 9:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս «Ալիք», 07.01.2004, թիվ 4, (19066):

Սակայն ստորև բերված երկու օրինակները ցույց են տալիս, որ նշված իրավունքը ոչ միշտ էր գործում: Այսպես, 2004 թ. դեկտեմբերին Իսլամական խորհրդարանում Հյուսիսային իրանահայության պատգամավոր Գևորգ Վարդանյանը այցելել է Քյարաջի «Շահիդ Ռաջայի» բանտ, որտեղ պահվում էին 3 հայ բանտարկյալներ: Վերջիններս պատգամավորի հետ հայերեն առանձնագրույցի ընթացքում զոհ են եղել բանտի պայմաններից, սակայն դժգոհել են դատավարության և հարազատների այցելությունների հարցով բանտի հեռավորությունից¹: Ի դեպ, այդ բանտում են պահվում ամենավտանգավոր հանցագործները, իսկ տեղեկատվության մեջ նշված չէր, թե ինչ հանցանքի համար են նրանք հայտնվել այդտեղ:

Հաջորդ դեպքը տեղի ունեցավ 2005 թ. սեպտեմբերի 10-ին, երբ ԹՀԹ Կենտրոնական վարչությունը տարածեց հաղորդագրություն, որով ազգային այդ կառույցն իր ցավակցությունն է հայտնում Միրո Բեգիջանյանի սպանության կապակցությամբ, նրա ընտանիքին, մարզասեր հանրությանը և իրանահայ համայնքին՝ վստահեցնելով, որ ԻԻՆ կարգապահական ուժերի համագործակցությամբ հետապնդելու է սպանության բացահայտումը: Սպանությունը տեղի էր ունեցել «Արարատ» մարզավանի բակից դուրս²:

Հարկ է նշել, որ պատգամավոր Գևորգ Վարդանյանը իրավական մարմիններից պահանջել է հսկողության տակ վերցնել «Արարատ» մարզավանի շրջակայքը: Դեպքի առիթով ազգային իշխանությունը որոշել է դադարեցնել համահայկական խաղերը: Այդ օրերին «Ալիք» թերթը գրել է. *«Իրանում վերջին տարիներին ցավոք նման երևույթները բազմիցս ենք հանդիպել, երբ միևնույն*

¹ Տե՛ս «Ալիք», 15.12.2004, թիվ 268 (19330):

² Տե՛ս «Ալիք», 11.09.2005, թիվ 190 (19533):

հասարակական անախորժությունների չկանխարգելման հետևանքով պատահել է ցավալին ու դատապարտելին»¹:

Հարկ է նշել, որ հայ պատանու սպանությունն արդար բողոք էր առաջացրել համայնքում: Ահա թե ինչու, սեպտեմբերի 12-ին Միրո Բեգիջանյանի դին ամփոփվեց Նոր Բուրաստան գերեզմանատան հայ նահատակների հարևանությամբ²: Սեպուհ Սրբազանը դամբանական խոսքում նշել է, որ Բարձր պատասխանատվությամբ և գիտակցությամբ տեր են կանգնելու մեր ժողովրդի իրավունքներին³: Վրդովմունքի խոսքով հանդես են եկել Խորհրդարանում Հյուսիսային իրանահայության նախկին պատգամավոր Վարդան Վարդանյանը և տվյալ պահին պատգամավոր Գևորգ Վարդանյանը: Վ. Վարդանյանն մասնավորապես ասել է. «Այսպիսի բազմության ներկայությունը, ինձ հիշեցրեց նույնը, ինչ որ մեր նահատակ զինվորների հուղարկավորությանն էր տեղի ունենում», իսկ Գ. Վարդանյանն ավելացրել է. «Թող ոչ ոք չմտածի, որ միայնակ կարող է անել այն, ինչ ուրիշը չի կարող անել իր ուժերի համեմատ»⁴:

Սեպտեմբերի 13-ին Թեհրանի արևելյան շրջանի ոստիկանատների գլխավոր պատասխանատու սարդար Էսլամին և Նարմաք քաղաքամասի ոստիկանատան պատասխանատուներն ու հոգևորականներն այցելել են Բեգիջանյանի բնակարան՝ ցավակցելու նրա ծնողներին⁵:

Մ. Բեգիջանյանը զոհվեց իրավապահ ուժերի կրավորական կեցվածքի պատճառով, որոնք լինելով մոտակայքում՝ չէին միջամտել բախմանը և դժբախտ պատահարից հետո միայն, երբ

¹ Տե՛ս Նույն տեղում:

² Տե՛ս «Ալիք», 12.09.2005, թիւ 191 (19534):

³ Տե՛ս «Ալիք», 14.09.2005, թիւ 193 (19536):

⁴ Տե՛ս «Ալիք», 15.09.2005, թիւ 194 (19537):

⁵ Տե՛ս «Ալիք», 14.09.2005, թիւ 193 (19536):

հոծ բազմություն էր համախմբվել դեպքի վայրում, ներկայանալով՝ ձերբակալել էին հանցագործներին¹: Հարկ է նշել, որ «Արարատ» կազմակերպության կենտրոնական վարչությունը նախքան խաղերը սկսելը մարզավանի և դրա շրջակայքի անվտանգության ապահովման համար դիմել էր պատկան մարմիններին²:

Դատապաշտպան Հովիկ Բեհբուի խոսքով՝ Մ. Բեգիջանյանի վրա հարձակվողները եղել են 6 հոգի, որից 2-ը փախել էին, իսկ 4-ը՝ անմիջապես ձերբակալվել, նաև մեկ հայ տղա, որն ականատես էր եղել, ազատ էր արձակվել հարցաքննությունից անմիջապես հետո. փախած 2 հոգին ևս ձերբակալվել են: Ձերբակալվածներից երկուսը՝ Ալի Ֆաթթահփուրը և Ամին Թահմթանզադեն, խոստովանել են իրենց հանցանքը:

Հաշվի առնելով, որ փոքրամասնությունները չեն օգտվում դեսասի՝ փոխհատուցման մասին օրենքից, դիմել էին Ղոմ քաղաքի կրոնական գործիչներին՝ հույս հայտնելով, որ դիեի հարցի նման կկարգավորվի նաև դեսասի խնդիրը³: Ավելին, 2005 թ. հոկտեբերի 30-ին ԻԻՀ նախագահ Ահմադինեժադը խորհրդարանի հայ պատգամավորների հետ հանդիպման ընթացքում դեսասի խնդրի վերաբերյալ խոստացել է դատական ուժի պետ Այաթուլահ Շահռուդիի հետ քննարկել հարցը⁴:

2005 թ. նոյեմբերի 15-ին խորհրդարանում Հյուսիսային իրանահայության պատգամավոր Գևորգ Վարդանյանի նախաձեռնությամբ Թեհրանի հայոց ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի է ունեցել խորհրդակցական հանդիպում հայ իրավաբանների հետ՝ իրանահայությանը հուզող դատախիրավական հարցերի շուրջ: Ըստ պատգամավորի, դիեև, դեսասը, անհատա-

¹ Տե՛ս «Ալիք», 17.09.2005, թիւ 195 (19538):

² Տե՛ս «Ալիք», 06.10.2005, թիւ 211 (19554):

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս «Ալիք», 31.10.2005, թիւ 230 (19573):

կան իրավունքները (ժառանգություն, կտակ, ապահարգան, որդեգրություն, խնամակալություն և այլն), խնդիրներ են, որոնք օրենքի հատկացումով պետք է դասակարգվեն և գործադրվեն երկրի դատական աստիճաններում¹:

Իրանում հայտնի կրոնապետ մեծ Այաթոլլահ Սանեին էլ այդ առիթով ընդգծել է, որ մուսուլմանների և ոչ մուսուլմանների դիէն, դեսաւը և ժառանգական օրենքները չեն տարբերվում միմյանցից²: Սակայն գործնականում այդպէս չէր, որի համար էլ 2005 թ. դեկտեմբերի 5-ին իսլամական խորհրդարանի 194 պատգամավոր ստորագրել է լրացուցիչ օրինակետի մի նախագիծ և առաջարկել խորհրդարանի նախագահությանը, որ երկրում պաշտոնական ճանաչում ունեցող կրոնների հետևորդները ժառանգության բաշխման հարցերում չհամարվեն Քաղաքացիական օրենքի թիվ 881 կրկնակի հոդվածի ենթականեր, քանի որ որոշ դատարաններ, չարաշահելով այդ հոդվածը, անարդար խտրություն էին դնում ընտանիքների անդամների միջև՝ ըստ դրանց դավանության և ամբողջ ընտանիքների զրկում իրենց հասանելիք ժառանգության սեփականացման իրավունքից, որը, ըստ ներկայացված առաջարկի, հեռու է ԻԻՀ վարչակարգի դավանած հավասարության և եղբայրության վեհ սկզբունքներից³:

Այդպիսով, առաջարկվում էր, որ ԻԻՀ հիմնական օրենքով կրոնական փոքրամասնությունների անդամները ազատ լինեն օրենքի այդ հոդվածին ենթարկվելուց: Մյուս կողմից պաշտոնապէս ընդունվում էր, որ գործող ժառանգության սեփականացման օրենքում և պետական գաղափարախոսության միջև կան վիճահարույց հարցեր:

¹ Տե՛ս «Ալիք», 16.11.2005, թիւ 243 (19586):

² Տե՛ս «Ալիք», 29.12.2005, թիւ 278 (19621):

³ Տե՛ս «Ալիք», 05.12.2005, թիւ 258 (19601):

2003 թ. հունվարի 12-ին Իսլամական խորհրդարանը վավերացրեց կրոնական փոքրամասնությունների և մուսուլմանների արյան գնի հավասարեցումը: Ըստ նշվածի, վավերացված Իսլամական պատժի օրենքի թիվ 297 հոդվածին կցված ծանոթագրության, ԻԻՀ Հիմնական օրենքում ճանաչված կրոնական փոքրամասնությունների արյունագինը հավասար է մուսուլմանների դիեին՝ հոգևոր առաջնորդի հայեցողությամբ, որի մասին հարցադրում է կատարվելու դատական ուժի միջոցով և հղվելու է դատարաններին: Այդ վավերագիրը դատարաններին հարկադրում է, որ հիշյալ կարծիքի համաձայն և նկատի ունենալով Իսլամական պատժի օրենքի այլ կետերը, ինչպես նաև անձի սեռը և դեպքի կատարման պահը, արձակեն անհրաժեշտ վճիռը¹:

Այսպիսով, այս օրենքի ընդունման համար թեև տևական ժամանակ պահանջվեց, դրանով հանդերձ ունեցավ կարևոր նշանակություն հայ համայնքի կյանքում: Ցավոք, այն ի գորու չեղավ լիովին կասեցնել արտագաղթը, որի միտումները մեկնարկել էին մինչ այդ, իսկ դրան հաջորդած տարիներին իներցիայի ուժով շարունակվեց, թեև ավելի դանդաղ տեմպերով:

¹ Տե՛ս «Ալիք», 13.01.2003, թիւ 8 (18791):

IRANIAN OFFICIAL POSITION ON THE LEGAL STATUS OF
THE ARMENIAN COMMUNITY

SUMMARY

Keywords: Iranian official position, religious minority, Armenian community, legal status, blood price - diy, blood revenge - ghesas.

On January 12, 2003, the Islamic Parliament ratified the equalization of the price of blood of religious minorities - Muslims. According to the note, attached to Article 297 of the ratified Islamic Penal Code, the blood of the religious minorities recognized in the Basic Law of Iran is equal to that of Muslims, at the discretion of the pious leader, who will be referred to the courts through the courts. This document obliges the courts to issue the necessary verdict in accordance with this opinion, taking into account other points of the Islamic Penal Code, such as the sex of the person at the time of the incident.

Thus, the adoption of this law took a while, but at the same time had a significant meaning in the life of the Armenian community. Unfortunately, it was not able to completely stop the emigration, the tendencies of which had started before, and in the following years it continued with the force of inertia or at a slower pace.

ОФИЦИАЛЬНАЯ ПОЗИЦИЯ ИРАНА О ПРАВОВОМ СТАТУСЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Официальная позиция Ирана, религиозное меньшинство, армянская община, правовой статус, цена крови - дий, кровная месть - геса.

12 января 2003 г. Исламский парламент ратифицировал уравнивание цены крови для религиозных меньшинств. Согласно примечанию, приложенному к статье 297 ратифицированного Исламского уголовного кодекса, кровь религиозных меньшинств, признанных в основном законе Ирана, приравнивается к крови мусульман по усмотрению благочестивого лидера, который будет отнесен к суду через суд. Этот документ обязывает суды выносить необходимый вердикт в соответствии с этим заключением, принимая во внимание другие пункты Исламского уголовного кодекса, такие как пол лица в момент происшествия.

Таким образом, принятие этого закона заняло некоторое время, но в то же время имело большое значение в жизни армянской общины. К сожалению, она не смогла полностью остановить эмиграцию, тенденции которой наметились раньше, а в последующие годы продолжались по инерции или более медленными темпами.

**ԿՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ:
ՀԱՅԱՍՏԱՆՑԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ
ԹԵՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԻ
ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

Հիմնաբառեր. Վրաստան, կրոնական կազմակերպություններ, Վրաց ուղղափառ եկեղեցի, իրավական կարգավիճակ, սահմանդրական համաձայնագիր, Քաղաքացիական օրենսգիրք, հանրային իրավունքի իրավաբանական անձ, Հայ Առաքելական եկեղեցի, Վիրահայոց թեմ, սեփականության իրավունք, եկեղեցիներ, Ջավախք, ուղղափառ (օրթոդոքս) հայություն, վրաց հասարակական-քաղաքական և գիտական շրջանակներ, մամուլ:

Հետխորհրդային շրջանում Վրաստանը, ունենալով բազմազգ և բազմակրոն միջավայր, հարկ է, որ առաջիններից մեկն օրենսդրորեն կանոնակարգեր երկրում ապրող տեղաբնիկ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների դավանանքին առնչվող հարցերը: Այդուհանդերձ, ի սկզբանե որդեգրելով մոնոթեոնիզացման քաղաքականություն և առաջնորդվելով «Վրաստանը միայն վրացիների համար» կարգախոսով, Վրաստանի իշխանությունները զերծ մնացին երկրի ոչ քարթվելական շրջանակներին տրամադրել ինչպես ազգային, այնպես էլ կրոնական և այլ տիպի ազատություններ ու արտոնություններ: Այդ ամենի արդյունքում՝ Վրաստանում չընդունվեց խղճի ազատության և

კრწანისკან კადმალკერაქონუნნერქ მასქნ ორუნ, ს აქნ გოქონ-
ქონ ჯონქ გოქონქონ ჯონქ მქს ორ:

Վրաց ուղղաქათ եկեղեցու (აქონქետს՝ ՎՈՒԵ) բաց-
თქ կარգավქდასქ: Վրասთանում բացათქկ ართონქակ կარგ-
վქდასქ Է շնորქվად Վրաց ուղղաქათ եկեղեցուն: Վերջქնქս ს
აქետოქյան ხարაქերოქონუნներქ կარგավորվում են սახմ-
նաղրական ხամადայնագროվ, որქ ხասთათվել Է Խորქრղարանქ
կողմქց 2002 թ. հոկտեմբերქ 22-ქն: Սახմանաղրական ხամ-
დაქնագქրქ Վրասთանում բարձրագოქն իրավական ასქոն Է
Սახմանաղրოქონქնქց¹ Էտո: Աქո ხամადայնագქրქ գրեթե ხ-
վասարեցնում Է ՎՈՒԵ-ქ ს აქետოქյան իրավունքներქ: ՎՈՒԵ-ქ՝
սახմանաղրորեն ამրագրված իրավունքներქ գրեթե անձեոն-
ქելქოქյան ს կարგավქდასქ բացათქկოქյան մასქն Է խոսում
այն իրողოქონն, որ երկրქ Խորქრղարանն ոչ մქայն չქ կարող
չեղարկել վաստաթողղ, այլ նას դրանում աննջան վոქո-
ქոქონններ մոցნել: Փաստաթղթով՝ ՎՈՒԵ-ქ աოաջնորդն ան-
ձեոնմქելქ անձ Է: Աქսქնքն՝ կաթողქկոս-աქათրქարք Իქս Երկ-
րորղქն պատասქանատվოქյան ենթարկել կամ կալանավորել
հնարավոր չե այնքան ժամանակ, քանქ դեո նա ՎՈՒԵ-ქ աოաջ-
նորղն Է: Համადայնագროմ ამրագրված ამենակարնոր դրոქ-
ներქց մեկქ ხամადայն, აქետოქոქონն եկեղեցու սեվականოქ-
ქონ Է ճանաჯում վանքերქ, տաճարներქ, դրանց վქստასქներქ,

¹ Պետოქյան ს ՎՈՒԵ-ქ մქջն իրավահարաქերოქონններქ մასქն
դրոქյն ამրագրված Է Վրասთանქ ներկայქս Սახմանաղրոქյան 8-րղ
հողվածոմ (საქართველოს კონსტიტუცია, 24.08.1995, მუხლო 8.
სახელმწოფოსა და საქართველოს სამოცოქულო ავტოკეფალური
მართლმადიდებელი ეკლესიის ურთოერთობა, საქართველოს
საკანონმდებლო მაცნე, [https://matsne.gov.ge/ka/document/view/30346?pub
lication=36](https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36)):

ինչպես նաև այն հողատարածքները, որոնց վրա գտնվում են այդ հուշարձանները կամ դրանց մնացորդները:

Վրաստանի այլ կրոնական համայնքների իրավական կարգավիճակի և սեփականության իրավունքի հարցը: Վրաստանում գործող բոլոր եկեղեցիները, ներառյալ՝ Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը, հետխորհրդային ողջ ընթացքում հանդես են եկել կրոնական կազմակերպությունների մասին օրենքի ընդունման պահանջով, որով կկանոնակարգվեր նաև խորհրդային կարգերի օրոք եկեղեցիներից խլված գույքի, պատմաճարտարապետական հուշարձանների, հողատարածքների և այլնի վերադարձման գործընթացը, այնպես, ինչպես տեղի էր ունենում ՎՈՒԵ-ի պարագայում:

Օրենքի ընդունման փոխարեն՝ փոփոխություններ «Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի» մեջ: Տեղական և միջազգային կազմակերպությունների ճնշումների և պահանջների արդյունքում՝ 2011 թ. հուլիսի 1-5-ը Վրաստանի Խորհրդարանն առաջինից երրորդ ընթերցումներով, արագացված կարգով փոփոխություններ կատարեց երկրի Քաղաքացիական օրենսգրքում, որոնցով նախատեսվում էր հնարավորություն տալ երկրում գործող կրոնական միություններին, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցուն, զրանցվել որպես հանրային իրավունքի սուբյեկտ: Փաստենք, որ նշված գործընթացին նախորդել էին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի¹ և ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի² այցերը Վրաստան, որոնք

¹ Վեհափառ Հայրապետը Վրաստանում էր վեցօրյա այցով՝ 2011 թ. հունիսի 10-15-ը: Նա հովվապետական եռօրյա այց կատարեց նաև Ջավախք:

² Վրացական պետական և եկեղեցական շրջանակների բարձրատիճան ներկայացուցիչներն իրենց մեկնաբանություններում նշել են, որ Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները,

երկուսն էլ տեղի էին ունեցել հունիս ամսին: Թե՛ Վեհափառի, թե՛ Էդ. Նալբանդյանի կողմից Վրաստանի աշխարհիկ ու կրոնական բարձրաստիճան այրերի առջև բարձրացվել են ինչպես ՀԱԵ Վի-րահայոց թեմին իրավական կարգավիճակի շնորհման, այնպես էլ փլուզման եզրին կանգնած հայոց եկեղեցիների վերադարձմանն ու վերականգնմանն առնչվող հարցերը:

որոնցով Վրաստանում գործող կրոնական կազմակերպությունները կստանային իրավական ինչ-որ կարգավիճակ, արդյունք են նաև ՀՀ արտգործնախարարի՝ Վրաստան կատարած այցի ժամանակ այդ ուղղությամբ տարված աշխատանքների: Վրաստանի փոխարտգործնախարար Նինո Քալանթաձեն, մասնավորապես, հայտարարել է, որ կրոնական կազմակերպություններին իրավական գրանցում տալու հարցը պաշտոնական Թբիլիսիի առջեւ դրել են բարեկամական մի շարք երկրներ, այդ թվում՝ ՀՀ-ն, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի Վրաստան կատարած այցի ժամանակ: ՎՈՒԵ Դմանիսիի եւ Ազարակ-Տաշիրի թեմի առաջնորդ, Սեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի արքեպիսկոպոս Ջենոնը, մինչդեռ, կարծիք էր հայտնել, թե ընդունված օրենսդրական փոփոխությունները ուղղակիորեն բխում են Հայ Առաքելական եկեղեցու ցանկություններից: Դրան, ըստ արքեպիսկոպոսի, մեծապես նպաստել են վերջերս Թբիլիսիում Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի վարած բանակցությունները Վրաստանի իշխանությունների հետ եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի՝ Վրաստան կատարած այցը: Հոգևորականին սուր կերպով հակադարձել էր Խորհրդարանի իշխանական պատգամավոր, քննարկվող օրենսդրական նախաձեռնության համահեղինակ Նուզգար Ցիկլաուրին (Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի մյուս համահեղինակներն էին պատգամավորներ Լ. Թորդիան և Չ. Թաքթաքիշվիլին)՝ հայտարարելով, որ Խորհրդարանի որոշումը չի կարող կապված լինել ՀՀ-ի ցանկությունների հետ: Պատգամավորը նաև հավելել է, որ դրանք անգիտակից մարդու անպատասխանատու հայտարարություններ են, և իր համար ամոթ է, որ Խորհրդարանն այսքան ժամանակ չի կարողացել լուծել կրոնական միավորումների կարգավիճակի հարցը (տե՛ս <https://regnum.ru/news/society/1422632.html>):

«Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մասին» Վրաստանի օրենքում, որպես երկրի սահմանադրական համաձայնագրով ճանաչված հանրային իրավունքի իրավաբանական անձ, նշված է Վրաց առաքելական ավտոկեֆալ ուղղափառ եկեղեցին¹: Օրենքի հեղինակների հայտարարությունների համաձայն՝ ՎՈՒՆ-ն ունի իր հատուկ կարգավիճակը, որն արտացոլված է Սահմանադրության մեջ և կոնկորդատում (սահմանադրական համաձայնագրում), իսկ նշված բարեփոխումները կարգավորում են ոչ թե կրոնական, այլ վարչակազմակերպական-իրավական հարցերը²:

¹ საქართველოს კანონი საქართველოს სამოქალაქო კოდექსში ცვლილებების შეტანის შესახებ, 2011 წლის 5 ივლისი, №5034-რს, მუხლი 1. საქართველოს სამოქალაქო კოდექსში (პარლამენტის უწყებანი, №31, 24 ივლისი, 1997, გვ. 1) შეტანილ იქნეს შემდეგი ცვლილება, 1. 1509-ე მუხლის პირველი ნაწილის: ა) „ვ“ ქვეპუნქტი ჩამოყალიბდეს შემდეგი რედაქციით: „ვ) საქართველოს კონსტიტუციური შეთანხმებით აღიარებული საჯარო სამართლის იურიდიული პირი – საქართველოს სამოციქულო ავტოკეფალური მართლმადიდებელი ეკლესია“.

² Парламентское большинство не согласно с оппозицией в вопросе религиозных объединений, <https://www.apsny.ge/2011/pol/1309579049.php>. Վրաստանի խորհրդարանական մեծամասնության ղեկավար Գեորգի Գաբաշվիլին ընդդիմությանը կոչ է արել «դադարեցնել թեմայի շահարկումը» և մասնակցել «Քաղաքացիական օրենսգրքի բարեփոխմանը» հայտարարելով, որ «...այդ բարեփոխումները կարգավորում են ոչ թե կրոնական, այլ վարչակազմակերպական-իրավական հարցերը: ՎՈՒՆ-ն ունի հատուկ կարգավիճակ, որը որոշված է կոնկորդատում և ամրագրված Սահմանադրությամբ: Ինչ վերաբերում է այլ կրոնական միավորումների գործունեության իրավական ձևին, ապա դա առնչություն չունի Պատրիարքարանի հետ: Օրենքի նախագծում խուսքը կրոնական միավորումների իրավական ձևի մասին է, և այդ կազմակերպությունները պետք է ունենան իրավաբանական-իրավական ձև» (Габашвили призывает оппозицию «прекратить табуирование тем», <https://www.apsny.ge/2011/pol/1309914643.php>):

Արդյո՞ք լուծվեց կրոնական խնդիրը Վրաստանում: Ինչպես նշեցինք՝ Վրաստանում տարբեր կրոնական կազմակերպություններին հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ տալու հարցը փորձ է արվել լուծել ոչ թե խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքի մշակմամբ և ընդունմամբ, այլ ընդամենը փոփոխություն մտցնելով Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքի մեջ¹: Ամենակարևորը՝ սույն օրենսդրական խմբագրումը չի կարգավորում գրանցված կրոնական միավորումների սեփականության իրավունքը: Այս կետը հույժ կարևոր էր Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի համար, քանի որ վերջինս պահանջներ ունի բազմաթիվ վանական կալվածքների և եկեղեցիների մասով: Այդ պատճառով Վրաստանում գտնվող կանգուն կամ փլուզված հարյուրավոր հայկական եկեղեցիների ու պատմաճարտարապետական հուշարձանների² ՀԱՇ Վիրահայոց թեմին վերադարձնելու հարցը վերստին մնաց չլուծված: ʹ

Հայկական եկեղեցիների պատկանելության խնդրի քննարկումը 21-րդ դարի 1-ին տասնամյակի վրացական մամու-

¹ Տախարտեվեոս զանոնի Տախարտեվեոս Տամոխալախո զոլլեյնՏի զցոլոլեզնի Տեճանի Տեսաճեզ, 2011 թվոսի 5 օջլոսի, №5034-ոս.

² Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (ներկայումս՝ հիմնադրամ) հրապարակած քարտեզ-ցուցակի համաձայն՝ Վրաստանում հայկական եկեղեցիների թիվը 638-ն է: Եթե այս թվից հանենք Վրաստանից անջատված և մասամբ ճանաչված պետություններ Աբխազիայի և Հարավային Օսիայի տարածքում գտնվող թվով համապատասխանաբար 8 և 9 եկեղեցիները, ապա, ըստ նույն ցուցակի, Վրաստանում ներկայումս փաստացի հաշվվում է 621 եկեղեցի (տե՛ս Գարապետյան Ս., Հայկական եկեղեցիները Վրաստանում, Ցուցակ և քարտեզ, Երևան, Ա. հ., 1995): Սույն ցուցակում ներառված որոշ եկեղեցիներ (հատկապես Ջավախքի հայաբնակ շրջաններում գտնվող) առանձին բարերարների կողմից 1995 թ. ի վեր այս կամ այն չափով նորոգվել են:

լում, վրաց հասարակական-քաղաքական և գիտական շրջանակների դիրքորոշումը: Պրոֆեսոր Բոնդո Արվելաձեն, մատնանշելով իր «Армянские» или грузинские церкви в Грузии» խորագրով գիրքը, իր մի ծավալուն հոդվածում անդրադառնալով հայ-վրացական պատմական առնչություններին, ժխտելով Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծելու փաստը, վրաց եկեղեցու 607 թ. հայ առաքելական եկեղեցուց անջատման և երկբնակություն (ուղղափառություն) ընդունելու իրողությանը, հայկական կողմին «ավանդաբար» մեղադրելով «զավթողականության», «յուրացման», «կեղծիքի» և այլնի մեջ, քննարկում է նաև Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների պատկանելության տեսակետը¹: Նա բավական մանրամասն քննության է առնում Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության հրապարակած քարտեզ-ցուցակը², ժխտելով այնտեղ բերված տվյալները: Վրացի հեղինակը, որպեսզի առավել համոզիչ դարձնի իր անհամաձայնությունը քարտեզ-ցուցակում բերված տվյալների հետ, անդրադառնում է նաև առանձին եկեղեցիների ու հուշարձանների (Թբիլիսիի Սբ. Նշան և այլն)՝ հայտնելով, որ իբրև թե դրանք ի սկզբանե եղել են վրացական, և հայ գիտնականներն իբրև թե վերցրել են դրանց «յուրացման» կամ «հայկականացման» թվերը՝ անտեսելով սկզբնական կառուցման թիվը: Բ. Արվելաձեն խիստ քննադատության է ենթարկում նաև եվրոպացի, ռուս և հայ հայտնի գիտնականներ Ի. Ստրժիգովսկուն (Ավստրիա), Ա. Յակոբսոնին (Ռուսաստան), Ն. Տոկարսկուն (Ռուսաստան), Հ. Օրբելուն (Հայաստան-Ռուսաստան), Պ. Մուրադյանին (Հայաստան)՝ հայ պատմաճարտարապետական հուշարձանների ու-

¹ “მართალი გაზეთი” («Մառթալի գազեթի» («Իսկական թերթ»), N 8, 2000.

² Գարապետյան Ս., Հայկական եկեղեցիները Վրաստանում, Ցուցակ և քարտեզ, Երևան, Ա. հ., 1995:

თუმანააჰრამან ოღრთომ վրացական տեսակետներին հակադր-
վելու և Վրաստանում առկա հայկական հուշարձանների թվի ու
պատկանելության մասին փաստարկված տեսակետների հա-
մար:

Հետխորհրդային շրջանում ՎՈՒԵ-ի՝ Ջավախքում հաս-
տատման գործընթացի մասին խիստ ուշագրավ հարցազրույցում
ՎՈՒԵ Բորժոմ-Ախալքալաքի թեմի¹ առաջնորդ վերապատվելի
Սերաֆիմ եպիսկոպոսը (որպես նշյալ թեմի առաջնորդ ծառայել է
1995-2002 թթ.), մանրամասն ներկայացնելով առկա բոլոր դժվա-
րությունները, խոսում է նաև Ջավախքում լայնորեն տարածված
օրթոդոքս հայերի միջնադարյան պատմամշակութային հուշար-
ձանների խնդրի մասին²: Եպիսկոպոսը, դրանք համարելով վրա-

¹ ՎՈՒԵ թեմերի վերականգնման և նորացման շրջանակներում 1995 թ. ձևավորվեց ՎՈՒԵ Բորժոմ-Ախալքալաքի թեմը, և 1995 թ, ապրիլի 20-ին Սերաֆիմ Ջոջուան ձեռնադրվում է թեմի առաջնորդ: 2002 թ. հոկտեմ-
բերի 17-ին, ՎՈՒԵ Սուրբ Մինողի որոշմամբ, Բորժոմի և Ախալքալաքի
թեմի տարածքում կազմավորվեցին երկու թեմեր՝ Բորժոմ-Բակուրիանի
և Ախալքալաք-Կոմուրդոյի թեմերը: Ախալքալաքի եւ Կոմուրդոյի
թեմերի հոգեւոր հովիվ նշանակվեց Ցագերի եւ Սվանթի Նախկին
արքեպիսկոպոս Նիկոլոզ (Պատտա) Փաշուաշվիլին: 2018 թ. դեկտեմ-
բերի 27-ին ՎՈՒԵ Սուրբ Մինողի որոշմամբ և համայն Վրաստանի
կաթողիկոս-պատրիարք, Մցխեթա-Մթիլիսիի արքեպիսկոպոս, Բիձվի-
նթայի և Ցխում-Աբխազիայի միտրոպոլիտ, Նորին Մրբություն և երա-
նելի Իլիա 2-րդի հրամանագրով Ախալքալաքի և Կոմուրդոյի թեմը
վերանվանվեց Ախալքալաքի, Կոմուրդոյի և Կառի (Կարս քաղաքի
վրացերեն անվանաձևն է – Վ. Ս.) թեմի (Մբ. Մինողի որոշումը տե՛ս
Նախարարության Նախարարություն, Նախարարության Նախարարություն
Վեբ-կայքէջը մարտի 15-ին, <https://www.patriarchate.ge/news/2332>):

² “Րեթորնանսի” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»), N 159, 2001.

ցական, դժգոհում է, որ վերջիններս հայկական շրջանակներում համարվում են հայկական և ենթարկվում են վերանորոգման¹:

Ջավախքի Թոք գյուղում առկա վերստին օրթոդոքս դա-րաշրջանի եկեղեցական համալիրին են անդրադարձել «Կրիմի-նալի» և «Կվիրիս պալիտրա» թերթերը, որոնց միջոցով վրացի պրոֆեսոր Թինա Իվելաշվիլին ահազանգել է, թե իբր ջավախ-հայերը դիտավորյալ ոչնչացնում են Թոքի եկեղեցիների վրացե-րեն արձանագրությունները և տեղը դաջում հայերեն «հնաոճ» արձանագրություններ²: «Նորերս հայտնաբերված հայերենով քերծվածները, հնարավոր է, որ շուտով ավելի մեծ գրությունների վերածվեն, որը հետագայում եկեղեցու հիմնման հարցը վեճի ա-ռարկա կդարձնի», - հայտարարել է պրոֆեսորը³: Թերթը նաև ավելացնում է, որ փաստերը փոխանցվել են Ասպինձայի (Թոք գյուղը գտնվում է Ջավախքի այդ շրջանում) ուստիկանությանը, որտեղ հարուցվել է քրեական գործ: Հռոկվածագիրը հուզախառն տոնով տեղեկացնում է, որ, չնայած հետաքննությանը, եկեղեցու վրա հայերեն գրությունների թիվն օրըստօրե ավելանում է: Հաշ-վի առնելով վրացի պրոֆեսորի՝ իրերի հանդեպ անչափ պարզու-նակ դատողություններն ու մոտեցումները՝ համոզված ենք, որ խոսքը պատմաճարտարապետական հուշարձանների վրա հա-

¹ Իբրև ուղղափառ (օրթոդոքս) դավանանքի հայության թողած ժա-ռանգություն՝ տվյալ ոճին պատկանող միջնադարյան եկեղեցիներ և այլ հուշարձաններ են հանդիպում Ջավախքի Աբուլ, Ագավրեթ, Ալաստան, Բավրա, Բեժանտ, Բուռնաշեթ, Գանձա, Գումբուրդո, Դամալա, Թմկաբերդ, Թոք, Մեծ Խորենիա, Մեծ Սամսար, Մունդա (Նաբալաքն), Կոկիա, Ղաուր-մա, Սաղամո, Փոկա, Քարցեթ և այլ բնակավայրերում և վերջիններիս հարակից վայրերում (տե՛ս Կարապետյան Մ., Ջավախք, Երևան 2006):

² Տե՛ս «Յրոմոնալո» («Կրիմինալ»), N 44, 2004, «ՅՅորոն ՅալոլոՅրա» («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայանակը»)), N 44, 2004:

³ «ՅՅորոն ՅալոլոՅրա» («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայանակը»)), N 44, 2004:

ճախակի հանդիպող գրությունների մասին է, որոնք արվում են հիմնականում երեխաների կամ անփուլթ մարդկանց ձեռամբ՝ կավիճով կամ այլ առարկաների օգնությամբ: Այդպիսի գրությունները հիմնականում անբովանդակ են կամ ինչ-որ անունների ու սիրո խոստովանությունների տեսք ունեն, և, դրանք համարել լեռնային հեռավոր այդ գյուղի ձորերում գտնվող լքված և կիսավեր եկեղեցու «հայկականացում» կամ «հիմնադրման թ. աղավաղում», մեղմ ասած, զավեշտ է: Մեր այս պնդումն ավելի հիմնավոր կդառնա, եթե քննարկենք պրոֆեսոր Թինա Իվելաշվիլու մեկ այլ հոդված, հրատարակված 2004 թ.¹ «Լիտերատուրա դա խելովներա» ամսագրում: Պրոֆեսորը թերթի միջոցով փոխանցում է «գաղտնի աղբյուրներից իրեն հասանելի դարձած» ահագանգը, իբր թե ջավախահայերը «Ջավախք» կազմակերպության միջոցով և Երևանի անմիջական ցուցումով Ախալցխա քաղաքի Մարդաթաղամասում գտնվող եկեղեցու արևելյան ճակատին 2002 թ. փորագրել են մեծ չափի 9 տողանոց արձանագրություն¹: Պրոֆեսոր Թ. Իվելաշվիլին հիշյալ արձանագրությունը վերծանել է ակադեմիկոս Գ. Քուրդիանիի և պրոֆ. Լ. Դավիլանիձեի հետ, ովքեր ևս անուղղակիորեն հաստատում են Թ. Իվելաշվիլու մեղադրանքները: Ջավեշտ է, բայց փաստ, որ Թ. Իվելաշվիլին նման կարգի մեղադրանքներ, որակումներ տալուց առաջ (կատարվածը համարում է բարբարոսություն, սրբապղծություն և այլն) անգամ պարզ հարցում չի արել տեղացիների շրջանում, թե արդյո՞ք Մարդակոչվող թաղամասում, միջնադարյան Սբ. Նշան եկեղեցու (այստեղից էլ՝ Սբ. Նշան բլրի անունը) տեղում Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցի² կողմից 1861 թ. հիմ-

¹ «Լուծերატურա Դա Ելոզցեյե» («Լիտերատուրա դա խելովներա» («Գրականություն և արվեստ»)), N 2, 2004, ց. 22-23.

² Նահատակյան Ռ., Ախալցխայի պատվավոր քաղաքացին, «Գարուն», 1988, N 9, էջ 19-20:

նադրված Սբ. Վարդանանց (Սբ. Նշան) եկեղեցու պատին 2002 թ.-ից առաջ նման մեծ չափի արձանագրություն եղե՞լ է, թե՞ ոչ: Փաստենք, որ «ջավախահայության բարբարոս վարքի արդյունքում 2002 թ. Սբ. Վարդանանց եկեղեցու պատին հայտնված» մեծածավալ արձանագրությունն իրականում փորագրվել է եկեղեցու շինարարության ավարտական տարում՝ 1868 թ., հրատարակվել՝ 1990 թ.¹: Ահա այսպիսի պարզունակ «փաստերով» ու դատողություններով է վրացի պրոֆեսորը փորձել ապացուցել, որ «...Ախալցխայում, մինչև հայերի հայտնվելը (նկատի ունի Կարևո հայության՝ ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանի տիրապետության տակ անցած Ախալցխայի և Ախալքալաքի գավառներ տեղափոխվելը (1829-1830 թթ.) և նշյալ գավառներում ապրող տեղաբնիկ («եռլական») հայության կողքին հաստատվելը – Վ.Ս.) Մարդայի եկեղեցին ուղղափառ (օրթոդոքս) էր...»²: Նա նաև դժգոհում է Վրաստանի ղեկավարությունից, Պատրիարքարանից և պատկան մարմիններից այն բանի համար, որ վերջիններս անցած երկու տարիների ընթացքում (2002-2004 թթ.) չեն արձագանքել «կատարվածին» և պատժել «հանցագործներին»:

Վրացական մեկ այլ՝ «Սձեռլիս զագեթի» թերթի հոդվածագիրը խոսում է Թբիլիսիից ոչ հեռու գտնվող Թելեթ գյուղի հոչակավոր Սբ. Գևորգ եկեղեցու պատկանելության մասին. «...Ահա հենց մեր քթի տակ, Թբիլիսիից ոչ հեռու գտնվող Թելեթի գյուղի Մմինդա Գիորգի (խոսքը Սբ. Գևորգ եկեղեցու մասին է – Վ.Ս.) անվամբ գլխավոր եկեղեցում հաստատված հայ տերտերը ողջ

¹ Карапетян С., Марутян А., Наатакян Р., Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалцха, ІՀԳ, 1990, N 5, էջ 75-85:

² “ლოტერატურა და ხელოვნება” («Լիտերատուրա դա խելովներա») («Գրականություն և արվեստ»), N 2, 2004, გვ. 22-23.

ցյուղը մկրտեց հայկական ծեսով և հայացրեց...»¹: Յավով արձանագրենք, որ հողվածագիր Ա. Սիխարուլիձեն ևս տուրք է տալիս վրացական միջավայրում կարծրացած մոտեցումներին և դարերով Թելեթում ապրող, ուղիղ հազար տարի առաջ հայ առաքելական եկեղեցու հիմքերը դրած², միջնադարում գյուղում բազմաթիվ խաչքարեր կանգնեցրած, 18-րդ դարում Սբ. Գևորգ, 19-րդ դարում Սբ. Աստվածածին եկեղեցիները կառուցած³, իսկ Ամենայն Հայոց Հայրապետ Ներսես Աշտարակեցու օրոք և հետագայում Թելեթի վանքի տարբեր շենքերի նորոգման, կառուցման և բարեկարգման ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ իրականացրած⁴ հայությանն անվանում է «ինչ-որ մի հայ տերտերի կողմից հայացրած վրացիներ»:

2005 թ. տեղի ունեցած երկու աղմկահարույց իրադարձությունները՝ «Քրիստոնեությունը մեր կյանքում. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովը ⁵ և Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան Ս. Մուրարիի՝ 2005 թ. առաջին կիսամյակային հաշվետվությունը, որոնցում ի ցույց տրվեց

¹ «Յճեղոսի Գաջեօտի» («Մծեղիս գագեթի» («Գրական թերթ»)), N 16, 2004:

² Մելիքսեթ-Բեկ Լ., Հայերը Վրաստանում, "Кавказ и Византия", вып. 1, Ереван, 1979, с. 175:

³ Կարապետյան Ս., Հայկական եկեղեցիները Վրաստանում, Ցուցակ և քարտեզ, Երևան, Ա. հ., 1995:

⁴ Հայության համար ուխտատեղի հանդիսացած Թելեթի հուշակավոր Ս. Գևորգ վանքի հուշարձանների, արձանագրությունների բովանդակության և 1989 թ. սկսած՝ վանքի հիմնովին վրացականացման և այնտեղից հայկական հետքի իսպառ վերացման մասին առավել մանրամասն տես Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988-1998 թթ.), կազմող՝ Կարապետյան Ս., Երևան, 1998, էջ 56-58:

⁵ «Նեալոնճեղոսի ԸԸԸ» («Խվալիսղելի դղե» («Վաղվա օր»)), N 199, 2005, «ՅասՆ» («ՂեՅոճնանո») («Բաստա» («Ռեզոնանսի») («Ռեզոնանսի» հավելված)), N 333, 2005.

կամ առավել ցայտուն ընդգծվեց Վրաստանի կրոնական – եկեղեցական ոլորտում առկա ճգնաժամային և պայթյունավտանգ իրադրությունը¹, ևս մեկ առիթ էր վրաց հասարակական-քաղաքական, գիտական և եկեղեցական շրջանակների համար՝ հայկական պահանջների հանդեպ առանց այն էլ ոչ բարյացակամ վերաբերմունքն ուղղակի թշնամանքի վերածելու, գիտական հիմնավորումներից զուրկ, զգացական հողի վրա կատարվող քննարկումները երկար ու ձիգ դարձնելու համար²:

Խնդրի շուրջ վրացական շրջանակների հարաստ և ադմու-կի հերթական (ուսումնասիրվող ժամանակահատվածի թերևս վերջին) շիկացումը տեղի ունեցավ 2009 թ.³, երբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, անդրադառնալով Վրաստանի հետ հարաբե-րություններին, խոսեց նաև Վրաստանում Հայ առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ հայկա-կան հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերի մասին⁴:

Եզրակացություններ

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Վրաստանում անկախացումից ի վեր չընդունվեց կրոնական կազ-

¹ “ახალი თაობა” («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 355, 2005.

² “ახალი თაობა” («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 355, 2005, “არგუმენტი” («Արգումենտի» («Արգումենտ»)), N 1, 2006, “აიბი” («Աիսի» («Արշալույս»)), N 8, 2005, “ახალი თაობა” («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 25, 2006.

³ “საქართველოს რესპუბლიკა” («Մաքարթվելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 179, 2009, “საგარო-დასავალი” («Ասավալ-դասավալի» («Վերելք-վայրեջք»)), N 36, 2009, “საგარო-დასავალი” («Ասավալ-դասավալի» («Վերելք-վայրեջք»)), N 39, 2009, “რეზონანსი” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 186, 2009, “კვირის პალიტრა” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայակալը»)), N 31, 2009, “საქართველოს რესპუბლიკა” («Մաքարթվելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 175, 2009.

⁴ «Հայաստանի Հանրապետություն», N 168, 2009:

մակերպությունների ոլորտը կանոնակարգող և վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանող օրենք («Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենք): Հակառակ դրան՝ երկրում բացառիկ արտոնյալ կարգավիճակ է շնորհված Վրաց ուղղափառ եկեղեցուն: Մակայն 2011 թ. Վրաստանի Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները, չլուծեցին հիմնական խնդիրները: ՀԱԵ Վիրահայոց թեմի ներկայացված պահանջները, որոնք առնչվում են կրոնական կազմակերպությունների մասին օրենքի ընդունմանը և խորհրդային կարգերի օրոք խլված գույքի, պատմաճարտարապետական հուշարձանների, հողատարածքների ու այլնի վերադարձման անհրաժեշտությանը, մշտապես բախվել են վրաց ինչպես աշխարհիկ և հոգևոր իշխանությունների, այնպես էլ հասարակական-քաղաքական և գիտական շրջանակների ոչ կառուցողական դիրքորոշումներին:

..

THE RELIGIOUS ISSUE IN GEORGIA. DISCUSSION OF THE LEGAL
STATUS, THE PROPERTY RIGHT AND THE AFFILIATION OF
CHURCHES OF THE AAC DIOCESE IN GEORGIA, IN THE
GEORGIAN PRESS

SUMMARY

Keywords: Georgia, religious organizations, Georgian Orthodox Church, legal status, constitutional agreement, Civil Code, legal entity under public law, Armenian Apostolic Church, Diocese of the Armenian Apostolic Church in Georgia, property rights, churches, Javakhk, orthodox Armenians, Georgian socio-political and scientific circles, press.

Unlike the Republic of Armenia, since independence Georgia has not adopted any law regulating the rights and obligations of religious organizations (the law on 'Freedom of Conscience and Religious Organizations'). On the contrary, the Georgian Orthodox Church has been granted an exceptional privileged status in the country. In 2011 the amendments to the Civil Code of Georgia, however, did not solve the main issues. The demands of the Diocese of the Armenian Apostolic Church in Georgia regarding the adoption of the law on religious organizations, the need to return property confiscated during the Soviet Union, historical and architectural monuments, lands, etc., have always confronted by the non-constructive position of the representatives of the Georgian socio-political and academic circles.

РЕЛИГИЗНЫЙ ВОПРОС В ГРУЗИИ.
ОБСУЖДЕНИЕ СТАТУСА, ПРАВА СОБСТВЕННОСТИ И
ПРИНАДЛЕЖНОСТИ ЦЕРКВЕЙ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ
АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКОВИ В ГРУЗИНСКОЙ ПРЕССЕ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Грузия, религиозные организации, Грузинская Православная Церковь, юридический статус, конституционное соглашение, Гражданский кодекс, юридическое лицо публичного права, Армянская Апостольская Церковь, епархия Армянской Апостольской Церкви в Грузии, право собственности, церкви, Джавахк, православное (ортодоксальное) армянство, грузинские общественно-политические и научные круги, пресса.

В отличие от Республики Армения, Грузия после провозглашения независимости и до сих пор не приняла закон, регулирующий сферу деятельности религиозных организаций и определяющий их права и обязанности (Закон о свободе совести и религиозных организациях). Наоборот, Грузинской православной церкви предоставлен исключительно привилегированный статус. Однако, поправки, принятые в Гражданском кодексе Грузии в 2011 году, не решили основных проблем. Требования Епархии Армянской апостольской церкви в Грузии относительно принятия закона о религиозных организациях, необходимости возврата конфискованного в советское время имущества, исторических и архитектурных памятников, земель и т.д., всегда сталкивались с неконструктивной позицией грузинских светских и духовных властей, а также общественно-политических и научных кругов.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒԹՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
200-ԱՍՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ.....5

2. ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՑԱՆ, ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՊԱՐՄԿԵՐԵՆ ԵՒ ՕՍՄԱՆԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԺԷ-ԺԸ ԴԱՐԵՐՈՒՄ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ
ՈՒՆԵՑԱԾ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 13

3. ԷԼԻՉԱՔԵԹ ԹԱՉԻՐԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒ.....27

4. ՄԵԴԱ ՕԶԱՆԵԱՆ

ԻՐԱՔԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԸ ԸՍՏ ԻՐԱՔԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐՈՒ 18-ԲԴ
ԴԱՐ.....50

5. ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ԴԵՅՈՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ.....69

6. ԳԱՅԱՆԵ ՇԱԽԿՑԱՆ

ԱՌԻԳՈՒՍՏ ՖՈԱՅԶԵՐ ՖՈՆ ՀԱՔՍՏՀԱՈՒԶԵՆԻ «ԱՆԴԻԿՈՎԿԱՍ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ՀԱՅԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....79

7. ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԻԼՅԱ ԲԵՐՅՈՉԻՆԻ «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԱՂՍԱՆՈՒՄ ԵՎ
ԱՅՐԿՈՎԿԱՍՈՒՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ԱՅՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ
.....90

8. ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԷԴՈՒԱՐԴ ԶՈՀՐԱՔՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԱՌՆՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ (19-ԲԴ Դ.).....96

9. ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ՈՌԻՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ
ՈՌԻՄԻՆԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....110

10. ՎԱԶԴԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
 ԹՈՄԱՍ ՄԿՐՏԻՉՅԱՆԸ ՈՒ ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ
 ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ
 ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....117

11. ԲԱԼԻՆՏ ԿՈՎԱԶ
 ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻՑ ՀԵՏՈ
 ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ, ՆՐԱՆՑ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ և
 ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..139

12. ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
 ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ և
 ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅՈՑ
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ և ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ.....151

13. ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ
 ԻԶՄԻԹԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ՀՈՌՈՍՆԵՐԸ.....172

14. ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ
 ՀԱԼԷՊԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԲԺԻՇԿ ԹԱՀԱ ԻՍՀԱԿ ԱԼ-ՔԱՅԱԼԻԻ
 «ՀԱԼԷՊԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, ԲԺԻՇԿՆԵՐՈՒ, ԱՏԱՄՆԱԲՈՅԺՆԵՐՈՒ ԵՒ
 ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» -Ը ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԷԶ.....190

15. ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
 ԻՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՀԱՍՄՅՆՔԻ
 ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ ԸՍՏ ԻՐԱՆԱԿԱՆ
 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....206

16. ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ
 ԿՐՈՆԱԿԱՆ ԽՂԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ
 ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ և
 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՂԴԻՐԻ ՔՆԱՐԿՈՒՄԸ
 ՎՐԱՅԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ.....229

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՂՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐԱԿ Բ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
200-ԱՍՅԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

FOREIGN-LANGUAGE SOURCES ON
ARMENIAN COMMUNITIES
ISSUE I B

PAPERS OF THE INTERNATIONAL CONFERENCE, DEDICATED TO THE
200 TH ANNIVERSARY OF THE FOUNDING OF THE CALCUTTA
ARMENIAN COLLEGE AND PHILANTHROPIC ACADEMY

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ
АРМЯНСКИХ ОБЩИНАХ

ВЫПУСК 2

Տպարանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА

INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4

РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0677747

A 109067